

# ՇՈՒԼԱՎԵՐ

Սանդուխտ Ասլանյան Սամվել Կարապետյան

# ՇՈՒԼԱՎԵՐ

Հեղինակային կազմ՝
Սանդուխտ ԱՍԼԱՆՅԱՆ
Սամվել ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևան - 2002

ՀՏԴ 39
ԳՄԴ 63.5
Ա 742

Ա 742 Ասլանյան Սանդուխտ, Կարապետյան Սամվել: Շուլավեր.- Եր.: Անտարես, 2002- 240 էջ:

Գիրքը ընթերցողին է մատուցում ՀՀ-ին ամենամոտ (և ամենամեծ) միկրոշրջանի՝ հայաբնակ Շուլավեր-Շահումյանի պատմությունը: Սա առաջին փորձն է, որը պատմական և մեր օրերի հավաստի փաստերի հիման վրա ներկայացնում է հայոց սփյուռքի օջախներից մեկի հիմնադրման ու ձևավորման ընթացքը՝ բարդ ու բախտորոշ ժամանակներ ապրած նրա քաղաքական, տնտեսական ու կրթական վայրիվերումները և ինքնահաստատումը: Այն համոզիչ փաստարկներով հաստատում է, որ Շուլավեր-Շահումյանն իր պատմական հուշարձաններով, իր ննջեցյալ նախնիների տապանաքարերով, հողհայրենիի հարգն իմացող շինականի նվիրումով, իր բարձրակարգ մտավորականությամբ և ազգային հավաք բնութագրով բուն Հայաստանն է՝ ազգային ճակատագրով խաթարված քատեզով...

Գիրքը կազմողները միաժամանակ ընթերցողի ներողամտությունն են հայցում հնարավոր բացթողումների և վրիպումների համար:

Գրքի հրատարակությունն իրականացվել է «ՇՈՒԼԱՎԵՐ» հայրենակցական միության նախաձեռնությամբ

Ա 0505000000 2002
0130(01) - 2002

ԳՄԴ 63.5

ISBN 99930-948-0-3

© «Անտարես», 2002 թ.

# ԾՈԲՈՓՈՐ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ծոբոփոր գավառը հարևան Տաշիր, Ձոր, Կողբ և Կանգարք գավառների հետ տեղադրված էր Գուգարքի հարավում և զբաղեցնում էր ներկայիս Դեբեդ գետի (Հին Բերդուջ) միջին հոսանքի ավազանը՝ սկիզբ առնելով Ախթալայից (հին Պղնձահանք) մինչև Նախիդուրի գյուղը (Վրացական Հանրապետություն):

Ծոբոփորը և վերը թվարկված չորս գավառները միասին կազմում են բնապատմական և ֆիզիկաաշխարհագրական մի շրջան, որը ձգվում է վիրահայոց (Սոմխեթի) լեռներից մինչև Աղստևի լեռնահովիտը և գիտական գրականության մեջ անվանվում է Տաշիր-Ձորագետ:

Հնում՝ առնվազն մ.թ. IV դ. կեսերից, Տաշիր-Ձորագետի գավառներից յուրաքանչյուրը պատկանում էր առանձին տեղական հայկական իշխանական տան: Ծոբն ուներ իր տանուտերը, որի իշխանանիստը (նստավայրը) Ծոբ ամրոցն էր:

Ցավոք, գավառն ու նրա կենտրոն ամրոցը սկզբնաղբյուրներում հիշատակվում են շատ հազվադեպ, այս պատճառով Ծոբոփորի պատմական անցյալի մասին կարելի է պատկերացում կազմել Տաշիր-Ձորագետի պատմության ընդհանուր ֆոնի վրա:

Առաջին անգամ հայ մատենագրության մեջ Ծոբ-Ծոբոփորը հիշատակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Պատմիչը հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը (Տրդատ I Արշակունի), կարգավորելով պետական գործերը և հաստատելով նախարարների ժառանգական իրավունքները, Գուգարքի հարավային շրջանները՝ Ջավախքի կեսը, Կողբը, Ծոբը, Կանգարքը, հանձնում է Շարայի որդի Գուշարին՝ Հայկի սերնդից, իսկ Տաշիրն ու Աշոցքը՝ հանձնում Գուշարի զավակներին: Այդ հաղորդումից երևում է, որ մ.թ. I դ. Տաշիր-Ձորագետը Գուշարի և նրա ժառանգների սեփականությունն էր: Գուշարյանների իշխանությունն է, որ հաջորդ դարերում մասնատվել է մի քանի ճյուղերի և IV դ. կեսերին, ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի վկայության, երկրամասում առաջ էին եկել մի քանի փոքր իշխանություններ: 428 թ. Սասանյան Իրանը վերացրեց Արշակունյաց թագավորությունը, նշանակվեց պարսիկ կառավարիչ՝ մարզպան: Տաշիր գավառը մնաց մարզպանական Հայաստանում, իսկ մյուս գավառները, այդ թվում՝ Ծոբը, Սասանյանների վարչական վերափոխումների հետևանքով միացվեցին Վրաց մարզպանությանը: Այդ վիճակը պահպանվեց մինչև Սասանյանների տերության նվաճումը արաբների կողմից (639 թ.), սակայն արաբները ներխուժեցին նաև Հայաստան, մոտ 700 թ.: Հայաստանն ու Անդրկովկասը վերջնականապես միացվեցին խալիֆայությանը: VIII դ. հայ նախարարական տները ենթարկվեցին խիստ հալածանքների, առանձնապես 774-75 թթ. ապստամբության պարտությունից հետո շատ իշխանություններ, այդ թվում նաև Տաշիր-Ձորագետի իշխանությունները, չդիմացան և կազմալուծվեցին: Ծոբում VIII դ. վերջում արդեն չկային Գուշարյանների շառավիղ-

ները, բայց IX դ. վերջում, երբ վերականգնվեց Հայաստանի անկախությունը, Աշոտ Բագրատունու թագավորը ազատագրեց Տաշիր-Ձորագետը, որը միացվեց Բագրատունիների ոստանին: 966 թ. ամբողջ Տաշիր-Ձորագետը հանձնվեց ի կառավարումն Բագրատունիների կրտսեր ճյուղին՝ Կյուրիկյաններին, որտեղ հիմնվեց Լոռվա կամ Կյուրիկյան թագավորությունը: XI դ. կեսերին Հայաստան ներխուժած սելջուկները նվաճեցին թագավորությունը (վերջնականապես 1113թ.), բայց նույն դարի վերջում Բագրատունիների հաջորդներ Զաքարե և Իվանե Զաքարյան եղբայրները ազատագրեցին Հայաստանի մեծ մասը, Տաշիր-Ձորագետը դարձավ նրանց տիրույթը, Ծոբը միացվեց Զաքարե ամիրսպասալարի իշխանությանը և մի քանի դար մնաց նրա ժառանգների ձեռքում:

Ուշ միջնադարում Ծոբի (Ախթալայի) եկեղեցական համայնքը ենթարկվում էր մերթ Մծխեթի կաթողիկոսությանը, մերթ՝ Սանահին-Հաղպատին (Ռաֆիկ Իվանի Մաթևոսյան - պատմական գիտությունների դոկտոր):






## Մարո Մարգարյանի խոսքը

Ամենաջերմ սրտով ողջունում եմ բոլորիդ, իմ թա՛նկ հարազատներ, բոլո՜ր շուլավերցի-շահումյանցիներ: Մարդու համար ամենաթանկը իր մանկության հետ կապված հիշողություններն են, եթե այդ մանկությունն անցել է լավ ու ջերմ հուզումներով, սիրաշաղ մթնոլորտում: Հավանաբար սովորական ու միապաղաղ օրեր էլ են եղել, բայց ապրածս կյանքի տարիների բարձունքից մանկությունս տեսնում եմ միայն այգեշատ ու մրգառատ բնության լուսարձակ տեսարաններով և մարդկային հարաբերությունների իմաստալից ու խաղաղ պատկերներով:

Հուշերիս տեսաժապավենի վրա ինձ ամենաթանկը մեր ժողովրդի հրաշալի հոգին էր՝ խաղաղ, ազնիվ, մարդասեր, ավանդապաշտ ու արարող, հպարտ ու արժանապատիվ: Շուլավերն ինձ համար ուղղակի Աստծո պարգևն էր՝ խնամքով մշակված այգիներով, շռայլ ու շքեղ անտառներով, բարեկամների հավատարմությամբ, միմյանց թիկնած առանձնատներով, մանկական զվարթ խաղերի բակերով և մեր լայնարձակ ազրուխտ տարածքի ու հեռուներում մշուշվող լեռների հեքիաթային սահմանագծով: Մանկությանս հրաշք օրերից յուրաքանչյուրը յուրովի է զարդարում ապրածս կյանքի համայնապատկերը:

Ամենաթանկ և առաջին հպարտությունս մեր ժողովրդի աշխատասիրությունն էր և իմաստուն նվիրումով ապահովված հրաշալի կյանքը:Գեղեցիկ այգի-պարտեզներով շրջապատված մեր երկհարկանի տունը՝ կայարանից եկող ճանապարհի հենց սկզբին, ձախի բարձունքի վրա, դիմացը՝ կիրակնօրյա շուկան՝ բազմազգ իր ժողովրդով, իմ ուղեկիցն է եղել ամբողջ կյանքիս ընթացքում. նրանք ինձ հետ են եղել միշտ:

Հիշում եմ... Շատ բան եմ հիշում: Հիշում եմ անգամ մեր «դոստերին»՝ հարևան գյուղերից շուկա եկած հորս ծանոթ-բարեկամ թուրքերին, որոնք իրենց աճեցրած բերք ու բարիքն էին բերում վաճառելու: Այդ դոստ-քիրվաներին ես ընդունում էի՝ որպես հորս բարեկամների: Ինչպիսի՜ ազնիվ, պարզ ու անմիջական հարաբերություններ էին: Այսօր ցավով ու խոր ափսոսանքով եմ մտածում այդ մասին: Քաղաքականություն կոչվածը ապականեց մարդկային հոգիները՝ պղծելով շատ սրբություններ...

Շատ կցանկանայի, որ իմ հայրենի գյուղը մնացած լինի նույն հեքիաթային խաղաղությամբ, ծառ ու ծաղկունքի, ազնիվ ու անշահախնդիր մարդկանց հեքիաթային աշխարհում: Մտովի վերհիշում եմ մեր պատշգամբից երևացող Ձորգա (ջերգա-շարք) քարը, որի ինը ժայռազանգվածները ուղտի սապարտների նման շարված էին դիմացի սարի գագաթին՝ լանջն ի վար: Փոքրիկ աստիճանների կտրվածքներով բարձրանում էինք նրանցից ամենաբարձրի գագաթը, խարույկ էինք վառում ու թևածում մեր երազների աշխարհում... Մեր պատշգամբից դեպի հյուսիս՝ ինչպես ափիս դրված մանրակերտ, տեսնում եմ Ծակ քարը՝ իր անձեռակերտ կամարով:

Ամենահետաքրքիրն ու թանկը ինձ համար մեր ջերմ ու արժանապատիվ ժողովուրդն էր, որ շատ տաղանդավոր զավակներ տվեց աշխարհին: Հիացմունքով ու ակնածանքով եմ հիշում Արտաշես Մելիք-Ադամյանին, Աբգար Իսահակյանին, Անդրանիկ Մեհրաբյանին: Իսկ Վահան Միրաքյանն ու Արազի՞ն, Մելիք-Փաշա՞ևը, Վաչե Սաղաթելյա՞նը, Մարգարիտ Պողոսյա՞նը: Եղբայրս՝ Բենիամին Մարգարյանը, որն իր կյանքն ապրեց... այլ գալակտիկաներում, մինչև .

որ նրանց «կնքեցին» իր անունով՝ «Մարգարյանի գալակտիկաներ»: Ցավոք, այս պահին հնարավոր չէ հիշել բոլորին, քանզի նրանք շատ են, որոնց անպայման չեն վրիպի պատմությունը և ժողովրդի հիշողությունը: Իմ սրտի խոսքն եմ ուզում ասել իմ շատ սիրելի, ժողովրդիս անմնացորդ նվիրված Սանդուխտ Ասլանյանի մասին: Լինելով ազնվաբարո Ջավախքի դուստր՝ նա նվիրվածությամբ ծառայեց ու ծառայում է Շուլավեր-Շահումյանին: Այն, ինչ ես չհասցրեցի անել ժողովրդիս, ծննդավայրիս համար, մեր սիրելի Ասլանյանը յուրովի կատարեց: Երախտապարտ եմ, տիկի՛ն Ասլանյան, քեզ ուժ ու կորով:

Չեմ կարող չնշել Շուլավերին վիճակված բախտավորությունը այն առումով, որ Թիֆլիսը... մեզ հարևան էր, մենք նրա թևի տակ էինք, այնտեղ էր կենտրոնացած հայ մտավորականության սերուցքը, ընտրանին: Թումանյան, Րաֆֆի, Շիրվանզադե, Արծրունի, Սունդուկյան, Լ.Շանթ, մեծ բարերարներ Մանթաշով, Արամյանց: Այնտեղ իրենց հանճարի լույսն են սփռել Ադամյանն ու Սիրանույշը, Աբելյանը... Սիրանույշը, Համլետ խաղալուց հետո, դուրս է գալիս շենքից, նստում իր ձիակառքում և իբրև հաճելի անակնկալ, մի խումբ երիտասարդ շուլավերցիներ, շտապ արձակելով ձիերին, լծվում են Սիրանույշի կառքին և վազում Գոլովինսկի կոչվող գլխավոր պողոտայով: Պատի պես կանգնած ժողովուրդը զարմացած ու հիացած հրճվում է տեսարանով: Շուլավերցին այսպես էր մեծարում իր ազգային մշակույթի փառքին: Երևանյան հրապարակի վերին մասում էր գտնվում հայ մշակույթի ակումբը՝ «Հայաստան» անունով: Շուլավերցի հայ երիտասարդ մտավորականությունը անմասն չէր մշակույթի այս՝ ակումբի գործունեությունից: Թիֆլիսում բնակվող շատ շուլավերցիներ մեծապես նպաստել են քաղաքի մտավորականության հետ գյուղի երիտասարդության շփումներին: Մեծն Թումանյանը մոր կողմից հարազատական կապեր է ունեցել Շուլավերի հետ, ինքը հաճախ էր ժամանակ անցկացնում Շուլավերում և հետևում տեղի հոգևոր կյանքին: Մեր մեծ Թումանյանի որդիներից Մուշեղը երկար ժամանակ ապրել է Շուլավերում, և բախտ եմ ունեցել լինելու նրա աշակերտը: Թումանյանը եթե ոսկե օղակ էր Թիֆլիսի հայ մտավորականության համախմբման համար, ապա Շուլավերի համար թերևս արծաթե օղակ կոչեմ, որովհետև Թումանյանը սովորաբար միայնակ չի այցելել Շուլավեր: Այն ժամանակներում Թիֆլիսից գյուղ եկած ամեն մի մտավորականից ոսկե շողարձակումներ են մնացել գյուղի մարդկանց հոգիներում: Մեր դպրոցում մաթեմատիկա էր դասավանդում Թիֆլիսից Առուբջունյանը: Դպրոցում աշխույժ ազգային դաստիարակությամբ ուղղակի ընդգծված վառ անհատականություն էր հայ գրականության մեր ուսուցիչ Գևորգ Էլբակյանը, որը քիմիայի ու ֆիզիկայի խմբակներ ստեղծեց: Արտակարգ խառնվածքի, մեծ հոգու տեր այդ տաղանդավոր մարդը այրվելով լույս տվեց մեզ: Նա մարդու և մանկավարժի բացառիկ տեսակ էր: Ես խոնարհվում եմ նրա հիշատակի առջև:

Սիրելի՛ հայրենակիցներ, մաղթում եմ Ձեզ սեր և միաբանություն, տիրոջ սրտացավությամբ վերաբերվել Շուլավերին, որի առաջ ես ինձ մեղավոր եմ զգում, որ չհասցրեցի հատուցել իմ մանկության սրբավայրին:

*Խորին երախտագիտությամբ՝ Ձեր Մարո Մարգարյան*
*5.12.1998 թ.*



# ՇՂՎԵՐ-ՇՈՒԼԱՎԵՐ-ՇԱՀՈՒՄՅԱՆ

Ներկայումս Վրաստանի Հանրապետության Մառնեուլի շրջանում գտնվող և 1923 թ. ի վեր ի պատիվ Ստ. Շահումյանի՝ Շահումյան վերանվանված նախկին Շուլավերը պատմական Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ծոբոփոր գավառի կարևոր բնակավայրերից է և շնորհիվ բազում դարերի ընթացքում տեղում հայ բնակչության անընդմեջ առկայության՝ նշանավորվել է պատմական առանձնահատուկ հարուստ անցյալով:



Շուլավերի տեսքը արևելքից, հեռվում՝ Ծակքարը

## ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շուլավերը գտնվում է Լալվար լեռան հյուսիսային լանջերի աղբյուրներից սկիզբ առնող նույնանուն գետակի աջ կողմում՝ ծովի մակերևույթից 470-550 մ բարձրության վրա: Ընդհանուր առմամբ բնակավայրն ունի հյուսիս և հյուսիս-արևելահայաց դիրք, շուրջ 2,5 կմ երկարություն և գրեթե 1 կմ լայնություն: Շրջապատված է անտառածածկ (արևմուտքից) և լերկ (հյուսիսից և արևելքից) բլրաշարերով: Գյուղից հյուսիս-արևելք՝ Շուլավեր գետակի և նրանից առնված մի քանի ջրանցքների միջև տարածվում են խաղողի ընդարձակ այգիները:

## ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուլավերի[1] նախնական անվանաձևին ու միաժամանակ առաջին հիշատակությանը հանդիպում ենք բնակավայրից 20 կմ (ուղիղ գծով) հարավ-արևմուտք գտնվող հռչակավոր Խորակերտի վանքի XIII դարին վերաբերող նվիրատվական մի արձանագրության մեջ՝ Շղուեր (Շղվեր) ձևով, իբրև վանքապատկան գյուղ:



Շուլավերի տեսքը արևմուտքից, հեռվում Սբ. Կիրակի հուշարձանախումբը

Սանահին վանքի կալվածքների մասին պատմող XIII դարի կեսին վերաբերող ուշագրավ վավերագիր «Քոթուկ»-ը (գրառումների մատյան) վկայում է, որ Շուլավերն իր տարածքով հանդերձ այդ ժամանակ պատկանում էր հիշյալ վանքին. «... զՇուլաւեր իւր ամեն սահմանաւն»:[2]

Բնակավայրի հայաբնակ լինելը փաստվում է նաև տեղում և տարածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանների առկայությամբ: Այնուամենայնիվ, աղբյուրներում Շղվերի հաջորդ հիշատակումները մեզ են հասել միայն XVII դարից: Մասնավորապես 1678 թ. արդեն Շուլավեր անվանաձևով հիշվող գյուղում գտնվող

1 Լ. Մելիքսեթ-Բեկը Շուլավերը հիշատակում է Շուրավեր տարբերակով (ի թիվս վեր վերջավորությունն ունեցող Սոմխեթի մի շարք այլ տեղանունների), տես վերջինիս Շամչի-Մելքոն և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958, էջ 26:

2 Սանահնի «Քոթուկ», Մատենադարան, ձեռագիր N 3031, էջ 62-68: Նույնը տես նաև՝ ձեռագիր N 8150: Տես նաև՝ **Կ.Ղաֆադարյան**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 56:



մի մեծ այգի ոմն Ջուանշիրի որդիները նվիրել են Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին (1655-1680). «Վախուպնամայ մի Վրացերէն վասն միոյ մեծ այգւոյ ի Շուլաւէր գեօղն, զոր տան Ջուանշիրի որդիքն Յակովբ Կաթողիկոսին Ջուղայեցւոց ի Ռճիէ թուոջն մեռում...»:[3] Միևնույն նվիրատվության առթիվ փոքր-ինչ ավելի մանրամասնաբար հիշված է. «Դարձեալ ի յերկիրն Վրացտանու՝ ի գեօղն Շուլաւէր՝ Ջիանշիրի որդիք տանուտէր Թահմազն և Բայրամն, և Թահմազի որդիք Ռէվազն, Բայինդուրն, և Զալն ի նոյն գեօղն զմի մեծ այգի տան յիշատակ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակովբ Կաթողիկոսին, շէն և ապրշումեայ ծառոք լի, ի Ռճիէ թուոջ մերում...»:[4]

## ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ 1740-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ

Ստուգապես դժվար է որոշել, թե Շուլավերը մինչև երբ մնաց շեն ու բարգավաճ, բայց առավել հավանական է, որ ինչպես Սոմխեթի (հետագայում՝ Բորչալու) բազմաթիվ այլ գյուղեր, նույնպես և Շուլավերը բնիկներից դատարկվել է XVIII դարի 1-ին կեսի ընթացքում: Մասնավորապես հայտնի է, որ 1730 թ. ողջ Սոմխեթը (Գուգարքին՝ վրացիների տված անվանաձևը) ավերել էին լեզգիները. «... դուրս եկան ճարեցիք [և] ավերեցին Բոլնիսները (Բոլնիսեբի) և Սոմխեթը, [շատերին] կոտորեցին և տարան շատ գերիներ և տավար-ոչխար...»:[5] Արդեն 1747-48 թթ. Շուլավերն ըստ ամենայնի ստացել էր առավել ծանր ու վերջին հարվածը, որի արդյունքում բնակավայրը հայաթափվել էր: «... Լեզգիների զորքը Սամշվիլդեից ելնում՝ ավերում Սոմեխթի ձորը ու [ավար] բերում Սամշվիլդեի բերդը: Նեղվեց Սոմխեթի ձորը, [սոմխեթցիք] չկարացին ապրել իրենց տեղերում. Սոմխեթի մելիքն ևս տեղահան եղավ իր տուն ու տեղով և ճորտերով, նմանապես և Արղութա-շվիլիները[6], բովանդակ Սանահնի ձորը և Հաղբատի ձոր, ...»:[7]

Մեջբերումներից բխում է, որ Սոմխեթի գլխավոր բնակավայրերից՝ Շուլավերն էլ փաստորեն իր բնիկներից պարպվել է ճիշտ այդ շրջանում, բայց ի տարբերություն տասնյակ այլ գյուղերի՝ չբնակեցված երկար չմնաց: Թեև դեպի Տփխիս և Մուխրան գաղթածներն այլևս չվերադարձան, սակայն 1750-ականներից գյուղը վերաբնակեցվեց Գարդմանքից գաղթած հայերով:

3 «Ջամբռ» համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 270 (այսուհետև՝ «Ջամբռ», համապատասխան էջերով):

4 «Ջամբռ», էջ 208:

5 **Մելիքսեթ-Բեկ Լ.Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ, Երևան, 1955, էջ 26:

6 Խոսքը հայ իշխանական Արղության տոհմի մի ճյուղի մասին է

7 Նշվ. աշխ., էջ 125:

# ՇՈՒԼԱՎԵՐԻ ՆՈՐ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ԳԱՐԴՄԱՆԱՀԱՅԵՐՈՎ 1750-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

Գարդմանահայերի՝ Շուլավերում հաստատվելու ժամանակի վերաբերյալ աղբյուրներում առկա տվյալները միանշանակ չեն: Խնդրու առիթով, օրինակ՝ Ե. Լալայանը նշել է, թե հայերն այդտեղ հաստատվել էին 1750-60-ական թվականներին, գաղթելով Գարդմանքի (Շամշադինի գավառ) ութ տարբեր գյուղերից:[8] 1889 թ. հրապարակված լրագրային մի նյութ նշել է, թե Շուլավերի վերաբնակեցումը տեղի էր ունեցել 120 տարի առաջ (ստացվում է 1769 թ.):[9]

Ստույգ ու արժանահավատ է 1772 թ. Սիմեոն կաթողիկոսին (1767-1776) հղված մի գրության մեջ առկա այն տեղեկությունը, համաձայն որի այդ թվականին Շուլավերն արդեն բնակեցված էր նորեկներով, բայց այդ վավերագրից էլ չի երևում, թե 1772 թ. դրությամբ Շուլավերն արդեն քանի տարի էր վերաբնակեցված. «... ի Բոռչալու՝ և Շուլաւեր գիւղն ուր էին բազում ժողովուրդք ի Շամշադինու երկրէն փախուցեալք, որոց շատքն երկաթագործք էին...»:[10]

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է պնդել, որ Շուլավերի վերաբնակեցումը տեղի է ունեցել 1773 թ.: Այդ մասին վկայում է «Մշակը»՝ գրելով «Մեծ Շուլաւերու բնակիչները 100 տարիից առաջ Պարսից բարբարոսութեան պատճառաւ գաղթած են Շամշադինի գիւղերից, այդ պատճառաւ և բնակիչները բաժանուելով զանազան մասերի (թաղ) կրում են այն անունները, ինչ գիւղից նորանք գաղթած էին: Այսպէս Մեծ Շուլաւէրը բաժանվում է երկու բաժանումների. Զագեամ և Ղարամուրադ: Զագեամը բաժանվում է Քամանդար, Կորխ, Մրեջուր թաղերի: Ղարամուրադը բաժանվում է. Մելիք-Զադէ, կրկին Ղարամուրադ, Աղբուլախ, Շմեղ և Մմրթլու թաղերի...»:[11]

Ս. Ջալալյանցը, առանց ժամանակն ու այլ մանրամասներ հաղորդելու, վկայել է. «...բնակիչք են Հայք, տունք երեք հարիւր, գաղթականք ի Ղարամուրադ գիւղաքաղաքէն Ջակամայ...»:[12]

Ուշագրավ է նաև վրաց անանուն վիճակագրի 1770 թ. հետևյալ շարադրանքը. «Բորչալուն և Փամբակի ձորը մի ամբողջ խանություն է: Այստեղի բնակիչները ցիրուցան են եղել այլ վայրերում (թեմերում) և այժմ [այստեղ] կա 2560 [ծուխ] հայ»,[13] իսկ թե ինչ էր նշանակում 2560 ծուխը նշված տարածաշրջանի համար, երևում է հետևյալ հաղորդումից. «... Ավեր են Տաշիրը, Գուջարեթը և Սոմխեթը, որ մեծ է [ր] բազմա[մարդ] երկիր է[ր], ուր քառասունից մեկն է մնացել...»:[14]

8 «Ազգագրական Հանդէս», VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 331:

9 «Նոր-Դար», 1889, N 152, էջ 2:

10 «Դիւան Հայոց Պատմութեան», գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարան. 1767-1776 թթ., Թիֆլիս, 18.., էջ 96:

11 «Մշակ», 1873, N 2, էջ 2:

12 Ջալալեանց Սարգիս արքեպիսկոպոս, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հատոր Բ, Տփխիս, 1858, էջ 79:

13 **Մելիքսեթ-Բեկ Լ.Մ.**, նշվ. աշխ., էջ 157:



Հանրագումարի բերելով ձեռքի տակ եղած նյութերը՝ կարելի է հաստատապես նշել, որ Շուլավերի վերաբնակեցումը գարդմանահայերով տեղի է ունեցել 1772 թ.-ից առաջ, ամենայն հավանականությամբ 1750-ականների վերջերին, բայց ինչպես երևում է, հետագա տարիներին էլ վերաբնակիչների նոր խմբեր են ավելացել: Մասնավորապես հայտնի է, որ 1790 թ. «... [Էրեկլե թագավորը] տեղահան արավ Շամշադին[ցիներին] ու փոխադրեց Շուլավեր»:[15]

Հարկ է նշել, որ բնակավայրի արևելյան կողմում տարածված բավական ընդարձակ գերեզմանատանը պահպանված տապանագրերը իրենց հերթին վկայում են, որ Շուլավերում բնակություն հաստատած հայերի թիվը բնավ չի սահմանափակվել Գարդմանք-Շամշադինից գաղթածներով կամ բռնագաղթվածներով: Նրանցում եղել են նաև Գյուլիստանից, Գեղարքունիքից և մինչև 1801 և 1826 թթ. պարսից տիրապետության ներքո գտնված Հայաստանի այլ գավառների բնակիչներ: Ըստ որում, օրինակ՝ գարդմանցի վերաբնակիչների մի զգալի մասն իրենց օրրանի՝ Ռուսաց տիրապետության ներքո անցնելուց անմիջապես հետո ցանկություն էին հայտնել վերադառնալու, բայց իշխանությունների դիմադրությանը հանդիպելով՝ մնացել էին տեղում. «... թագաւորազնի սեփական գիւղի, այսինքն՝ Շուլաւէրի բնակիչները Շամշադնից գաղթածներ էին... : ...Ահի ու սարսափի օրերն անցած լինելով՝ ժողովրդեան մի մասը պատրաստուել էր վերադառնալ իրենց ծուխը ծխելու, սիրելիների շիրիմներին տէրութիւն անելու: Կառավարութիւնը խափանեց ժողովրդի գլխաւորների վերադարձը՝ որին պարգևատրելով, որին խոստումներով ժողովուրդը մնաց, օրաւուր փափագը սառաւ...»:[16] Մասնավորապես Սոմխեթի կալվածատերերը հիմնական արգելքը հանդիսացան բնակիչների հետգաղթի իրականացման ճանապարհին. «... имея начальство над Шулаверцами, удержал оных в повиновении»[17].

Թե՛ XVII դարում, երբ Շուլավերը դեռևս տեղաբնիկ հայերով բնակեցված ծաղկուն գյուղ էր և թե՛ XVIII դարի վերջին, երբ ավանը համալրված էր վերաբնակիչ հայերով, այն մշտապես հանդիսացել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին եկամտահարկ մուծող կարևոր բնակավայրերից մեկը: Ուշագրավ է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ նորահաստատ բնակիչներն իրենք նյութական դժվարությունների մեջ էին, այնուամենայնիվ իրենց առաջնորդների գլխավորությամբ վանք էին ուղարկել գլխավորապես երկաթից պատրաստած գործիքներ: Մասնավորապես 1782 թ. Ղուկաս կաթողիկոսին (1780-1799) հասցեագրված մի նամակում նշված է.

14 Նշվ. աշխ., էջ 157:

15 Նշվ. աշխ., էջ 191: Տես նաև նշվ. աշխ., էջ 202:

16 «Նոր-Դար:, 1890, N 154, էջ 2-3:

17 Акты собранные кавказскою Археографическою коммиссиею том 1, Тифлис, 1866, стр. 417

«[Շ]ուլավերու առաջնորդ Վանական վարդապետն, Մխիթար Քալանթարը և մէլիք Սարգիսն թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն ի ձեռն ուրումն Սահակ անուն առն, ընդ որում և յղեալ էին զայս ինչ՝ ԺԹ (19) բահ, ԻԱ (21) քլունկ և 7 (10) լիտր երկաթ»:[18]

Հարկ է նշել, որ Վանական վարդապետն իր ժամանակի առավել հեղինակավոր հոգևորականներից էր: Հայտնի էր նաև «... Շօլաւէրցի Թադէոս եպիսկոպոսն...», որն մի առիթով հիշվում է 1801 թ.:[19]

## ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1826 Թ. ՊԱՐՍԻՑ ԱՐՇԱՎԱՆՔԻՆ

Շուլավերցիները քաջ և ռազմական գործին վարժ մարդիկ էին: Շրջապատված բորչալու կիսաթափառական թուրք ցեղերով՝ նրանք ակամա ստիպված են եղել մշտապես գտնվել մարտական պատրաստ վիճակում: Բնակիչների այդ հատկությունը գրավել է նաև ռուս կառավարության ուշադրությունը. և արքունական կալվածքի մեջ մտցված գյուղացիական այգիներն ու հողատարածքները 1842 թ., որպես հատուցում, հանվում են (արքունական) ցուցակից: «...Շուլավէրցիները, համաձայն 1842 թւի Բարձրագոյն հրովարտակի, իրանց պապերի քաջութեան համար այգիները, տների տեղերը եւ կալերը ընծայ ստացան իբրեւ սեփականութիւն...»:[20]

Հայտնի է, օրինակ, որ 1826 թ. Հասան խանի արշավանքի ժամանակ Քալանթարյանց տոհմից Սոսի աղի և Մելիք-Սարգսյանց տոհմից Մելիք-Օհանջանի գլխավորությամբ շուլավերցի քաջերը դուրս էին ելել թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Այդ մարտի մանրամասներն արտացոլված են Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպում. «...Ու՞ր թողանք ղարաբաղցոց, երևանցոց, ... շուլավերցոնց արածները, որ քար ու հող ղզլբաշի արնովը լվացել, արյուն են թափել: Ղորդա էն վաղուցվան մելիքները չկային, ամա նրանց հոգին շատ տեղ էր մնացել: Ղզլբաշի շատ ղոնշունի գլուխը սրանք կերան: Ախ, ու՞մ մտքից կերթա էն հսկա կերպարանքը, էն գեղեցիկ պատկերը, էն անուշ լեզուն ու անօրինակ ռաշիդությունն ու սիրտը, որ շուլավերցի Սոսի աղեն ու Մելիք Օհանջանն ունեին:

Հրեղեն վիշապի պես ընկել էին Քաշվեթու ու Բոլնիսի սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, որ ինչ ժամանակ խաբարը նրանց է հասնում, թե Նեմեցի Կոլոնիեն տվին, քառասուն կտրիչ

18 «Դիվան Հայոց Պատմության», նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա. 1780 1785, Երևան, 1984, էջ 305:

19 «Դիւան հայոց Պատմութեան», գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 55:

20 «Մշակ», 1902, դ 202, էջ 2:



տղերք քամակին, իրենց մովրովն էլ մեջներումը՝ էն վախտն են վրա հասնում, որ քյուրդ Օքյուզ աղեն վաղուց Կոլոնիեն քանդել ու երեք հազար մարդով եսրների կեսը կոտորել, կեսը առաջն արել՝ տանում ա: Արինն աչքերն առած՝ ընկնում են էս մեկ բուռը զորքը էն անթիվ բազմությունի եդևիցը: Քուրդ ու ղարափափախ՝ եսրները տալիս են մեկ քանի մարդի ձեռք ու իրանք ետ դառնում: Էս միջոցումը Մովրովը հայի ղոնշունն առնում, փախչում ա, որ իր գլուխը պրծացնի:

Միմիայն քաջն Սոսի մեկ քարի տակի իր կտրիչ ընկեր Մելիք Օհանջանի հետ՝ ղայիմանում ու մեկը մեկին ձեն են տալիս. «Նամարդությունն ու թուլությունը տղամարդի համար ամոթ ա, քաջությամբ մեռնենք, որ մեր որդիքն էլ իմանան, թե մենք էլ ենք սիրտ ունեցել և մեր երկրի թասիբը քաշել, մեր աշխարհի սիրով մեռել: Էս մուռտառ արինն էլ ինչի՞ ա պետքը, որ էսպես օրը չենք թափիլ: Չոլումը մեռնիլը տղամարդություն է»: Ճանանչ թուրքեր ձեն են տալիս՝ «Սոսի աղա, քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կբռնի, թե քեզ վրա թուր բարձրացնենք: Մենք քեզ կտանինք, սաղ սալամաթ ճամփու կգցենք, մի՛ անիր, գլուխդ մահու մի՛ տուր, քեզ ենք ափսոս գալիս, արի՛, քեզ խնայի՛ր»: Բայց իսկույն Սոսի կասկած ունելով, թե իրանց կբռնեն, եսիր կանեն, նրանց խոսքին չի նայում ու առաջին թվանքը որ չի քցում, Օքյուզ աղի տղեն է սֆթա ձիու շլնքովն ընկնում: Կատաղած հարամին ընչանք վրա կհասներ, մեկ տասնհինգ մարդ էլ սպանում են էս կտրիչ հսկայքը ու թուրները հանած՝ երբ բարութները հատնում ա, ընկնում են գազանների մեջը առյուծի պես: Ընչանք իրենց հոգին կտային, մեկ տասը հոգի էլ թրի են մատաղ անում ու իրանք աստծուն մատաղ ըլում:

Հանգի՛ստ ձեր սուրբ ոսկերացը, ո՜վ քաջ նահատակք: Ձեր ջիվան ջանի արինն ա, որ էսպես սիրտս կրակում ա: Ի՞նչ հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր հիշատակը իր սրտումը չգրի: Մի՛ իմանաք, թե ձեր ազիզ արինը նահախ տեղը թափվեցավ, էդպես պատվական արինն էր, որ Աստծու սիրտը գութ գցեց, մեր աշխարհն ազատեց ու էս օր էլ ձեր նահատակության քարի տակիցը ձեն ա տալիս:

«Հա՛յք, մեզ պես մեռեք, որ անուն ճարեք»:[21]

21. Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպ

## ՌՈՒՍԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԵՎ 1852 Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ

Ռուսաց տիրապետության ներքո Շուլավերը բռնեց զարգացման ու վերելքի ուղին: Ժամանակի ընթացքում բնակավայրը նոր կառուցապատումներով այնպես գեղեցկացավ ու ընդլայնվեց, որ շուտով վերածվեց գյուղաքաղաքի ու նաև Բորչալուի գավառանիստ կենտրոնի: Հարկ է նշել, որ զարգացման հիմնական վերընթացը տեղի ունեցավ 1852 թ. տեղի ունեցած գյուղացիական հայտնի հուզումներից հետո,[22] որի արդյունքում բավականին սահմանափակվեցին կալվածատիրական արտոնությունները. «...գիւղացիները գանգատւում են Վորոնցովին մելիքների հարստահարութիւնների մասին և նա հրամայում է տնատեղիները և այգիները գիւղացիներին սեպհականութիւն համարել և միայն արտերից տասանորդ տալ մելիքներին, ինչպէս և կատարւում է մինչև այժմ»[23] (տես՝ «Հավելված N1»):

## ՇՈՒԼԱՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ

Հետաքրքրական են ժամանակի ընթացքում Շուլավերի վերաբերյալ տարբեր հեղինակների գրչին պատկանող նկարագրությունները: Օրինակ, գերմանացի բնագետ Կարլ Քոխը 1837 թ. Թիֆլիսից Լոռի կատարած ճամփորդության ընթացքում տվել է նաև Շուլավերի նկարագրությունը. «Այստեղ եւս բոլոր տները աւելի գետնափոր են, ինչպէս որ առհասարակ ամբողջ Հայաստանում հայերը եւ թաթարները սովորութիւն ունեն շինելու: Տների ներսը սակայն յաճախ ընդարձակ է լինում, աւելի հաճախ՝ անասունների գոմերի հետ մի ամբողջութիւն կազմելով: Այս բանը գերադասւում է մանաւանդ նրա համար, որ ձմեռները բնակարանները աւելի տաք են լինում»,[24] իսկ 1837 թ. Թիֆլիսից Անի մեկնած Խ. Աբովյանը Շուլավերի մասին նշել է. «Շուլաւեր ունի զդրութիւն զարմանալի: Յամենայն կողմանէ շրջապատեն զնա լերինք, և միմիայն դէպի հիւսիս-արևելս է բաց: Այգիք՝ որք սփռեալ կան յերկուս ափս գետոյն, տան զամենայն տեսակ պտուղս»:[25] Ի

22 Այդ մասին տես «1852 թ. Շուլավերում տեղի ունեցած հուզումները» հոդվածը (ձեռագիր, ռուսերեն): Հիմք՝ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 468, ց. 2, գ. 126, թ. 1-9: Նաև՝ **Парсамяна В.А.**, Крестьянское движение в Шулаверах в 1852 г., «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1954, N 1, էջ 65-82: Նույնը՝ Պարսամյան Վ.Ա., Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1988, էջ 186-205:

23 «Ազգագրական Հանդէս», VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 332:

24 Կարլ Քոխ Հայաստանի մասին, գրեց՝ Արտ. Աբեղեան, «Հայրենիք» ամսագիր, 1930, N 5, էջ 151:

25 **Զարյան Ռ.**, Աբովյանի անհայտ շրջագայություններից, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1948, N 9, էջ 39:



դեպ, թե Շուլավերն ընդամենը 30-40 տարվա ընթացքում որչափ էր բարեփոխվել, երևում է թեկուզ այն վկայությունից, որ 1800 թ.-ին, օրինակ, տեղում միայն մեկ այգի էր եղել. «Վրաց Ալէքսանդր թագաւորազնի ժամանակ, այսինքն 90 տարի առաջ, ներկայ այգեշատ և գինէտ Շուլաւէրում ուրիշ այգօ չկար, բացի խանի այգուց...»:[26] Արդեն XIX դարի կեսին Շուլավերն ուներ 400-ից ավելի մրգատու և խաղողի այգի. «Հողն արգաւանդ է և բերրի, ջուրն ոչ այնքան բարեհամ, այլ յաւէտ վնասակար, ունի աւելի քան գչորս հարիւր պտղաբեր այգիս և ըստ մեծի մասին վաճառականութիւնք բնակչաց բաղկանան և գինւոյ և յօղւոյ»:[27]

1880-ականներին այգիների թիվը հասել էր 700-ի. «...պարապում են երկրագործութիւնով և այգեգործութիւնով, այգիների թիւը հասնում է 700-ի»:[28]

Ինչ վերաբերում է բնակարանային հարմարություններին և դրանց ձևին, ապա հատկանշական է, որ մինչև 1870-80-ական թվականները շուլավերցիները բնակվում էին ավանդական (հազարաշեն) տիպի տներում և միայն այդ լայնատիպ գյուղը կամաց-կամաց սկսեց կառուցապատվել այսպես կոչված «եվրոպական» տիպի տներով: 1876 թ. գյուղ ուղևորվողներից մեկը նշել է. «... Հա-



26 «Նոր-Դար», 1890, N 154, էջ 2:

27 **Ջալալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 79-80:

28 «Արձագանք», 1884, N 42, էջ 612:



Շուլավերի տեսքը XIX դ. վերջին (լուսանկարը՝ Դմիտրի Երմակովի)

րուստ Շուլավէրն անգամ, որ 20 հազար մանէթ է ծախսել իւր եկեղեցու վերայ և պահում է մի քանի քահանաներ, շատ աղքատ բնակարանների մեջ է բնակում»:[29]

1884-ին մեկ այլ այցելու հակիրճ նշել է. «Բնակիչների տները կիսով չափ ճաշակով շինություններ են. բայց փողոցներն անկանոն...»:[30]

## ՔԱՂԱՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՓՈՐՁ

XX դարի սկզբին արդեն շոշափվել էր Շուլավերին քաղաքի կարգավիճակ տալու հարցը, բայց այդ խնդրում առկա էին էական բարդություններ: Մասնավորապես. «... Շուլավէրը ոչ գիւղ է, ոչ էլ քաղաք, վաղ թէ ուշ նա գուցէ գաւառական քաղաք կը դառնայ, բայց համաձայն 1873 թւի պօլօժէնիայի, քանի որ շուլավէրցիները սեփականատէրեր չեն բոլոր հողերի, շատ դժուար է նրան քաղաք դարձնել...»:[31]

29 «Փորձ», 1876, N 2, էճ 427:
30 «Արձագանք», Նույն տեղում:
31 «Մշակ», 1902, N 202, էջ 2:



Արդեն 1914 թ. «Շուլավէրը քաղաքի վերածելու նախապայմանները» խորագրով հրապարակման մեջ նշված էր, որ չնայած բնակավայրն ուներ շուրջ 5000 բնակիչ և Բորչալու գավառի կենտրոնն էր, այնուամենայնիվ քաղաքի կարգավիճակ ստանալու համար զգացվում էր վարչարարական բազմաբնույթ ու տևական աշխատանք:[32]

1913 թվականից պատրաստվում էին քաղաքային դումայի ընտրություններին, այն խափանվեց I համաշխարհային պատերազմի պատճառով:

1923 թ. սեպտեմբերի 25-ին «Մարտակոչ» թերթը (176) գրում է, որ Շուլավերում հրավիրել էին կուսակցության և կոմսոմոլի խառը նիստ Վահան Խուդադյանի նախագահությամբ... Որոշվեց քաղաքի անունը փոխել՝ Շուլավերը վերանվանել ի պատիվ Ստ. Շահումյանի:

## ՇՈՒԼԱՎԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱԼՎԱԾՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՏԵՐԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ

Սկսած 1852 թ.-ից, երբ ի հետևանք կալվածատերերի դեմ բարձրացած գյուղացիական հուզումների ծնունդ առան իրավական նոր հարաբերություններ, առավել մեծ թափ ստացան նոր հողերի յուրացման, մշակման, այգիների ընդարձակման աշխատանքները. «Այստեղ այգետեղերն և տնատեղերը ժողովրդին սեփականութիւն է տուած Վարանցովի ժամանակից, իսկ վարելահողերն և շրջապատ անտառները կիսով արքունական և կիսով կալուածք զանազան ազնուականների, գլխաւորապէս հայոց, որոնցից երկու տուն Մելիք-Սարգսեանց և Քալանթարեանց գտնվում են Շուլաւէրում և ստանում են տասանորդ միայն»:[34]

Շուլավերցիները տիրում էին ընդարձակ կալվածքների: Հյուսիսում այդ սահմանը հասնում էր մինչև Խրամ գետը. «...Խրամի այն ափը, որտեղ գտնվում է այդ ափի պատկանողի ջրաղացը, այն է՝ Միշա բեկի ու Սոփիա-խանումի ջրաղացը, որտեղ շուլաւէրցիները ցորէն են բերում աղալու, և այն տեղից Թիֆլիզ ծախելու, հենց այդ տեղից բարձրանալով՝ սկսվում է Մեծ Շուլաւրեի վարելահողերը, որ ցանում են միայն ցորէն և գարի»:[35] Ձգալի էին Քալանթարյանցներին պատկանող հողատարածքները:

Նշանակալի էր նաև բարեգործ Ռոմանոս Նադիրյանցի այրուն՝ տիկին Եկատերինա Նադիրյանին պատկանող կալվածքը. «... ահագին կալւածներ ունի»:[37]

32 «Մշակ», 1914, N 222, էջ 3:
34 «Մշակ», 1914, N 222, էջ 3:
35 «Մշակ», 1873, N 2, էջ 2:
37 «Նոր-Դար», 1890, N 140, էջ 2:

Յատկանշական է, որ իրենց հնարավորությունների համեմատ Շուլավերի ազնվական կալվածատերերը ավելի քիչ էին մասնակցել հասարակական կամ բարեգործական աշխատանքներին, քան, ինչպես ստորև կտեսնենք. օրինակ, որոշ հարստացած գյուղացիներ. «Ինչպէս Մեծ Շուլաւէրի անտառները պատկանում են զանազան իշխաններին՝ նույնպէս և բոլոր վարելահողերը պատկանում են մասամբ այդ անտառատէր իշխաններին, իսկ միւս բոլորը՝ երկու հայազգի ազնուական տան – Քալանթարեանցներին և Մելիք-Սարգսեանցներին: Առաջինները աւելի մեծ ազդեցութիւն են անում գիւղի վրա, քան երկրորդները, բայց կարելի է ասել, որ թէև փոքր խնամակալ աչքով են նայում գիւղացիների վերա, բայց մինչև այսօր ոչ մի առանձին օգուտ չեն տուել նորանց, ոչ մի բանում չեն կամեցել գիւղի ոչ մի շահաւէտութեանը մասնակից լինել, մինչև այսօր նորանցից ոչ մինը ձայն չի հանել գիւղի յառաջադիմութեան համար: Սորանք ստանում են տասանորդ (1/10 մասը վարելահողերի արդիւնքի) գիւղացիներից: Մեծ շուլաւրեցիները վարում են նոյն գիւղում մինչև 4000 օրավար միայն, այդ ի հարկէ չը բաւականալով մի այդքան էլ վարում են շրջակայ գիւղերում»:[38] Ուշագրավ է, որ արդեն XIX դարի վերջին գյուղացիներն ավելի հասարակական օգուտի գիտակցումով (հատկապես ոչ տեղացի կալվածատերերից) ձեռնամուխ էին եղել նոր կալվածների գնման գործին: Նման մի փաստի վկայությունն ունենք 1890 թ.-ից. «Զագամ թաղից 248 ծուխ միասին կամենալով Սպիտակշէն կալուածը Թումանովներից գնել, մասամբ իրենցից տալով, մասամբ ուրիշներից վերցնելով, 1/4 բաժինը գնել էին, որ առաջարկութիւն եղաւ երկու բաժինն էլ առնելու...»:[39] Ի դեպ, ավանդաբար պատմում են, թե Սպիտակշեն տեղամասը XVIII դարում Յերակլ II-ից նվեր էր ստացել Իշխան Թումանյանցը:

## ՏԱՆՈՒՏԵՐԵՐԻ (ԳՅՈՒՂԱՊԵՏԵՐԻ) ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒ ՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յայտնի է, որ Գարդմանքի 8 գյուղերից գաղթած բնակիչները Շուլավերում հաստատվել էին իրենց գյուղապետերի (քյոխվա) և մելիքների առաջնորդությամբ: Դրանք էին՝ Աղբալանց Ալլահվերդին (Քամանդար), Երիբեկանց Ակոբը (Կորխ), Միրաքանց Եղիզարը (Մրեջուր), Յինանց Ավալը (Մելիքզադե), Ղարդաշանց Վանին (Ղարամուրադ), Միրանց Թամրազը (Շմեղ), Քսականց Նադիրը (Մըմրթլու) և Բալասանանց Մնացականը (Աղբուլաղ):[40] Ինչ վերաբերում է XIX դ. 2-րդ կեսին Շուլավերի գյուղապետությունը ստանձնած անձանց, ապա դրանք են՝ Դավթունց Մակի (1861-63),

38 **Արշակ Ծատուրեանց**, Նամակ Մեծ-Շուլաւէրից, «Մշակ», 1873, N 15, էջ 3:

39 «Նոր-Դար», 1890, N 140, էջ 2:

40 **Քամալյան Ս.**, VI-9:



Յանես Քեխվանց Ավետիք (1866-69), Չոբանյան Սիմոն (1869-72), Բաղմանանց Գևորգ (1872-76), Նարինանց Մկրտում (1877), Միրաքանց Սողոմոն (1878-81), Ղարդաշանց Մոսի (1881-84), Խարազանց Ավետիք և Միրաքանց Յովսեփ (1885-87), Պառավանց Սիմոն (1887-88), Ղուլունց Յանես (1888-89), Միրաքանց Սողոմոն (1889 թ. մայիսի 15-ից):[41]

Տակավին 1873 թ. Շուլավերն արդեն ուներ նորաշեն բաղնիք, գրենի շտեմարան: Այստեղ էր նստում հաշտարար դատավորը: Գոյություն ուներ նաև բանտի նորակառույց շենքը:[42]

Յասարակական նշանակության հաստատությունների հիմնադրման գործը մեծապես կապված է եղել տանուտերի ճիշտ ընտրության հետ: Այդ առումով, օրինակ՝ 1891 թ. կացությունը հետևյալն էր. «...Արդէն մի տարի և 4 ամիս է, որ շուլավէրցիք զրկուած են սեպհական տանուտէրից: Բաւական տուժելուց յետոյ ժողովուրդը փափագում է ունենալ իր ընտրած տանուտէրը, որի մասին քանիցս դիմել է պ. գաւառապետին, որ և յօժարութիւն է յայտնել»:[43]

## ՇՈՒԼԱՎԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՆՈՐ ՏԱՆՈՒՏԵՐԸ



Ներկա գավառապետ պ. Արնոլդի ձեռք առած եռանդուն և նպատակահարմար միջոցների շնորհիվ Բորչալուի գավառը ավազակություններից և գողություններից հանգըստացել է, այն աղալարները, որոնք համարվում էին իբրև ավազակների գլխավոր հովանավորներ, գավառից հեռացված են, որին հետեվել է և կատարեալ խաղաղություն:

Ենթադրելով, որ Շուլավերը, իբրև գավառական կենտրոն, կարող է շատ թե քիչ հետաքրքրել ընթերցողներին, ավելորդ չի լինիլ ծանոթանալ նրա ներկա շինական կառավարության կազմակերպության հետ: Շինական կառավարության կազմակերպությունը իր սկզբունքներով տեղական համայնքին տալիս է ինքնուրույնություն: Բայց կառավարության ղեկը, որով պիտի կարգավորել գյուղացիների դրությունը,

41 Նույն տեղում:

42 «Մշակ», 1873, N 2, էջ 2:

43 «Արծագանք», 1891, էջ 87:

սովորաբար կենտրոնանում էր անհուսալի ընտրեալների ձեռքում, որոնք հասարակական գործունեության շիրմայի տակ հարստանալու տենչով ներշնչված՝ համայնականը զոհում էին անձնականին: Չնայած որ շինական կառավարության մեջ միշտ գործադրվելիս է եղել ընտրական սկզբունքը, բայց այդ սկզբունքն էլ զերծ չէր թերություններից, շահարկումներից, անարժան անձանց կողմից պաշտոններ զբաղեցնելու անցանկալի հետևանքներից: Նման անհատներն իրենց անազնիվ գործելակերպով կազմալուծում էին համայնքի բարոյական մթնոլորտը, քայքայում տնտեսությունը:

Բայց ժամանակի ընթացքում հասունանալով՝ մատաղ սերունդը իր եղբորը օգնության հասավ: Նրա երևալուն պես, սկսեց թուլանալ հների ավերիչ ուժը, որին և հետևեց շինական կառավարության ավանդական կազմի անկումն. և հինգ ամիս սրանից առաջ իբրև տանուտեր միաձայն ընտրվեց երիտասարդներից Վ. Մեհրաբյանը: Բացի այդ շինական դատավորներն էլ երիտասարդ շրջանից լինելով՝ այժմ տանուտերի հետ ձեռք ձեռքի տված աշխատում են հոգուտ հասարակական շահերի: Այն կանոններն ու օրենքները, որոնք նախորդների ձեռքին իբրև ավերիչ խարազան էին ծառայում հասարակության համար, այժմ գործին նվիրված անաչառ երիտասարդների ձեռքում ցանկալի արդյունքներ են տալիս: Մինչև այժմ տեղական շահերին հասած վնասի պատճառները այժմյան տանուտերի կողմից սաստիկ հալածվում են, և այդ պատճառով զարմանալի էլ չէ, որ ծանր ժամանակների մասին կրկնվող բողոքների փոխարեն այժմ լսվում են միայն գոհունակության աղաղակներ: Քանի որ այս ուրախալի երևույթը կարող է իբրև բարոյական խրատ ծառայել և ուրիշ հասարակությունների համար, ուստի ավելորդ չի լինիլ ընդհանուր գծերով ներկայացնել այստեղ Շուլավերի համայնական կյանքի մեջ իր տանուտերի եռանդուն գործունեության շնորհիվ տեղի ունեցած բարելավումները:

ա) Նրա կարգադրությամբ կիրակի օրերը բոլոր խանութները և արհեստանոցները փակվում են, որպեսզի ժողովուրդը եկեղեցի հաճախի:

բ) Խիստ ուշադրություն է դարձրած ընդհանուր փողոցների մաքրության վրա, որին հետևում են հատուկ դրա համար նշանակված մարդիկ:

գ) Այգիների և դաշտերի ոռոգման համար նորոգվում են արխերը:

դ) Գյուղից դուրս շինվում է մի շինություն՝ հասրակական սպանդանոցի համար, որի շնորհիվ Շուլավերի միակ հարմար փողոցը այսուհետև կազատվի արեան և գարշահոտությունների ավազան լինելուց:

ե) Հասարակական հաշվով հրավիրված է հատուկ Շուլավերի համար մի երիտասարդ բժիշկ (Խատիսեան), որի կարևորության մասին էլ խոսք չի կարող լինել:Աղքատ դասակարգի համար հասարակական հաշվով մի քանի անհրաժեշտ դեղեր են ձեռք բերված, որոնցից պետք է օգտվեն նրանք ձրիապես:[33]



զ) Հասրակական կարիքներին վերաբերող հարցեր լուծելու համար լինում են կանոնավոր ժողովներ, որտեղ խիստ կարգ և կանոնի շնորհիվ այլևս խեղճ դասակարգի ձայնը չի դատապարտվում հավիտյան լռության, ինչպես որ եղել էր մինչև օրս. այլ ընդհակառակը՝ անաչառ տանուտերի առաջ նա ներկայանում է իր բոլոր ցավերով և գտնում է նրա մեջ ցանկալի արձագանք:

է) Խորտակվել են հասարակության քայքայող *թայֆայականությունները*:

ը) Առաջին անգամ ներկա տանուտերի միջոցով կատարվեց կանոնավոր և բարեխիղճ կերպով հարկերի բաժանումը, որոնց բեռը գլխավորապես ծանրացած էր հասարակ դասակարգի վրա:

թ) Հասարակական աղբյուրներից ելից և մտից հաշիվները պահվում են առանձին ժապավենի մատյաններում անպայման կանոնավոր: Հասարակական եկամուտների աղբյուրները կանոնավորում և ըստ կարևոր չափ ավելացվում են:

ժ) Տեղացի գինեվաճառները գործ էին ածում սովորաբար *գուգում* անունով մի անորոշ չափ, երկու ծանրությամբ՝ մեկը 25 գրվ., որով իրանք էին գնում գյուղացիներից, և մյուսը՝ 20 գրվ., որով գնած գինիները ծախում էին իրանք ուրիշների վրա: Այսպիսով նրանք, գործ ածելով հիշյալ անկանոն /// *գուգումը*, տարեկան գյուղացիներին վնաս էին հասցնում մոտ 6000 ռուբլի, որը խեղճ դասակարգի համար ահագին կորուստ է: Որպեսզի գյուղացիների նյութական բարեկեցությանը այդչափ վնաս պատճառող չարիքին ընդմիշտ վերջ տրվի, բարեմիտ տանուտերը, ժողովելով բոլոր տեղական գուգումները ջարդեց և կարգարդրեց գործածել որոշ չափի վեդրո՝ հասարակական կնիքով վավերացված:

ի) Բորչալուի գավառի հասարակությունը համոզվեց այգիները բժշկելու նյութերի համար հասարակական հաշվով պահեստ հիմնել, որտեղից կարող են օգտվել մատչելի գներով: Այդ մասին էլ տանուտերը արդեն հարկավոր կարգադրություն է արել:

լ) Գողություններին վերջ է տրվել: Իսկ երբեմնակի պատահածն էլ իսկույն բացվում է, և վնասվողը կրկնակի բավարարություն է ստանում:

խ) Անցեալ ծննդյան և տոն օրերին մկրտության մոտ քառասուն աղքատ ընտանիք տանուտերի կարգադրությամբ հասարակության հաշվով ստացավ յուղի, բրնձի, ձկան և այլ պաշարներ:

Քիչ ժամանակից հետո հասարակությունը համոզվեց իր տանուտերի եռանդուն և անաչառ գործունեության մեջ, առաջին անգամ նշանակեց նրան 500 ռուբ. ռոճիկ, թեև այդ շատ չնչին վարձատրություն է համեմատած այն դժվարությունների հետ, որոնցով բարդված է տանուտերի պաշտոնը Շուլավերի նման մեծ կենտրոնում, բայց այնուամենայնիվ նա բարոյական տեսակետից մեծ նշանակություն ունի (ընդհանապես գյուղում տանուտերերը ռոճիկով չեն լինում): Այսքանով բավականանալով, հուսով ենք որ Շուլավերը դարձյալ կենթարկվի

նորանոր բարելավություններին, այնպես որ նրա ներկա դրությունն էլ ժամանակավոր բնույթ չի կրի:

1896 թ. մայիսին 27-ին Շուլավերում սկիզբ էր առել փոխօգնության նպատակին ծառայող և մի որոշ կապիտալ պարունակող «Հասարակական արկղ» կոչված բանկը: Անհրաժեշտության դեպքում դրանից օգտվում էին բոլոր կարիքավորները. «Եւ այդպիսով աղքատ, խեղճ, հարստահարված ժողովուրդն էլ ապագայում միջոց կունենայ ազատվելու այն «տզրուկներից», որոնց ձեռքում արիւնաքամ է լինում նիւթապես...»:[44]

*Կ.Մ.*
*Շուլավեր, 8 մարտի*

## ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Նյութական մշակույթի պահպանված բազմաթիվ հուշարձաններ վկայում են, որ Շուլավերը հայաբնակ է եղել (ըստ ամենայնի՝ զուտ հայաբնակ): Մեզ են հասել նաև բնիկ տոհմերից մի քանիսի անունները, ինչպես՝ Ծովաշենցի, Բշանց...

Արդեն նշել ենք, որ XVIII դարի 40-ականներին բնիկների արտագաղթից հետո, հազիվ 1-1,5 տասնամյակ անց Շուլավերում հաստատվել էին գարդմանցի հայեր. «...նորա բնակիչները տակաւին պարսիկների բարբարոսութեան տակ գտնված ժամանակ գաղթած են Շամշադին նահանգի զանազան գիւղերից: Եւ հենց այդ պատճառաւ, թաղերը կրում են այժմ ևս գիւղերի անունները, որոնցից գաղթած են: Մեծ Շուլաւերը բաժանվում է երկու մասի 1) Զագեամ և 2) Ղարամուրադ: Զագեամը ևս բաժանվում է՝ Քննդար, կրկին՝ Զագեամ, Կորխ, Մրէջուր և այլն թաղերի: Ղարամուրադը ևս բաժանվում է Լղարակ, Աղբուլաղ, Մմրթլու, կրկին Ղարամուրատ և այլ թաղեր...»:[45]

1978 թ. բացառիկ արժեք ներկայացնող մի վկայագիր են ստեղծել շուլավերցիներ՝ Գրիգոր Աստուրի Նալբանդյանը, Սարիբեկ Հակոբի Տեր-Հակոբյանը, Հովհաննես Ղազազյանը և Պետրոս Ղազար-յանը (100 տարեկան): Վերջինը մահացել է 1980 թ. 102 տարեկան հասակում: Համաձայն այդ վավերագրի՝ 1757 թ. Շամշադին գավառից Շուլավեր տեղափոխված հիմնադիր տոհմերն էին.

44. «Մշակ», 1896, N 65, էջ 2:
45 «Մեղու Հայաստանի», 1873, N 9, էջ 2:



### ա/ ՂԱՐԱՄՈՒՐԱԴ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Տեր Վրթանանք – Վարդանյաններ
2. Դրդաշանք – Դարդաշյաններ
3. Ծանունք – Ծանյաններ
4. Զաքունք – Զաքարյաններ, Արզումանյաններ
5. Պտրոսանք – Մխիթարյաններ
6. Բըլսանանք – Բալասանյաններ
7. Քմալանք – Քամալյաններ
8. Գյոռխնանք – Մուշտունք – Աղբալյաններ

### բ/ ԱՂԲՈՒԼԱՂ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Տեր Ակոփանք – Տեր-Հակոբյաններ
2. Ծեթիպուլիկանք – Մաճկալյաններ
3. Բլդիկանք – Աբելյաններ
4. Շուտուտանք – Մկրտչյաններ
5. Բայունք – Տեր-Սիմոնյաններ
6. Վսկանանք – Ոսկանյաններ
7. Բաջունք – Ալեքսանյաններ

### գ/ ՄԱՍՄՈՒՌՏՈՒԿԻՑ (ՄՄՐԹԼՈՒ) ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Բդախանք /Բաղդունք, Կուզիկանք/ – Բուդաղյաններ
2. Ձունունանք – Չոբանյաններ
3. Նադիրանք /Կոնունք, Պավլիչանք, Քոսականք, Աղաբաբանք/ Նադիրյաններ
4. Իրիցանք /Ծիվծիվանք/ – Հակոբյաններ
5. Ըկռավանք /Ճուկռումանք/ – Ղուշչյաններ
6. Մարութանք – Մարությաններ
7. Կիլառանք – Օհանյաններ
8. Փոլունք – Չոբանյաններ
9. Բլասանք – Բալասանյաններ, նաև Հակոբյաններ
10. Ղզարանք – Ղազարյաններ
11. Շշվարանք – Շահսուվարյաններ
12. Բշանք /Բղիրանք/ – Միրզոյաններ
13. Մրոանք – Պետրոսյաններ
14. Դալլաքանք – Դալլաքյաններ
15. Մանդունք – Բալասանյաններ
16. Պրունանք – Պարոնյաններ
17. Բղմանանք – Բաղմանյաններ
18. Կզրանք – Ներսիսյաններ
19. Չխկալանք – Սիմոնյաններ

20. Պըլըժանք – Պետրոսյաններ
21. Կտուզանք – Ղազարյաններ
22. Խնումանք – Սարգսյաններ
23. Բոզունք – Վարդանյաններ
24. Քեչիդաղանք /Պողունք, Ըչոնանք, Քաչալ-բաբոանք, Շաթիլանք, Մաշտունք/ – Չոբանյաններ
25. Տանծունք – Պետրոսյաններ
26. Սըղըքելանք – Սաղաթելյաններ
27. Քյուրդունք – Ղուչյաններ
28. Դիլանանք – Դիլանյաններ
29. Ղարդունք – Հովսեփյաններ
30. Ծըրքտանանք – Մկրտչյաններ
31. Ըխշանք /Իշխանք/ – Սարգսյաններ
32. Ըդամանք – Ադամյաններ
33. Ժուլիկ-Գևոյանք – Ալահվերդյաններ
34. Թուլունք – Դուլյաններ
35. Հանոյանք – Պետրոսյաններ
36. Քյասունք – Գասպարյաններ
37. Ջմալանք – Սինասարյաններ
38. Շուշունք – Տեր-Հակոբյաններ
39. Ադունք /Մադոանք/ – Մաթևոսյաններ
40. Հթամանք /Փշոտանք/ – Ադամյաններ
41. Սադոանք – Մանվելյաններ
42. Քչալանք – Պետրոսյաններ
43. Քոչարանք – Քոչարյաններ
44. Ջքրանք – Ջաքարյաններ
45. Կոլոլանք – Աղաբեգյաններ
46. Ջորունք – Բախշյաններ
47. Ղոխունք – Գալստյաններ
48. Չուղուլանք – Վարդանյաններ
49. Ջոկունք – Միրզոյաններ

## դ/ ՄԵԼԻՔՋԱԴԱ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Քրանանք – Քյուրանյաններ
2. Սարիբեգանք – Սարիբեգյաններ
3. Նըլբանդանք – Նալբանդյաններ
4. Ղլեչունք – Ղալեչյաններ
5. Գրջանքն /Ըսլանանք/ – Հակոբջանյաններ
6. Ըվանանք – Ավանյաններ
7. Ղվալանք – Սուսանյաններ
8. Նիկողոսանք – Նիկողոսյաններ
9. Գյուլիմոսանք /Դբաղանք/ – Հովակիմյաններ



10. Մջանանք /Քթոցանք/ – Մեջանյաններ
11. Նրինանք – Նարինյաններ /Նրինանց քաջքը/
12. Բգոզանք – Ավետիսյաններ
13. Դուրունք – Դուրյաններ
14. Քյուրդունք – Մկրտումյաններ
15. Պապունք – Պետրոսյաններ
16. Քըմըտարանք /Ցորնանք/ – Հակոբյաններ
17. Շիփունք – Ղուկասյաններ
18. Կաղիրիցանք – Երիցյաններ
19. Յեղսանանք – Պետրոսյաններ
20. Ղախունք /Չալ-Դանիելանք/ – Ադամյաններ և Հարությունյաններ
21. Բալի-Ըտիկանք /Մեռոանք/ – Մուսայելյաններ
22. Կոծունք – Վարդանյաններ
23. Ճքնվերանք – Ոսկանյաններ
24. Քլաշանք – Քալաշյաններ
25. Ղազրիցանք – Ղազարյաններ
26. Չիլինգարանք – Չիլինգարյաններ
27. Պզրմադանք – Ամիրբեկյաններ
28. Ըզանք /Ըզզանք, Ազնիվանք, Յուզբաշունք/ – Քալանթարյաններ
29. Շլաչունք – Առաքելյան (հանգած են, չկան)
30. Քասի տղերանք, Շլախանք – Պողոսյաններ
31. Թռանանք – Թառանյաններ

## ե/ ՇՄԵՂ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Մարդունք – Մարդյաններ
2. Վնիսանք – Հովհաննիսյաններ
3. Սուրունանանք – Սիրունանյաններ
4. Ղրիբանք – Ղարիբյաններ
5. Սահականք – Սահակյաններ
6. Վսկանանք – Ոսկանյաններ
7. Ծռնվերանք /Չաչի-Պետոանք/ – Թեյմուրազյաններ
8. Քամալանք – Քամալյաններ
9. Ուրումանք – Ուրումյաններ
10. Փռանգյանք – Գրիգորյաններ
11. Բալունք – Բալյաններ
12. Թանունք կամ Տոճի Իշխանանք – Վարդանյաններ
13. Թոզոտանք /Մրսխանանք, Փափուկանք/ – Միրզախանյաններ
14. Սրիփանք – Պետրոսյաներ
15. Մրիլանք /Գուրգենանք/ – Աբյաններ
16. Չատուանք – Չատինյաններ

17. Եղիկանք – Եղիկյաններ
18. Ապիջալանք /Պպանք/ – Ավետիսյաններ
19. Փիրուզանք – Սուլթանյաններ

## զ/ ՔՅԱՄԱՆԴԱՐ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Մթոսանք – Մաթևոսյաններ
2. Ասրունք – Ասրյաններ
3. Թանունք – Թանյաններ, Վարդանյաններ
4. Ճղոտանք – Սաղաթելյաններ
5. Կլվեռանք /Ընդոնանք/ – Անտոնյաններ
6. Խրազանք /Կալալանք, Տիզանանք, Օզանք, Ղռանանք, Խաթայանք, Վիսունք,Չոլդունք, Չոփկանք, Ծուղրուղանք/ – այս բոլորն էլ գրվում են՝ Չոբանյաններ
7. Ջոնջոլանք /Ըվալանք/ – Ավալյաններ
8. Խռատանք – Խառատյաններ
9. Ավկի-Բդալանք – Ղալլեչյաններ
10. Ամի-Մոսանք /Քոլի-Գևոանք/ – Մխիթարյաններ
11. Չալոանք /Ծկթեմանք/ – Մխիթարյաններ
12. Վետունք – Մանուչարյաններ
13. Զարգար-Իսայանք – Եսայաններ
14. Սայոանք /Կիկի-Յթամանք, Ակկապողանք/ – Մխիթարյաններ
15. Կոնջորանք – Կոնջոռյաններ
16. Չալունք – Չալյաններ
17. Խնզարանք – Խանազարյաններ
18. Մուքելանք – Մարգարյաններ
19. Զարգարանք – Զարգարյաններ
20. Տեր-Ղազարանք – Ղազարյաններ
21. Վալունք /Ըղբալանք, Բլլվանք/ – Մելիք-Ադամյաններ
22. Ծըտուրանք – Ծատուրյաններ
23. Նզարանք – Նազարյաններ
24. Մրքարանք - Ներքինշուլավերցիներ (Մ. և Բ. Մարգարյաններ

## ը/ ՄՐԵՋՈՒՐ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Աթունք /Ռըհանանք, Պալոզանք, Ամիրանք, Ղոնղորանք, Բախտունք/ –Ծատուրյաններ
2. Ղզազանք – Ղազազյաններ
3. Մաչունք – Մաչյաններ
4. Նաիբանք /Մադունք, Քյոսանք/ – Մարտիրոսյաններ
5. Ճոլունք /Տեր-Մոսանք/ – Յակոբյաններ
6. Շահունք – Շահինյաններ
7. Յանես-քյոխվանք /Իվանանք, Չոփուռանք/ – Միրզոյաններ



8. Մըրութանք – Մարությաններ
9. Ղրխանանք – Ղարախանյաններ
10. Դըրչինանք /Գրիշկանք, Սամակրոանք, Զռոհանք, Թահանք, Ծիբոանք/ – Ռեստևանյաններ
11. Ղրամանք – Ղարամյաններ
12. Ըղանք – Աղայաններ
13. Կվերքանք /Զմոանք, Ղումաշանք/ – Գևորգյաններ և Մովսիսյաններ
14. Ղվալանք /Ժուլիկանք/ – Ղավալյաններ
15. Մճկալանք /Պոպոկանք/ – Մաճկալյաններ
16. Բադունք – Բադյաններ
17. Զնդարանք – Տեր-Գաբրիելյաններ
18. Սուքասանք – Սուքիասյաններ
19. Քթանանք – Մխիթարյաններ
20. Շլեպչունք – Շլեպչյաններ
21. Ղուլունք – Ղուլյաններ
22. Տրտերանք – Տեր-Գրիգորյաններ
23. Մրզանք – Յովակիմյաններ
24. Շալխունք – Շալխյաններ
25. Քառունք – Ղալեչյաններ
26. Դուդունք – Խուդադյաններ
27. Մելքիկանք – Մելքիկյաններ
28. Շըհբազանք – Ալահվերդյաններ
29. Իսոանք /Տվարանք/ – Մնացականյաններ
30. Ավոանք – Պետրոսյաններ
31. Չփարանք – Աղաբալյաններ
32. Վիտիսանք – Ավետիսյաններ
33. Յարամթոանք – Յարությունյաններ
34. Լիլիկանք – Սարգսյաններ
35. Այդինանք – Այդինյաններ
36. Մըրաքանք – Միրաքյաններ

## թ/ ԿՈՐԽ ԳՅՈՒՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ

1. Պապունք – Պապյաններ
2. Յըրբեգանք – Երիբեգյաններ
3. Շըհըզանք – Շահազիզյաններ (չկան, հանգած են)
4. Ղվալանք – Թեյմուրազյաններ
5. Ջքրանք – Ջաքարյաններ – (հանգած են)
6. Նոթոտանք – Աբրահամյաններ
7. Պառավանք – Պառավյաններ
8. Մլականք /Նզարանք/ – Նազարյաններ
9. Մլլվանք /Քոնգյուլումանք/ – Յովհաննիսյաններ

10. Եղոտանք – Ղալեչյաններ
11. Տխտականք – Ղազարյաններ
12. Քյալչունք – Ղազարյաններ
13. Ըթանք /Անլվանք/ – Սարգսյաններ
14. Դրդամանք /Թիշռանք/ – Պետրոսյաններ
15. Տերտերանք – Տեր-Իսահակյաններ
16. Ըլափանք – Սարգսյաններ
17. Ասկունք – Հարությունյաններ, գրող Մ. Արազին սրանցից է.
18. Ժմհարանք – Ղալեչյաններ
19. Եղունք – Եղիազարյաններ
20. Մելիքանք – Մելիք-Սարգսյաններ
21. Երալունք – Երալյաններ
22 Պամոշնիկանք /Սափարանք/ – Ուլիբեկյաններ

**Ժ/ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԳԱՂԹԱԾ ՏՈՀՄԵՐԸ**

1. Քրիանանք – Քարհանյաններ
2. Չիրքինանք – Չիրքինյաններ
3. Աղասունք – Ղազարյաններ
4. Օհանանք /Բայունք/ – Տեր-Սիմոնյաններ
5. Մալայանք – Հարությունյաններ
6. Պրուտանք – Աբրահամյաններ
7. Աբունք – Տեր-Պողոսյաններ /Գանձակից/
8. Զանգինանք – Զանգինյաններ
9. Ըլբստրականք – Հովհաննիսյաններ
10. Ասլանանք – Սարգսյաններ

Շամշադինից գաղթելիս ոմանք իրենց հետ բերել են ավետարաններ: Ահա նրանց անունները`

1. Սրափանաց տանը կա 2 ավետարան, մեկը մագաղաթի` ձեռագիր 1267 թ., մյուսը տպագիր 1611թ.,
2. Շահունց տանը կա 2 ավետարան, ձեռագիր` 1510 և 1613 թթ.,
3. Եղոտանց տանը` 1 ձեռագիր 1496 թ.,
4. Կիկոլանց տանը` 1 ձեռագիր 1527 թ.,
5. Դորդումանց տանը` 1 ձեռագիր 1601 թ., 1 տպագիր` 1671 թ.,
6. Ղազարենց տանը` 2 ավետարան, մեկը ձեռագիր` 1662 թ., մյուսը տպագիր` 1640 թ.,
7. Օհանանց (Ուհանանց) տանը կա Խոթավանքից բերված Սբ. Նշան կոչվող մասունք` արծաթե տուփի մեջ,
8. Քսականց տանը` 1 ձեռագիր,



9. Մաճկալանց և Աղբալանց տներում կան քարերի կտորներ որոնք Շամշադինում թողած խաչքարերի կտորներ են: Նրանք կոչվում են «Մատնահատ», այսինքն` սրբին մատով դիպած:

Մինչև 1850-60-ական թվականները Շուլավերը եղել է զուտ հայաբնակ, բայց այնուհետև բնակավայր մուտք են գործել նաև փոքրաթիվ այլազգիներ. «Այս գիւղը մի քսան-երեսուն տարի առաջ զուտ հայերից էր բաղկացած, բայց այժմ օրէցօր լցվում են այլազգիներով, մանաւանդ թաթերով և հրէաներով...»:[46] Այլազգիներից` հատկապես հրեաների մուտքը Շուլավեր պայմանավորված էր տեղում առևտրի զարգացմամբ: Արդեն 1873 թ. լրատվական մի նյութից պարզվում է, որ Շուլավերում հաստատված մի քանի տուն հրեաները. «.. առ հասարակ պարապում են մանրավաճառութեամբ...»:[47] Ի դեպ, 1881 թ. հրեաները կառուցել էին նաև իրենց աղոթատունը. «...կան և օտարական արհեստաւոր թուրքեր և առևտուր անող հրէաներ, որոնք 3 տարի առաջ շինել են մի սինագօգայ»:[48] Ավելի ուշ շուլավերաբնակ այլազգիների թվում հիշվում են նաև ռուսներ. «Բացի հայերից կան նաև որպէս ժամանակաւոր ապրողներ` ռուսներ, հրէաներ և թուրքեր»:[49]

Ի դեպ, իրենց հերթին ռուսներն էլ հետ չմնալով հրեաներից ձեռնամուխ էին եղել ուղղափառ մի եկեղեցու կառուցման գործին: Տակավին 1899 թ. փետրվարի 14-ին Շուլավերի ուղղափառ համայնքը քննության էր առել իշխան Սումբատովի նվիրաբերած 150 սաժեն հողակտորի վրա եկեղեցի կառուցելու խնդիրը, սակայն տեղն անհարմար նկատելով` որոշել էին դիմել եղբայրներ Քալանթարյաններին: Վերջիններս համաձայնել էին վաճառել այն վայրը, ուր մի ժամանակ իբր գոյություն էր ունեցել ուղղափառ եկեղեցի: Տեղը` գոյություն ունեցող կառույցներով հանդերձ (որոնց տարեկան հասույթը կազմում էր 400-500 ռուբ.) գնահատվել էր 30.000 ռուբ.:[50] Ըստ երևույթին, գործը հաջող ընթացք է ստացել, քանի որ արդեն 1910 թ. նոյեմբերի 7-ին Կովկասի փոխարքայի, նահանգապետի, վրաց էկզարխի և պատվարժան այլ հյուրերի մասնակցությամբ մեծ հանդեսով Շուլավերում օծվել էր ուղղափառ նորաշեն եկեղեցին:[51]

Որքան էլ, որ կարևոր ու հետաքրքրական են զանազան մարդահամարների արդյունքում ստեղծված վիճակագրական տվյալները, այնուամենայնիվ և ցավոք` Շուլավերի վերաբերմամբ այդպիսիք առկա են սկսած միայն 1840-ական թվականներից: Ձեռքի տակ եղած համանման տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

46. «Նոր-Դար», 1885, N 199, էջ 2:
47. «Մեղու Հայաստանի», Նույն տեղում:
48. «Արձագանք», 1884, N 42, էջ 612:
49. «Ազգագրական հանդէս», VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 332:
50. «Кавказ», 1899, N 49, էջ 3:
51. «Закавкаазье», 1910, N 254, էջ 2:

| Տարեթիվ | Տուն | Ար. | Իգ. | Միասին |
|---|---|---|---|---|
| 1803[52] | 164 | 394 | 378 | 772 |
| 1841[53] | | 1198 | 1079 | 2277 |
| 1842[54] | | 1232 | 1118 | 2429 |
| 1843[55] | | 895 | 932 | 1827 |
| 1844[56] | | 1160 | 1137 | 2297 |
| 1845[57] | | 1250 | 1194 | 2444 |
| 1847[58] | | 1240 | 1032 | 2272 |
| 1849[59] | | 1076 | 1182 | 2258 |
| 1853[60] | | 1403 | 1231 | 2634 |
| 1854[61] | | 1401 | 1247 | 2648 |
| 1857[62] | | 1394 | 1234 | 2628 |
| 1861[63] | 321 | | | |
| 1866[64] | 364 | | | |
| 1873[65] | 490 | | | |
| 1874[66] | | | | 3101 |
| 1876[67] | | | | 2877 |
| 1877[68] | | 1612 | 1389 | 3001 |
| 1880[69] | | 1717 | 1400 | 3117 |
| 1881[70] | | 1756 | 1425 | 3181 |
| 1882[71] | | 1698 | 1403 | 3101 |
| 1883[72] | | 1769 | 1469 | 3238 |
| 1884[73] | 550 | | | |
| 1885[74] | | 1824 | 1495 | 3319 |
| 1887[75] | | 2011 | 1633 | 3644 |
| 1889[76] | | 2137 | 1762 | 3899 |
| 1890[77] | | 1852 | 1566 | 3418 |
| 1891[78] | | 1888 | 1587 | 3475 |
| 1892[79] | | 1898 | 1600 | 3498 |
| 1893[80] | | 2004 | 1667 | 3671 |
| 1897[81] | | 2350 | 1741 | 4091 |
| 1899[82] | | 2610 | 2040 | 4650 |
| 1900[83] | | 2850 | 2420 | 5270 |
| 1901[84] | 607 | 2930 | 2690 | 5620 |
| 1902[85] | | 3010 | 2760 | 5770 |
| 1905[86] | | 3340 | 3040 | 6380 |
| 1907[87] | | | | 4478 |
| 1908[88] | 800 | 1640 | 1490 | 3130 |
| 1910[89] | | 3600 | 3250 | 6850 |
| 1912[90] | | 3600 | 3200 | 6800 |
| 1914[91] | | | | 7683 |
| 1997[92] | 1832 | | | 5842 |

52. AKAK, том 2, Тифлис, 1868, էջ 84
53. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ, 3802, թ. 177-178:
54. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3807, թ. 26-27:
55. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 18-19:
56. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 111-112:
57. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 43-44:
58. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 9-10:
59. ՀՀՊՊԿԱ. ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 65-66:
60. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 88-89:
61. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 82:
62. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 15-16:
63. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, թ. 20-21:
64. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 83:
65. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3860, թ. 4-9:
66. «Кавказский Календарь на 1886 г.», Тифлис, 1885, էջ 119:
67. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 44-45:
68. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 68-69:
69. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 25-26:
70. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 91-92:
71. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 140-141:
72. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 93-94:



73. «Արձագանք», 1884, N 42, էջ 62:
74. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 24:
75. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 61:
76. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3884, թ. 241:
77. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 131:
78. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 130:
79. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 102:
80. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 50:
81. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 128-129:
82. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3901, թ. 26:
83. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 19:
84. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3906, թ. 28: Տես նաև ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 121-122: «Ազգագրական Հանդէս», VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 332:
85. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 84-5:
86. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, թ. 248-249:
87. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 204, թ. 3:
88. ՀՀՊՊԿԱ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 49:
89. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 179:
90. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3919, թ. 43-44: Նաև ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 10:
91. «Кавказский Календарь на 1915 г.», Тифлис, 1914, էջ 212:
92. Շահումյանի գործկոմի տվյալները, 1997 թ.

Ինչպես հստակ երևում է աղյուսակից՝ XIX-XX դարերում Շուլավերում հայ բնակչությունն ընդհանուր առմամբ անընդհատ աճել է, բայց և եղել են տարիներ, երբ գրանցվել է նվազման դեպքեր: Այդպիսիք պայմանավորված են եղել բնակչության շրջանում երբեմն-երբեմն տեղի ունեցած արտագաղթի, վարակիչ հիվանդությունների և այլնի հետ: Օրինակ, հայտնի է, որ 1884 թ. միայն մի քանի ամսվա ընթացքում Շուլավերում ծաղիկ հիվանդությանը զոհ էր գնացել ավելի քան 100 երեխա (համաձայն տեղացիների վկայության՝ այդ հիվանդությունը երբևէ այդչափ մեծաթիվ զոհ չէր խլել):[93]

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

**ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**. Շամշադինի բնակչությունը նոր վայրում (Շուլավերում) հաստատվելուց հետո սկզբնապես այցելում էր բլրի գագաթին կառուցված ս. Մարիամ կիսավեր եկեղեցին:

Որոշ ժամանակ անց սկսվում է նորաբնակների եկեղեցաշինությունը:

Շուլավերի ծխական երկու եկեղեցիներից մեկի՝ Զագամեցոց թաղի Սբ. Աստվածածնի հիմնադրման ստույգ ժամանակն անհայտ է: Համաձայն տեղագիր հեղինակների վկայության՝ համանուն ներկայիս եկեղեցու տեղում եղել է թերևս միջնադարից ավանդված մի կիսավեր եկեղեցի. «Ի շինամիջի այսր գեղջ երևէր աւերակ հին եկեղեցւոյ կառուցելոյ ի կոփածոյ քարանց. զոր պեղեալ ի հիմանց հիմն արկին նորոյ եկեղեցւոյ, ի խորութենէ որոյ ելին կմախք ամփոփեալ ի քարեայ արկեղ ամրափակեալ կափարիչ վիմօք...»:[94]

Ահա այս, ըստ ամենայնի ժամանակի չափանիշներով անվերականգնելի եկեղեցու տեղում էլ ծրագրվել է կառուցել նոր եկեղեցի. «Մեք ըստ քրիստոնէական պարտաւորութեան մերում հայեցեալ յանշքութիւն մեր եկեղեցւոյ, որոյ որմունքն և առաստաղն խախտեալ գոլով անվայել կացեալ ցուցանի որպէս մեզ, նոյնպէս և այլոց, ... կամիմք ի հիմանէ նորոգել զեկեղեցին մեր, զխորան սբ. պատարագամատուցին և զերկուս փոքր խորանս յաջմէ և յահեկէ սրբատաշ վիմով կամարաձև կրազանգ շինուածով և ի վերա նորա փոքրիկ կաթուղիկէ և զմնացեալ զորմունս նորա կրազանգ դնելի անտաշ վիմօք զերկայնութիւն նորա 8 սաժէն, լայնութիւն 4 սաժեն և բարձրութիւն 2 սաժեն և առաստաղն փայտաշէն և ի վերա նորա կրամիտ խաչացուցեալ»:[95]

93 «Նոր-Դար», 1884, N 85, էջ 2:
94 **Զա:լալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 80:
95 **Ջալալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 79:



Հայտնի է, որ արդեն 1841 թ. պատրաստ էին ոչ միայն կառուցվելիք եկեղեցու նախագծային փաստաթղթերը, այլև՝ շինանյութը. «Ի կոնսիստորիիս լուեալ զխնդիր շուլաւէրաբնակ Զագամեցւոց հասարակութեան, ի 18-ն յունվարի սոյն ամի, յորում գրեն, թէ գործակատարն Սոմխէթի յայտնեալ է նորա զհրաման կոնսիստորիիս, ի 15-ն նոյեմբերի անցեալ 1841 ամի N1710, ի մասին ի ձեռս բերելոյ զպլան և զֆասադ, ուստի հարկն է յաղագս շինութեան եկեղեցւոյ նոցա, ուստի համաձայն այնր հրամանի տուեալ են շինել զպլան և զֆասադ այնր եկեղեցւոյ, զոր և առաջի առնեն սմին, վասն միջնորդելոյ, ուր հարկն է յաղագս տալոյ նոյա զհրաման սկսանելոյ զշինութիւն, որոյ նիւթքն արդէն իսկ պատրաստ են»:[96]

Հարկավոր նախապատրաստությունից հետո, ի վերջո 1844 թ, թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցի գլխավորությամբ կատարվեց եկեղեցու հիմնօրհնեքը. «... ի վերայ չորից վայելչադիր սեանց ի հասարակ և ի կոփածոյ քարանց, հիմն որոյ եղաւ իմով օրհնութեամբ»:[97] Ստուգապես հայտնի չէ, թե քանի տարի էր տևել եկեղեցու կառուցումը, բայց 1850 թ. մի վավերագրի համաձայն շինարարական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ էին»:[98]

1861 թ. եկեղեցում պաշտոնավարող Պողոս ավագ քահանա Սահակյանցը[99] հոգևոր կառավարությանը հայտնել էր, թե մարտի 20-ին, միջօրեի ժամերգության ժամանակ եկեղեցու մի կամարից, որն արդեն քայքայված վիճակում էր, ընկել էր մի բեկոր (կապար) և որ ինքը հրաշքով ողջ էր մնացել: Իր գրությամբ քահանան առաջարկել էր եկեղեցու կամարի այդ մասը ամբողջովին քանդել և նորոգել եկեղեցական գումարների հաշվին:[100] Առաջարկը բավարարվել էր 1862 թ.:[101]

Ակնկալված նորոգումներն ամբողջացվել էին 1864 թ.: Այդ են վկայում, ինչպես եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորին ցայսօր պահպանված արձանագրությունը (**ՈՒՐԱԽ ԼԵՐ, ԲԵՐԿՐԵԱՅ ՏՐ. ԸՆԴ ՔՈ/ ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ԴՈՒ Ի ԿԱՆԱՅՍ / ՅԱՆՈՒՆ ՏԻՐԱՄՕՐ ՏԵՐՈՒՆԵԱՆ ՏԱՃԱՐ / ՔՍԱՆ ԱՄՕՔ ՅԱՌԱՋ ՇԻՆԵԱԼ ՔԱՆ ԶԱՅՍ ԹԻՒ / ՉՔՆԱՂ ՆՈՐՈԳՄԱՆՆ ԷԱՌ ԶՎՃԱՐ / ՀԱԶԱՐ ՈՒԹԸ ՀԱՐԻՒՐ ՎԱՏՍՈՒՆ ԵՎ ՉՈՐՍԻՆ**), այնպես էլ ժամանակի մամուլում հրապարակված մի հաղորդումը. «Զագամի, այն է Սուրբ Աստուածածնայ եկեղեցու գեղեցկութիւնը չէ կարելի դուրսը տեսանել, որքան ներսը. կոկած քարայատակով, շքեղ զարդարած սեղանով և քանի մի գեղեցիկ պատկերներով. կանանց համար որոշած է առանձին տեղ իւր փայտեայ վերնատնով, եկեղեցին սագաշէն, կանգնած չորս հաստ սագաշէն սիւների վերայ, միջակ մեծութիւնով և բարձրութիւնով, ունի փոքրաձև մի գմբէթ կանանց դրան

96. ՀՀՊԴԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1055, թ. 1:
97. Նույն տեղում:
98. ՀՀՊԴԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2288, թ. 15:
99. Պողոս Սահակյանցը ծնվել է 1830 թ.: 1859 թ. ձեռնադրվել է սարկավագ, 1860-ին՝ քահանա (ՀՀՊԴԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3860, թ. 5):
100. ՀՀՊԴԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4286, թ. 3:
101. Նշվ. գործը, թ. 4:

շէնքի վերայ կանգնած, որ նայում է դէպի արևմուտք. նոյնպէս ունի և զանգակատուն մեծ գմբէթով, որ սովորականին չէ կարելի նմանացնել, շինած է տղամարդկերանց դրան մուտքի վերայ: Այդ դրան ճակատի վերայ ուշադրութեան արժանի է Մարիամ Աստուածածնայ գեղեցկանկար փորագրած պատկերը, որի տակի տողաչափով գրուածքը յայտնում է եկեղցւոյ հիմքի 1844 թ. և նոյն իսկ պատկերի 1864 թ, տեղիս արժանապատիւ աւագ քահանայ Պօղոս Սահակեանցի ծախսով, որով և պայծառացել է եկեղեցին հարուստ պատկերներով»:[102]

1879 թ. դրությամբ վթարային վիճակում էր հայտնվել և շուտափույթ նորոգման կարիք ուներ եկեղեցու հյուսիսային մուտքին կից զանգակատունը. «Սբ. Ա(ստուա)ծածնայ եկեղեցին Շուլաւերու ունելով կից դրան հիւսիսոյ երկիարկ փոքրիկ գմբեթաւոր զանգակատուն կառուցեալ ի վերայ չորից սեանց չորեքտասան կանգուն բարձրութեամբ, ներքին յարկ սորա ի յարևելից և յարևմտեան կողմանէ ճեղքեալ կայ ի մեծի վտանգաւոր դրութեան մինչ զի յետ սուղ ինչ ժամանակի յանակնկալ ժամու անկանելով պատճառելոց է զգալի և նշանաւոր վնասս թէ եկեղեցւոյն և թէ պատահող անձանց»:[103]

Թվում է, թե փոխանակ նորոգելու, այդ զանգակատունն իսպառ քանդել էին, քանի որ 1886 թ. խորհել էին խնդրին բոլորովին այլ լուծում տալ. «...առաջի հիւսիսային դրան զանգակատան



Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը XIX դ. վերջին, 1889 թ. և նորոգումից հետո՝ 1999 թ.

102. «Մշակ», 1873, N 2, էջ 2:
103. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2906, թ. 5:



ի վերայ տանեաց եկեղեցւոյն եղելոյ յարևմտեան ծայրի փոքր գմբէթին և տեղեաց-տեղեաց տանեաց...»:[104] Նշված աշխատանքները սկսելու թույլտվությունը ստացվելուց (1886 թ., 6 հունիսի)[105] անմիջապես հետո, այն է 1887 թ. ընթացել էին փայտաշեն զանգակատան կառուցման աշխատանքները. «Շուլավերի Ս. Աստվածածին եկեղեցում 500 րուբլիով այժմ փայտեայ գմբէթ են շինում, որը շուտով կաւարտվի և արդէն բաւական գեղեցիկ տեսք ունի»:[106] Նույն տարվա ընթացքում ամբողջացված շինության մասին ականատեսը նշել է. «...կառուցեալ եղև մի փայտաշէն գեղեցիկ կաթուղիկէ, որ ուրախ առնէ զտեսողս»:[107] Հերթական նորոգումների անհրաժեշտությունը ծագել էր 1893 թ.: Այդ կապակցությամբ երեցփոխ Աղեքսանդր Մելիք-Ադամյանցը նշել է. «Թէպետ 1886 թուականին սբ. Եկեղեցւոյ ծածկն դրսից նորոգուէցաւ շինուէլով փայտէ կաթողիկէ և ուրիշ կարկատաններ, բայց էլի ունի նս ուրիշ անհրաժեշտ նորոգելու հարկաւորութիւններ ուրիշ մասերի. երկու դուռն, երկու մեծ և փոքր զանգակատան ծածկն սպիտակ ժեշտից եկեղեցւոյ կրպակի և կից սենեակի, գրամիտէ ծածկն, որը չունենալու պատճառու անձրևների կաթիլներից գերաններն և ծածկն փթում են, ինչպես փողոցի կողմի կարկատան ծածկն խախտվել է...»:[108]



Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

1893 թ. Աղ. Մելիք-Ադամյանցին երեցփոխի պաշտոնում փոխարինեց Սիմեոն Պառավյանցը,[109] բայց Սբ. Աստվածածնի հերթական նորոգումները (տանիքը) գլխավորել էր երեցփոխ Գևորգ Զարգարյանցն արդեն 1900 թ.-ին:[110]

1915 թ. մայիսի 25-ին Շուլավերի գործակալ Վահան քահանա Տեր-Վարդանյանց թեմական կոնսիստորիային զեկուցել էր մայիսի 26-ի ուժեղ անձրևի ու հեղեղի հետևանքով գյուղի կրած վնասների և ի մասնավոր եկեղեցու մասին. «Անձրևից տեղոյս Սուրբ Աստվածածին եկեղեցին սկսեց կաթիլ. կաթիլքից և խոնաւութիւնից պատերի և առաստաղի ծեփած գաճը ահագին կտորներով սկսեց թափուել...»:[111]

104. Նշվ. գործը, թ. 20:
105. Նշվ. գործը, թ. 21:
106. «Մշակ», 1887, N 62, էջ 2:
107. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2906, թ. 22:
108. Նշվ. գործը, թ. 72:
109. Նշվ. գործը, թ. 79:
110. Նշվ. գործը. թ. 134:
111. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3452, թ. 5:

խնդրին լուծում տալու մտահոգությամբ ծխականների գումարած ժողովում որոշվեց եկեղեցին ժամանակավորապես փակել և նախապատրաստվել 4-5000 ռուբ. ծախս ենթադրող նորոգումների:[112] 1916 թ. դրությամբ հիշյալ գործակալը նշել է. «Մեծ դժուարութեամբ, բայց և այնպէս յաջողուեց վերանորոգել եկեղեցին, թէ ներքուստ և թէ տանիքը, մնում է դրսի սուածքը սրել, պարիսպը քաշել, որով ոչ միայն եկեղեցին, այլև նոյն բակում գտնուող եկ. ծխ. դպրոցի աշակերտութիւնը հնարաւոր է լինում փողոցից ազատել»:[113]



Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային մուտքը

Եկեղեցին գործեց մինչև 1920-ական թվականներն ու փակվեց՝ վերածվելով պահեստի: Այդ վիճակում մնաց տասնամյակներ: 1989-90 թթ. շուլավերցիները նախաձեռնեցին եկեղեցին նորոգելու և իր նախնական նշանակությանը ծառայեցնելու գործը. «Բնակիչների և առանձին անհատների ջանքերով բարձրացվեցին վեց սյուները և զույգ գմբեթները: Կատարվեցին ներքին և արտաքին վերանորոգությունները, սակայն դեռևս կան մի շարք գործեր, որոնք կապված են նյութական միջոցների հետ՝ սալահատակում, դռների և լուսամուտների պատրաստում, բեմի կառուցում և այլ աշխատանքներ...»:[114] Երկար ընդմիջումից հետո 1998 թ. հունիսի 10-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիս. Սերայդարյանը Շուլավերում՝ Սբ. Աստվածածին եկեղեցուն ծառայող նշանակեց սարկավագ Վահան Ասլամազյանին:[115]

Եկեղեցին ի սկզբանե անմշակ քարով, կրաշաղախով, միայն անկյունաքարերը, սյուներն ու թաղակիր կամարները՝ սրբատաշ, հյուսիսից և արևմուտքից մեկական մուտքերով, երեք զույգ սյուներով շինություն է: Վերջին նորոգումների ընթացքում կարմիր տուֆից հավելվել է սրածայր վեղարով ավարտվող թմբուկ, իսկ արևմտյան ճակտոնի գագաթին՝ զանգակատուն: Արտաքին չափերն են՝ 18,30x11,00 մ:

Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման գործում առաջին նախաձեռնողներն են եղել Ալեքսանդր Մելքիկյանը և Վաղինակ Սարգսյանը:

112. Նշվ. գործը, թ. 6:
113. Նշվ. գործը, թ. 9:
114. «Վրաստան», 1998, N 81-82, 10 հոկտեմբերի, էջ 8:
115. Նույն տեղում:



**ՍԲ. ՄԵՍՐՈՊ (ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ) ԵԿԵՂԵՑԻ**. Շուլավերի ծխական 2-րդ եկեղեցին գտնվում է Ղարամուրադ թաղում: Շինարարությունը սկսվել էր դեռևս 1839 թ., բայց և իշխանությունների կողմից ընդհատվել. «... գետինն որոյ վերա բնակիչք Շուլավէրու ցանկան կառուցանել զնոր եկեղեցի ի սկզբանէ անտի պատկանեալ է և պատկանի եկեղեցւոյն, յորում և եղեալ է եկեղեցի, ուր և նոքա հիմնարկեալ էին կառուցման նոր եկեղեցւոյ ի 1839 ամի, որոյ կատարումն արգելաւ վասն չլինելոյ առ այն բարձրագոյն բարեհաճութեան...»:[116]





Սբ. Մեսրոպ (Սբ. Պողոս-Պետրոս) եկեղեցին և հատակագիծը

Առաջին օծմամբ՝ Սբ. Պողոս-Պետրոս անունը կրող եկեղեցու շինարարական աշխատանքները բացառիկ տևական ընթացք ունեցան: Սկսած 1844 թ.-ից այդ աշխատանքներն ամբողջացան միայն 1887 թ.-ին. «...նորակառույց սրբատաշ քարով և փառաւոր, յանուն Պօղոս Պետրոսի, սորա շինութիւնն սկսուելով 1844 թուականից, մինչև այսօր հազիւ հասել է կամարներին, որովհետև ժողովրդի կարողութիւնից անհամեմատ վեր լինելով ծախքը՝ չեն կարողանում շուտով աւարտել ...»:[117]

Տակավին 1851 թ. աշխատանքները հասել էին մինչև թաղակիր կամարների հիմքերը. «... զշինութիւն սբ. Պետրոս և Պօղոս եկեղեցւոյն Շուլավէրու այժմ հասուցեալ են ցներքին կամարն, իսկ ապա ի կատարելագործելն շինութեան այնր եկեղեցւոյ բոլորովիմբ...»:[118]

Ուշագրավ է նաև 1873 թ. մի հրապարակում, որի հեղինակը նկարագրելով կառուցվող եկեղեցին, այն համեմատում է Թիֆլիսի առաջնորդանիստ Հարանց վանքի հետ. «Ղարամուրատաց Սուրբ Պօղոս և Պետրոսի եկեղեցին, որի բարձրագույն դիրքը, մարմարիանման, կոկած սպիտակ քարերով պատերը, նորա չորս ահագին հաստութեամբ

116. ՀՀՊՊԿԱ, ֆ. թ. 4:
117. «Արձագանք», 1884, N42, էջ 612:
118. ՀՀՊՊԿԱ, ֆ. թ. 18:



Մարությանների հարսանյաց հանդեսը (1915 թ.) Սբ. Մեսրոպ եկեղեցում

քարեայ սիւները, նորա ահագին մեծութիւնը, որ Թիֆլիզու Վանքի եկեղեցուն կարելի է հաւասարացնել, կարող են ափսոսել տալ ամէն նորա բաց կտուրը տեսնողին, որ ահա մօտենում է 20 տարիի լրանալը նորա հիմքի գցելուց...»:[119]

Նորոգումների ընթացքում թաղամասի ծխականները հայտնվել էին դժվար կացության մեջ: Ի դեպ, 1870 թ.-ից մինչև 1878 թ. եկեղեցին առհասարակ փակ է եղել. «Եկեղեցու շինութիւնը կիսատ մնացած էր և ութ տարի փակված էր: Վերջը մեր քահանաներից մինը իր գործակալութեան սկզբում աշխատեց և բանալ տուեց եկեղեցին: Երեք հարիւր րուբլ. գործ դրեց եկեղեցու մնացած փողից տախտակեաց ծածկոց շինելու սեղանի վրա...»:[120]

Միայն 1880-ական թվականներին Ղարամուրատեցոց թաղի բնակիչներն ի զորու եղան վերսկսել եկեղեցու ընդհատված շինարարությունը: Մասնավորապես 1884 թ. այդ կապակցությամբ նշվել է. «...ընդհանուր հաճութեամբ հասարակութեան գեղջս կամիմք յայմիկ առաջիկայ աւուրս ձեռնարկել զկառուցումն նոյն թերակատար շինութեան տաճարին աստծոյ, դարձեալ նոյն սրբատաշ և կոփածոյ քարամբք և նոյն իսկ ձևով, որպէս սկսեալ և կառուցեալ են ցայս վայր նախնիք մեր»:[121]

119. «Մշակ», 1873, N 2, էջ 2:
120. «Մշակ», 1878, N 184, էջ 3:
121. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7820, թ. 1:



1885 թ. հաղորդվել է հետևյալը. «Այստեղ գտնվում է մի հոյակապ եկեղեցի, որը կիսաշեն է: Այդ եկեղեցու համար երեք թէ չորս անգամ փող են ժողովել, որ ամբողջացնեն, սակայն չեն կարողացել, որովհետև շատ մեծ է և մեծ գումար է պահանջում: Նրա նման հոյակապ շէնք ունեցող եկեղեցի նոյն իսկ Թիֆլիսում չը կայ, քարերը սրբատաշ են, սպիտակ ու ազնիւ: Գիւղացիները հազիւ թէ կարողանան գտնել այդ տեսակ քարեր: Այդ եկեղեցում ժամասացութիւն չէր կատարվում, բայց վերջին տարիներս ժողովրդեան շատութեան համար անբաւարար լինելով Զագեամի թաղի եկեղեցին, նրա գլուխը տախտակեցին և այժմ այդտեղ ևս ժամասացութիւն է լինում»:[122]

Վերջապես 1886 թ. աշխատանքները կարծես ավարտին էին մոտենում, քանի որ գործը հասել էր տանիքին. «Ղարամուրատ թաղի եկեղեցին, որ յայտնի է իւր մեծութեամբ և սպիտակ քարով, 40 տարի գլուխը բաց մնալուց յետ, այժմ ծածկում են, որի համար արժանի է շնորհակալութիւն յայտնել գործակատար աւագ քահանայն Տէր Պօղոսեանցին»:[123] Աշխատանքներն ամբողջացվել էին տանիքի թիթեղապատումով 1887 թ. «Մեր Ղարամուրադ թաղի Պետրոս և Պօղոս եկեղեցին, որ կառուցված է Թիֆլիսի Մողնու եկեղեցու յատակագծով, երկար տարիներից յետոյ վերջապէս այս տարի աւարտած կարելի է համարել: Եկեղեցու գլուխը վերջապէս թիթեղով ծածկեցին...»:[124] Ընդհանուր առմամբ եկեղեցու շինարարության ծախսը կազմել էր 16.000 ռուբ.: Հանդիսավոր օծումը տեղի ունեցավ 1887 թ. հունիսի 25-ին. «... եկեղեցու հիմքը ձգուած է եղել, ինչպէս պատմում են մօտ քառասուն վեց թուականներին, բայց նիւթական միջոցների պակասութեան պատճառով դադարեցրել են շէնքի կառուցումը` մինչև որ մի քանի տասնեակ տարիների ընթացքում կարողացել են էլի կոպէկ-կոպէկ հաւաքելով մի նշանաւոր գումար կազմել և շարունակել նրա շինութիւնը...»:[125]

Ի դեպ, 1887 թ. օծմամբ եկեղեցին վերանվանվեց Սբ. Մեսրոպ: Այդ անվամբ եկեղեցին հիշվում է նաև հետագա տասնամյակներին:

Տարածքի խորհրդայնացումից հետո, 1926 թ.-ին եկեղեցու շենքը վերածվեց ակումբի: Այդ նպատակով քանդեցին բեմը, իսկ զարդերը կողոպտվել էին մինչ այդ:[126]

122. «Նոր-Դար», 1885, N 192, էջ 2:
123. «Նոր-Դար», 1886, N 88, էջ 2:
124. «Մշակ», 1887, N 51, էջ 1:
125. «Նոր-Դար», 1887, N 107, էջ 2:
126. ՀՀՊՊԿԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3168, թ. 1:

**ՍԲ. ԿԻՐԱԿԻ.** Հուշարձանախումբը գտնվում է Շուլավերի արևելյան եզրին՝ բլրի գագաթին: Բաղկացած է կոփածո և անմշակ քարով, կրաշաղախով կառուցված միանավ՝ թաղակապ երկու միմյանց կից եկեղեցիներից, կիսաշտարակներով հզորացված շրջապարսպից (կիսավեր), հյուսիսարևմտյան կողմում կանգուն քառասյուն, սրածայր վեղարով տապանատնից և շուրջբոլորը տարածված, բավականին ընդարձակ գերեզմանոցից:

Իրար ձուլված զույգ եկեղեցիների ընդհանուր չափերն են՝ 7,10x7,43 մ: Հորինվածքային և հատկապես կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում ուխտատեղիի համբավ ունեցող Սբ. Կիրակին թվագրել XII-XIII դարերով:

Մեկ այլ, գրեթե հիմնավեր մատուռի հետքեր են նկատվում Սբ. Կիրակի հուշարձանախմբից քիչ ներքև, բլրալանջին տարածված գերեզմանատանը: Երբեմնի մատուռից պահպանվել են կիսաբոլորակ խորանին հարող կրաշաղախի չնչին մնացորդները՝ զուրկ երեսապատի քարերից: Որոշակի է միայն մատուռի արտաքին չափը, այն է՝ 5,15 մ:

Շուլավերի XVIII-XIX դարերի պատմության տեսանկյունից անփոխարինելի են հիշյալ գերեզմանատանը պահպանված մեծաթիվ տապանագրերը: Ստորև, ժամանակագրական կարգով ներկայացնում ենք դրանց առավել կարևոր մասը.

1) ԹՎԻՆ ՌՄԻԷ (1778), | ՈՎ ԸՆԹԵՐՑՕՂՔ | ՍՌՅՆ ՏԱՊԱՆԻ, Է՝ | ՍԱ ՇԻՐԻՄ ՅԱՐՈՒԹ(ԻՒՆ)Ի, | ՆԱԵՒ | Է ՅԱԶԳԷ ԳՈՒԼԼԱՐԻ, ԵՒ ՈՐԴԻ | ԱԴԱՆՎԻՐԱՊԻՆ, ՍԱ ԳՈ|ԼՈՎ ՀԱՅՐ ԸՍՏ ԱՇ|ԽԱՐՀԻ, ՍՏԵՓԱՆ|ՆՈՍ ՊՂՆԾԳՈՐ|ԾԻ, ԱՍԱՑԷՔ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂ|ՈՐՄԵՍՑԻ:

2) ԱՅՍ Է ՏԱՊ|ԱՆ Տ(Է)Ր ՎԱՐ|ԴԱ, ԹՈՌՆ | ԷՐ ՂԱՐԱՄ|ԱՆՑ ԹԱՄ|ՐԱԶԻՆ, ՈՐ|ԴԻ Է ՍԱՐԳԻ|ՍԻՆ, ՌՄԼԵ (1786) | ԹՎԻՆ:

3) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՀԶԱՏԻՆ, | ՈՐ Է ՏՈՐՍ (դուստր?) ՅՈՒՏԱ ԱՎԱԼԻՆ, | ՍԱ Է ԿՈՂԱԿԻՑ Տ(Է)Ր ՎԱՐԴԱՆԻՆ, | ՌՄԼԵ (1786):

4) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԱԶԱՆԻՆ, | ԿՈՂԱԿԻՑ ԷՐ ՊԱՊԱՍԻՆ, ՍԱՅ | ՀԱՐՍՆ ԷՐ ՄԵԼԻՔ ՍԱՐՔՍԻՆ, | ՌՄԼԷ (1788) ԹՎԻՆ:

5) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՐԷՃՐԷՑԻ[127] ԵՂԵԱԶԱՐ ՔՕԽԻ, | ՈՐ Է ՈՐԴԻ ՎԱՐԴԱ[ՆԱ]ՆԻ ԵՒ ԹՈՌՆ՝ ՄԱՐՈՒԹԻ, Ե|ՂՊԱՅՐ՝ ՍԱՐՈՒԲԷԿԻ ԿԱՄ ԱՂԱՄԷՍ, ՈՐ ԱՐԻՆ (?) | ՀՈՒՌՈՒՄՍԻՄԻ ԵՒ ՀԱՅՐ ՍԱ՝ ՕՀԱՆԷՍ ՔՕԽԻ, | ԸՆԹ(Ե)ՐՑՕՂՔԴ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ, ՌՄԼԸ (1789) ԹՎԻՆ:

127. Մրեճրի նախնական անվանաձևն է Մայրեջուրը, որը «հանդէպ Գանձակայ» հիշատակում է Սամուէլ Անեցին (**Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 117):



6) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԱՊԱՍԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ | ՀԱԽՆԱԶԱՐԻՆ ԵՒ ԵՂՊԱՅՐ Է ՄԵԼ|ԻՔ ՍԱՐԳՍԻՆ, ՌՄԽ (1791) ԹՎԻՆ:

7) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԵԿ|ՆԱԶԱՐԻՆ, ՈՐԴԻ | ԷՐ ՄԵԼԻՔ ՀԱԽՆԱ|ԶԱՐԻ ԵՂԲԱՅՐ ՄԵ|ԼԻՔ ՍԱՐԳՍԻ ՌՄԽ (1791):

8) ԱՅՍ Է ՏՈՒՆՆ ԻՄ Յ|ԱՒԻՏԵՆԱԿԱՆ, ՈՐ ԵԿ|ԵՍ ............................ | ԵՒ ՀՐԱՄԱՆ Տ(Է)ՐՈՒՆԱԿԱՆ | ՈՒՍՏԱ ՄԵՀՐԱՊԻ (?) ՈՐԴԻ | ՈՒՍՏԱ ՊԱ............ ՆԵՐ|ՔՈՅ ՏԱՊԱ|ՆԻՍ, ՈՎ ՕՔ Կ(Ա)ՐԴԱ Մ|ԻԱԲԵՐԱՆ ՈՂՈՐՄԻ ԱՍԷ, ՌՄԽԱ (1792) ԹՎ(ԻՆ) ԴԵԿՏԵՄԲԵՐԻ:

9) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱԹՈՒՆԻՆ ԿՈ|ՂԱԿԻՑ ԷՐ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ | ԵՒ ՄԱՅՐ ԷՐ ՄԵԼԻՔ ՍԱՐԳՍԻՆ, | ՌՄԽԲ (1793) ԹՎԻՆ:

10) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊՈՂՈՍԻՆ, ՈՐԴԻ ԷՐ ՄԱՃԿԱԼԱՆՑ | ՄԿԸՐՏԻՉԻՆ ԵՂՊԱՅՐ ԷՐ ԴԻՐԱՑՈՒ ԿԱԼՈՒՍՏԻՆ, | ՍԱ ՓՈԽԵՑԱՒ Կ(Ե)ԱՆԸՍ ' Ն ՌՄԽԴ (1795) ԹՈՎԻՆ:

11) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՂԻԱՍԱԲԵՏԻՆ, ՈՐ Է ԿՈՂ|ԱԿԻՑ ԲԵԿՆԱԶԱՐԻՆ ԵՒ ՀԱՐՍՆ ԷՐ | ՄԵԼԻՔ ՍԱՐԳՍԻՆ, ՌՄԽԷ (1798) ԹՎԻՆ:

12) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱԹ|ԱՄԻ ԿՈՂԱԿԻՑ ՅԷՐ|ԻՔԻ ՌՄԽԷ (1798):

13) ԱՅՍ Է Տ(Ա)ՊԱՆ ՄԻ|ՆԱՍԻ ՈՐԴԻ Տ|ԻՐԱՑՈՒ ԳՐ|ԻԳՈՐԻՆ, ՌՄ|ԽԷ (1798) ԹՎԻՆ:

14) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՅՄՈՒՐ|ԱԴԷՑԻ ՔԱՍԻ ՈՐԴԻ | Տ(Է)Ր ԽԱՉԱՏՈՒՐ ԼՈՒՍԱՅՀՈՔԻՆ, | ԿԱՐԹԱՑՕՂՔ ԴՈՒՔ ՈՂՕՐՄԻՔ | Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԸԶԾԵԶ ՈՂՈՐՄԻ, | ԹՎ(ԻՆ) ՌՄԽԷ (1798):

15) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳՐԻԳՈ|ՐԻ, ՈՐ Է ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՆ, | ՄԱՅՐՆ ՍՈՐԱ ՍԱՄԱԻ ԵՒ | ԵՂՊԱՅՐ ԸՍՏԵՓԱՆԻ ԿԱՄ | ՅԱԿՕԲԻ, ՍԱ Է ԿԷՂՃԷՆ | ՔԱՄԱՆԴԱՐԻ, ԹՎ(Ի)Ն ՌՄԽԷ (1798), | Հ(Ը)ՆԹԵՐՑՕՂՔԴ Ո(Վ) ՀԱՆ|Տ(Ի)ՊԻ ՄԷԿ ՊԷՐԱՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈ|ՐՄԻ ԱՍԻ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԾՆՈՂԱ|Ց ՈՂՈՐՄԻ:

16) ..............|..................|........ՍԱՐ........ | ՌՄԽԷ (1798) ԹՎԻՆ:

17) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՌՈՒՍՈՒԴԱՆԻ | ՏԻՐՈՒՀԻ Է ՔԱՀԱՆԱՅԻ | Տ(Է)Ր ՅԱՐՈՒԹ(Ի)ՒՆԵ(Ա)Ն ԹԱԶԱՅԻՆ, | ԴՈՒՍՏՐ ԿՈՉՎԻ Տ(Է)Ր ԹՈՒՄԱՆԻ, | ՈՎ ՈՔ ՈՐ ՀԱՆԴԻՊԻ | ՄԷԿ ԲԷՐԱՆ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ | ՌՄԽԷ (1798) ԹՎԻՆ:

18) ԱՅՍ Է ՏԱՊ|ԱՆ ԱՁԻՁԻ, | [ՈՐ Է] ՏՈՒՍՏՐ Է | ՍԱ Տ(Է)Ր ԽԱՉ|ԱՏՈՒՐԻ ՅԱՐ|ՄՆ Ե ՂԵՒ Ք(ՐԻՍՏՈՍ)Ի, | ՌՄԽԷ (1798) | ԹՎ(ԻՆ), | ԱՐ(ՈՒ)ԹՈՒՆ, Ա(ՍՏՈՒԱ)ԾԱ-Տ(ՈՒ)Ր:



Սբ. Կիրակի հուշարձանախմբի հատակագիծը

19) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱԹ|ՈՒ-ՆԻ, ԿՈՂԱԿԻՑ՝ Տ(Է)Ր Խ|ԱՉԱՏՈՒՐԻ, ՈՐ | Է ՄԱՅՐ՝ ԱՌԱՔԷԼԻ | ԵՒ ՅԱՐՍՆ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱ-Տ|ՈՒՐԻ, ՌՄԽԷ (1798) Թ(ՎԻՆ):

20) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ա(ՍՏՈ-ՒԱ)ԾԱ|ՏՈՒՐԻ, ՈՐՆ Է ՈՐ-ԴԻ ՕՅԱ|ՆԻ, ՄԱՅՐ ԷՐ ՍԱ ՄԱՐԻ|ԱՄԻ ԵՒ ՅԱՅՐ ԷՐ Տ-(Է)Ր | ԽԱՉԱՏՈՒՐԻ, ՌՄԽԷ (1798):

21) ԱՅՍ Է ՏԱՊԱ|Ն Տ(Է)Ր ԱՎԱՔ|ԻՆ, ՈՐ Է ՈՐԴ| Ի ՉԱՐԴԱԽԼ|ՈՒՈՑԻ ԱՌՍ|ԴԱՄԻՆ, ԹՎԻՆ | ՌՄԾ (1801):

22) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԷԿԻՐՄԻԴՕՌՑԻ ԼԻ|ԴԷՐՑԷ ՎԱԳԻԼ Տ(Է)Ր ԱՆԱՆԵԱՅ | ԵՍ Տ(Է)Ր ԱՆ(ԱՆ)ԵԱՅ ՈՐԴԻ ԱՂՐԷՍ ԳՐԷՑԻ, | ՌՄԾ (1801) ԹՎԻՆ:

23) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼԻՔ | ԱՂԱՃԱՆԻ ՈՐԴԻ Ս.ՈՒՍ|......... Է ԹՈՌՆ ՄԷ-ԼԻՔ | ՍԱ........., ՌՄԾԳ (1804) Տ(Ե)Ք(ՏԵՄԲԵ)Ր ԺԳ (13):

24) ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ | ՍՅԱԿԱՆՑ ԵՂԻ | ........ՏԷՐ ԴԱՒ|ԹԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐ-ԴԻ | ՄԽԻԹԱՐԻՆ, ԽԱԹ|ՈՒՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԾԴ (1805):

25) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՕՔԻ ՄԷԼԻՔ ՍԱՐՔՍԻ Տ(ԵԱՌ)Ն ՁԼԱԳԱՄՈՒ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ՅԱԽՆԱԶԱՐԻ ԵՒ ՅԱՅՐ ԷՐ ՍԱ | ՄԷԼԻՔ ԱՂԱՃԱ-ՆԻ, ՈՐ Է Թ(Ո)ՌՆ ՄԷԼԻՔ ԱՎԱԼԻ ՍԱ Է ԵՂ|ՊԱՅՐ ԼՈ(Ւ)ՍԱՅՅՈՔԻ ՎԱ-ՆԱՅԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊ(Ո)ՍԻ, ՌՄԾԵ (1806) | ԹՎ(Ի)Ն ՍԱ ՓՈԽԵԵ-ՑԱՒ Կ(Ե)ԱՆՍ ՎԵՐԻՆ ՓԵԴՐՎԱՐԻ ԺԵ (15) Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

26) ԱՍՏ ԱՆՓՈՓԻ |ՄԱՐՄԻՆ ՍԱՐ|ԳԻՍ ՎԱՐԴԱ|ՊԵՏԻ ՂԱՐԱՄ|ԵԱՆ, ՅԱՅՐ ԷՐ | Տ(Է)Ր ՎԱՐԴԱՆԻ | ԽՆԴՐԵ... (մոտ XVIII-XIX դդ. սահմանագլուխ):

27) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԱՆԱՆԻ, ԿՈՂ|ԱԿԻՑ Է ՍԱՐԳԻՍԻ, | ՍԱ Է ՅԱՐՍՆ ՈՒ|ՍՏԱ ԿԱՐԱ-ՊԵՏԻ, | ՈՐ Է ԿԵՂՃԱՒ Ք|Ա-ՄԱՆԴՐԷՑԻ, ՈՐ | ՈՔ ՏԱՑԷ Ա(ՍՏՈՒԱ)Ծ | ՈՂՈՐՄԻ, Ք(ՐԻՍՏՈ)Ս ԻՆՔ|ԵԱՆ Ո-ՂՈՐՄԵՍՑԻ, | ԹՎ(Ի)Ն ՌՄԾՁ (1807)-Ի | ძ სარ-ქისას მეუღლე/ (թարգմ. Սարգսի կողակից):

28) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ|Ն ՏԷՐ ԱՐՈՒ-Թ|ԻՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴ|Ի ԿԱ-ՐԱԲՊԵՏԻՆ, | ՍԱ ՓՈԽԷՑԱՒ | ԿԵԱՆՍ ՎԵՐԻՆ, | ՈՎ ԿԱՐ-ԴԱ Ա(ՍՏՈՒԱ)Ծ | ՈՂՈՐՄԻ Ա-ՍԻ, | ՌՄԿԱ (1812) ԹՈՎ(ԻՆ):

29) ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ | ՇԱՅՓԱ-ՐԻՆ, ՈՐ | ԿՈՂԱԿԻՑ ԷՐ ՄԷ-Լ|ԻՔ ՍԱՐՔՍԻՆ, ՍԱ ՓՈԽ|Է-ՑԱՒ ԿԷԱՆՍ | ՎԷՐԻՆ, ՈՎ ԿԱՐԹԱ | Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐ-ՄԻ ԱՍԻ, | ՌՄԿԳ (1814) ԹՎԻ:

30) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՐԵՒԱՆ|ՑԻ ՎԻՐԱՊԻՆ, ՈՐ ԷՐ ՅԱ|ՅՐ ՍԱՐԳՍԻՆ, ՈՐ ՓՈԽԵ|ՑԱՒ ԿԵԱՆՍ ՎԵՐԻՆ, | ՈՎ ԿԱՐ-ԴԱՑՈՂՔ ԱՅ|Ս ՏԱՊԱՆԻՆ ՄԷԿ ԲԵՐԱՆ | ՈՂՈՐՄԻ Ա-ՍԻՆ, ԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն | ՌՄԿԴ (1815):





Գերեզմանատան ընդհանուր տեսքը և Սբ. Կիրակի հուշարձանախմբի կենտրոնական եկեղեցին

31) ԱՅՍ Է ՅԱՆԳԻՍՏ ԼՈՒ|ՍԱՅՈԳԻ ՏԷՐ | ԽԱՉԱՅԴՈՒՐԻՆ, | ՈՐ Է ՈՐԴԻ ԾԱԴՈՒՆԻՆ, ԵՒ ԷՐ ՅԱՅՐ | ԱՌԱՅՔԵԼԻՆ ՊՈՂՕՍԻՆ ԵՒ ԱՂ|ԱՍԻՆ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՕՐՄԻ ԱՍԷՔ, ՎԱՂՃ(Ա)Ն | ԱՄԻ 1817, ԵԴ ԳՐԻԼՈՌՈՒՆ | ՆԻԳՕՂՕՍ:

32) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՈՍԻ ԱՂԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԲԱԼՈՒԻՆ ՔԱԼԱՆ|ԹԱՐԵԱՆՑ. ՍՐՈՎ ՆԱՅԱՏԱԿԵՑԱՎ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԱՍԱՆ | ԽԱՆԻՆ ԵՒ ՓՈԽԵՑԱՒ ՏՈՒՆՍ ՎԵՐԻՆ. ԱՄԻ 1826:[128]




Գերեզմանատան հիմնավեր մատուռի հատակագիծը

33) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ [է] ՏԷՐ | ՄԿԸՐՏԻՉ ՔԱՀԱՆԱԻՆ | ՈՐԴԻ Է ԾԱՍՏՈՒՐԻՆ ԵՒ | ՈՐԴԻՆ ՎԱՐԴԱՆ ԵՏ | ԳՐԵԼ 1834 ԱՄԻ:

34) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ [ՏԱՊԱՆ] | Տ(Է)Ր ԵՍԱԻՆ | ՍՈՂՈՄ(ՈՆ)ԵԱՆՑ | ԲԻ(Է)Ր(Ա)ԳԱՆՑԻ, ՈՐ Է | ՀԱՅՐ ՑԱԿԱՆԻՆ ԵՒ ԷՐ ԵՂԲԱ(Յ)Ր ՈՒՍ|ՏԱ ՍԸՀԱԳԻՆ, 1850 ԱՄԻ ՓՈԽ|ԵՑԱՒ Գ(Ե)ԱՆՍ Վ(ԵՐ)ԻՆ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

35) ՈՐՊԷՍ ԱՆԻՒ ՀՈՂՄԱՎԱՐ ԱՄՔ | ՀՈԼՈՎԻՆ ԱՆԴԱԴԱՐ, ԱՒԱՂ ԿԵՆԱՑ | ԱՇԽԱՐՀԻ ՈՐՈՅ ՓԱՌՔՆ ՇՈՒՏՈՎ | ԱՆՑԱՆԻ | ԸՆԿԱԼ Տ(Է)Ր ԸՋՀՈԳԻ | ՀԱՆԳՈՒՑԵ(Ա)Լ Տ(Է)Ր ՅԱԿՈԲԻ | ԽԱՉԱԿԻՐ ԱՒԱԳ ՔԱՀ(Ա)ՆԱՅԻ, | ՈՐ Է ՈՐԴԻ ՅՕՀԱՆՆԷՍԻ | ԵՒ ԹՈՌՆ ԼԱՉԻՆ ՔԷՇԻՇ | Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)ՀԱՄԻ, ՅԱՋԳԷ ՇԱՀ|ՐՈՒԽԵԱՆՑ՝ ՄԵԾ ՇՈՒԼԱՒ|ՐԵՑԻ, ՈՐՔ ՀԱՆԴԻ ՊԻՔ | ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ ԵՒ ԴՈՒՔ ԼԻՋԻՔ | ՅԻՇՄԱՆ ԱՐԺԱՆԻ, | 1856:

36) ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՄԵԾ ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՐԹԱՆ[ԱՆ]ԻԱՆ | ՀԱՅԿԱՍՕ(Հ)ՄԵԱՆ ՄԱՃԿԱԼԵԱՆՑԻ ԾՆԵԱԼ Է 1784 [ԹԻՒ] ԱՄԻ 20-Ն | ՅՈՒՆՎԱՐԻՆ, ՎԱԽՃԱՆԵԱԼ Է 1856 ԹԻՒ ԱՄԻ 12-Ն ՓԵՏՐՈՒԱՐԻՆ, | ՍԱ ԷՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳԱՒԱՌԻ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ | ՏՕՀՄԻ ԶՕՐԱՒԱՐԵԱՆ ՑԵՂԻ, ՀԻՄՆԱԴԻՐ ՇՈՒԼԱՒԷՐԻ, ԹՈՌԸՆ ԷՐ ՀԱ|ՅԿԱՍՕ(Հ)Մ ՄԱՃԿԱԼԻՆ ԽՕՋԱ ՄՕՍԷՍԻՆ ՎԱՐԴԱՊԷՏ ՊԵՏՐՈՍԻՆ ԽՕՋԱ ՀԱ|ԳՕԲԻՆ ՎԱՐԹԱՆԵԱՆԻ, ՈՐԴԻՆ ԷՐ ՄԵԾ ՀՈՎՀԱՆՆԷՍ, ՀԱՅՐ ԷՐ ԻՆՆԸ | ՈՐԴՈՑ, ԿՌՏ[Ե]ՍԷՐՆ ԷՐ ՄԱՀՏԵՍԻ ԳՐԻԳՈՐ, ԽՆԴՐՈՒՄԱ ՈՂՈՐՄԻ ԱՍԵՔ, |
*(Նույն տապանաքարի վերին երեսին շարունակված է)՝*
ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԴՈՒՍՏՐ | ՇԱՀՆԱԶԱՐԻ ԿՈՂԱԿԻՑ ՄԵԾ | ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ՆԱԶԱՆԻ ՄԱՃԿԱ|ԼԵԱՆՑԻ, ԾՆ. 1792 ԱՄԻՆ, ՎԱԽՃ. | 1898 ԱՄԻՆ, ՄԱՅ[Ի]ՐՆ ԷՐ ԻՆՆԸ ՈՐ|ԴՈՑ, ԿՌՏ[Է]ՍԷՐՆ ԷՐ ՄԱՀՏԷՍԻ | ԳՐԻԳՈՐ, ԽՆԴՐՈՒՄԱ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՐ:

128. Այս արձանագրությունը, ցավոք, մենք չենք տեսել: Վերցրել ենք Ս. Շլեպչյանի հրապարակությունից (տես նրա «Վերք Հայաստանի» վեպի հետ կապված մի ճշտում, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1956, N 1, էջ 90): Տպագրված անորակ լուսանկարը արձանագրության կասկածելի վերծանությունը որոշ տեղերում ճշտել լու հնարավորություն չընձեռեց:



37) ՄԱՅ[Ի]Ր ԻՄ ԱՆՆԱՅ ՔԵԶ ԱՀԱ ԵՐԱԽՏԱԳԷՏ Ի ՍՐՏԷ | ՊՈՂՕՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ Ի ՑՈՂ ԱՉԱՑ ՆՈՒԻՐԷ | ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 1860 ԱՄԻ:

38) ԶԱՆԳՈՒԱԾՆ Ի ՀՈՂ(Ո)Յ | ԱՅՍ ՆԵՂ ՏԱՊԱՆԻ | ԹԱԼԱԼ Տ(Է)Ր ԶԱՔԱՐԵ(Ա)Ն | ԴՈՀՄԷՆ Տ(Է)Ր ԴԱՒԹԵ(Ա)ՆՑԻ, | Ի ՎԻՇՏ ԵՒ ՍՈՒԳ | ԵՂԵՒ Ի ՍՐՏԻ | ՅԻՆԷՆ ԲԱԺ(Ա)ՆԻԼ | ՅԻՄՈՒՍ ԾՆՈՂԻ | Ո~Հ ՄԱՀ ԹՈՒՆԱԼԻ | ԱՐԱՐ ԻՆՉ ՓՈՇԻ | ԱՆՋԱՏԵՑԻ ԿԵՆ(Ա)Ց | ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻ | 1860 ԱՄԻ, | ԽՆԴՐԵՄ ՁԵԶ ԱՍԵԼ | Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ:

39) ԸՆԴ ՍՈՎԱՒ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՀԵԶԱՀՈԳԻ ԱՒԵՏԻՍԻ | ԻՍԱՀԱԿԵԱՆ, ՀՕՐՆ՝ ԻՍԱՀԱԿ Ք(Ա)Հ(Ա)ՆԱՅԻ ԻՍԱՀԱԿԵ(Ա)ՆՑ, | ՎԱԽՃԱՆԵ(Ա)Լ Ի 1861 ԱՄԻ:

40) ԳԵՐՈՂՍ Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս ՅԱՐԿ | ՆՆՋԻ ՄԱՐՄԻՆ | ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆ(Է)ՍԻ | ՀՈՎՍ ԷԻ ՀՕՏԻՆ | ՈՐԴՈՅ ԳՐԻԳՈՐ | ՔԱՀԱՆԱՅԻՆ | ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ | ՇԱՀՐՈՒԽԵԱՆՑԻՆ, | ՍԱ ՈՐ Ի ՏԻՍ | ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ | ԴԱՐԾԱՒ ԱՌ Տ(Է)ՐՆ | ԻՒՐ ԳԵՐԱԿԱՅ, | ՄԱՂԹԵ Ի ԾԵԶ | ՏԱԼ ՈՂՈՐՄԻ | ՀԱՆՏԻՊՈՂԱՑԴ | ԻՒՐՈՒՄ ՇԻՐՄԻ, | 1864 ԱՄԻ ԴԵԿՏԵՄ(ԲԵՐԻ) 7:

41) *Քառայուն տապանատան քիվատակին, երկտող.*
ԱՅՍ ՄԱՍՏՈՒՌՆ ՊԱՏԿԱՆԻ ԿԱՌ...... ՊՐԱՊՕՐՉԻԿ | ԱԶՆԻՒ ԳՐԻԳՈՐ ՊԷԳ | ՔԱԼԱՆԹԱՐՈՎԻՆ, 1864 ՅՈՒՆՎԱՐԻ 10:

42) ԱՒ(Ա)Ղ ԳԵՆԱՑ Ի ՈՐ(Ո)Յ (?) | Փ(Ա)ՌՔՆ ՇՈՒՏՈՎ ԱՆՑԱՆԻ | )ՅՆ ՏԱՄԲԱՐԱՆ ՋԻՍ ՀՐԱՎԻՐԵ(Ա)Ց | Ի ԽՕՐ Ի Ծ(Ո)Ց ԻՒՐ Ձ[illegible]ԹԱՂԵԱՑ | ՄԱՐՄԻՆՍ Ի ՀՈՂԻԿ Ք(Ա)ՅՔ(Ա)ՅԵԱՑ | ՀՈԳ(Ո)ՅՍ ՅԻՄԷՆ Վ(Ա)Ղ ԱՆՋԱԴԵ(Ա)Ց Տ(Է)Ր ՊԵՏՐՈՍ Տ(Է)Ր ՍԻՄԷՕՆԵ(Ա)ՆՑ | ՅԻՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԷՅԻ ԱՄԱՑ | 1865:

43) ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ | Տ(Է)Ր-ՀԱԿՈԲԵԱՆ ՇԱՀՐՈՒԽԵԱՆՑ, ՎԱԽՃԱՆԵԱԼ | Ի 1869 ԱՄԻ:

44) ՇՈՒԼԱՒԷՐՑԻ | ՄՈՎՍԷՍ ՔՀՆՅ. | Տ(Է)Ր-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ,[129] | ԾՆ 1825 Թ., ՁԵՌ(ՆԱԴՐԵԱԼ) | (18)48 ԵՒ ՎԱԽՃ(ԱՆԵԱԼ) (18)95 Թ:

129 Մովսես քահանա Տեր-Գրիգորյան Պապյանցի քահանայական ձեռնադրությունը կատարել էր թիֆլիսեցի Սինաս արքեպիսկոպոսը 1848 թ., ապրիլի 8-ին: 1873 թ. դրությամբ ուներ 1 զավակ (Ղազարոս, ծն. 1870.24.VIII): Տես՝ ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3860, թ. 4:

**ՄԵԼԻՔ-ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՔԸ**. «Ի միջակիտի գեղջս է փոքրիկ բլուր բերդանման, որ ի հնումն և այժմ է բնակարան տոհմին Քալանթարեանց...» այսպես է նկարագրել Ջալալյանց եպիսկոպոսը XIX դարի կեսին:[130] Նույն ապարանքի մասին 1873 թ. լրագրային մի հրապարակման մեջ կարդում ենք. «Սորանց տունը գիւղի մի նշանաւոր բլրի վրայ է շինած, որի վերայ վրաց էրակլ խանի բերդն է եղել և մի և նոյն ժամանակ նորա ամենասիրելի բնակարանը, այդ բերդի պատերի հետքերը դեռևս նշմարվում են...»:[131]

Առկա տեղեկությունները համարյա կրկնողաբար վերաշարադրել է նաև ազգագրագետ Լալայանցը. «Այն փոքրիկ բլրակի վրայ, ուր այժմ գտնւում է Քալանթարեանների տունը, հին ժամանակներում բարձրանալիս է եղել մի փոքրիկ ամրոց, որ պատկանում էր վրաց թագաժառանգներին...»:[132]

Վրացի քահանա Ստեփան Բայդոշվիլին 1902 թ. ափսոսանքով նշել է, թե եղբայր Քալանթարովների պալատի տեղում մինչ տարածքի՝ Ռուսաստանի հետ միացումը իբր գոյություն ուներ Վերափոխման եկեղեցին, որը հիշյալ կալվածատերերը ոչնչացրին, իսկ հողամասը սեփականացրին: Բայդոշվիլին նշել է նաև, թե Շուլավերում էր բնակվում թագավորի որդին (ո՞ր թագավորի, չի նշել):[133]



Շեկեկ հնավայրի խաչքարը

**ՇԵԿԵԿ**. Այս անվամբ հայտնի ուխտատեղին գտնվում է Շուլավերից 0,5 կմ արևմուտք, հարթ ու գոգավոր տեղանքի քիչ բարձրադիր հատվածում: Հնավայրում պահպանվել են անարձանագիր (XVII դ.), բայց գեղաքանդակ մի խաչքար (77x38x14 սմ), կենցաղային թեմաներով պատկերաքանդակված մեկ ամբողջական տապանաքար (XVII դ.) և արձանագիր տապանաքարի մի բեկոր՝ ՅԱՍ է ՏՍ(ՊԱՆ)...:

130. **Ջալալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 80:
131. «Մշակ», 1873, N 15, էջ 3:
132. «Ազգագրական Հանդէս», VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 332:
133. «ႨႥႤႰႨႠ», 1902, N 90 (30.IV):



**ՍԲ. ՍԱՐԳԻՍ**. Մեծահռչակ Սբ. Սարգիս ուխտատեղին գտնվում է Շուլավերից հազիվ 1 կմ հարավ-արևելք, ծ. մ. 745 մ բարձրությամբ, բոլորովին լերկ լանջերով սարի գագաթին: Ուխտատեղին իրենից ներկայացնում է թաղակապ հորինվածքով, անմշակ քարով և կրաշաղախով կառուցված պարզ շինություն: Միակ մուտքն արևմուտքից է: Ուշագրավ է կիսաբոլորակ եզրագծով խորանը, որը նույն լուծումն ունի նաև արտաքուստ: Մատուռի արտաքին չափերն են՝ 6,80x4.42 մ: Արձանագրությունների և գրավոր վկայագրերի բացակայության պայմաններում մատուռի կառուցման ստույգ ժամանակն անհնար է որոշել, բայց ըստ հորինվածքային և հատկապես կառուցողական առանձնահատկությունների՝ այն կարելի է թվագրել XVIII դարի վերջով և կամ XIX դարի սկզբով:






Սբ. Սարգիս եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից և հատակագիծը

Հայտնի է, որ Սբ. Սարգիս ուխտատեղին մեկն էր եկամուտի այն աղբյուրներից, որոնց արդյունքը փոխանցվում ներսիսյան հոգևոր դպրոցին: Միաժամանակ, ինչպես երևում է, օրինակ՝ 1858 թ. դպրոցի հոգաբարձությանը ուղղված մի հաշվետվությունից, մեծածախս կրթօջախի գոյության համար ուխտատեղիից փոխանցվող եկամուտները պարզապես չնչին էին. «Պատիւ ունեմ խոնարհաբար յայտնել հոգաբարձութեանդ, թէ ուխտատեղիս սրբոյն Սարգսի մերձ Մեծ Շուլավէր գեղջ գաւառկին Սոմխէթի, գոյացեալ է ի նմին յընթացս անցեալ 1857 ամի վեց ռուբլի արծ. զորս ստացայ ստորագրութեամբ իմով, ի կառաւարչէ նորին Մովսէս քհնյէ Տր. Գրիգորեանց...»:[134]

134. ՀՀՊՊԿԱ, ֆ. 2, ց. 1, գ. 115, թ. 3::

**«ՍՊԻՏԱԿՇԵՆ» ԳՅՈՒՂԱՏԵՂԻ**. Շուլավերից մոտ 2,5 կմ արևմուտք, հյուսիսահայաց անտառածածկ լեռնալանջին պահպանվել են միջնադարյա մի գյուղատեղիի, եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները: Յնավայրի միակ գիտական այցելուն առանց ստորագրության իր ուսումնասիրությունը հրապարակել է 1884 թ.: Ուշագրավ նկարագրական շարադրանքից զատ անհայտ հեղինակը հրապարակել է նաև գերեզմանատանը պահպանված տապանագրերից երկուսը. «... չորս վերստ հեռաւորութեամբ ընկնում է հին գիւղատեղի Սպիտակշէն անունով, որի դիմացը բլրի լանջի վերայ կան մի մատուռ աւերակ և չորս կողմը գերեզմաններ, մեծ մասամբ հողով և անտառներով ծածկուած, որոնցից մի երկուսի վերայ հազիւ կարդացւող կիսամաշ արձանագրութիւններ կային, իսկ քանդակները և գեղեցիկ նկարները մեծ մասամբ մնացած են անվնաս, նորանցից մէկի վերայ կարդացւեց հետևեալ արձանագիրը: Այս է տապան Աւետիսի հայր իմ Սարուխան և եղբարք իմ... մի ուրիշ քարի վերայ. Այս է տապան Ջիլաւին թուին ՌճԼԱ. առ Աստուած փոխեցաւ...»:[135] Ըստ ամենայնի, առանց հնավայրն այցելելու, օգտվելով վերոհիշյալ հրապարակումից ազգագրագետ Ե. Լալայանը վերահրատարակել է երկրորդ տապանագիրը:[136]



Սպիտակաշեն գյուղատեղիի եկեղեցու հատակագիծը

Մեր կողմից 1990 թ. տեղում կատարված ուսումնասիրությունների ընթացքում նախկինում հրապարակված երկու վիմագրերից վերագտնվեց միայն երկրորդը: Բացի այդ հայտնաբերվեցին և 5 տապանագրեր: Առաջին անգամ ուսումնասիրվեց նաև գերեզմանոցի հարևանությամբ գտնվող և հազիվ 1-1,5 մ բարձրությամբ պատերով կանգուն մնացած եկեղեցին: Վերջինս միանավ հորինվածքով, հարավից բացված միակ մուտքով, անմշակ քարով և կրաշաղախով կառուցված հասարակ շինություն է: Արտաքին չափերն են՝ 7,70x4,70 մ: Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների եկեղեցին կառուցվել է XVI-XVII դարերում:

Ուղղանկյունաձև, 155x41x20 սմ չափերով տապանաքարի հարավահայաց երեսին պատկերված են հեծյալ, սափոր, թագակիր անձ և բաժակներ, իսկ հյուսիսահայաց երեսին կամարաշարի ներքո խաչքանդակներ են: Արձանագրությունը փորագրված է վերին հորիզոնական հարթության վրա.

135. «Արձագանք», 1884, N 42, էջ 612:
136. «Ազգագրական Յանդէս», 1901, VII-VIII, էջ 334:



ԱՅՍ | Է ՏԱ|ՊԱՆ ՋԻԼ|ԱՒՎ|ԻՆ, | ԹՎ|ԻՆ Ռճ|ԼԱ (1682), ԱՌ Ա(ՍՏՈ-
ՒԱ)Ծ | ՓՈ|ԽԵՑ|ԱՒ:[137]

Կենցաղային թեմաներով հարդարված ուղղանկյունաձև մեկ այլ տապանաքարի (95x52x15 սմ) վերնամասում փորագրված է թերի արձանագրություն.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ.....

Յողի մեջ խրված համանման մեկ այլ տապանաքարի (124x23x30 սմ) վերնամասում երկտող արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Դ(ՈՒ)ՄԱՆԻՆ, ՈՐԴԻ | ԱՌԱՔ(ԵԼ)ԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌճԽԴ:

Ոչ հեռու, տեղահան արված ուղղանկյունաձև տապանաքարի (155x55x22 սմ) հարավակողմին պատկերված են՝ 2 անձ, սափորներ, բաժակներ, ձի և այլ իրեր, իսկ հյուսիսակողմում՝ նիզակակիր և հրացանակիր մեկական անձեր, նրանց միջև կան դանակ, սափորներ, բաժակներ, բաժակեղջյուր, սազ և այլ իրեր: Արձանագրությունը վերնամասում է, մեկ տողով.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆԴԻՆԻ, ԹՎ(ԻՆ) ՌճԼԳ (1684):

Դագաղաձև այլ տապանաքարին (112x35x50 սմ) փորագրված է.

ԱՅՍ Է | ՏԱՊԱ|Ն ԼՈՒ|ԱՐՍԱԲԻ | ՏՂԱՅԻՆ՝ ԴՈՒԲՆ:

Ոչ հեռու, երկթեք տապանաքարին (153x60x27 սմ), քառատող արձանագրված է.

ԱՅՍ Է ՅԱՆԳԻՍ|ՏՆ ՋՈՒՐ|ԱՊԻՆ:

**ԾԱԿՔԱՐ**. Շուլավերից 2 կմ հյուսիս-արևմուտք վեր խոյացող լերկ ժայռազանգվածը, որի գագաթը ծ. մ. ունի 803 մ բարձրություն, հայտնի է «Ծակքար» անվամբ: Տեղագիր հեղինակներից Ծակքարն առաջինը հիշատակել է արքեպիսկոպոս Ջալալյանցը. «Յարևմուտս հիւսիսոյ հեռի կէս մղոնաւ անկանի բերդն ծակ քար անուանեալ, լայնա-

137. Նախկին հրատարակության մեջ Ջիլաւ, փոխանակ Ջիլաւվ:

նիստ հիմամբ ի վեր բարձրացեալ միապաղաղ քար թողլով ի չորից կողմանց զահագին խորութիւնս. ի գագաթ սորա գտանի պարսպանման անհեթեթ բնական քարինք ընդորա և կրազանգ պատուար, ի սպառուած նորին յԱրևելս կոյս որ հայի ի խորութիւն ձորոյն են քանի մի ամրաշէն կամարայարկ կրազանգ սենեակք ի տեսութիւն որոց մտաք ահիւ և դողութեամբ...»:[138]

Շնորհիվ լեռան ստորոտում բխող բուժիչ աղբյուրի առկայության՝ Ծակքարն ուներ ուխտատեղիի համբավ. «Շուլավէրից դէպի հիւսիս երեք վերստ հեռու կայ մի բերդ փոքրիկ, միապաղաղ բարձր բլրակի վերայ, Ծակքար կոչուած, որի գագաթին գտնւում են քարակիր շինուածներ, որոնց բնակիչներն անուանում են ճգնաւորների սենեակներ. ինչպէս ասում են, նորա ստորոտում բղխում է մի հանքային աղբյիւր, ուր յաճախում և լողանում են մարմնի քոր ունեցողներ...»:[139]

**ԲՆԻՁՈՐԻ ՓՈՔՐ ՎԱՆՔ**. Սպիտակշեն գյուղատեղիի և Բնիձորի Մեծ վանքի միջև, նույնպես անտառածածկ վայրում պահպանվում են մեկ այլ գյուղատեղիի, գերեզմանատան և եկեղեցու մնացորդները:

Եկեղեցին միանավ շինություն է: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Պատերի պահպանված առավելագույն բարձրությունը 2 մ է: Մեկ զույգ որմնասյուների առկայությունը հուշում է, որ երբեմնի թաղը կանգնած է եղել թաղակիր կամարի վրա: Կառուցված է մեծաչափ կիսամշակ քարով և կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 8,50x4,85 մ: Ըստ ամենայնի XVI-XVII դարերի շինություն է:



Բնիձորիի փոքր վանքի հատակագիծը

Շուրջը տարածված գերեզմանոցում պահպանված գերեզմանաքարերը հար և նման են մերձակա այլ հնավայրերում պահպանված և XVII դարով թվագրվող տապանաքարերին: Կիսով չափ հողի մեջ թաղված ուղղանկյունաձև մի շիրմաքարի (145x55x26 սմ) հարավային երեսը զարդարված է մարդու, սափորի, դաշյունների և այլ առարկաների պատկերներով:

Ոչ հեռու, այլ գերեզմանաքարին (170x57x25 սմ), ակնհայտորեն ծիսական նշանակության հագուստի ներքո երկու անձերի պատկերաքանդակներ են՝ շրջապատված խորհրդանշական այլ իրերի պատկերներով: Ինչպես վերը նշված երկու գերեզմանաքարերը, այնպես էլ ուրիշներն անարձանագիր են:

138. **Զալալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 80:
139. «Արձագանք», 1884, N 42, էջ 613:



**«ԽԱՉԻ ՅԱԼ»**. Խաչի յալ անվամբ հայտնի լեռը գտնվում է Շուլավերից 3 կմ արևմուտք: Այն շրջապատի նկատմամբ քիչ առանձնացած է և ծ.մ. ունի 858 մ բարձրություն: Լեռան գագաթին պահպանվում են փոքրիկ մատուռի ավերակները: Մեկից երկու մետր բարձրությամբ շինության պատերը շարված են բացառապես անմշակ քարով և կրաշաղախով: Միակ մուտքը՝ հարավից է, հորինվածքով՝ միանավ: Արտաքին չափերն են՝ 6,00x3,75 մ:



«Խաչի Յալ» վանքի հատակագիծը

**ԲՆԻՁՈՐԻ ՄԻՋԻՆ ԿԱՄ ՆԵՐՔԻՆ ՎԱՆՔ**. Զարգացած միջնադարից (XII-XIII դդ.) մեզ հասած վանական հուշարձանախումբը գտնվում է Շուլավերից 4 կմ արևմուտք, ջրառատ «Բլբլան» աղբյուրի գեղատեսիլ ձորի ձախակողմում:

Համալիրը բաղկացած է միանավ բազիլիկ եկեղեցուց, հյուսիսից՝ կից մատուռից և հարավից՝ կից սրահ-գավթից: Շինաքարի գերակշիռ մասը սրբատաշ է: Որոշ դրվագներում (շքամուտք, լուսամուտի շրջանակներ) եկեղեցին ունի ճոխ հարդարանք: Եկեղեցու թաղակապ տանիքը, որը հենված է եղել երկու զույգ որմնասյուների, չի պահպանվել: Ի դեպ, ինչպես վկայել է Ե. Լալայանը, եկեղեցին արդեն XIX դարի վերջին էլ մոտավորապես այն վիճակում էր, ինչ որ հիմա է («... ձեղունը այժմ արդէն քանդուած է»):[140] Եկեղեցու երկու մուտքերը բացված են սրահ-գավթի և մատուռի մեջ, արտաքին չափերն 14,20x7,90 մ: Սրահ-գավիթն ունի՝ 8,70x3,22 մ, մատուռը՝ 6,40x3,49 ս արտաքին չափեր:

Հուշարձանախմբի տարածքում (ներսում և բակում) պահպանվել են մի քանի խաչքարեր: Դրանցից երկուսն արձանագիր էին: Ի դեպ, հնավայրը այն սակավաթիվ «երջանիկներից» էր, որը դեռևս 1883 թ. ունեցել էր իր գիտական այցելուն: Հովի, Ստեփանյանցի հեղինակությամբ լույս ընծայված մի հրապարակման մեջ ներկայացված են նաև մի քանի վիմագրեր. «...Մաղան կոչված ձորում, Բլբլան անունով աղբիւրից քիչ հեռու գտնվում է նոյնպէս մի աւերակ վանք՝ սրբատաշ քարերից շինած: Վանքը բաղկացած է երկու սեղանատնից. առաջինը դռան շեմքի վրա, դրսի կողմից քանդակագործած է երեք խաղողի ող-

140. «Ազգագրական Հանդէս», 1901, VII-VIII, էջ 333:

կոյզ, իսկ ներսից, ձախ կողմում, պատի մէջ, քարի վրա՝ փորագրած է մի խաչ և տակը գրած. «Սուրբ խաչ բարեխօսէ Տիրատէրին», երկրորդ սեղանատան պատարագի սեղանի առաջ ընկած է նոյնպես մի խաչ, որի վերևի կողմում փորագրված են տառեր, որոնք բաւականի մաշված են և միայն նկատելի են լինում այս մի քանի տառերը «ԲԽԱՇՍԲԴՆԱ», իսկ խաչի տակը փորագրած է. «Վրթանէս թվ. ՌՉ...»:[141]

Յնավայրի հաջորդ և կարծես վերջին հետազոտողն է եղել ազգագրագետ Ե. Լալայանը. «...միւս լեռան լանջին գտնւում է մի ուրիշ վանք: Սա անտաշ քարերով (տարօրինակ սխալ է - Ս.Կ.) շինուած մի եկեղեցի է, որի ծեղունը այժմ արդէն քանդուած է: Մօտը կայ մի սրբատաշ, գեղեցիկ քանդակներով զարդարուած գաւիթ: Մի եղծուած արձանագրութիւնից կարդացւում է. «Ս. Աստուածածին բարեխօսեա...»:[142]

Գեղարվեստական և ոճական առանձնահատկությունների առումով XIV-XV դդ. թվագրվող մի գեղաքանդակ խաչքար, որն ընկած է սրահ-գավթի հարավային պատի տակ, ստորին մասում ունի արդեն գրեթե իսպառ հողմնահար արձանագրություն: Խաչքարը կերտված է գորշ ավազաքարից և ունի 84x49x32 սմ չափեր:

Եկեղեցու սրբատաշ որմնասյան (նյութը՝ դեղին կրաքար) մի բեկորի վրա (91x46x19 սմ) խաչաքանդակի տակ պահպանվել է Յովի. Ստեփանյանցի հրատարակած երկտող արձանագրությունը.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕ|Ս Է ՏԻՐԱՏՐԻՆ:

Գեղաքանդակ, բայց անարձանագիր մեկ այլ խաչքար էլ ընկած է եկեղեցու հյուսիսային կողմում: Այն ջարդված է երկու մասի: Չափերն են 90x37x11 սմ:

Վանքի գերեզմանատունը, որ տարածված է փոքր-ինչ հարավարևելք, արդեն ծածկված է անտառով: Այստեղ տապանաքարերի բավականին խիտ թաղումների շարքում պահպանվել են նաև մի քանի խաչքարեր:

Ուղղանկյունաձև, մի ծայրից ճաքած (չափերը՝ 138x28x45 սմ) տապանաքարի երկու նեղ կողերին և վերին մասում արձանագրված է.

ԹՎ(ԻՆ) Ռ|ճԺ(1661) | ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԷԿԻՋԱՆԻ ՈՐԴԻ ԱԼԻԽԱՆԻՆ, [ԹՎ(ԻՆ) Ռ|ճԺ](1661):

Յամանման մեկ այլ տապանաքարի (161x45x31 սմ) հարավային հողմնահար երեսին նկատվում են թամբած ձիու և այլ պատկերաքան-

141. «Մշակ», 1883, N 204, էջ 1:
142. «Ազգագրական Յանդէս», 1901, VII-VIII, էջ 333:





Բնիծորի Միջին վանքի խաչքարերը

դակների հետքեր: Յյուսիսային երեսին՝ թագակիր անձ, 4 բաժակներով սկուտեղ, սափոր, ևս մեկ անձ՝ անկյունում: Վերին երեսին միայն արձանագրությունն է՝ մեկ տողով.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՍԼԻՆԻ, ԹՎԻՆ ՌճԼԴ (1685):

Ուղղանկյունաձև մեկ այլ սալատապանի (185x48x23 սմ) երեսին, քանդակազարդ շրջանակի ներքո, 14 կարճ տողերով արձանագրված է.



Բ[illegible]րի Միջին վանքի հատակագիծը

ԱՅՍ Է | ՏԱՊԱ|Ն ԲԱ|ՇԱՆ|Ց
ԽԱ|ՉԱՅ|ՏՈՒՐԻ | ԴՈՒՍ|ՏՐ ՄԱՐԻԱՄ(Ի)|Ն. ՓԱՐՍԱՏ|ԴԱՆԻՆ ԵՒ
ԻՆ Զ՝ | ՈՐԴԻ ՎԵՐԿ|ԱՒԱ ՅԻՄ ԱՂ|ԲԵՐ ՈՐԴԻՔՆ:

Յարկ է նշել, որ արձանագրության վերջին 4 տողերը վերծանված է որոշ վերապահումով, քանի որ այդ հատվածը համեմված է բազմաթիվ կցագրումներով: Ըստ ամենայնի, միևնույն հանգուցյալի հիշատակին հիշյալ տապանաքարից զատ կից կանգնեցվել է նաև մի խաչքար: Գեղաքանդակ, պատկերազարդ, բայց երկատված խաչքարի (179x67x20 սմ) քիվին, քիվատակին և հյուսիսակողմի պատկերաքանդակների տակ երեք տողով արձանագրված է.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱ(ՉՍ) ԲԱՐԷԽ(ԱՒ)Ս Է | Բ(Ո կամ Ա)ՇԵՆՑ Խ(Ա)ՉԱՏՐ|Ա, ԻՐ Կ(ՈՂԱԿ)ՑԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՃ (1651):

Խաչքարը (երկու կտորներն էլ) 1988 թ. փոխադրվել է Շուլավերի Սբ. Աստվածածին եկեղեցի:

Ի դեպ, այնքանով, որքանով այս խաչքարն ու նախորդ անթվակիր տապանաքարը կերտված են եղել միևնույն հանգուցյալի հիշատակին, հետևում է, որ տապանաքարը ևս կերտվել է 1651 թ.:

Նույն գերեզմանոցում պահպանվել են XVII դարին վերաբերող մի քանի խաչքարեր ևս: Դրանք բոլորն էլ տեղահան վիճակում են: Համեմատաբար փոքր չափեր ունեցող մի խաչքար (59x35x10 սմ) նույնպես 1986 թ. շուլավերցիները փոխադրել են Սբ. Աստվածածին եկեղեցի:

**ԲՆԻՁՈՐԻ ՄԵԾ ՎԱՆՔ**. Շուլավերից համարյա 4 կմ արևմուտք, Բնիձորի Ներքին կամ Միջին վանքից 0,5 կմ հարավարևելք, անտառածածկ լեռնալանջի հյուսիս-արևելահայաց թեքության վրա է գտնվում Բնիձորի Մեծ վանքը:


Բնիձորի Միջին վանքի գերեզմանատան խաչքարերից

Շուլավերի մերձակայքում պահպանված պատմական հուշարձաններից առավել գիտական այցելուներ ունեցած հնավայրն է: Այստեղ եղել են արքեպիսկոպոս Ջալալյանցը, Սարգիս Քամալյանը, Երվանդ Լալայանը, անգամ՝ Նիկողայոս Մառը: Սակայն, դրանով հանդերձ, Բնիձորի Մեծ վանքի մասին առկա գրականությունը դեռևս գոնե մասամբ չի ներկայացնում հուշարձանախմբի իրական պատկերը: Վանական համալիրը բացառիկ է շատ առումներով (եռահարկ՝ դամբարան-եկեղեցի-զանգակատուն, սակավադեպ հորինվածք, պաշտպանական հզոր համակարգ, գեղարվեստական և պատմական բացառիկ արժեք ներկայացնող խաչքարեր ու տապանաքարեր, վիմագրական առատ նյութ և այլն): Անդրադառնալով հուշարձանախմբի ուսումնասիրության բնագավառում մինչև այժմ կատարվածին՝ հարկ է՝ նախ մեջբերել դեռևս XIX կեսին Ս. Ջալալյանցի հետևյալ շարադրանքը. «Տաճարս այս կառուցեալ է երկյարկեայ ի հասարակ քարանց, յարկմ ներքին է աղօթարան և սեղան Սրբազան խորհրդոյ, իսկ յարկն վերին զանգակատուն վայելուչ կաթողիկէիւ, ի ճակատ որոյ գրեալ. Յիսուս Քրիստոս և թիւ շինութեան



ՌՃԺԳ: Կրկին են պարիսպք սոյն անապատի, մինն՝ լայն և ընդարձակ, ձգեալ շուրջ զեկեղեցեաւն յորում ժողովեալ են բազմութիւնք Հայոց ի ժամանակս երկիւղի թշնամեաց, իսկ միւսն՝ փոքր, յորում են միմիայն սենեակք միաբանից և դամբարանք երևելի Մելիքաց և այլոց, որպէս ցուցանեն նոքին իսկ տապանագիրք...»:[143]

Հաջորդ և առավել հանգամանալից ուսումնասիրությունը, որն ամբողջացվել է շուլավերցի բանահավաք-ազգագրագետ, ուսուցիչ Սարգիս Քամալյանի մասնակցությամբ (նյութն անստորագիր է), հրապարակվել է 1884 թ.-ին Այդտեղ առաջին անգամ վանքի ճարտարապետական նկարագրությունից զատ հրապարակվել են թվով 5 վիմագրեր. «... տաճարի երկարութիւնն է 11 քայլ և լայ. 9, կրկնակի քարուկիր բարձր պարսպով շրջապատած է տաճարն, արտաքին պարիսպն (կիսով չափ խոնարհուած) ունի չորս բուրգ և ամեն մէկը յարմարցրած հրացանաձգութեան. որովհետև, ինչպես պատմում էին, լեզգինք, շատ անգամ սովորութիւն են ունեցել յարձակուել այս կողմերի վերայ: Ներքին պարսպին կից ներքուստ արևելեան և արևմտեան կողմերում կան կրօնաւորական խցեր քարուկիր շինութեամբ, մի քանիսն այժմ կիսակործան: Տաճարի միակ դռան, արևմտեանի վերայ կան գեղեցիկ քանդակուած նկարներ և արձանագրութիւն հետևեալը. Ծ. Յիսուսի Ք ստոսի շինեցաւ ձեռամբ Տէր-Օհաննէս քահ. թուին ՌՃԺԲ. մի և նոյ րի վերայ աջ և ձախ կողմերում կան փակագիր արձանագրություններ:


Բնիձորի Մեծ վանքի հատակագիծը

Եկեղեցւոյ դրանը կան մի քանի վայելչաքանդակ խաչքարեր, որոնցից մէկի վերայ հետևեալը: **Սուրբ խաչս բարեխօս է Քարամին** և իւր կողակցին թ. ՌճԼԳ. նոցա մօտ գտնւում են երկու գերեզմաններ. մէկի վերայ նկարուած ձիաւոր մարդ, իսկ միւսի վերայ չորս այրական պատկեր, երեքը թագաձև գլխարկով, իսկ մէկն, որ երևում էր ծառան, գլխաբաց և **ձեռքերը կուրծքին** կանգնած. պատկերների մէջտեղում նկարուած են գինու գաւեր, բաժակներ և վրացական բաժակեղջիւրներ և այլ զարդերն: Երկու տապանաքարեր ևս ունէին արձանագրեր.

143. **Ջալալեանց Ս.**, Նշվ. աշխ., էջ 80-81:

մութը վերահասած լինելով չկարողացանք կարդալ, բայց յետոյ տեղւոյն ուսուցիչ պ. Քամալեանցն օրինակելով՝ մեզ ուղարկեց, որից երևում է մէկինը հետևեալն - Ես ի ազգէն Ծովանշեցի, անուն իմ Թամազ կոչի, որ շինեցի սուրբ եկեղեցիս ի յիշատակի ծնողաց իմոց (թուական չկայ). միւսինը «Այս է իմ կացարան, որ եղև տուն իմ բնակարան նգալ մարսունիս, դամբարան պարոն Ասլամազին» (թուական չկայ): Եկեղեցւոյ արևելեան կողմը մի այլ տապանի վերայ կարդացինք հետևեալը. Այս է տապան Ասլանին որդի Աւթամեդիլին թ. ՌճԼ: Փակագրերով արձանագրութիւններ կային և կաթուղիկէի վերայ որոնք մնացին նոյնպէս անվերծանելի: Արտաքին պարսպի հանդէպ կա մի այլ գերեզմանատուն՝ այժմ ծածկուած անտառով և հողի հետ հաւասարւած...»:[144]





Բնիձորի Մեծ վանքի գլխավոր եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից և արևմուտքից

Որոշ կրկնությունով հանդերձ՝ ուշագրավ է նաև Ե. Լալայանի հետազոտության արդյունքը. «... տասն արշ. երկ., 8 արշ. լայնութեան և մօտ 4 սաժէն բարձրութեան մի եկեղեցի է. տասն սիւնաւոր գեղեցիկ կաթուղիկէով, որը եկեղեցու ներսից չի երևում, որովհետև նրա տակը մի գաղտնի սենեակ է շինուած: Ունի երկու փոքրիկ, երկար և նեղ պատուհան և մի կամարակապ դուռն, որի վրայ գրուած է. Թվ. ՌճԺԲ Կամաւն Ամենակալին Ած Յ.Ք.շինեցաւ ձեռամբ Տէր Օհաննէս քհ: Սրա երկու կողմը մի քանի փակագրեր: Վանքը շրջապատուած է կրկնակի պարսպով, որի մէջ կան վեց բուրգ, այժմ կիսաւեր: Ներքին պարսպին կից կան մի քանի կիսաւեր խցեր՝ և ջրի մի աւազան: Եկեղեցու շուրջը և մանաւանդ դռան առաջ կան ահագին մեծութեան գերեզմանաքարեր, մի քանիսի վրայ պատկերներ քանդակուած, միւսներին խաչքար կանգնեցրած:

144. «Արձագանք», 1884, N42, էջ 612-613:





Բնիձորի Մեծ վանքի գլխավոր եկեղեցու շքամուտքը





Բնիձորի Մեծ վանքի շրջապարիսպը. դարպասը և հարավ-արևմտյան բրգաձև աշտարակը

Այսպէս՝ մի գերեզմանաքարի վրայ նկարուած է չորս մարդու պատկերներ, որոնցից երեքը գլխներին թագեր ունին, իսկ չորրորդը՝ գլխաբաց է և ձեռները կրծքին դրած՝ որոնց առաջ կանգնած. այս ու այն կողմ գինու գաւեր, բաժակներ, վրացական բաժակեղջիւրներ: Սրա վրայ կայ հետևեալ տապանագիրը. Այս է իմ կացարան, որ եղեւ տուն իմ բնակարան, նգալ մարսուսիս դամբարան պարոն Ասլամազին: Սրա մօտի տապանաքարի վրայ նկարուած է մի ձիաւոր և գրուած Ես ի ազգէն Ծովանշեցի, անուն իմ Թամազ կոչի, որ շինեցի սուրբ եկեղեցիս ի յիշատակի ծնողաց իմոց: Այս երկուսի վրայ թուական չկայ, իսկ սրանց մօտի խաչքարը կրում է հետևեալ թուականը և տապանագիրը. Սուրբ խաչս բարեխօս է Քարամին եւ իւր կողակցին թ. ՌՃՅԳ: Պարսպից դուրս ևս մի ուրիշ գերեզմանատուն կայ, մօտը մի գիւղատեղի, այժմ Բնի ձոր անուամբ յայտնի»:[145]

Ինչ վերաբերում է 1893 թ. մայիսի 27-ին շուլավերցիների ուղեկցությամբ Ն. Մառի այցելությանը Բնիձորի Մեծ վանք, ապա դա էական ոչինչ չէր տվել, քանի որ գիտնականի վկայությամբ՝ հուշարձանախմբի ժամանակագրական պատկանելությունը (XVII դ.) դուրս էր իր ուսումնասիրության շրջանակից. «Պ. Մառը տեսաւ Բնիձորի երկու վանքն էլ, բայց հետաքրքիր ոչինչ չգտաւ: – Սրանք, ասաց հարգելի գիտնականը, իմ մասնագիտութեանը չեն վերաբերում, որովհետև հնութիւն չեն, 200 տարուայ շինութիւններ են: Ես հետաքրքրւում եմ, աւելացրեց նա, Բագրատունեաց թագաւորութեան ժամանակի հնութիւններով...»:[146]

145. «Ազգագրական Հանդէս», 1901, VII-VIII, էջ 332-333:
146. «Նոր-Դար», 1893, N 92, էջ 2:







Խաչքարեր (1651 և 1684 թթ.) Բնիձորից

Օգտվելով Ե. Լալայանից՝ վանքի գոյությունը հպանցիկ կերպով հիշատակել է նաև Հ. Ոսկեանը, որը վերահրատարակել է նաև 1663 թ. շինարարական արձանագրությունը:[147] 1902 թ. մտացածին և կանխակալ բովանդակությամբ մի հրապարակում է հեղինակել ոմն Իվանե Չիքովանի: Ըստ նրա, վանքի իբր բոլոր վրացերեն արձանագրությունները քերված են եղել և փոխարենը պատերի մեջ ագուցվել հայերեն արձանագրություններով սպիտակ քարեր:[148]

Վանական հուշարձանախմբի զարդն է՝ եկեղեցի-դամբարանզանգակատուն եռահարկ շինությունը՝ արևմտյան ճակատից բացված սրբատաշ գեղազարդ շքամուտքով, սրածայր վեղարով ավարտ-

147. **Ոսկյան Հ.**, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 23:
148. «ივერია», 1902, N 153:





Բնիծորի Մեծ վանքի արևային ժամացույցը և վանքի բակում գտնվող տապանաքար 1686 թ.

վող կտրվածքում՝ ութանիստ թվով տասը սյուներով զանգակատնով: Մկրտարանի առկայությունը հուշում է, որ վանքի գլխավոր եկեղեցին բավարարել է նաև ծխականների հոգևոր կարիքները: Հարավային ճակատում պահպանվել է արևային ժամացույցը: Բացի անկյունաքարերից, սյուներից և կամարներից, որ սրբատաշ են, եկեղեցու մնացած հատվածները իրականացված են անմշակ քարով, կրաշաղախով: Արտաքին չափերն են՝ 6,18x5,87 մ: Համաձայն միակ մուտքի բարավորին պահպանված արձանագրության՝ եկեղեցին կառուցվել է 1663 թ. Հովհաննես քահանայի կողմից.

Ի ԹՎ(ԻՆ) ՌՃԺԲ (1663) Կ(Ա)ՄԻՎԻՆ Ա(ՍՏՈՒ)Ծ(ՈՅ) Յ(ԻՍՈՒ)Ս(Ի) Ք(ՐԻՍՏՈ)ՍԻ ՇԻՆԵՑԱՒ ՉԵՌԱՄԲՆ | Տ(Է)Ր ՅՈՎԱՆԷՍ Ք(Ա)Հ(ԱՆԱՅԻ):

Արձանագրության այս հիմնական մասից զատ վերին երկու անկյուններում խոշոր տառերով ևս մեկ անգամ փորագրված է թվականը.

ԹՎ(ԻՆ) ՌՃԺԲ (1663):

Թվով 4 փակագրեր էլ կարծես լրացրել են բարավորի մակերեսի ազատ մնացած տեղերը: Դրանցից մեզ հաջողվեց վերծանել միայն երեքը.

1. ԹԱՄԱԶՍ
2. ՆԱՒԱՅՍԱՐԹ
3. ՐԷՒԱՁԻՍ



եկեղեցու հարավային պատին, լուսամուտից վեր, սրբատաշ քարին քանդակված արևային ժամացույցից ներքև մեկ տողով և շրջված փորագրված է.

Ն(Ա)ԻԱՍ(Ա)ՐԴ Ծ(Ա)ՌԱ:

Շուրջը տարածված գերեզմանոցը զգալի չափով ավերված է առավելապես գանձախուզության նկատառումով: Տապանաքարերը տեղահան են արված, խաչքարերից մի քանիսը՝ նաև կոտրտված:

Եկեղեցու ներսում ընկած մի գեղաքանդակ սպիտակ կրաքարից կերտված խաչքարի (167x66x18 սմ) քիվին և քիվատակին եռատող արձանագրված է.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Է ԲԱՐՍԵ⌈Ղ⌉ԻՆ ԵՒ ԻՐ ԿՈՂԱԿՑԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՃԼԳ (1684):

Եկեղեցու արևմտյան կողմում, քիվն ու հյուսիսային կողն ամբողջությամբ փշրված և երկու մասի կոտրած գեղաքանդակ խաչերի (167x53x21 սմ) վերին խաչաթևի երկու կողմերում կարդացվում է.

⌈Ռ⌉ ՃԺԵ (1665):

Երկատված մեկ այլ խաչքարի (184x62x22 սմ) քիվին և քիվատակին եռատող արձանագրված է.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ Բ(Ա)ՐԷԽԱ(Ւ)Ս Է ԱՍԼԱ|ՅՄԱՁԻՆ ԵՒ ԻՐ ԿՈՂ(Ա)ԿՑԻՆ, | ԹՎ(ԻՆ) ՌՃԺԶ (1667):

Նույնպես գեղաքանդակ, բայց միայն վերին կես կտորով (150x62x21 սմ) պահպանված խաչքարի քիվին և քիվատակին եռատող արձանագրված է.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Է ՐԷՎԱԶ|ԻՆ ԵՒ ԻՐ ԿՈՂԱԿՑԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃԼԳ (1684):

Եկեղեցու արևելյան պատի տակ գտնվող և մի կողի վրա շուռ տրված տապանաքարի (170x63x 37 սմ) երևացող կողին պատկերաքանդակներ են (3 անձ, գործիքներ, բաժակ, սափոր, շեփորներ, սազ, երաժշտական այլ գործիքներ), իսկ վերին մասում երկտող արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՍԼԱՄԱՁԻ ՈՐԴԻ ԱՒԹԱ(Ն)ԴԻԼԻՆ, | ՈՐ Ի ՅԱԶԳԷՆ ԾՈՎԱՆՇԵՑԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ Ա(ՍՏՒԱ)Ծ, ԹՎԻՆ ՌՃԼԵ (1686):

եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց ուղղանկյունաձև սալատապանի (173x25 սմ) հարթ երեսին 14 տողով արձանագրված է.

ԵՍ՝ Ի ԱՍ|ԳԷՆ ԾՈՎԱՆՇԵ|ՑԻ, ԱՆՈ|ՒՆ ԻՄ Թ|ԱՄԱՋ Կ|ՈՉԻ, ՈՐ | ՇԻ-
ՆԵՑ|Ի Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻ|Ս ՅԻՇ(Ա)ՏԱ|Կ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂ|ԱՑ ԻՄՈՑ:

եկեղեցու հյուսիսային պատի տակ մեկ այլ սալատապանի (144x41 սմ) 10 տողով արձանագրված է.

ԱՅՍ Է | ՏԱՊ|ԱՆ [Մ]Լ[Գ]ԻՆ|Ի ՏՂԱ | Յ(Ա)ԳԱՒ[Կ]Բ(Ի)Ն, | ԹՎ(Ի)Ն |
ՌՃ|...:

եկեղեցու որմերին և գերեզմանատանը այլ արձանագրություններ չենք նկատել:

Հարկ է նշել, որ հայերենից զատ հնավայրում այլ լեզուներով վիմագրեր գոյություն չունեն և ամենայն հավանականությամբ այդպիսիք չեն էլ եղել: Նկատելի չեն, որևէ վիմագրի քերված լինելու կասկածների հետքեր, նաև պարիսպների մեջ չկան հայերեն արձանագրություններով նոր ժամանակներում ագուցված սպիտակ քարեր, որոնց «գոյության» մասին ժամանակին բարբաջել է Ի. Չիքովանին:[149]

Եկեղեցին, շուրջը տարածված գերեզմանոցով հանդերձ, ներփակված է ուղղանկյունաձև (34x17 մ) շրջապարսպով: Արևելյան և արևմտյան կողմերում այդ պարսպին ներքուստ կից են 3-ական թաղակապ սենյակներ (ըստ ամենայնի՝ միաբանական): Հյուսիսից պարսպապատը հզորացված է 5 կիսաբոլորակ աշտարակներով: Դրանցից երկու անկյունայինները ներքուստ ունեն փոքրիկ սենյակներ: Գրեթե միաժամանակ, բայց կից՝ արդեն գոյություն ունեցած բերդիկին կառուցվել է էլ ավելի մեծ մակերես ներառած և հզոր աշտարակներով ամրացված մոտավորապես քառանկյուն շրջապարիսպ (72x58 մ): Ամենայն հավանականությամբ, դա բխել է լեռնականներից պաշտպանվելու նկատառումով: Պարսպից դուրս, հյուսիսային կողմում կիսավեր դրության մեջ է միանավ մեկ այլ եկեղեցի: Արդյունքում՝ Բնիձորի Մեծ վանքը վեր է ածվել պաշտպանական հուսալի համակարգ ունեցող հզոր վանք-ամրոցի, նշանավորներից մեկը XVI-XVII դարերում Հայաստանում կառուցված համանման հուշարձանախմբերի շարքում:[150]

Խորհրդային իշխանության հաստատումից հետո եկեղեցիները փակվեցին, նրանց հարստությունները տեղափոխվեցին Մառնեուլ:

149. Նույն տեղում:
150. Սյունիքի համանման համալիրների մասին տես՝ Մ. Հասրաթյանի Սյունիքի XVII-XVIII դդ. վանական համալիրների ճարտարապետությունը, Երևան, 1973:



# ՇՈՒԼԱՎԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1918 թ. մայիսին թուրքական բանակը ներխուժեց Լոռի-Բորչալուի շրջանը: Հնարավոր հարձակմանը դիմագրավելու նպատակով Շուլավերի կոմիսար Ս. Ղալեչյանը նախ փորձում է հետախուզության միջոցով պարզել, թե ինչ տեղերում էր թշնամին բաշխված, նրանց քանակը, ծրագրերը, զենքի տեսակները և այլն: Որոշվում է 4 շուլավերցիների ուղարկել հետախուզության: Անհրաժեշտ կարգադրություններ ստանալուց հետո Արտաշես Բեգոյի Չիրքինյանը, Արամ Հովհաննեսի Միրաքյանը, Ռուբեն Գևորգի Ալավերդյանը և Շամիր Ավետիքի Քյուրանյանը լավ զինված մեկնում են դեպի Լոռի: Դժբախտաբար թուրքերին հաջողվում է այս խմբին հայտնաբերել և ոչնչացնել: Առանձնապես գազանաբար սպանվում է սպա Շամիր Քյուրանյանը:

Ս. Ղալեչյանը գաղտնաբար կարողանում է զինել Շուլավերի երիտասարդությանը և Բնիձորի անտառներում անցկացնում զորավարժություններ: Շուլավերի չորսբոլորը հիմնվում են պաշտպանական կետեր, որոնց միջև ապահովվում է հեռախոսային կապը: Կոմիսար Ս. Ղալեչյանը գտնում էր, որ շուլավերցիները պետք է պատրաստ լինեն ոչ թե պաշտպանվելու, այլ՝ հարձակվելու, իսկ անտառում թաքնված և զորավարժություններով պարապող երիտասարդությունը օգնության պիտի հասներ միայն անհրաժեշտության դեպքում: Թուրքական բանակի առաջխաղացման վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը, սակայն, օրվա խնդրի է վերածում հետախույզների նոր խումբ ուղարկելու հարցը: Հրավիրվում է հասարակական ժողով: Որոշվում է այս անգամ ուղարկել միայն երեք հոգու (Սուրեն Գաբրիելյան, Սամսոն Սիմոնյան, իսկ 3-րդի անունն անհայտ է): Սուրեն Գաբրիելյանի ղեկավարությամբ հետախույզների խումբը առաջադրանքը հաջողությամբ կատարում է և պարզում, որ թուրքերը լցվել են Աղքյորփի գյուղի անտառները, և որ ծառերին հաշիվ կա, թուրքերին չկա...: Նորից հասարակական ժողով է հրավիրվում: Հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունն ի վնաս շուլավերցիների՝ ժողովը որոշում է, որ Ս. Ղալեչյանի ղեկավարությամբ շուլավերցիների պատվիրակությունը աղ ու հացով ընդառաջ գնա թուրքերին: Բանակցություններից հետո մի քանի թուրք սպա և մոտ 30 ասկյար ուղարկվում են Շուլավեր: Կոմիսար Ս. Ղալեչյանը դրանց լավ պահում է, կերակրում, նաև՝ կոշիկ, հագուստ և գլխարկ պատվիրում և նվիրում թուրքերին:[151]

151. Այսպես, Սելապանյան Նիկոլին (Սելապանյան Ֆելիքսի պապը) 4 գլխարկ պատվիրեց, Չիրքինյան Կամոյին (Չիրքինյան Սեյրանի հորը) 4 զույգ կարմիր կոշիկներ և այլ իրեր

Թուրքերի՝ Շուլավերում գտնված ժամանակ սահմանված էր շուրջօրյա խիստ հսկողություն: Երիտասարդությունը շարունակեց մնալ Բնիծորի անտառներում, գյուղից 3-5 կմ հեռավորության վրա: Ուշադրությամբ հետևում էին թուրքերի տեղաշարժերին:

Երբ թուրքերը դեռևս Շուլավերում էին գտնվում, լուր է ստացվում, թե զորավար Անդրանիկը մտադիր է իր զորքով օգնության հասնել շուլավերցիներին: Ս. Ղալեչյանը հարցի առթիվ հրավիրում է հեղինակավոր շուլավերցիների խորհրդակցություն: Որոշվում է՝ զոր. Անդրանիկին ընդառաջ (Ջալալօղլի) մարդիկ ուղարկելով՝ հայտնել, որ անհրաժեշտության դեպքում շուլավերցիներն ի վիճակի են թուրքերի հետ հաշիվ մաքրել, իսկ առայժմ զորավարի մուտքը Շուլավեր ցանկալի չէ: Այն խումբը, որը մեկնում է շուլավերցիների որոշումը զորավարին հաղորդելու, առանց թշնամու կողմից նկատվելու հաջողությամբ կատարում է առաջադրանքը: Պատմում են, որ զոր. Անդրանիկը շուլավերցիների նախընտրած ռազմավարությունը հավանել էր:

Այն, որ թուրքերը Շուլավերում ձեռնպահ են մնում բռնություններ կատարելուց, ժողովրդի վկայությամբ կոմիսար Ս. Ղալեչյանի ճկուն գործելակերպի արգասիքն էր: Հարկ եղած դեպքերում շուլավերցիները հմտորեն օգտվում են Բորչալուի գավառի կոմիսար Հախվերդիևի հեղինակությունից, որը հայերի նկատմամբ անձնապես բարյացակամ էր:

Բորչալուի մուսավաթականները, ցանկանալով օգտվել Շուլավերում թուրք զորքի առկայության հանգամանքից, փորձում են թալանի նպատակով ներխուժել Շուլավեր: Դրանց հրոսակախմբերը հասնում են ավանի պաշտպանության առաջավոր դիրքերը և շուլավերցիներին անձնատուր լինելու պահանջ ներկայացնում: Սակայն շուլավերցիները պատասխանում են, որ իրենք անձնատուր են եղել թուրքական կանոնավոր բանակին, իսկ Բորչալուի հորդաների դեմ պատրաստ են կռվելու մինչև վերջին մարդը և գնդակը: Այսօրինակ պատասխանից հետո մուսավաթական հորդաները, առանց Շուլավերի վրա հարձակման փորձ անելու, հեռանում, ցրվում են:

Դեռևս 1916 թ.-ից, բայց հատկապես 1918 թ. ընթացքում, Շուլավեր էին հասել շուրջ 3000 գաղթականներ՝ Փամբակից, Շիրակից, նույնիսկ՝ հեռավոր Բաղեշից: Թուրքերը Շուլավերում գտնված ժամանակ պահանջում են գաղթականներին հանձնել, բայց Ս. Ղալեչյանը բանակցելով պայմանավորվում է և պահանջված գումարը իբրև փրկագին մուծելով՝ ազատում է գաղթականներին:

Աշոտ Սիմոնյանը, որը Ս. Ղալեչյանի մոտ կապավոր էր աշխատում, իր հուշերում պատմում է, որ այդ ամբողջ ընթացքում շարունակում էր գործել պաշտպանության հենքը կազմող հեռախոսակապը: Դրանք տեղադրված էին՝ Մատաղթափում, Ծակքարում, Ղուլի գյադուկում, Սուլուլքարում, Բուխարիկքարում, քաղաքի փոստում, միլիցիայում, վարչապետարանում և գյուղխորհրդում:



Թուրքերի՝ Շուլավերից հեռանալուց[152] հետո, գավառի թուրքերի հետ հարաբերություններն ավելի են սրվում, բայց լուրջ ընդհարումներ չեն լինում: Արժանահիշատակ է 1918 թ. ամռանը տեղի ունեցած մի դեպք, ըստ որի՝ Շուլավեր կայարանից լուր է ստացվում, թե կանգ առած գնացքը, որը տեղափոխում էր շուրջ 200 հայ երեխաների, թուրքերը սպառնում են ոչնչացնել: Տեղ հասած շուլավերցիների զինված խումբը կարողանում է վագոններից դուրս բերել և ապահով Շուլավեր հասցնել բոլոր երեխաներին:[153] Չնայած հացի սղությանը, բռնատեղահանված և Շուլավերում ապաստանած հայերի համար բացվել էր փուռ: Անվճար հաց և կերակուր էր մատակարարվում բոլոր կարիքավորներին: Բացի այդ, բռնագաղթված ազգակիցների առջև բաց էին նաև շուլավերցիների այգիները: Հարկ է նշել, որ ստեղծված ծանր կացությունը շուլավերցիներն ի վերջո կարողացան հաղթահարել. «Կալը սկսվեց Շուլավերում: Հացի տագնապն անցավ: Հրապարակ եկավ գարին, սուր քաղցն անցավ – մեղմացավ: Գաղթականությունն զգաց իրան կուշտ: Շատերն աշխատում էին օրական 25-30 ռ. վարձով, ստանում էին հաց ու կերակուր: Գաղթականների հոսքը չէր դադարում»:[154]

## ՎՐԱՑ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐՆ ՈՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԸ ՇՈՒԼԱՎԵՐՈՒՄ ՄԻՆՉԵՎ 1918 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ը

Վրաց մենշևիկների ջանքերով Լոռի-Փամբակի թուրքերից ազատված շրջանը շուտով զբաղեցրին գերմանական զավթիչները: Գերմանավրացական ուժերը մասնավորապես՝ Շուլավեր մուտք գործեցին 1918 թ. հունիսի 13-ին և այնտեղ մնացին շուրջ 5 ամիս: Իր հուշերում Մելիք Ալիխանյանը նշել է, որ գերմանացիների հովանավորությամբ վրացական զորամիավորումները գավառի հայ գյուղացիության նկատմամբ իրականացնում էին իսկական հաշվեհարդար. «... մտնում էին գյուղերը, զինաթափում էին բնակչությանը, ծեծում,

152. Ավանդաբար պատմում են, թե թուրքերը Շուլավերից հեռացել են այն բանից հետո, երբ իբր զոր. Անդրանիկին հրավիրելու նպատակով մի գիշեր անակնկալ կերպով սկսել են ղողանջել Շուլավերի եկեղեցիների զանգերը, իսկ՝ զանգերը հնչեցնելու պատճառը հետևյալն էր. Գաբրիելյան Սուրենի տան պատին կից՝ դեպի կենտրոնական փողոցը նայող մասում գտնվող խանութը, որտեղ սովորաբար խաշ էին պատրաստում, մի օր հրդեհվում է վաճառող Ասատուր Հակոբյանի անփութության հետևանքով (հրիկնադեմին առանց կրակը հանգցնելու տուն էր գնացել): Թուրքերին հայտնում են, թե զանգերը զոր. Անդրանիկի պատվին են, որոնք էլ արագ հեռանում են Շուլավերից:

153. Տեղեկությունը հաղորդել են Անդրո Խաչատրյանը, Իշխան Մաճկալյանը և Աշոտ Սիմոնյանը:

154. Ղարաքիլիսայի հերոսամարտ, Թիֆլիս, 1920, էջ 48-92:

թալանում, նույնիսկ սպանում...»: Արդեն 1918 թ. ամռանը Բորչալուի գավառի պարենավորման գծով կոմիսար Գրիգորի Լորդքիփանիձեն Շուլավերի հասարակությանը 40.000 փութ ցորենի պահանջ է ներկայացնում: Սանասար Ղալեչյանը բնակչության անունից հրաժարվում է այդչափ ցորեն հանձնել, նշելով, որ հիշյալ քանակությունը ժողովուրդը պարզապես ի վիճակի չէ հանձնել: Կոմիսարը կարգադրում է բանտարկել Ս. Ղալեչյանին՝ մի քանի շուլավերցիների հետ մեկտեղ: Բանտարկվածներին ազատելու հասարակության պահանջին Գ. Լորդքիփանիձեն պատասխանում է. «Շուլավերցիք մենշևիկյան կառավարությանը չեն ճանաչում, մենք նրանց կհարկադրենք ճանաչել և պետությանը հանձնել այն բոլորը, ինչ նրանցից պահանջվում է, հակառակ դեպքում թող գյուղից ուր ուզում են հեռանան...»: Շուլավերցիք ստիպված ցորենը սկսում են մաս առ մաս հանձնել պարենավորման կոմիտե: Մենշևիկյան կառավարության այդ ապօրինի պահանջը դեռևս չկատարած՝ Շուլավեր է ժամանում վրացի գեներալ Ցուլուկիձեն 300 գվարդիականներով, 6 հրանոթով, 6 գնդացիրով և գրավում Շուլավերը շրջապատող բարձունքները: Հրանոթները տեղադրում են բարձունքներին, իսկ գնդացիրները՝ գյուղամիջում՝ Ղըլի գլխին: Առաջ բերած ահաբեկման ու սարսափի մթնոլորտում ժողովրդին հրամայում են հանձնել զենքերը: Պատմում են, որ ժողովրդի մոտ իրոք զենք կար, բայց դրանք Ս. Ղալեչյանի նախաձեռնությամբ հիմնականում արդեն թաքցված էին տարբեր տեղերում՝ Ջորգաքարում, Բնիձորում, անտառում, Մելիք-Փաշաևի տանը, Սմբատ Միրզոյանի նկուղում և այլ տեղերում: Գեներալ Ցուլուկիձեն պահանջում էր 3000 երեք գծանի հրացան, 200 մաուզեր, 500 նագան, 7 գնդացիր, փամփուշտի պաշարները և 40.000 փութ հացահատիկի դեռևս չմուծված մասը: Շուլավերցիները զենքը կամավոր են հանձնում և սկսվում է խուզարկությունը: Մովսես Հարությունյանը վկայում է, որ խուզարկության ընթացքում գտնվեցին միայն մի քանի զենքեր: Դրանց տերերը ծեծի ենթարկվեցին, մոտ 15 մարդ, այդ թվում Ս. Ղալեչյանը, ձերբակալվեցին: Խուզարկությունն ուղեկցվեց խանութների թալանով, տների ավերով: Ավերվեց նաև Եգոր Խուդադյանի մեղվանոցը: Նմանատիպ վայրագություններ կատարվեցին նաև հարևան հայաբնակ ավելի փոքր գյուղերում:

Ս. Վրացյանը, նկարագրելով Շուլավերում մինչ հայ-վրացական պատերազմը (1918.13.XII) տիրող կացությունը, նշել է. «Երբեմն ամբողջ գյուղեր, ինչպես, օրինակ, Շուլավերը, խուզարկության ու կողոպուտի էին ենթարկվում: Վրացիները պահում էին իրենց այնպես, կարծես թշնամի երկրում լինեին: Ենիչերական կարգեր էին սահմանվել Լոռիում, ուր վրացին ամեն ինչ էր, հայը՝ ճնշված ռայա»:[155]

Փաստորեն, Բորչալուում, Լոռի-Փամբակում և Ջավախքում թուրքերի հեռանալուց հետո (1918 թ. հոկտեմբերի վերջ) վերջիններիս փոխարինելու եկած վրացիները հենց սկզբից իրենց դրսևորեցին, որպես

155. **Սիմոն Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 223-224:



թուրքական «գործի» արժանավոր շարունակողներ. «Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիայի պարտության հետևանքով թուրքական զորքերը հարկադրաբար հեռացել էին Ախալքալաքի շրջանից, վրացական զորամասերը դեկտեմբերի 5-ին գրավում են նաև այդ գավառը: Գրաված տարածքներում վրաց իշխանությունները զենքի ուժով անլուր տառապանքների ու հարստահարումների էին ենթարկում հայ բնակչությանը: Իսկ Լոռվա մի շարք գյուղեր վրաց զինվորականության զրահագնացների հրանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակով ռմբակոծելն ու քանդելը դարձել էր պարբերաբար կրկնվող սովորական երևույթ»:[156]

Դեկտեմբերի 8-ին վրացական բանակը փորձ էր արել նաև գրավելու Օձուն (Ուզունլար) գյուղը, որը երկու օր շարունակ ենթարկվել էր հրանոթային ռմբակոծման:[157]

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հակառակ Հայաստանի կառավարության բազմաթիվ դիմումների և բողոքների՝ վրացական կառավարությունը շարունակում էր Բորչալուի և հարակից գավառների հայաբնակ գյուղերի կողոպուտն ու ավերը: Դեկտեմբերի 12-ին Հայաստանի վարչապետ Հ. Քաջազնունին մի վերջին անգամ դիմում է Վրաստանի կառավարությանը. «Վրաստանի կողմից բռնությամբ զավթած Բորչալուի գավառում վրացական զորքի գործողությունները այդ շրջանում ստեղծել են այնպիսի իրավիճակ, որն այլևս հնարավոր չէ հանդուրժել: Միայն այդ շրջանից վրացական զորքի դուրս բերումը կարող է կանխել հետագա արյունահեղությունը և հաստատել ամուր բարեկամական հարաբերություններ Հայաստանի և Վրաստանի միջև: Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը պատիվ ունի Վրաստանի կառավարությանը առաջարկելու անհապաղ դուրս բերել վրացական զորքերը Բորչալու գավառի հայկական մասից: Հրաժարվելու կամ հապաղելու դեպքում Հայաստանի կառավարությունը իր քաղաքացիների ապահովությունը վրացական զորքերի բռնություններից պաշտպանելու նպատակով հարկադրված կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ»:[158]



Հայկական բանակի զրահագնացքները պատերազմի օրերին

156. **Համլետ Գևորգյան**, Դրո, Երևան, 1991, էջ 122:
157. Նույն տեղում:
158. **Հ. Գևորգյան**, նշվ. աշխ., էջ 123:

Հաջորդ օրն իսկ Հայաստանի կառավարությունը զորավար Դրաստամատ Կանայանին (Դրո) հանձնարարում է Լոռի-Փամբակը մաքրել ավելի քան երկու ամիս գավառի հայկական գյուղերի թալանով զբաղված վրացական «կանոնավոր բանակից»:

Փաստորեն, 1918 թ. դեկտեմբերի 13-ից Լոռի-Փամբակի և Բորչալուի հայաբնակ մասի գյուղացիությունը շուրջ երկու ամիս միայնակ մաքառելուց հետո վերջապես ստացավ ակնկալված օգնությունը: Հայկական զորամասերը համալրված գավառամասի, թալանված ու ավերված գյուղերի կամավորական ռազմիկներով հաշված օրերի ընթացքում վրացական բաշիբոզուկներից մաքրեցին Լոռի-Փամբակը և մտան Բորչալուի հարավային մասի գյուղերը. «դեկտ. 19-ին փոխգնդ. Կորոլկովին միացավ և միլիցիոն գունդը 350 զինվորներով և 2 գնդացիրներով, որին հրամայվեց գրավել Շուլավերը»:[159] Հաջորդ օրը հայկական ուժերը մուտք գործեցին Շուլավեր. «Դեկտ. 20-ին տեղի ունեցան համառ և արյունահեղ կռիվներ: Կուռ Թարխանյանի հարյուրյակը մի կողմ շպրտելով թշնամուն, գրավեց Շուլավերը»:[160] Հաջորդ օրը «Գ. Մնացականյանի Շուլավերի զորամասը կռվի բռնվեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ»:[161]

Դեկտեմբերի 22-ին Մնացականյանը դեռևս գտնվում էր Շուլավերի դիրքերում,[162] բայց ինչպես երևում է հաջորդ օրը վրացիներին հաջողվել էր որոշ առաջխաղացում ունենալ:«Դեկտ. 24-ին փոխգնդ. Կորոլկովը հրաման ստացավ շարժվելու Շուլավերի օգնության: Նա ենթարկվել էր վրացիների հարձակման...»:[163] Զգալի մասով Բորչալուի թուրքերով համալրված վրացական բանակը Թիֆլիսին մոտ գտնվելու շնորհիվ ապահովված էր կանոնավոր մատակարարումով: Դրա շնորհիվ դեկտ. 25-ից վրացական կողմը հնարավորություն ստացավ ուժեղացնելու ճնշումը: Գործողություններն ուղեկցվում էին գերմանացիների տրամադրած ռազմական ինքնաթիռների մասնակցությամբ, որոնց ռմբարկումներից, ի դեպ, տուժում էին ոչ միայն ռազմաճակատին մոտ գտնվող, այլև դրա հետ որևէ առնչություն չունեցող (օր. Սամշվիլդէ, Դաղեթխաչեն) գյուղերը. «Շուլավերի վրա թռչում էին վրաց սավառնակները և նետում ռումբեր»:[164]

Ի վերջո, դեկտ. 27-ին վրացական կողմը (3.500 զինվոր, 12 թնդանոթ)[165] զոր. Մազնիևի հրամանատարությամբ վերջնականապես տիրում է Շուլավերին. «Շուլավերից առաջացող վրացիներն ու թուրքերը այրեցին Դամիա գյուղը»:[166]

---

159. **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 232:
160. **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 233:
161. Նույն տեղում:
162. Նույն տեղում:
163. Նշվ. աշխ., էջ 234:
164. Նշվ. աշխ., էջ 234:
165. Նշվ. աշխ., էջ 237:
166. Նշվ. աշխ., էջ 238:



## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Չնայած Հայ-վրացական պատերազմը պաշտոնապես ավարտվել էր 1918 թ. դեկտեմբերի 31-ին, Վրաստանի կառավարությունը պետական մակարդակով սկսած դեռևս դեկտեմբերի 29-ից մինչև 1919 թ. հունվարի 25-ը[167] զբաղվել է ավարառությամբ, թալանով ու ավերով. «... զօրքը քշել տարել է ընտանի բոլոր տեսակի կենդանիները (կով, ձի, էշ, ոչխար, այծ), որոնց թիւը հասնում է մի քանի տասնեակ հազարի, արտահանել են շարժական ամբողջ գոյքը, տան կահ-կարասիքը, երկրագործական և այգեգործական գործիքները, սայլեր, շորեղեն՝ մետաքսե և բրդէ գործւածքներ, մեծ քանակութեամբ գինի, հացահատիկ, բամբակ, ծխախոտ, խոտ և դարման: Թէ ինչ եռանդով էին նոքա աշխատում գիւղից ամեն ինչ արտահանել, այդ երևում է նրանից, որ Մամայ գիւղում արմատահան են արել ազնիւ տեսակի պտղատու տունկերը և ուղարկել Վրաստան: Այդ հսկայական հարստութիւնը տեղափոխելու համար նոքա հարկադրաբար գործադրել են շրջակայ գիւղերի բոլոր բեռնակիր սայլերը: Շատ իրեր էլ, որոնք անարժէք են համարել, ջարդել, փշրել ու կրակն են նետել, ինչպես, օրինակ՝ տան դռներ, պատուհաններ, փեթակներ, տակառներ և այլն: Այդ անողորմ արարքները դեռ շարունակւում են: Երեկ միայն Շուլավերից ստացւեց մի նամակ, ուղղւած Թիֆլիսում ապրող շուլավերցի մի հայ ուսուցչի: Այդ նամակում ի միջի այլոց գրած է. քո տունը ևս ընդհանուր կողոպուտի է ենթարկւել, կոտրատել են փեթակներ, խոհանոցը, նկուղը և ամեն ինչ տարել: Դպրոցի նստարաններն ու քո տան պատուհանի փեղկերը և դռները կոտրատում կրակի մեջ են ձգում: Օդերևութաբանական կայանը (метеорологическая станция) կոտրատեցին. այստեղից հասկացեք թէ ինչ դրութիւն է»:[168] Ավարառուները թալանի ժամանակ հրդեհել էին գյուղի հայտնի տներից Գ. Ղարդաշյանի տունը:[169] Թալանն ուղեկցվել էր սպանություններով. «Նիւթական վնասը ներկայ գնահատութէամբ մի քանի հարիւր միլիոն ռուբլու է հասնում: Թէ թալանի ժամանակ և թե թալանից հետոյ տեղի են ունեցել սպանութեան, բռնաբարման և ծեծի բազմաթիւ դէպքեր, այսպէս օրինակ՝ Շուլավէրում սպանւել են 1. Յակոբ Տ. Յակոբեան (65 տարեկան), սպանելուց յետոյ խեղճին նետել են գինու կարասը, 2. Սմբատ Ղալեչյան, սպանւում է նրա համար, որ բողոքում է իր տունը թալանելու դէմ, 3. Քիտեանց Աւետիք (65 տ.) մորթվել է թալանի միջոցին, 4. Գ. Շահսուվարյան, 5. Յար. Տ. Պօղոսեան և ուրիշներ»:[170]

---

167. ՀՀՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 156, թ. 23: Նաև նշվ. ֆոնդը, գործ 164, թ. 74:
168. ՀՀՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 156, թ. 39:
169. Նուն տեղում:
170. ՀՀՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 156, թ. 39:

Քիչ թե շատ յուրաքանչյուր ինչք թալանելուց կամ ոչնչացնելուց հետո էլ Վրաստանի կառավարությունը սովամահության շեմին հասցված շուլավերցիներին պարտադրում է պետական գանձարան մուծել բավականաչափ հացահատիկ և դրամ. «Չբավականանալով գիւղերի ամբողջական թալանով՝ տուգանք են դնում Շուլաւերի վրայ 5.000 փութ ցորեն, 5.000 փութ գարի, 10.000 փութ խոտ և մէկ միլիոն ռուբլի փող: Հացահատիկների մի մասն արդէն հաւաքել են, իսկ մնացած մասի համար պահանջում են փող հաշւելով ցորենի փութը 160 ռուբլի»:[171]

Բորչալուի գավառանիստ բարգավաճ Շուլավեր գյուղաքաղաքը, որն այնքան ճկուն և հաջող կերպով կարողացել էր դիմակայել թուրքական ներխուժմանը, բոլորովին ավերվեց Վրաստանի կառավարության ձեռքով: Ընդ որում, Շուլավերի (նաև հայաբնակ այլ գյուղերի) նկատմամբ հաշվեհարդարը հիմնականում իրականացվեց Հայ-վրացական պատերազմի ավարտից հետո:

## ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1930 թ-ից, երբ «համատարած կոլեկտիվացման» պատճառով խիստ սրվել էր տնտեսական և քաղաքական իրադրությունը, բռնությունները նոր թափ առան: Այդ բռնությունների դեմ էր ուղղված շահումյանցիների մարտի 4-ի ապստամբությունը: Շահումյանում «կուլակի» անվան տակ արտաքսեցին Մեխակ Ղուկասյանին, Արշակ Հակոբյանին, Մեխակ Տեր-Պողոսյանին, Բեգո Գրիգորյանին, Պապո Սաղաթելյանին (ըստ գործկոմի 10/III 30թ. N3 արձանագրության):

Բռնությունների նոր փուլ սկսվեց 1936-1937 թթ.: 1937 թվականին՝ որպես ժողովրդի թշնամիների, Շահումյանից արտաքսեցին Հովհաննես Սոլախյանին (դպրոցի տնօրեն), Մուշեղ Թումանյանին (դպրոցի ուսմասվար), որը ինքնասպան եղավ բանտում, Երեմ Մանուչարյանին (մասնակցել էր 1914 թ. I համաշխարհային պատերազմին և քաղաքացիական կռիվներին, ակտիվ մասնակցություն էր ունեցել Շուլավերում խորհրդային կարգերի հաստատման գործում, եղել էր ավանային խորհրդի նախագահ, շրջկոմի անդամ), Երվանդ Մարությանին (Շահումյանի, ապա՝ Մառնեուլի շրջանի միլպետ), Հմայակ Ուրումյանին (եղել էր գործկոմի աշխատակից, ապա՝ Շահումյանի խորհրդի գործկոմի նախագահ), Կոնո Ուրումյանին, Հմայակ Միրաքյանին, Արմենակ Ղուլյանին, Մեխակ Հակոբի Զարգարյանին, Մեխակ Ավետիսյանին, Մովսես Քարհանյանին, Մովսես Միրզոյանին, Սողոմոն Գևորգի Միրաքյանին, Բեգի Մանվելյանին, Համլետ Հովհաննեսի Թումանյանին, Արմեն Հարությունյանին և այլոց:

171. Նշվ. գործը, թ. 40:



Մանկավարժ Ռոզա Մանուչարյանը վկայում էր, որ վերոհիշյալների հետ բանտարկվել էին նաև Մառնեուլի շրջկոմի առաջին քարտուղար Ալեքսանդր Ցեխաձեն և Մառնեուլի գործկոմի նախագահ Կոմատոսը, միայն այն պատճառով, որ նրանք լավ հարաբերությունների մեջ էին շահումյանցիների հետ:

## ՇԱՀՈՒՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Ավելի քան 2000 երիտասարդ շահումյանցիներ, ընդգրկվելով ազգային դիվիզիաներում, մասնակցեցին պատերազմին:
Այդ տարիներին աչքի ընկած շահումյանցի մարտիկների կենսագրությունները տրվում են ստորև.

ՅԱՍԱԲԵԿ ԱՐՏՅՈՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ: Հմուտ հետախույզ էր: Նրան էին հանձնարարում պատասխանատու առաջադրանքները: Մարտիրոսյանը մի քանի անգամ վիրավորվել է, բայց վերադարձել զորամաս: Բեռլինի մատույցներում նա նորից ծանր վիրավորվում է: Զորացրվում է, որպես երկրորդ կարգի հաշմանդամ:

ՍԻՄՈՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ: Ծառայել է 89-րդ Թամանյան դիվիզիայում: 1944 թ. մայիսին մասնակցել է Բալակլավայի շրջանում (Ղրիմ) տեղի ունեցած թեժ մարտերին: Եղել է առաջին գրոհային խմբի հրամանատար, որը օգնում էր 51-րդ դիվիզիային: Զոկատը իր մարտական սխրանքների համար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի կողմից արժանացել է շնորհակալության և պարգևների:



ԿԱՐՈ (ԿԱՐԱՊԵՏ) ԲՉԵՄԻ ԲՉԵՄՅԱՆ: 1941 թ. դեկտեմբերին զորակոչվել է բանակ: Ծառայել է 89-րդ հայկական դիվիզիայում: Մարտերով անցել է Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին: Պարգևատրվել է Կարմիր աստղ, Հայրենական պատերազմի I և II աստիճանների, Պատվո նշան շքանշաններով և մեդալներով:



ԲԱԲԱԼ ԼԵՎՈՆԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ: Զորակոչվել է բանակ բժշկական ինստիտուտի 3-րդ կուրսից՝ պատերազմի առաջին օրերին: Սովորել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանում: 1942 թ. նոյեմբե-



րի 3-ին մեկնել է ռազմաճակատ, որպես քաղաշխատող, ապա՝ հրամանատար՝ կապիտանի կոչումով: Պարգևատրվել է Կարմիր դրոշի (օգոստոս 1944), Ալեքսանդր Նևսկու (1945 մարտ), Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:

ԱՎԵՏԻՔ ՍԱՄՍՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ: 89-րդ դիվիզիայի հետախույզ: Սխրանքների համար պարգևատրվել է Փառքի, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով: Արժանացել է գլխավոր հրամանատար Ի. Ստալինի շնորհակալագրին:



ԱՆԴՐԱՆԻԿ ԼԵՎՈՆԻ ՉՈԲԱՆՅԱՆ: Ծառայել է Բելոռուսական ճակատում, 2-րդ գվարդիական տանկային բանակում, որի հրամանատարն էր մարշալ Բոգդանովը, 19-րդ մեքենայացված տանկային դիվիզիայի 9-րդ գվարդիական գնդում, կրկնակի հերոս, փոխգնդապետ Բարտովսկու հրամանատարության ներքո: Չոբանյանը կռիվներով անցել է Բելոռուսիայից Լեհաստան, մասնակցել՝ Մագդեբուրգի գրավմանը և Վարշավայի ազատագրմանը: 1945 թ. ապրիլին մասնակցել է Բեռլինի մարտերին: Պարգևատրվել է Կարմիր աստղի, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:



ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ ԿՈՆՋՈՐՅԱՆ: Տանկիստ, գվարդիայի ավագ: Բանակ է մեկնել կամավոր՝ 18 տարին չլրացած: Արժանացել է Արիության և ազատագրված քաղաքների անուններով (Վարշավայի, Բեռլինի, Քյոնիգսբերգի) մեդալների: Պարգևատրվել է Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով:

ՍԻՆԱՍԱՐ ՄԻՔԱՅԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ: Ծառայել է IV Ուկրաինական ռազմաճակատի 900-րդ առանձին սակրավորների գումարտակի 10-րդ ինժեներական կորպուսում: Առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար պարգևատրվել է շքանշաններով (Արիության համար, Փառքի III աստիճանի) և բազմաթիվ մեդալներով:





ԿԱՌԼԵՆ ՍՏԵՓԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ: Կամավոր մեկնել է բանակ 16 տարեկան հասակում: Սովորել է Սվերդլովսկի տանկային դպրոցում: 1944 թ. հունիսի 24-ին մասնակցել է Ժլոբին քաղաքի մոտ՝ «Բագրատիոն» օպերացիային: Բոբրույսկի համար մղած մարտերում քաջաբար կռվել է և պարգևատրվել Արիության համար մեդալով: Հասել է մինչև Բեռլին, ապա՝ դաշնակիցներին հանդիպել Էլբայի ափին: Զորացրվել է 1948 թ.: Մահացել է 1994 թ.:

ԱԶԱՏ ԲԱԳՐԱՏԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ (ծնվ. 1925): 1943 թ. փետրվարին կամավոր մեկնել է բանակ: Մասնակցել է Բրյանսկ - Գոմելի պաշտպանական մարտերին, Ժլոբին քաղաքի գրավմանը: Ծանր վիրավորվել է Լեհաստանում և տեղափոխվել Ուլյանովսկ: 1945-50 թթ. շարունակել է ծառայել տանկային զորամասում: Պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:



ԱՐՏԱՎԱԶԴ ԵՐԵՄԻ ՄԻՐԱՔՅԱՆ: Պատերազմի նախօրեին Ա. Միրաքյանը ծառայում էր Ֆինլանդիայի սահմամերձ շրջանում՝ «Песчанная» տեղամասում: Պաշտպանական մարտերի ընթացքում վիրավորվել է, բայց Լենինգրադում բուժվելուց հետո վերադարձել է զորամաս: 1944 թ.՝ Լենինգրադի շրջափակման ճեղքումից հետո, պարգևատրվում է Փառքի III աստիճանի շքանշանով: Այնուհետև մասնակցում է Վիբորգ քաղաքի ազատագրմանը: Պարգևատրվել է Լենինգրադի պաշտպանության համար, Արիության համար, Հայրենական պատերազմի I և II աստիճանների մեդալներով, շքանշաններով: 1946 թ. զորացրվել է:



ԲԱԽՇՈ ՍԱՐԳՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ: Կռվել է մերձբալթյան ռազմաճակատում՝ Հ. Բաղրամյանի զորամիավորման կազմում: Մասնակցել է Քյոնիգսբերգի գրավմանը (1945 թ. ապրիլ), պարգևատրվել «Քյոնիգսբերգի գրավման համար» և այլ մեդալներով:

ՍԱՐԳԻՍ ԱՂԲԱԼԻ ԱՂԲԱԼՅԱՆ (1904-1980): Զորակոչվել է բանակ պատերազմի առաջին օրը: Քաջաբար կռվելու համար պարգևատրվել է Արիության համար մեդալով: Ստացել է գլխավոր հրամանատար Ի. Ստալինի շնորհակալագիրը:



ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՋԱՆԻ ԲԱԴԱԼՅԱՆ (1916-1996): Զորակոչվել է բանակ 1941 թ. հունիսի 23-ին: Հեծյալ դիվիզիայի կազմում եղել է Պարսկաստանում, Հյուսիսային Կովկասում, Կերչ-Կուբանում, Սլավինսկում: Վիրավորվել է աչքից, բուժվել Քութայիսի հիվանդանոցում, ապա սովորել է տանկային դպրոցում: Տանկային զորամասում մարտերով Վիտեբսկից հասել է Մերձբալթիկա: Զորացրվել է 1944 թ-ին, որպես II կարգի հաշմանդամ:



ԱՇՈՏ ԳԻԳՈԼԻ ՉԻՐՔԻՆՅԱՆ (1913-1988): 1940 թ. զորակոչվել է և ծառայել 24-րդ հեծյալ դիվիզիայի 157-րդ գնդում: Պատերազմի սկզբին դիվիզիան մտել է Պարսկաստան և մնացել այնտեղ մինչև 1941 թ. հոկտեմբերը: Մասնակցել է Մոսկվայի մարզի համար մղված մարտերին, ապա՝ վիրավորվել և բուժվելուց հետո ավարտել կրտսեր սպայական դասընթացները: Նշանակվել է Մոսկվայում I կամավորական գումարտակի I գնդի հրամանատար: 1943 թ. տեղափոխվել է 56-րդ սպայական գունդ՝ որպես բրիգադի շտաբի կապի սպա: Նույն թվականի սեպտեմբերին տեղափոխվել է Կուրսկ՝ 44-րդ գվարդիական դիվիզիա և մասնակցել մարտերին: Բելոռուսիայի Ժլոբին քաղաքի մոտ վիրավորվել է, բուժվել: Պարգևատրվել է Կարմիր աստղ և Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:



ՆՈՐԻԿ ԳԻԳՈԼԻ ՉԻՐՔԻՆՅԱՆ: Ծնվել է 1924-ին, միջնակարգն ավարտել է 1942-ին: Երկու ամիս հետո զորակոչվել է և ծառայությունն սկսել Նովոռոսիյսկի 318-րդ դիվիզիայում: Մասնակցել է Նովոռոսիյսկի, Թամանի ազատագրման համար մղված մարտերին: Վիրավորվել է երկու անգամ, զորացրվել է 1947-ին: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, Կարմիր աստղ, Փառքի 3-րդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Առաջին կարգի հաշմանդամ է:



ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ: Կռվել է Ստալինգրադի ճակատում: 1943 թ. վերջում ծանր վիրավորվել է և զորացրվել:

ՀՈՎԱԿԻՄ ՀԱԿՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (1894-1944): Մարտնչել է Ուկրաինական ռազմաճակատում: Պարգևատրվել է Արիության համար մեդալով: 1944 թ. զոհվել է ականի պայթյունից:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԻ ՂԱԼԵՉՅԱՆ (ծնվ. 1910): Զորակոչվել է բանակ 1935 թ.: Դեռ չզորացրված սկսվել է Հայրենական պատերազմը: Մարտերով հասել է մինչև Կուրսկ և ծանր վիրավորվել: 1943 թ. զորացրվել է՝ որպես II կարգի հաշմանդամ: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:



ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ (1918-1995): Զորակոչվել է բանակ 1939 թ. նոյեմբերին: Ծառայել է տանկային զորամասում: 1940 թ. հուլիսի 28-ին զորամասի հետ Մոլդավիայից մտել է Բեսարաբիա: Պատերազմը սկսվելուց հետո նրա զորամասը նահանջել է մինչև Ռոստով: Վիրավորվել է գլխից: Բուժվել է և վերադարձել զորամաս: Մասնակցել է մարտերին Հունգարիայում և Ավստրիայում: Հաղթանակը դիմավորել է Վիեննայում: 1946 թ. հունիսին զորացրվել է: Պարգևատրվել է Վարշավայի, Վիեննայի ազատագրման համար և Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:

ՍՈՒՐԵՆ ԱՍԱՏՈՒՐԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ: Զորակոչվել է բանակ պատերազմի առաջին օրերին: Մասնակցել է Պարսկաստանում օդանավակայանի շինարարությանը: Մեկ ամիս անց փոխադրվել է ճակատ: Վիրավորվել է և զորացրվել որպես հաշմանդամ: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:

ՎԼԱԴԻՄԻՐ ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ (1924-1993): 1942 թ. մարտին կամավոր մեկնել է ռազմաճակատ: Ծառայել է 28-րդ գվարդիական գնդի գնդացրային մարտկոցում: Կռվել է Կերչում, Կուբանում: Երբ 28-րդ գունդը ռազմաճակատից տեղափոխվել է Ախալցխա՝ Թուրքիայի սահմանը, այնտեղ Պետրոսյանը մնացել է մինչև պատերազմի ավար-

տը: 1947 թ. մայիսին զորացրվել է: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:



ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ՌԵՍՏԵՎԱՆՅԱՆ: Ծնվ. 1920: Պատերազմին մասնակցել է առաջին օրերից: Ծառայել է 199-րդ հրետանային գնդում: Չեռնիգովի մոտ նրա զորամասը ընկել է շրջապատման մեջ: Ռեստևանյանը կարողացել է տեղեկացնել հրամանատարությանը, որի շնորհիվ զորամասն անկորուստ դուրս է եկել շրջապատումից: Զորացրվել է ծանր վերքի պատճառով: Պարգևատրվել է Մարտական ծառայության համար, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:

ԳԵՎՈՐԳ ՄԻԿԻՉԻ ՆԱԶԱՐՅԱՆ: Ծնվ. 1925: Պատերազմին մասնակցել է 1943 թ. մայիսից: Կռվել է Բելոռուսական ճակատում՝ կրտսեր սերժանտի կոչումով: Գերազանց հրաձիգ էր: Մասնակցել է Բեռլինի, Պրահայի գրավմանը: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով: Երկու անգամ վիրավորվել է, զորացրվել՝ 1949 թ.:



ԱՇՈՏ ԳԵՐԱՍԻՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ: 1909-1963: Ավարտել է Երևանի կոնսերվատորիան (1931), Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը (1935): Մինչև 1938 թ. տնօրինում է Աղբյուրփիի միջնակարգ դպրոցը, ապա տեղափոխվում Շահումյան և պաշտոնավարում N2 8-ամյա դպրոցում (մինչև 1941 թ.): Պատերազմի առաջին օրը զորակոչվել է և կռվել մինչև ավարտը: Ծառայել է 364-րդ հրաձգային դիվիզիայի 808-րդ գնդում՝ որպես քաղաշխատող: Պարգևատրվել է Քաջության համար և այլ մեդալներով:



ԼԱԶՐ ԵԳՈՐԻ ԵՌԳԻՆՅԱՆ: Զորակոչվել է բանակ պատերազմի առաջին օրերին: Կռվել է Ուկրաինական ռազմաճակատում՝ որպես հետախույզ: Հասել է մինչև Բեռլին: Հայ զինվորների հետ Բեռլինում քոչարի է պարել: Պարգևատրվել է Փառքի III աստիճանի շքանշանով և մեդալներով: Զորացրվել է 1946 թ.:





ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԹԱՌԱՆՅԱՆ: 1914-1985: Զորակոչվել է բանակ 1939 թ.: Ծառայել է Մոլդավիայում: 1941 թ. դեկտեմբերին վիրավորվել է: Բուժվելուց հետո 49-րդ բրիգադի կազմում կռվել է Բելոռուսիայում: Բրիգադում առաջինն է պարգևատրվել Կարմիր աստղ շքանշանով: Գոմել-Մոգիլևի ուղղությամբ բրիգադը մյուս զորամասերի հետ շրջափակել է գերմանական զորամասերը և ոչնչացրել: Կռվել է Օդերի շրջանում: Նրա հրանոթային մարտկոցը ոչնչաց-րել է 3 տանկ, թշնամու բազմաթիվ զինվորներ: Մասնակցել է Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի և Կարմիր աստղ շքանշաններով, բազմաթիվ մեդալներով: Արժանացել է գլխավոր հրամանատար Ստալինի շնորհակալագրին:



*Ա.Հ. Թառանյանը Բեռլինում (ձախից 4-րդը՝ մորուքով)*

ՄԱՆՈՒԿ ՊՈՂՈՍԻ ՊԻԼԱՆՈՒԿՅԱՆ: 1895-1985: Ծառայել է խորհրդային առաջին պարտիզանական գնդում, որը կազմավորվել էր Ֆրանսիայում: Հրամանատարն էր մայոր Ղազարյանը: Մարտական ծառայությունների համար գունդը ֆրանսիական կառավարության կողմից պարգևատրվել է ֆրանսիական դրոշով և Մարտական խաչ շքանշանով: 1945 թ. օգոստոսի 28-ին խորհրդային զորքերի հրամանատարի հրամանով գունդը վերակազմավորվում է և միացվում Գերմանիայում տեղակայված գվարդիական հարվածային զորամասին: Ունի Удостоверение личности N0849, 1-ú Советский партизанский полк во Франции:



ԱՐԱՄԱՅԻՍ ՍՏԵՓԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ: Ծնվ. 1910: Մասնակցել է պատերազմին առաջին օրերից: 1944 թ. օգոստոսի 4-ից Չեխոսլո-վակիայում ընդգրկվել է Կ. Գոտվալդի անվան հատուկ պարտիզանական բրիգադ: 1945 թ. փետրվարին Ա. Պետրոսյանը ծանր վիրավորվել է և զորացրվել: Պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:

ՍԵՅՐԱՆ ԱՇՈՏԻ ՌԵՍՏԵՎԱՆՅԱՆ: Ծնվ. 1922: Ծառայել է Բ. Խմելնիցկու անվան 74-րդ հրաձգային դիվիզիայում: Մասնակցել է Օրյոլ-Կուրսկ աղեղի մարտերին և Կիևի, Բելայա Ցերկով

քաղաքների ազատագրմանը: 1983 թ. 9.VII.-ին «Строитель коммунизма» թերթը (N82) գրել է «Самоот-верженно действовал командир взвода Сейран Рестеванян» հոդվածը: Նրա մասին գրված է նաև Մ. Ա. Խատիսկացիի «Один день воины – 1941-45 гг.» գրքում (IV գիրք, էջ 138-139, Թբիլիսի, 1985):



ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԹԱՌԱՆՅԱՆ: Պատերազմի սկզբից զորակոչվել է բանակ: Ծառայել է I Ուկրաինական ռազմաճակատում, 982-րդ կապի առանձին գումարտակում, 82-րդ գվարդիական կորպուսում: Աչքի է ընկել Բելայա Ցերկովի մարտերում: Վիրավորվել է գլխից: Բուժվելուց հետո մասնակցել է Կովկասից մինչև Բեռլին մղված մարտերին: Մասնակցել է Էլբայի մոտ դաշնակից զորքերի հանդիպմանը: Պարգևատրվել է Կարմիր աստղ, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով, տարբեր քաղաքների, այդ թվում Բեռլինի գրավման համար մեդալներով, ունի շնորհակալագիր Գերագույն հրամանատար Ի. Ստալինից:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ: 1909-1984: Մեկնել է ռազմաճակատ 1941 թ. հունիսի 25-ին: Ծառայել է 46-րդ առանձին ինժեներական Аэродор գնդի 2-րդ ջոկատում՝ որպես վարորդ-զինվոր: Մասնակցել է մինչև պատերազմի ավարտը: Զորացրվել է որպես հաշմանդամ: Ունի պարգևներ, Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշան և մեդալներ, շնորհակալագրեր:



ԱՐՏԱՇ ԼԵՎՈՆԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի հրաձգային սպայական ուսումնարանը և ստացել սպայի կոչում: Ուղարկվել է 394-րդ դիվիզիայի 810-րդ գունդը՝ Մարուխի լեռնանցքը՝ բարձունքը գրավելու, որտեղ էլ վիրավորվել է: Ապաքինվելուց հետո նորից մեկնել է ռազմաճակատ: Հասել է Բեռլին՝ III Ուկրաինական ռազմաճակատի հրետանային հակատանկային գնդի կազմում: Պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով և մեդալներով:

ԱՇՈՏ ՍՄԲԱՏԻ ԵՍԱՅԱՆ: Կռվել է I Ուկրաինական ռազմաճակատի զորամիավորումներում և մասնակցել Կերչի գրավմանը:

ՍԱՐԳԻՍ ՄԱՑԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ: I Ուկրաինական ճակատի I հեծյալ կորպուսում մասնակցել է պատերազմին՝ որպես հետախույզ:





ՅԱՍԱԲԵԿ ԱՂԱՋԱՆԻ ՆԱՐԻՆՅԱՆ: Զոհվել է 1944 թ. ապրիլի 22-ին՝ Դնեպրոպետրովսկ քաղաքի ազատագրման ժամանակ: Թաղված է Մեծ Կոստրոմկա գյուղի եղբայրական գերեզմանոցում (Դնեպրոպետրովսկի մարզ, Ապոստովսկի շրջան):



ՍԱՄՎԵԼ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ: Ծնվել է 1923 թ.: Եղել է կոմերիտական կազմակերպության քարտուղար: Դպրոցն ավարտելով՝ զորակոչվել է 1942 թ. փետրվարին և ընդգրկվել Թբիլիսիի սպայական ուսումնարան: Դասընթացները չավարտված՝ մեկ-նում է ռազմաճակատ (Հյուսիսային Կովկաս): Մասնակցել է Նովոռոսիյսկի, Կրասնոդարի շրջանների համար մղված մարտական թեժ գործողություններին՝ 1942 թ. հուլիսից մինչև 1943 թ. հոկտեմբերը: Զոհվել է Ղրիմսկայա քաղաքի մոտ՝ 1943 թ. փետրվարի 13-ին: Թաղված է նույն շրջանի Նովոուկրաինսկ խուտորի եղբայրական գերեզմանոցում, ուր ի թիվս 1500 նահատակների ամփոփված են նաև 82 հայորդիների աճյուններ:



*1990 թ. մայիսի 9-ին Ս. Մարգարյանի հարազատները եղբայրական գերեզմանի մոտ՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ*



ԻՇԽԱՆ ԵԳՈՐԻ ՉԻԹՉՅԱՆ: Ծնվել է 1914 թ.: Միջնակարգն ավարտել է տեղում: Ավարտել է Թբիլիսիի մանկավարժական տեխնիկումը: 1938 թ. զորակոչվել է բանակ: Սկսվում է Հայրենականը, և Չիթչյանը մասնակցում է մարտական գործողություններին: 1943 թ. գործուղվել է Լենինգրադի ռազմական ուսումնարան: Ավարտելուց հետո մասնակցել է Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերին: Օդերով զորամասի անցկացման նպատակով կամուրջ կառուցելու հանձնարարությունը բարեխղճորեն կատարելու համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Զորացրվել է 1947 թ., զբաղվել է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեությամբ:

ՍՄԲԱՏ ԱՐՏԱՇԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ: Պարտիզանական ջոկատի հրամանատար: Զոհվել է Բրեստ քաղաքի պաշտպանության ժամանակ:

ԳԵՐԱՍԻՄ ՇԱՄԻՐԻ ԲԱԼՅԱՆ: Զորակոչվել է բանակ պատերազմի սկզբից: Մարտերով հասել է մինչև Բեռլին: Կռվել է Հովհաննես Բաղրամյանի զորամիավորումներում: Մասնակցել է Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:



ՄԻՆԱՍԱՐ ՈՍԿԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ: Նախքան պատերազմի սկսվելը Ուկրաինայում Կիևյան ռազմական օկրուգի քաղեկի օգնական էր: Պատերազմի առաջին օրերին եղել է շրջափակման մեջ: Դուրս գալուն պես անհիմն մեղադրվել է դավաճանության մեջ, բայց արդարացվել է և 1944 թ. օգոստոսից ուղարկվել ռազմաճակատ՝ որպես գնդի հրամանատարի օգնական: Արժանացել է 5 շքանշանների, մեդալների:



*Գ.Ա. Աղբալյանը Բեռլինում (աջից՝ 3-րդը)*

ԱՎԵՏԻՔ ԵՐՎԱՆԴԻ ՄԱՐՈՒԹՅԱՆ: Զոհվել է Քիշնևի ազատագրման ժամանակ՝ 1944 թ. հունիսի 29-ին: Քիշնևի կենտրոնում՝ Հաղթանակի այգում կանգնեցված արձանների շարքում նրա հուշարձանն առաջինն է:

ԳԵՎՈՐԳ ԱՂԲԱԼԻ ԱՂԲԱԼՅԱՆ: Մարտերով հասել է Բեռլին: Արժանացել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշանների և մեդալների:





ԱՐՏԱՇ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻՄՈՆՅԱՆ: Ծնվ. 1914: Զորակոչվել է 1940 թ.: Եղել է սակրավորների գնդի բժիշկը: 1943 թ-ին ծանր վիրավորվել է և բուժվելուց հետո նշանակվել 195-րդ զինվորա-կան սանիտարական գնացքի բժիշկ-օրդինատոր: Զորացրվել է 1946 թ.: Մահացել է 2001 թ. հունվարին:

ԲԵԳԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ: Մասնակցել է Օրյոլ-Կուրսկ աղեղի մարտերին: Հասել է մինչև Բեռլին: Արժանացել է Հայրենական պատերազմի I և II աստիճան շքանշանների, մեդալների:



ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍԻ ԻԳԻԹՅԱՆ: Մասնակցել է Ֆիննական պատերազմին: Նրա ավարտից հետո՝ Հայրենական մեծ պատերազմին: Մարտական գործողություններին մասնակցել է Ելցի, Սումիի, Խարկովի, Կիևի, Կարպատների ազատագրման համար մղված մարտերին: Թշնամուն մեր սահմաններից դուրս շպրտելուց հետո I Ուկրաինական բանակի կազմում մասնակցել է Ավստրիայի ազատագրության մարտերին: Հաղթանակի լուրը լսում է Վիեննայում: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով:



ԳԵՎՈՐԳ ՍՄԲԱՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ: Ծնվել է 1911 թ.: Միջնակարգն ավարտելով՝ ընդունվել է Լենինգրադի բժշկական ինստիտուտ՝ աշակերտելով աշխարհահռչակ Ի.Պ. Պավլովին: 1936-ին ավարտելով բուհը՝ աշխատել է Կերչում՝ որպես վիրաբույժ: Սկսվում է Մեծ հայրենականը: Քաղաքային իշխանության որոշմամբ Միրզոյանն ընդգրկվում է Կերչի պաշտպանության կոմիտեի կազմ: 1941 թ. նոյեմբերին քաղաքից է վակուացվող ազգաբնակչության հետ Թաման է տեղափոխվում նաև Գ. Միրզոյանը: Պատերազմից հետո գործուղվում է Սվերդլովսկի մարզ՝ որպես 11 ճամբարների (գերիների) բուժծառայության պետ: 1948 թ. վերադառնում է Շահումյան և մինչև կյանքի վերջը (1988 թ.) իր մարդասիրական ծառայությունն է մատուցում՝ կյանք պարգևելով հազարավոր մարդկանց:

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Ռազմաճակատ մեկնեցին շահումյանցի բժիշկներ՝ Արտաշ Հովհաննեսի Սիմոնյանը, Գևորգ Սմբատի Միրզոյանը, Կամսար Լևոնի Թեյմուրազյանը, Անժելա Արամի Երիբեկյանը, Աննա Վասիլի Մարությանը, Սարգիս Պետրոսի Պետրոսյանը, Կարո Բչեմի Բչեմյանը: Նրանք փրկեցին հազարավոր մարտիկների կյանք, պաշտպանեցին հայրենիքի պատիվը և ազատությունը: (Շահումյանցի բժիշկների կենսագրությանը կարելի է ծանոթանալ «Հայաստանի բժիշկները Մեծ հայրենականում» գրքում, հեղինակներ՝ Ա.Վ.Գրիգորյան, Բ.Գ.Մելքումյան, Երևան, 1987, էջ 9-10, 78, 134, 242, 293: )

## ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Ռազմաճակատ մեկնած շահումյանցի տղամարդկանց փոխարինեցին կանայք, տարեցները և անչափահասները: Թիկունքում ամեն ինչ վերակառուցվում էր պատերազմի պահանջներին համապատասխան: Շահումյանցիներն իրենց խնայողությունները նվիրեցին պաշտպանության ֆոնդին, նվեր-ծանրոցներ էին ուղարկում ռազմիկներին՝ տաք հագուստեղեն, սննդամթերք: Այդ նպատակի համար Շահումյանում կազմակերպվեց հանձնախումբ հետևյալ կազմով՝

1. Նադիրյան Մարգո
2. Նալբանդյան Գրիգոր
3. Հարությունյան Հասմիկ
4. Բալասանյան Արաքսի
5. Հարությունյան Ցոլակ
6. Չատինյան Լևոն
7. Դալլաքյան Արաքսի


Պատերազմում 4 որդի կորցրած ծնողներ Տիգրան և Սոփո Կարախանյաններ:

Հանձնախումբը պաշտպանության ֆոնդին հանձնել է խոշոր գումար և թանկարժեք իրեր՝ ոսկե մատանիներ, շղթաներ և այլն: Մարուս Բուդաղյանը հանձնեց 10 արծաթե գդալներ և ոսկե մատանին, Ռոզա Մանուչարյանը՝ ոսկե մատանի և այլն:

Անդրկովկասի զինվորական օկրուգի պահանջով Շահումյանի ավանային խորհրդի իրավասության ներքո գտնվող ամբողջ տրանսպորտը տրամադրվեց լեռնային շրջաններում գործող բանակի կարիքների համար: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ Մարուխի լեռներ հասցվեց զինամթերք, սնունդ, հագուստ:

1942-1944 թթ. ավանում և շրջանում կազմակերպչական մեծ աշխատանք կատարեց ավանային խորհրդի նախագահ Նվարդ Հովակիմյանը:



## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՇԱՀՈՒՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ


Հուշարձանի բացումը. Լուսիկ Ղարդաշյանը կտրում է ժապավենը :

Երևանաբնակ շահումյանցիները 1966 թ. դիմեցին հայրենակիցներին՝ Հայրենական պատերազմում զոհված շահումյանցիների հիշատակին հուշարձան կառուցելու կոչով, որին ուրախությամբ արձագանքեցին շահումյանցիներն ու շրջանի հայ բնակչությունը: Ավանային խորհրդի գործկոմի նիստում կազմվեց 25 հոգոց բաղկացած հանձնախումբ՝ պատմաբան Սուրեն Շլեպչյանի նախագահությամբ: Ողջունելի նախաձեռնությանը լրջորեն աջակցեց ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գեղամ Սողոմոնի Պետրոսյանը, որի միջնորդությամբ հուշարձանի ճարտարապետական լուծումները հոգալու պարտականությունը ստանձնեց մեծանուն ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը՝ ինժեներ կոնստրուկտորներ Ավետիք Թեքնեջյանի և ժիրայր Մանուկյանի նվիրական օգնությամբ և համատեղ ջանքերով: Հուշարձանի շինարարությունը մեծ հոգատարությամբ գլխավորեց մեր հայրենակից Կորյուն Մեհրաբյանը: Հուշարձանը կառուցվեց Երևանից բերված կարմիր տուֆով և Ուկրաինայից բերված մարմարով:

Հուշարձանի բարձրությունը 21 մետր է: Նրա երեք կողմերում երեք լեզուներով (հայերեն, վրացերեն, ռուսերեն) գրված է «Փա՜ռք, հավերժ փառք Հայրենական մեծ պատերազմում զոհված շահումյանցիներին»: Չորրորդ կողմում գրված է. «Գիտակցված մահը անմահություն է: Դուք անմահ եք, հավերժ կապրեք»: Կենտրոնում վեր է խոյա-նում սպիտակ մարմարե խորանարդը, որի նիստերին ոսկեգույն տառերով փորագրված են զոհվածների ազգանունները: Չորս կողմից աղավնիների բերաններից ջուր է ցայտում: Հուշարձանի տարածքը կանաչապատված է եղևնիներով, դափնիներով, վարդերով: Ճանապարհի եզրից մինչև հուշարձանը 47 քարե լայն աստիճաններ են: Նախատեսվում էր այդ աստիճանների տակ կառուցել թանգարան, բայց միջոցների սղությունը հնարավորություն չտվեց իրագործելու հղացումը:



Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը:

Հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1970 թ. մայիսի 9-ին: Ներկա էին բազմաթիվ շահումյանցիներ: Ներկա էր նաև Մառնեուլի շրջանի ղեկավարությունը՝ շրջանի քարտուղար Դուրմիշխան Դմիտրիևիչ Մաղալաշվիլու գլխավորությամբ, թերթերի թղթակիցներ, կայազորի զինվորներ, որոնք մարտական համազարկերով ողջունեցին հուշարձանի բացումը:

Ժապավենը կտրելու պատիվը տրվել էր Սոփո Կարախանյանին, որի չորս որդիները չէին վերադարձել ռազմաճակատից, բայց նա հուզմունքից չկարողացավ մոտենալ, և ժապավենը կտրեց Լուսիկ Ղարդաշյանը, որը պատերազմում կորցրել էր որդուն: Արարողությունը բացեց Սուրեն Շլեպչյանը: Ամեն տարի Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, շահումյանցիները մոմեր են վառում, ծաղիկներ և պսակներ են դնում հուշարձանին:



Քվեմո-Քարթլի նահանգի և շրջանի ղեկավարությունը հարգանքի տուրք է մատուցում զոհվածների հիշատակին 1999թ մայիսի 9-ին:



# ՏԱԳՆԱՊԱԼԻ ԱՅՆ ԳԻՇԵՐ

*Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով...*

***Ե. Չարենց***

*Մեկից մի հաց, մեկից մի սոխ գողանում,*
*Գնում էինք Արփաչայն՝ լողանում:*

***Հ. Շիրազ***

Իրոք, մանկության հուշերի տեսաժապավենը բավական անխաթար է մնում լույսի ու ժամանակների ազդեցություններից՝ դառնալով մեր ապրած կյանքի ելման շրջանի ճշմարիտ համայնապատկերը:

1949 թ. հունիսի 14-ն էր: Տասը տարեկան երեխա էի՝ կիսաքաղց քնած: Խոր գիշեր էր: Լսեցի լացախառն հառաչանքներ. ժորա ջան, վե՛ր կաց, Անուշ տոտայենց աքսորում են, վե՛ր կաց... Անուշ տոտայենք մեր դրկից բարեկամներն էին: Ես արթնացա ոչ այնքան մորս լացուկոծից, որքան նրա քաշքշոցից. ականջիս տակ հրացան էլ կրակեին՝ երևի չլսեի: Արթնացա ու աչքերս տրորելով՝ դուրս եկա տնից (մայրս արդեն տարաբախտների մոտ էր): Հաշված րոպեների ընթացքում ես «հասկացա», որ մեր բարեկամները այնքան էլ ազնիվ մարդիկ չեն... Ճանապարհի եզրին կանգնած էր փակ բեռնատարը, կողքին՝ երկու զինվորներ՝ ինքնաձիգներով, անխոս, զգաստ: Ես 7-8 մետրից հայացքով «նկարում» էի ողբեգրական տեսարանը: Մեկ ժամ ժամանակ էին տվել՝ ունեցած-չունեցածով տեղավորվել մեքենայում: Մարդիկ հեկեկալով ու փղձկոցներով տնից մեքենա էին տեղափոխում անկողին, զանազան կապոցներ, որոնց մեջ ստույգ նկատեցի առավոտյան թխելու համար տազիկով խմորը... Երբ Սարիբեկ, Անուշ և Լևոն Հակոբյաններին ներս ընդունեցին ու դուռը փակեցին, ես զարմացա, որ նրանց դուստրը՝ Ամալյան չկա: Նա նշանված էր Խորհրդային Միության հերոս Աշխարիբեկ Ղազարյանի հետ, և զգուշավորված էին, այդ պատճառով էլ նրան թույլ չտվեցին ծնողների ու եղբոր հետ մեքենա բարձրանալ: Վերջում էլ տան դուռը զմռսեցին ու «ժողովրդի թշնամիներին» տարան:

Մի քանի ժամ հետո լույսը բացվեց, և իմացանք, որ «ընտրյալները» շուրջ 10 ընտանիքներ են եղել: Թաղի մարդիկ փակ բերաններով, տագնապած ու փոխադարձ անվստահելի հայացքներով իրենց բանուգործին գնացին... Ամեն ինչ խաղաղ էր, կարծես ոչինչ էլ չէր եղել: Ի՞նչ իմանայի, թե «ժողովուրդների հոր» ու ակնոցավոր Լավրենտի Պավլովիչի թարախակալ ուղեղներում ինչ ոճիրներ են խմորվում: Տարիներ հետո հասկացա, որ դա զանգվածային այն համաճարակի փշրանքներից էր, որ սփռվել էր համայն հայության վրա՝ մեծն ստալինի չարանենգ կամքով ու «ստեղծագործ հաճարով»:

***Գ. Մարգարյան***

# 1949 ԹՎԱԿԱՆԻ ԱՔՍՈՐԸ

Քաղաքական մեղադրանքներով բռնությունները շարունակվում էին նաև Հայրենական պատերազմի տարիներին և դրանից հետո:

1949 թ. ամռանը Ստալինի հրամանով Հայաստանի բնակչության մի խոշոր զանգված, առանց դատ ու դատարանի՝ աքսորվեց Ալթայի երկրամաս:

Արհավիրքից զերծ չմնացին նաև շահումյանցիները: Պատերազմից հաղթանակով տուն վերադարձած շահումյանցիները դեռ չէին ամրապնդել իրենց տնտեսությունները, երբ նրանց ընտանիքներով լցրեցին բեռնատար վագոնները ու քշեցին Սիբիր: Նրանցից շատերը ճանապարհին զոհվեցին, ոմանք էլ իրենց մահկանացուն կնքեցին տեղ հասնելուն պես: Քչերը հարմարվեցին աքսորավայրի պայմաններին:

Աքսորված մարդկանց ցուցակներում հիմնականում ընդգրկված էին 1930-1937 թթ. անմեղ բռնադատվածների հարազատներն ու բարեկամները, պատերազմի տարիներին գերի ընկածները, 1946-1948 թթ. հայրենադարձների մի մասը: 1949 թ. հունիսի 14-ին Շահումյանից իրենց ընտանիքներով արտաքսվեցին՝ Երեմ Հովհաննեսի Մանուչարյանը (երկրորդ անգամ), Սարգիս Չոբանյանը (միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ), Տիգրան Միսկարյանը (խոժոռնեցի, բնակվում էր Շահումյանում), Արմենակ Մելիքսեթի Միրաքյանը (հեղափոխական Շանթի եղբայրը), Մեխակ Հակոբի Զարգարյանը, Թոմի Գևորգյանը (մահացավ աքսորում), Բախշո և Արտաշ Հարությունի Ոսկանյան եղբայրները, Զարուհի Ոսկանյանը, Սոնյա Մելիք-Ադամյանը, Միրզա Քամալյանը, Վաչագան Ղարագյոզյանը, Սուրեն Ղալեչյանը, Կարապետ Գասպարյանը, Վարդան Քարհանյանը, Զանազան Մեհրաբյանը, Յուլյա Վերմիշյանը, Ավետիք Չոբանյանը, Աշոտ Ղարդաշյանը և ուրիշներ:

Իր ձեռագիր հուշերում Արմենակ Միրաքյանը պատմում է. «1949 թ. հունիսի 14-ն էր, երբ Շահումյանում սկսվեց իրարանցումը: Ավան մտան բեռնատար մեքենաները և կանգնեցին աքսորի դատապարտված ընտանիքների դռների առաջ: Լաց ու կոծի հետ մեկ ժամում 20 ընտանիքներ բռնեցին աքսորի ուղին: Բեռնատար վագոններով, մահացածներին ճանապարհին հապճեպ թաղելով, հասանք Սիբիր: Ոչ տուն կար, ոչ հարմարություն: Սկսեցինք հողի մեջ տնակներ փորել... (Ս. Ասլանյանի անձնական արխիվ, հուշեր):[172]

Միայն 1953 թ. Ստալինի մահից և Բերիայի հանցագործ խմբի ծերբակալումից հետո վերանայվում են 1949 թ. աքսորվածների գործերը և բոլորն անխտիր արդարացվում: Ապահովվում է կենդանի մնացածների վերադարձը տուն:

Ստալինի մահվամբ ավարտվեց բռնություններով ու սարսափներով լի հերթական շրջանը:

172. Նույնին առնչվող մանրամասները տես 1949 թ. հունիսի 14-ին աքսորված շահումյանցի Ռուբեն Քամալյանի հուշերում:



# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



Շուլավերցիները ցանքսի պահին: 1933 թ.

Շուլավերցիների զբաղմունքն է հողագործությունը, անասնապահությունը, այգեգործությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը և այլն:

Գյուղացիները ապրում և աշխատում էին ծանր պայմաններում, նեղում էր սակավահողությունը:

Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո գյուղացուն տրվում է հողակտոր, որի մշակումը կապված էր շատ դժվարությունների հետ: Շահումյանում իրականացված կուլակաթափման օրերին տուժեցին Մեխակ Ղուկասյանը, Արշակ Հակոբյանը, Մեխակ Տեր-Պողոսյանը, Բեգո Չիրքինյանը, Պապո Սաղաթելյանը և այլոք: Վերջիններիս աքսորեցին, բայց որոշ ժամանակ անց նրանք վերադարձան և ստացան իրենց ունեցվածքի մի մասը:



Սովխոզի շենքը (կառուցել է Ս. Պառավյանը XIX դ. վերջին):

Համատարած կոլեկտիվացման շրջանում՝ 1930 թ. մարտի 4-ին, ժողովրդին կոլտնտեսություն ընդգրկելու հարցով ժողով է հրավիրվում (նախագահող՝ Հարություն Թառանյան, քարտուղար՝ Մովսես Հարությունյան): Աղմուկաղաղակի ու դժգոհությունների մթնոլորտում կազմվում է ընդունվածների ցուցակը: Ժողովուրդը, հիմնականում դժգոհ լինելով կոլեկտիվացման բռնի մեթոդներից և սոցիալական անարդարությունից, հաջորդ օրը՝ մարտի 5-ի առավոտյան, հավաքվում է նախորդ օրվա ժողովի վայրում (գրասենյակի առաջ) և ընդվզում կոլեկտիվացման դեմ: Սկսվում է իրարանցում, ծեծուջարդ, որի ընթացքում ընդհուպ մահանում են երկու հոգի: Կոլեկտիվացման մերժելի էությունը ժողովրդին բացատրողները և ընդդիմության կազմակերպիչներն էին՝ Աղաբեկ Միրաքյանը, Սինո

Չիրքինյանը, Արամ Մեհրաբյանը և Արտուշ Գրիգորյանը: Հաջորդ օրը Շահումյան է գալիս Վրաստանի ն/գ-ի նախարար Խմալաձեն ոստիկանների ու զինվորների ջոկատի ուղեկցությամբ: Քաղաքական բնույթի «հակաիրավական» ընդվզումը շատ թանկ կնստեր կազմակերպիչների վրա, եթե նրանց օգնության ձեռք չմեկներ ԽՍՀՄ ն/գ-ի նախարարության աշխատակից լուսահոգի Աշոտ Աբրահամյանը: (Վիկտորյա Հարությունյանի հուշերից):



Շահումյանի կոլտնտեսականները (1935 թ.)

1930-31թթ. Շահումյանում կազմակերպվում է հողային ընկերությունը, ապա՝ «Լենինավանդ» կոլտնտեսությունը, որը 1943 թ. բաժանվեց երկու մասի՝ «Հաղթանակ» (Սարգիս Սարգսյանի գլխավորությամբ) և «Առաջ» (Սամսոն Պառավյանի գլխավորությամբ):

Համաձայն 1936 թ. հողի մասին հրապարակված կառավարական որոշման՝ կոլտնտեսության անդամներին տրվում էր 7000 քմ հող, իսկ մյուսներին՝ 1500 քմ : Այդ պատճառով գրեթե բոլորը մտնում են կոլտնտեսություն:

Հայրենական պատերազմից հետո անհրաժեշտ էր արագորեն վերականգնել գյուղատնտեսությունը: 1949 թ. «Առաջ» ու «Հաղթանակ» կոլտնտեսությունները միացան: Հիմնվեց Վ. Մալենկովի անվան կոլտնտեսություն՝ Անդրանիկ Չոբանյանի նախագահությամբ:

Տնտեսությունում զարգացած էր ծխախոտագործությունը: Այդ մշակությանը հատկացված էր 925 հա հողատարածք: Առաջավոր ծխախոտագործներ էին՝ Աշոտ Մովսիսյանը, Ցոլակ Հարությունյանը, Նվարդ Հովակիմյանը, Ռուբեն Բուդաղյանը և այլոք: 1956 թ. Մոսկվայում նրանք մասնակցեցին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին և պարգևատրվեցին մեդալներով:



1965 թ. Սովխոզի մասնագետները Հայաստանում: (Սարդարապատ)

1961 թ. Շահումյանում կազմակերպվում է խորհտնտեսություն՝ Շահումյանի անասնապահական-ծխախոտագործական պետական տնտեսություն, որն ուներ 400 բանվոր, մեքե-





Տնտեսուհիները խաղողի այգիներում (օգնություն):

նայական բազա, ջրմուղ կայան՝ Խրամ գետի վրա: Տնտեսությունը շահութաբեր էր: 1967 թ. շահույթը կազմել էր 172,6 հազար ռուբլի: Բացի ծխախոտից մշակում էին խաղող և ցորեն, տնկվում էին պտղատու այգիներ: Տնտեսությունը ուներ նաև անասնապահական, խոզաբուծական ֆերմաներ:

1967 թ. Շահումյանի խաղողի այգիները կազմում էին 549 հա: Մրգատու այգիները 1970 թ.՝ 212 հա: Այդ տարինե-րին Շահումյանի տնտեսության մեջ էին մտնում Շահումյան ավանը, Սիոն, Ծերաք, Աղուլի և Ղուդրո գյուղերը: Տնտեսության նախագահներն էին Աշոտ Մովսիսյանը (1953 թ-ից), ժորա Հակոբյանը (1961 թ-ից): Սովխոզում աշխատում էին բարձրագույն մասնագիտական կրթությամբ Սարգիս Գրիգորյանը, Մարտին Սիմոնյանը, Ծովիկ Նարինյանը, Թեմուրի Չկոնիան, Սարգիս Ուրումյանը, Նորիկ Ապրեսյանը, Գեորգի Գեորգաձեն, Հենրիկ Հովհաննիսյանը, Կառլեն Կիրակոսյանը, Լևոն Նադիրյանը, ժորա Հովակիմյանը, Հայկ Մանուչարյանը և շատ ուրիշներ:

Այդ տարիներին տնտեսությունը ուներ մեծ թվով մեխանիզատորներ՝ տրակտորիստներ, կոմբայնավարներ: Աշխատանքի լավ կազմակերպման շնորհիվ աճում էին տնտեսության եկամուտները: Նրա մասին հաճախ նյութեր էին տպագրվում «Սովետական Վրաստան » թերթում:

1982 թ. Սիոն և Ծերաք գյուղերը դարձան Ռուսթավի մետալուրգիական գործարանի օժանդակ տնտեսություններ:

ԽՍՀՄ փլուզումից հետո տնտեսության դրությունը վատացավ: Գյուղատնտեսական տեխնիկան անցավ անհատներին: Դժվարացավ ջրի մատակարարումը: 1996թ. տնտեսությունը դարձավ ֆերմերային, բայց դեռևս (2000 թ.) շոշափելի բեկում տեղի չի ունեցել:

Տնտեսությունը քայքայվել է անհեռատես ղեկավարների և անվճռական բնակչության մեղքով:

## ՋՐԻ ԽՆԴԻՐԸ

Ջրի խնդիրը շուլավերցի-շահումյանցիներին զբաղեցնում է ավելի քան հարյուրամյակ: Դեռևս 1874թ. ջրագիծ անցկացնելու նպատակով նրանք դիմել են թիֆլիսաբնակ Ռոմանոս Պողոսի Նադիրյանցին` աջակցություն ստանալու ակնկալիքով: Բանագնացներն էին Մահտեսի Գրիգոր Մաճկալյանն ու Սողոմոն Միրաքյանը: Ռ. Նադիրյանցի խնդրանքով Թիֆլիսի նահանգապետը Շուլավեր է ուղարկում ինժեներ Օսիպովին, որը կատարում է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: Սակայն, 1877թ. ռուս-թուրքական պատերազմը խանգարում է ձեռնարկի իրականացմանը: Ժամանակներ անց վերսկսվում են նախագծային աշխատանքները, բայց նորից ընդհատվում:

Աղբյուրների պակասության պատճառով շուլավերցիները օգտագործում էին գյուղի միջով հոսող և ամառային ամիսներին հաճախ իսպառ ցամաքող Շուլավեր գետակի ջուրը: 1908 թ. տանուտեր Մեխակ Միրաքյանի նախաձեռնությամբ սկսվում են Բնիծորի աղբյուրների ջրերը դեպի Շուլավեր հասցնելու աշխատանքները, որոնք ավարտվում են 1911 թ.: Գյուղ հասցված ջրի այդ քանակությունը մի առ ժամանակ բավարարում է ժողովրդին, սակայն բնակչության աճի հետևանքով արդեն խորհրդային տարիներին ջրի սակավության խնդիրը կրկին սրվում է:



Ձախից աջ` 2-րդը վրացի տեսագրող թղթակիցը, 3-րդը` Ալո Մաճկալյանը, 4-րդը` Էդիկ Գասպարյանը, 5-րդը` Միշիկ Մեջանյանը, 6-րդը` Գրիգոր Ադամյանը, 7-րդը` Սեյրան Չոբանյանը, 8-րդը` Ռուբիկ Մխիթարյանը, 9-րդը (կենտրոնի միակ կինը)` Սանդուխտ Ասլանյանը:



Երեք շրջանների` Բոլնիսի, Մառնեուլի և Թեթրի Ծղարոյի միավորումից հետո շրջկոմի քարտուղար Նիկոլայ Սանիկիձեի օգնությամբ 1963 թ. ծրագրվում է կառուցել ջրհան կայան: 1965 թ. ավարտվում է Ջորգաքարի ջրամբարի կառուցումը, որի շնորհիվ ջուրը հասնում է նաև Շահումյան: Ջրհան կայանի կառուցման հարցում մեծ ջանքեր է ներդնում նաև ավանային խորհրդի նախագահ Արտաշ Աբգարի Մաթևոսյանը, որն այդ հարցով հանդիպել էր Վրաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Վ. Պ. Մժավանաձեին:

Հերթական անգամ ջրի պակասը իրեն զգացնել տվեց 1980-ական թթ. վերջերին: Վիճակը թեթևացնելու նպատակով կոոպերացիայի անդամ Ա. Մաճկալյանը Շուլավեր գետակի ափին ջրհոր է փորում և բնակիչների մի մասին բավարարում ջրով:

90-ականներին ջրհան կայանի կառուցման աշխատանքները էլեկտրականության բացակայության պատճառով դադարում են: Միայն սպառկոոպի նախագահ Աղաբեկ Ղարդաշյանի նախաձեռնությամբ Բնիծորի ջուրը նորից բերվում է Շահումյան, իսկ Ա. Մաճկալյանի ղեկավարությամբ ցայտաղբյուր է կանգնեցվում Սբ. Աստվածածին եկեղեցու բակում (նրան օգնեցին Գևորգ Գրիգորյանը, Ռազմիկ Մելքիկյանը և Համլետ Հարությունյանը): Եկեղեցու թաղամասից Ֆելիքս Սելապանյանի ջանքերով ջուրը հասցվում է մինչև Ծատուրյանների թաղը` թաղի բնակչության օգնությամբ:

Խրամ գետի ջրհան կայանի խափանման հետևանքով Շուլավերում ջրի խնդիրը նորից է սրվում: Այս անգամ ավանի ղեկավարությունը որոշում է բնակավայր հասցնել Ջանխոշ կոչվող անտառամասի ինքնահոս ջրերը:

1992 թ. Շահումյան ավանի բնակչությունն իր միջոցներով սկսեց կառուցել 13 կմ երկարությամբ ջրատարը: Աշխատանքները ղեկավարում էր ինժեներ Շահեն Շահինյանը: Դրամական միջոցներ հատկացրեցին այլ քաղաքներում ապրող շահումյանցիները: 1994 թ. գարնանը նախաձեռնող խմբի (Սերժիկ Սիրունյան, Ա. Մաճկալյան, Աղաբեկ Ղարդաշյան, Ալբերտ Կարապետյան, Գրիգոր Ադամյան, Սեյրան Ավետիսյան, Սամվել Թանյան, Արարատ Ծատուրյան, Հայկազ Աղբալյան, Բենիկ Ղարդաշյան, Գաբո Թանյան) գլխավորությամբ սկսվում են աշխատանքները:

Մինչ այդ, Ջորգաքարում երկրորդ ջրամբարն էին կառուցում Ախալցխայի շինբաժնի շինարարները` ինժեներ Արշիկ Միրզախանյանի գլխավորությամբ:

1995թ. օգոստոսի 8-ին ջուրը հասնում է ավան և լցվում Ջորգաքարի ջրամբարը, որը նշանակալի իրադարձություն էր շահումյանցիների կյանքում: Նախաձեռնությունն իր օժանդակությունն էր ստացել

շրջանային ժողովի նախագահ՝ Բեսիկ Օբուլաձեի, տեղակալներ՝ Ռ.Վ. Մեմառնիշվիլու, Ալիկ Շահնազարովի և Նոդար Մոմլաձեի կողմից:

Շահումյանցիները լիահույս էին, որ առաջիկա տարիներին կլուծվի նաև ավանը ոռոգման ջրով ապահովելու հարցը: Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի մոտ հրավիրված խորհրդակցությանը (հայ մտավորականության հետ 9.05.91 թ.) մասնակցած Ս. Ասլանյանը կրկին բարձրացնում է Շահումյանի ոռոգման ջրի հարցը՝ նշելով, որ «մենք կարող ենք հույս ունենալ, որ Վրաստանի ազգային կառավարությունը վերջապես կիրագործի մեզ համար կենսական հարցի լուծումը («Վրաստան», 9.05.91, էջ 2)»:

Սակայն շահումյանցիների հույսերն այդպես էլ չիրականացան:

## Ջրի սակավությունը շահումյանցիների մշտական ուղեկից

Շուլավեր-Շահումյանն իր աշխարհագրական դիրքով հետաքրքիր պատկեր է ներկայացնում. արևմուտքից նրան են հարում բնական, փարթամ, նաև պտղատու, հարուստ ծառատեսակներով անտառային զանգվածները՝ խմելու ջրի որոշակի պաշարներով: Արևելքից կիսով չափ նրան օղակում է ոչ այնքան բարձր լեռնապարը, իսկ հյուսիսային կողմը ուղղակի հարթավայր է՝ պտղատու այգիներով ու ցանքատարածություններով: Հորիզոնում նկատելի են Դաղստանի լեռները: Կլիման բարեխառն է. ամռանը՝ շոգ, ձմռանը՝ մեղմ: Տեղանքը ծ.մ. –ից բարձր է շուրջ 400 մետր: Ածում է նույնիսկ ծիթապտուղ: Եվ թվում է, թե շահումյանցին ապրում է դրախտում: Իրոք այդպես կլիներ, եթե... Եթե խմելու և ոռոգման բավարար ջուր ունենար: Դեռ անցյալ դարասկզբին ջրի պակասությունը այնքան էլ զգալի չէր. Բնիծորի «Բլբլան» և «Համարկուտ» աղբյուրները բավարարում էին խմելու, իսկ Շուլավեր գետի ջուրը ` ոռոգման պահանջներին: Բնակչության աճին զուգահեռ՝ աստիճանաբար կենսական դարձավ ջրային պաշարների կարևորությունը: Որոշվում է կառուցել ջրամբար, ուր խողովակաշարով ջուրը պիտի հասներ անտառից: Հանրօգուտ այս գործը ղեկավարող ճարտարագետ Լիսիցյանի մասին դրվատանքի խոսք է ասել «Մշակ» հանդեսը 1901թ.: Ջուրը ջրամբար է հասնում նոյեմբերի 7-ին: Համաժողովրդական այս արարողությանը ներկա են եղել Կովկասի փոխարքա Վորոնցով- Դաշկովը՝ կնոջ և շքախմբի հետ: Այդ օրը օծվել է նաև ռուսական (ուղղափառ) եկեղեցին: Բարձրաստիճան հյուրերին աղ ու հաց է մատուցվել՝ կենտրոնում Մասիսներ փորագրված սկուտեղով:



Բնակչության աճի հետ դարձյալ գլուխ է բարձրացնում ջրի սակավության խնդիրը: 1928թ. սեպտեմբերի 30-ին գործկոմի նախագահ Նիկոլ Հակոբյանի և 10 անդամների ստորագրությամբ կայացվում է թ. 20 որոշումը, որը սակայն մնում է թղթի վրա. հանրապետական ղեկավարությունը ուշադրության չի արժանացնում այդ որոշումը: Բողոքների հոսքը դեպի վերադաս մարմիններ շարունակվում է: Վերջապես 1965թ. Բոլնիսի շրջկոմի քարտուղար Նիկոլայ Սանիկիձեի բարեհաճությամբ հինադրվում է Խրամից բերվող ջրի ջրամբարը՝ Ձերգաքարի բարձունքին; սակայն էլեկտրականության բացակայության պատճառով այդ ուրախությունը երկար չի տևում:Բազում բողոք-դիմումներից հետո, ազգաբնակչության (տեղաբնակների և այլ վայրերում բնակվողների) միջոցներով 1995թ. օգոստոսի 8-ին խմելու ջուրը Ջանխոշից հասնում է Շահումյանի ջրամբար: Ջրատարի շինարարության համար կատարված ներդրումներով անուրանալի է հետևյալ անձանց երախտիքը. Գևորգ Ղալեչյան, Մանյուկ Բագյան, Սեյրան Միրաքյան, Վասիկ Հակոբյան, Համլետ Հովհաննիսյան, Շոթա և Շուրիկ Սուսանյաններ, Հակոբ Ներսիսյան, Սեյրան և Սամվել Սարգսյաններ, Ստեփան Բուդաղյան, Արմիկ Խաչատրյան, Գարուշ Սիմոնյան, Ալբերտ և Աղաբեկ Ղարդաշյաններ, Վիկտոր Երյոմին, Սերժիկ Սիրունյան, Վազիկ Մաճկալյան, Հովիկ Կարապետյան: Նրանցից յուրաքանչյուրի օգնությունը երկու հարյուր հազարից մինչև վեց հարյուր հազար էր; իսկ ՌԴ-ում բնակվող շահումյանցիների ներդրումը՝ տասնմեկ միլիոն: Ասում են՝ գեղեցիկ չէ նման դեպքում անուններ նշելը: Ընդունում ենք, բայց նաև լավ պետք է գիտակցել, որ այս մարդիկ եթե շինարարությանը անմնացորդ չսատարեին, սայլը տեղից չէր շարժվի և, կարծում ենք, հարկ չկա հիվանդագին ընդունելու բարերարության մասին հնչած խոսքը, և մանավանդ, սոսկ բարի ցանկությունը՝ առանց ծանրակշիռ նյութական ներդրումների ցավ չի բուժում:

Ոռոգման ջրի հարցը մնում է նույն անմխիթար վիճակում: Դեբեդի հեռավորությունը Շուլավերից ուղիղ գծով երկու կմ-ից պակաս է, որից 400 մ թունելը կլուծեր խնդիրը: Խրամը 7 կմ հեռու է, և անհրաժեշտ է պոմպակայան: Ջրի խնդիրը այդպես էլ չլուծվեց, որովհետև բնակիչները ոչ վրացի էին, ոչ թուրք, իսկ հայը, հող չունենալիս՝ շալակով է բերում, ջուր չունենալիս՝ արցունքով է ջրում...

Առանձնապես մեծ ծախս չէր պահանջվի, եթե «Սալկուտ» տեղանքում ամբարտակ կառուցվեր, բայց ո՞վ, ո՞ւմ համար...

Շահումյանը հանգչում է մեր աչքի առաջ. նախկին 10,000 բնակչից հազիվ 4000 է մնացել, այն էլ հիմնականում ծերեր...

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ռոմանոս Պավելի Նադիրյանց
(Փարիզ, 1860-ական թթ.)

Կրթական գործի պատմությունը Մեծ Շուլավերում սկիզբ է առել 1858 թվականից, երբ անսալով թեմական առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի հորդորներին՝ իր միջոցների հաշվին սեփական հողակտորի վրա և հատկապես դպրոցի համար 3 սենյակից բաղկացած միհարկանի մի շենք է կառուցել տալիս[173] «ստատսկի սովետնիկ» բժիշկ Ռոմանոս Պողոսի (Պողոսյան) Նադիրյանցը:[174] Շուրջ 15 տարի (1858-1873 թթ.) բարեգործ Ռ. Նադիրյանցը հոգում է կրթօջախի կանոնավոր գործունեության համար անհրաժեշտ նյութական ծախսերը (այդ թվում՝ 3 ուսուցիչների վարձը, աշակերտների ձրի ուսման և դպրոցական անհրաժեշտ պարագաների ծախսերը):[175] Ինքը՝ Ռ. Նադիրյանցը, ժամանակի առաջադեմ և ազգային դպրոցի ջատագով անձերից էր, որը փաստելու համար բավական է նշել, որ բարեգործը հեղինակն էր «Պատմութիւն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց» աշխատության:[176]

Ռ. Նադիրյանցի հովանավորության ներքո գործած եկեղեցական-ծխական արական ուսումնարանը, օրինակ՝ 1866 թ. ունեցել է 62 աշակերտ:[177] 1873 թ. կրթօջախում դասավանդել են Պողոս ավագ քահանա Իսահակյանցն ու Իսահակ քահանա Իսահակյանցը, աշակերտների թիվն էր՝ 78:[178]

---

173. Այս շենքն իր նպատակին է ծառայել մինչև 1875 թ.:
174. «Մշակ», 1873, N 2, էջ 2:
175. «Մեղու Հայաստանի», 1879, N 5, էջ 3: Նաև՝ «Արձագանք», 1893, N 114, էջ 3: «Լումայ», 1904, N 4, էջ 246
176. «Արձագանք», 1884, N 42, էջ 613:
177. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 111:
178. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 43:



Համաձայն 1879 թ. հրապարակված մի հաղորդման՝ դպրոցը Ռ. Նադիրյանցի հովանավորության շրջանից հետո (1873) չէր կարողացել պահպանել նախկին օրինակելի կարգը. «Մինչև 1873 թ. մեր գիւղը մի ուսումնարան ունէր, որ կառավարվում էր բազմաջան Ռոմանոս Նադիրեանցի վարձատրութեամբ մօտ 15 տարի: Այս յարգելի ծերունին մեծ և անչափ երախտիք ունի Շուլաւէրու վերայ: Հինգ տարի է ուսումնարանի խնամատարութիւնը վերոյիշեալ յարգելի պ. յանձնել է մեր ժողովրդին, բայց ան չկարողացաւ պահպանել նորան շարունակ...»:[179] 1859 թուից բարեգործ հանգ. Ռ. Նադիրեանցը իւր հաշուով դպրոցի շէնքը կառուցանելով ձրի էլ ուսում տալ տուեց գիւղի մանուկներին ամբողջ 13 տարի»:[180]

Առհասարակ, որևէ դպրոցի բարգավաճման կամ անկման առաջին ցուցանիշն է նրանում ուսանող աշակերտության թվաքանակը: 1874-1879 թթ. այն ներկայացրել է հետևյալ պատկերը.

| | | | |
|---|---|---|---|
| 1874 թ. | 3 ուսուցիչ | և | 50 աշակերտ:[181] |
| 1875 թ. | 3 ուսուցիչ | և | 90 աշակերտ:[182] |
| 1876 թ. | 3 ուսուցիչ | և | 63 աշակերտ:[183] |
| 1877 թ. | 2 ուսուցիչ | և | 50 աշակերտ:[184] |
| 1878 թ. | 2 ուսուցիչ | և | 57 աշակերտ:[185] |

Հարկ է նշել, որ առնվազն 1871 թվականից Մեծ Շուլավերում գործել է նաև օրիորդաց դպրոց:[186] 1873 թ., օրինակ, այդ դպրոցն ունեցել է 15 աշակերտուհի. «... մի տեղ ուսանում են մինչև 15 օրիորդներ...»:[187] Հետագա տարիների համար այս դպրոցի մասին տվյալների բացակայությունը կարծել է տալիս, թե այն չի գործել: Մինչև կառավարության կարգադրությամբ հաստատության փակումը (1885 թ.) արական դպրոցը գործել է հետևյալ կերպ.

| | | | |
|---|---|---|---|
| 1882 թ. | 3 ուսուցիչ | և | 80 աշակերտ: |
| 1883 թ. | 3 ուսուցիչ | և | 60 աշակերտ: |

1884 թ. Մեծ Շուլավերում դեռևս հիշվում է միայն վերոհիշյալ արական դպրոցը. «Ունին և մի տղայոց ծխական դպրոց...»:[188]

---

179. «Մեղու Հայաստանի», 1879, N 5, էջ 3:
180. «Արձագանք», 1893, N 114, էջ 3:
181. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, թ. 17-18:
182. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3866, թ. 39-40:
183. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51: Նաև՝ ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 13: Մեկ այլ վավերագրում նույն՝ 1876 թ. հիշվում է միայն 50 աշակերտ (ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 44-45):
184. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 130: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 68-69:
185. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 177:
186. **Խուդոյան Ս. Կ.**, Արևելահայ դպրոցները 1830 - 1920 թվականներին, Երևան, 1987, էջ 537:
187. «Մշակ», 1873, N 15, էջ 3:
188. «Արձագանք», 1884, N 42, էջ 612:

Չնայած ազգային դպրոցների վերաբացման թույլտվությունը եղել էր 1886-ին, այնուամենայնիվ, Մեծ Շուլավերում հայոց դպրոցը գործել է միայն՝ 1887-ից, երբ հաստատվել էր կրթօջախի նոր հոգաբարձության կազմը (Պողոս ավագ քահանա Իսահակյանց, Ավետիք Մեհրաբյան և Աղաջան Քարհանյանց):[189]

1888 թ., երբ կառուցման ընթացքում էր 10.000 ռուբ. արժողությամբ եռահարկ դպրոցի նոր շենքը,[190] ուսանողների թիվն էր 133, իսկ ուսուցիչներինը՝ 5:[191]

1890 թ. նորակառույց դպրոցի շինարարությունը դեռևս ամբողջացած չէր. «Տղայոց դպրոցի շինութիւնը, թէև կիսաւարտ, բայց ունինք, այն էլ փառաւոր, ընդարձակ սենեակներով...»:[192] Նույն թվին դպրոցն ուներ 99 աշակերտ:[193] Ի դեպ, նաև աղջիկների ուսումնառությունը կազմակերպելու համար կարևոր էր դպրոցական առանձին շինություն ունենալը: Հույս կար, որ այդ շենքը կկառուցեր հանգուցյալ Ռ. Նադիրյանցի այրին՝ տիկ. Եկատերինա Նադիրյանցը. «...Օրիորդական դպրոցի շինութիւն կանգնեցնել ս. Մեսրովբ եկեղեցու բակում, ուր ամփոփուած է իւր հանգ. ամուսին Ռոմանոսի մարմինը: Նախկին դպրոցի շինութիւնն այդ բակում դարձեալ երջանկայիշատակ Ռոմանոսի վաստակովն էր կանգնած, որն այժմ չկայ...»:[194]

1890 թ. բացված օրիորդաց միդասյա դպրոցը[195] նույն ուստարվա վերջին արդեն հայտնվել էր աննախիթար վիճակում. «Տեղոյս օր. դպրոցը հոգեվարքի մէջ է. միայն մի բաժանմունք ունի 12 աշակերտուհիներով: Նոր բացուելիս դպրոցը 50 աշակերտուհի ունէր...»:[196] Ստեղծված կացությունից դուրս գալու ելքն ի վերջո գտնվեց արական և իգական դպրոցները միավորելու և երկսեռ դպրոց հիմնելու ճանապարհով:

Արդեն 1891/92 ուստարում դպրոցի ուսանողությունը բաղկացած էր 94 տղաներից և 25 աղջիկներից:[197] Հաջորդ ուստարում նկատվեց սովորողների թվի աճ (103 տղա, 32 աղջիկ):[198] 1892 թ.դպրոցի ավագ ուսուցիչն էր Արշակ Չոբանյանցը:[199]

Ըստ երևույթին դպրոցի երկսեռ գործունեությունը խնդրի լուծման դեռևս լավագույն տարբերակը չէր, ուստի և շուտով ձեռնարկվել է օրիորդաց դպրոցի առանձին շենքի կառուցումը. «Ս. Մեսրովբ եկեղեցու գաւթում Գայիանեան օրիորդաց դպրոցի շինութիւնն սկսել է. հիմնադիրն է պ. Սիմէոն Պառաւեանց, որ վճռել է ծախսել նրա շինութեան վրայ 2500 ր.: Շէնքը պիտի լինի քարաշէն, կունենայ մի դահլիճ, նախասենեակ և 2 դասարան, եւրոպական յատակագծով...»:[200] Ի դեպ, Ս. Պառավյանը դպրոցի շինարարությունը հանձն էր առել այն պայմանով, որ այն կոչվեր իր կնոջ՝ Գայանեի անունով՝ «Գայանյան»,[201] ուստի մի առիթով (1898 թ.) Ս. Պառավյանը նշել է. «Վիճակային կոնսիստորիայիդ քաջ յայտնի է, որ ես յօժար կամքովս Շուլավէր գիւղում կառուցել էի մի դպրոց և այդ դպրոցի գոյութիւնը պահպանելու համար յատկացրել էի իմ սեփական այգին միայն այն պայմանով, որ դպրոցը կոչուի իմ անունով և երկրորդ, որ քանի դա գտնւում է հոգևոր իշխանութեան ձեռքին, կառավարուի մեր խնամակալութեամբ, իսկ այնուհետև լինի սեփականութիւն նոյն գիւղի Սբ. Սահակ և Մեսրովբ հայոց եկեղեցւոյն...»:[202]

Դպրոցի շինարարությունն ավարտվել է 1893թ.. «եկեղեցու գաւթի հիւսիսային կողմում գտնւում է Գայիանէ Պառաւեանի 1893 թ. շինած գեղեցիկ, սրբատաշ, չորս սենեակներից բաղկացած ուսումնարանական շենքը, որի հանդէպ, եկեղեցու որմին կից բարձրանում է իւր Գ. Պառաւեանի մահարձանը (1896 թ.)»:[203]



Ծխական դպրոցի շենքը (XIX դարի վերջ), այժմ N 1 ութամյա դպրոց

189. «Արարատ», 1887, փետրուար, էջ 94:
190. «Նոր-Դար», 1888, N 87, էջ 3:
191. Խուդոյան Ս. Կ., նշվ. աշխ., էջ 537:
192. «Նոր-Դար», 1890, N 140, էջ 2:
193. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3887, թ. 131:
194. «Նոր-Դար», 1890, N 140, էջ 2:
195. «Արձագանք», 1890, N 27, էջ 4:
196. «Արձագանք», 1891, էջ 87:
197. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3889, թ. 130:
198. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, թ. 102:
199. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 2, գ. 287, թ. 2:

200. «Տարազ», 1892, N 7, էջ 114:
201. ՀՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 6, գ. 234:
202. ՀՀՊՊԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3374, թ. 2:
203. «Ազգագրական հանդէս», գիրք VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 331:

Ցայսօր պահպանվել է դպրոցի շինարարական յոթ տողով փորագրված արձանագրությունը.

ՍՈՅՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ ՀԻՄՆԵՑ ԻՐ ՍԻՐԵԼԻ ՀԱՍԱՐԱԿՈՒ -<br>ԹԵ(Ա)Ն ՈՐԴՈՅՑ ՀԱՄԱՐ, ԻՒՐ ՍԵՓՀԱԿԱՆ ԾԱԽՍՈՎ ԲՆԻԿ<br>ՇՈՒԼԱՒԵՐՑԻ<br>ՍԻՄԷՕՆ ՅՈՎ. ՊԱՌԱՒԵԱՆՑԸ ԽՐԻՄԵԱՆ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ<br>ՕՐՈՎ,<br>ՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՈՎ ԵՒ ԱՆՈՒԱՆՈՒԵՑ<br>ԳԱՅԻԱՆԵԱՆ ՊԱՌԱՒԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ<br>ՅԱՆՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԻ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍՆՈՅՆ<br>1893 ԱՄԻ ԵՒ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՌՅԽԳ

Արդեն 1894 թ. Մեծ Շուլավերում ինքնուրույնաբար գործող արական և իգական դպրոցները համապատասխանաբար ունեին 119 աշակերտ (4 ուսուցիչ) և 38 աշակերտուհի (2 ուսուցիչ):[204]

Դպրոցները գործեցին մինչև 1896 թ., երբ կառավարության հրամանով 2-րդ անգամ` 1896-1905 թթ. փակվեցին ազգային (եկեղեցական-ծխական) բոլոր դպրոցները:

Նախատեսվում էր դպրոցում ընդգրկել բոլոր 8 տարեկան երեխաներին. «Այն հայրը, որ հակառակ կը լինի տղի ուսումնարան գնալու կամ ժամանակին չի տանիլ, պետք է գիւղի հոգատար երեսուն ընտրեալների առաջ յանդիմանւի կամ փողոցները սրբի իբրև պատիժ»:



Վահան Միրաքյանը իր սաների հետ (XX դարի սկիզբ)

204 . ՀՀՊՊԼԿԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, թ. 34, 155-156: Նաև` ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 99:



Վերաբացումը տեղի ունեցավ անմիջապես դրա թույլտվությունը ստանալուն պես (1905 թ.): Ուշագրավ է, որ վերաբացված դպրոցը կրկին հանդես եկավ որպես երկսեռ կրթական հաստատություն և արդեն աչքի ընկավ աշակերտության աննախադեպ մեծ թվով: Մասնավորապես, 1907/8 ուստարում դպրոցն ունեցել է 290 տղա և 220 աղջիկ սովորողներ:[205]

1909-ին հաստատությունը գործել է` 150 տղա և 70 աղջիկ սովորողներով և ուսուցչակազմի 8 անդամներով (6 ուսուցիչ և 2 ուսուցչուհի):[206]

1911 թ. դպրոցն ուներ 182 տղա և 74 աղջիկ աշակերտություն և 7 ուսուցիչ (այդ թվում` 2 ուսուցչուհի):[207]

Հայտնի է, որ 1912/13 ուստարում «219 աշակերտից փոխադրվել են 106 հոգի կամ 48,5%-ը, մնացել են 78 հոգի կամ 35,5%-ը, վերաքննության են թողնվել 28 հոգի (12,5%-ը) և դպրոցից հեռացվել են 7 հոգի (3,5%-ը): Այս տվյալները խոսում են դպրոցի անբարեհաջող վիճակի մասին: **1914-ին ունեցել է 8 ուսուցիչ, 400 աշակերտ**:[208]

Նախախորհրդային տարիներին Մեծ Շուլավերում գործած կրթական հաստատություններից էր նաև «Շուլավերի կիրակնօրյա դպրոցը»: Սա բացվել է 1884 թ. սկզբին. «Փետրվարի 19-ին մեր հասարակութիւնը բաղդ ունեցաւ տեսնել Շուլաւեր գիւղում կիւրակնօրեայ ուսումնարանի բացումը, ուր առայժմ անգրագէտ տղայոց պէտք է ուսուցանուի հայերէն կարդալ, գրել, հաշուել և կրօն»:[209] Ուսուցիչները` Սարգիս Քամալյանը, Իսահակ քահանա Իսահակյանցն ու Սերգեյ Դիվանյանցը այդ դպրոցում դասավանդում էին ձրիապես:[210]

Հայտնի է, որ 1914-15 ուստարվա սկզբին երկսեռ դպրոցի ուսանողների թիվն էր 268, իսկ ուստարվա վերջին` 222: Դրանցից փոխադրվել էին 150-ը (70%-ը), նույն դասարանում էին մնացել 57-ը (23%-ը):[211] Ըստ դասարանների աշակերտները բաշխված էին հետևյալ կերպ.

*1914/15 ուս. տարի*

I դաս. – 43 աշ.<br>Iա դաս. – 38 աշ.<br>Iբ դաս. – 41 աշ.

205. **Խուդոյան Ս. Կ.**, նշվ. աշխ., էջ 537:
206. ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 20:
207. ՀՀՊՊԿԱ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 58:
208. **Խուդոյան Ս. Կ.,** նույն տեղում:
209. «Նոր-Դար», 1884, N 37, էջ 2: Նաև` «Մեղու Հայաստանի», 1884, N 18:
210. Նույն տեղում:
211. «Արձանագրութեանց մատեան N 1. Մանկավարժական ժողովների Շուլավերի երկդասեան երկսեռ դպրոցի 1914/15, 1915/16 և 1916/17 ուս. տարիների» (տես` Ս. Ասլանյանի անձնական արխիվ):


ՎԿԱՅԱԿԱՆ

Շուլավերի եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցի ավարտական վկայական (1917 թ.)




СВИДѢТЕЛЬСТВО

Сіе выдано крестьянскому сыну селенія Шулаверы Борчалинскаго Уѣзда Тифлисской губерніи НАРХАНОВУ АВЕТИКУ МЕЛИКСЕТОВУ Армяно-Григоріанскаго вѣроисповѣданія, родившемуся 15-го Іюня тысяча-восемьсотъ-восемьдесятъ перваго года въ томъ, что онъ въ 1900 году при окончаніи испытаній успѣшно окончилъ курсъ ученія въ Шулаверскомъ двухклассномъ училищѣ Министерства Народнаго Просвѣщенія, въ чемъ и выдано ему сіе свидѣтельство за печатью училища.

1900 года Августа "25" дня.

№ 166

Преподаватели:

Շուլավերի պետական (ռուսական) դպրոցի ավարտական վկայական (1900 թ.)

II դաս. – 33 աշ.
II զուգ. բաժ. – 43 աշ.
III բաժ. – 51 .
IV բաժ. – 20 աշ.
Ընդամենը՝ 269 աշակերտ

*1915/16 ուս. տարի*
I դաս. – 61 աշ.
II բաժ. – 41 աշ.
II զուգ. բաժ. – 44 աշ.
III դաս. – 52 աշ.
IV բաժ. – 17 աշ.
Ընդամենը՝ 215 աշակերտ

*1916/17 ուս. տարի*
Ա. հիմնական բաժանմունք – 66 աշ.
Ա. զուգահեռ բաժանմունք – 62 աշ.
Բ. հիմնական բաժանմունք – 34 աշ.
Բ. զուգահեռ բաժանմունք – 38 աշ.
Ընդամենը՝ 200 աշակերտ:[212]

**N 1 միջնակարգ դպրոց**. 1921 թ. խորհրդայնացման հետևանքով, գավառապետարանի քարե շենքը դարձրին միջնակարգ դպրոց, որը մինչև այժմ էլ կոչվում է **Ուպրավլեննու** (վարչության) դպրոց: Այս շենքը կառուցվել էր դեռևս **1899 թ. Սիմոն Պառավյանի կողմից**: Դասասենյակների պակասության պատճառով առաջին հարկի բանտախցիկները ևս ծառայեցրին նույն նպատակին: Մինչդեռ վարչապետարանին կից ռուսական մարմարապատ եկեղեցու շենքը խորհուրդները քանդեցին, իսկ շինանյութը շրջկոմի քարտուղարի հատուկ կարգադրությամբ ու «հոգատարությամբ» տեղափոխեցին Մառնեուլ, կառուցելով միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքը:

1921-1930-ական թթ. պետությունը հենց սկզբից իր ձեռքը վերցրեց կրթության ղեկավարման գործը: Փակվեցին բոլոր մասնավոր դպրոցները: Դպրոցն անջատվեց եկեղեցուց, ստեղծվեցին պիոներական և կոմերիտական կազմակերպություններ, որոնք կոչված էին մատաղ սերունդը դաստիարակելու կոմունիզմի գաղափարների ոգով: Սկզբում ստեղծվեց երկու տիպի դպրոց՝ տարրական և յոթնամյա:

1923/24 ուս. տարում դպրոցը տվեց իր առաջին շրջանավարտները:

1926 թ. նոր որոշում ընդունվեց՝ քաղաքներում բացել եռաստիճան դպրոցներ՝ տարրական, յոթնամյա, լրիվ միջնակարգ: Գյուղական վայրերում հիմնական տիպը ճանաչվեց տարրական դպրոցը: Այդ դպրոցներին անհրաժեշտ էին մանկավարժներ: Շահումյանի առաջին

212. Նույն տեղում:





Գավառային վարչության, հետագայում N 1 միջնակարգ դպրոցի շենքը (1899 թ.)
(Կառուցող՝ Սիմոն Պառավյան)

շրջանավարտները տեղում և գյուղերում լրացրին ուսուցիչների պակասը:

Այդ ժամանակ դպրոցների շրջանային լուսավորության բաժնի վարիչն էր Հայկ Գրիգորի Տեր-Հակոբյանը, որը ամրապնդեց կապերը Հայաստանի հետ՝ այնտեղից որոշ մասնագետներ հրավիրելով Շուլավեր: Ձեռնարկած քայլերի շնորհիվ դպրոցական կյանքն ընկավ հունի մեջ:

N 1 միջնակարգ դպրոցի տնօրենները.

1. Գուլխանդարյան
2. Էլբակյան Գևորգ
3. Սոլախյան Հովհաննես Պողոսի
4. Ուրումյան Սինասար Սինասարի
5. Ղարդաշյան Գևորգ Լևոնի
6. Սարգսյան Սարգիս Սերգեյի
7. Նադիրյան Վաղինակ Միքայելի
8. Մելքիկյան Գագիկ Արտաշի
9. Միրաքյան Միքայել Ալեքսանդրի
10. Հովակիմյան Ռուբեն Լևոնի
11. Ղալեչյան Ռայա Սուրենի
12. Ուրումյան Արտուշ Օրժիկի



N 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Հովհաննես Սոլախյանն իր սաների հետ (1935-36 ուս. տարի)



1956 թ. N 1 միջնակարգ դպրոցի մանկավարժները

1920-1930-ական թվականների Շահումյանում մեծ աշխատանք




CALIFORNIA ALL-PURPOSE ACKNOWLEDGMENT

State of CALIFORNIA

County of LOS ANGELES

On ___ before me, ___

personally appeared ___

☒ personally known to me - OR - ☐ proved to me on the basis of satisfactory evidence to be the person(s) whose name(s) is/are subscribed to the within instrument and acknowledged to me that he/she/they executed the same in his/her/their authorized capacity(ies), and that by his/her/their signature(s) on the instrument the person(s), or the entity upon behalf of which the person(s) acted, executed the instrument.

Notary Public — California
Los Angeles County
My Comm. Expires Mar 25, 2002

WITNESS my hand and official seal.

OPTIONAL SECTION
CAPACITY CLAIMED BY SIGNER
☐ CORPORATE OFFICER(S)
☐ PARTNER(S) ☐ LIMITED ☐ GENERAL
☐ ATTORNEY-IN-FACT
☐ TRUSTEE(S)
☐ GUARDIAN/CONSERVATOR
☐ OTHER: ___

SIGNER IS REPRESENTING:

OPTIONAL SECTION

THIS CERTIFICATE MUST BE ATTACHED TO THE DOCUMENT DESCRIBED AT RIGHT:

TITLE OR TYPE OF DOCUMENT ___

NUMBER OF PAGES ___ DATE OF DOCUMENT ___

SIGNER(S) OTHER THAN NAMED ABOVE ___

Լ. Պարոնյանի բարեգործական ձեռնարկի վավերագիրը

ծավալվեց անգրագիտության վերացման ուղղությամբ: Այդ գործին լծվեցին ուսուցիչները, երիտասարդության գրագետ մասը: Դրանք կոչվում էին լիկկայաններ: Ուսուցիչները հաճախում էին տները, հիմնարկ-ձեռնարկությունները: Արդեն 1940 թ. Շուլավերում անգրագետներ չկային:

Տարիներ շարունակ պարապմունքներն ընթանում էին երեք հերթով և մի քանի անհատական շենքերում, վարչական շենքի նկուղներում: Երկարատև պայքարից հետո, նախկին ռուսական եկեղեցու տեղում 1961 թ. կառուցվեց կցաշենք, որը որոշ չափով լրացրեց դպրոցական մակերեսի պակասը: 1960-ականներին դպրոցն ուներ 60-70 ուսուցիչ և 800-900 աշակերտ: Գործում էր աշակերտական-թատերական խումբը, որը ներկայացումներ էր բեմադրում Մշակույթի տանը: Ուներ իր երգչախումբը՝ Նադիկ Նադիրյանի և ռադիոհանգույցը՝ Ժորա Զարգարյանի ղեկավարությամբ:

2000 թ. օգոստոսի 21-ին կնքված պայմանագրի համաձայն շուլավերցի լոս-անջելեսաբնակ Լևոն Պարոնյանը և իր 2 որդիները հանձն են առել 25 տարի շարունակ՝ տարեկան 2000 ԱՄՆ դոլլար հատկացնել Շուլավերի N 1 միջնակարգ դպրոցին: Տնօրեն Ռ. Ղալեչյանի վկայությամբ Լ. Պարոնյանը դպրոցն ապահովելու է նաև անհրաժեշտ գույքով: Հուսով ենք, որ բարեգործական այս քայլի շնորհիվ կրթական հաստատությանը կհաջողվի դուրս գալ վերջին տարիներին ստեղծված նյութական ծանր դրությունից:

**N2 միջնակարգ դպրոց**. Բացումը պայմանավորված էր 1935 թ.

ռուս զինվորականների ընտանիքների՝ Շուլավերում հաստատվելու և զորանոց հիմնելու անհրաժեշտությամբ: Նույն թվականին վարձվում է 1907-1910 թթ. կառուցված ծերաքցի Աբրահամ Բոստականաշվիլի եղբայրների տունը (նրանք չէին ցանկանում վաճառել, ուստի հարցը լուծվեց վարձակալությամբ):

1950 թ., երբ մահացել էին եղբայրները, պետությունը շենքը գնեց նրանց թոռներից: Ի սկզբանե ոչ լրիվ միջնակարգ դպրոցն այսօր լրիվ միջնակարգ է: 1980-ական թթ. պահանջ է զգացվում կառուցելու դպրոցի նոր շենք: Տնօրեն Գերասիմ Քուրդովի օրոք կառուցվում է եռահարկ դպրոց: Հաստատության առաջին վարիչն էր Թիֆլիսեցի Բաղայանը, իսկ 1946-1948 թթ.՝ Արտաշ Լևոնի Ծատուրյանը:

Հետագայում աշխատած տնօրենները.

1.Սիդորոպուլո Էլպիդա Դմիտրու
2.Ղազազյան Արամայիս Վահանի
3.Քուրդով Գերասիմ Իլյիչի
4.Քուրդով Պյոտր Յակովլևի
5. Կլեշնինա Ալլա Ալեքսանդրի
6. Վերմիշյան Աննա Նիկոլայի

Ավանն ունի նաև երկու ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ՝ N 1 և N 2:

**N 1 ոչ լրիվ միջնակարգ դպրոց.** Տեղավորված է Կոնո վարժապետի (Վահան Միրաքյան) ղեկավարած արքունի դպրոցի շենքում: Մինչև օրս էլ այն անվանում են Կոնոյի դպրոց: Առաջին տնօրենը եղել է ինքը՝ Վ. Միրաքյանը: Դպրոցը հետագայում դարձել է 8-ամյա, որտեղ որպես տնօրեններ են աշխատել.



1999 թ. N 1 ոչ լրիվ միջնակարգ դպրոցի մանկավարժները



1. Միրաքյան Վահան Աղաբեկի
2. Սարգսյան Սարգիս Սերգեյի
3. Մելքիկյան Գագիկ Արտաշի
4. Բուդաղյան Ալեքսանդր Միկիչի
5. Ղուլյան Սուրեն Ավագի
6. Մխիթարյան Քնարիկ Արմենակի
7. Գալստյան Ծաղիկ Աշոտի



N 2 ոչ լրիվ միջնակարգ դպրոցի մանկավարժները - 1958 թ.

**N 2 ոչ լրիվ միջնակարգ դպրոց.** Տեղավորված է Սիմոն Պառավյանի կառուցած նախկին գավառական դատարանի շենքում (մինչև այսօր ժողովուրդը նրան կոչում է Սուդի դպրոց): Այն սկսել է գործել 30-ական թվականներից: Առաջին տնօրենն ու կազմակերպողը եղել է մի թիֆլիսահայ, որին մի քանի ամիս անց փոխարինում է Աշոտ Գերասիմի Մովսիսյանը: Ստորև տրվում է տնօրենների ցանկը.

1.Մովսիսյան Աշոտ Գերասիմի
2.Բալասանյան Արաքսի Վարդանի
3.Մկրտչյան Մուշեղ Միկիչի
4.Չիրքինյան Աշոտ Գիգոլի
5.Ուրումյան Սմբատ Սասունի
6.Ուրումյան Արտուշ Օրժիկի

**Բաներիտ միջնակարգ դպրոց**. N 2 ոչ լրիվ միջնակարգ դպրոցի շենքում իր պարապմունքներն էր անցկացնում Շահումյանի երեկոյան երիտասարդական միջնակարգ դպրոցը: Նպատակն էր՝ ուսուցանել պատերազմի տարիներին դպրոցներից դուրս մնացած երիտասարդներին: Ուներ երկու բաժին (հայկական՝ 7, ռուսական՝ 3 դասարաններով): Դպրոցի տնօրենն էր Աշոտ Գիգոլի Չիրքինյանը, որը 1954 թ. տեղափոխվեց N 2 ոչ լրիվ միջնակարգ դպրոց: Նույն թվականին տնօրինությունը ստանձնեց Սանդուխտ Համբարձումի Ասլանյանը, ապա՝ Ուրումյան Սմբատը, Հովակիմյան Ռուբենը:

Տարիների ընթացքում դպրոցում դասավանդել են՝ Աշոտ Մելքիկյանը, Արամայիս Ղազազյանը, Գևորգ Հովհաննիսյանը, Վաղինակ Նադիրյանը, Աշոտ Չիրքինյանը, Աշոտ Հակոբյանը, Գրիգոր Մաճկալյանը, Վերա Վոստրիկովան, Լեյլի Պառավյանը, Սիլվա Թանյանը, Հայկանուշ Գաբրիելյանը, Գագիկ Երիբեկյանը, Գրիգոր Նալբանդյանը, Վանյա և Նինա Գրիգորյանները, Գեորգի Առուշանյանը, Լենա Պապյանը, Ռուբեն Մխիթարյանը, Ռուբեն Հովակիմյանը, Ջեֆիկ Աբրահամյանը, Քնարիկ Քամալյանը, Նինա Դուրյանը, Անժելա Վարդանյանը, Ժորա Զարգարյանը, Նինա Ասլանյանը (Թբիլիսիից), Օլյա Սահրադյանը, Ռաիսա Մանուկյանը, Ժուժունա Խուրցիձե, Նոնա Գամբաշիձեն, Էմմա Անկվաբը, Սեդրակ Մարտիրոսյանը, Մուշեղ Մկրտչյանը, Արամ Ավագյանը, Ասյա Քյուրանյանը, Ջեմմա Հակոբյանը, Սամվել Պետրոսյանը, Վարյա Գաբրիելյանը, Սմբատ Ուրումյանը, Արտուշ Ուրումյանը, Քնարիկ Մխիթարյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Լիաննա Չոբանյանը, Սաթենիկ Ղալեչյանը, Խանում Մխիթարյանը:

1993 թ. դպրոցը լուծարվել է աշակերտների պակասի պատճառով:

Դպրոցի տնօրենները.

1. Մելքիկյան Գագիկ Արտաշի – 1949-1951 ուս. տ.
2. Չիրքինյան Աշոտ Գիգոլի – 1951-1954 ուս.տ.
3. Ասլանյան Սանդուխտ Համբարձումի – 1954-1979 ուս. տ.
4. Ուրումյան Սմբատ Սասունի – 1979-1980 ուս. տ.
5. Հովակիմյան Ռուբեն Լևոնի – 1980-1993 ուս.տ.:

**Մելիք Փաշայանի անվան երաժշտական դպրոց**. Գործում է 1972/73 ուստարուց, որի կազմակերպողն ու հիմնադիրը Հակոբ Արամի Ռուխկյանն է:

Դպրոցի նախկին տնօրեն Սվետլանա Ֆյոդորովնա Ժուրավլյովայի վկայությամբ դպրոցը հայտնվել է փակման վտանգի առաջ:



Դպրոցի տնօրեններն էին.

1. Ռուխկյան Հակոբ Արամի
2. Ժուրավլյովա Սվետլանա Ֆյոդորի
3. Ղազարյան Սոնա Սերգեյի

Շահումյանի N 1 հայկական դպրոց

1. 1996-1997 ուս. տարի 450 աշ., 58 ուսուցիչ
2. 1997-1998 ուս. տարի 455 աշ., 60 ուսուցիչ
3. 1998-1999 ուս. տարի 430 աշ., 55 ուսուցիչ
4. 1999-2000 ուս. տարի 430 աշ., 60 ուսուցիչ
5. 2000-2001 ուս. տարի 430 աշ., 58 ուսուցիչ

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սբ. Մեսրոպ եկեղեցու շենքը վերածվում է մշակույթի տան: Այստեղ տրվում էին թատերական ներկայացումներ, գործում էին դերասանական և երաժշտական խմբեր: Կար նաև փողային գործիքների նվագախումբ՝ Ռուբեն Գրիգորյանի ղեկավարությամբ:

Տեղի սիրված դերասաններից էր Մանուշակ Անձնաուրյան - Քամալյանը՝ Շարլ Ազնավուրի հորաքույրը, Վիկտորյա Հարությունյանը, Կոլյա և Վանիկ Զուբյանները և շատ ուրիշներ: Ավանում հյուրախաղերի էին գալիս Թբիլիսիի հայկական թատրոնի դերասանները: 1923 թ. կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ղեկավարությամբ և տեղական ուժերով բեմադրվում է Հ. Թումանյանի «Անուշ» օպերան: Սարոյի դերը կատարում է Սարգիս Չոբանյանը, իսկ Անուշի դերը՝ Նատաշա Վարդանյանը: Բեմադրվում է նաև «Պեպոն»: Պեպոյի առաջին դերակատարն էր Բաստի Կոնի որդին՝ Բագրատը: Կակուլու դերը կատարում է Ասատուր Նալբանդյանը: 1960 թ. մարտի 2-ին Շահումյանում բեմադրվում է «Օթելլոն», գլխավոր դերում հանդես է գալիս հռչակավոր դերասան Վահրամ Փափազյանը, որին ժողովուրդը ընդունում է մեծ ցնծությամբ և ավարտից հետո ձեռքերի վրա դուրս բերում բեմից:

1963 թ. հոկտեմբերի 20-ին ավանում նշվում է Սայաթ-Նովայի ծննդյան հոբելյանին նվիրված հանդիսությունը:

Շահումյանը հայտնի է նաև իր երգիչներով, աշուղներով: Թբիլիսիում հայտնի էր երգիչ Գևորգ Չոբանյանը՝ «շուլավերցի Գևորգը», աշուղներից՝ Հագիրը (Աբրահամյան Դաբունց): Հայտնի երգիչ էր նաև սազանդար Գևորգը, իսկ նրա թոռ Ալեքսանդր Եգորյանը նվագում էր փողային խմբում: Նվագում էին Կոլյա և Վանիկ Զուբյանները, Միշա Մեջանյանը, Նորիկ Մխիթարյանը, Ռաֆիկ

Գալստյանը, Միշա և Արամայիս Սարգասյանները և ուրիշներ: Եղել են պարկապզուկ նվագողներ (հայտնի էր Վարդան Մարտիրոսյանը): Երգչուհիներից հայտնի է Արուսյակ Պետրոսյանը:

Շուլավերը ունեցել է և ունի նաև իր հմուտ քյամանչահարները: Անդրկովկասում մրցույթ-ների հաղթող է ճանաչվել Սուրեն Ղարախանը, որը նվագել է Պարսկաստանում, նաև` շահի պալատում:



Երեք գրադարանների աշխատակիցները:

Շահումյանը հայտնի է իր լուսանկարիչներով (Սեյրան Սուսանյան, Մամիկոն Բաբաջանյան, Օրբելյան եղբայրներ` Արարատը և Հարությունը, Սնար Մարտիրոսյան, Աշոտ Մարության): Հայտնի էր կին լուսանկարիչ Նվարդ Պողոսյանը:

Շահումյանում կան նաև ինքնուս գեղանկարիչներ (Հայկազ Խոզոյանը, Պետրոսյան եղբայրները): Քարգործ վարպետներից հայտնի է Ժորիկ Սիրունանյանը:

1955 թ-ից Շահումյանում սկսում է գործել տեղական ռադիոհանգույցը: Հաղորդումները տրվում էին ուրբաթ օրերին (շաբաթը մեկ ժամ): Խմբագրական կազմը բաղկացած էր 5 հոգուց (Մելքիկյան Գագիկ, Միրաքյան Միքայել, Սիմոնյան Մարկլեն, Ավետիսյան Սեյրան և Ասլանյան Սանդուխտ - նախագահ, հաղորդավար):

Շուլավերում թատրոնի սզկբանավորումը առնչվում է Ս. Քամալյանի և Ռ. Նադիրյանի հետ:

1917թ. ավանում ստեղծված թատերասերների խմբում էին Մեխակ Մարգարյանը, Նիկոլ Մեհրաբյանը, Սիմոն Աբովյանը, Սուրեն Շլեպչյանը, Աշխեն և Մանիկ Մեհրաբյանները, Պետրոս Գասպարյանը:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո, թատրոնի շենք չունենալու պատճառով, բռնագրավվում է Մեխակ Միրաքյանի տունը, որը վերածվում է ակումբի: Թատերական խումբը կրում էր Ստեփան Շահումյանի անունը:

1881 թ. Շուլավերում գրադարան է հիմնվում` Սարգիս Քամալյանի գրքերի նվիրատվությամբ: Հետագայում գրադարանը տեղավորվում է Գայանյան դպրոցի շենքում: Խորհրդային տարիներին գրադարանը անվանվում է Այոշա Ջափարիձեի անունով:

Մեր օրերում Շահումյան ավանը ունի երեք գրադարան (քաղաքային N 1, որը 1999թ. ուներ 16130 կտոր գիրք, N 1 և N 2 մանկական գրադարանները, որոնք ունեն 5000-ական կտոր գիրք): Հարուստ է N 1 միջնակարգ հայկական դպրոցի գրադարանը, որի հարստացման





Դրվագ թանգարանի բացման արարողությունից Վրաստանի ԽՍՀ. մշակույթի նախարար` Վ. Ասաթիանի:

գործում մեծ է Ժենյա Աղբալյանի ներդրումը:

1977 թ. Շահումյանում խնդիր է ծագում հիմնելու ծնունդով շուլավերցի Ալ. Մելիք-Փաշայանի տուն-թանգարանը: 1988 թ. մայիսի 6-ին հանդիսավոր պայմաններում տեղի է ունենում թանգարանի բացումը:[213] Մոսկվայից բերված ցուցանմուշներով թանգարանը համալրվում է 1990 թ.:[214]

## ԱՎԱՆԻ ՄԱՐԴԻԿ



**ԱԲՅԱՆ ՍՈԼԻԿ ՍԱՐԳՍԻ:** Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է և 1942 թ.-ից մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Զորացրվել է 1947 թ.: Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը (1953), Անդրկովկասի Երկաթուղա-ճանապարհային ինստիտուտը (1960): 1965-72 թթ. աշխատել է Երևանի հատուկ շին. վարչությունում (պետ), 1975-85 թթ.` Խորհրդային Միության տարբեր քաղաքներում (Մոսկվա, Վոլգոգրադ): Լուրջ ներդրում է ունեցել հանրապետության քիմիական արդյունաբերության օբյեկտների կառուցման և բնակարանային շինարարության գործում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Շուլավերի լուսավորության և պատերազմում զոհվածների հուշարձանի կառուցման գործում: Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի, Պատվո նշան,Հայրենական պատերազմի շքանշաններով, մեդալներով:



**ԱԿՈՊՈՎ ՍՏԵՓԱՆ ՀԱԿՈԲԻ:** Ավարտել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխ.

213. **Азроян Л.,** Мемориальный музей Мелик-Пашаева, "Коммунист", 1988, 8 мая, էջ 1:

214. **Ասլանյան Ս.,** Թանգարանը համալրվում է, «Վրաստան», 1990, հուլիսի 11:

ուսումնարանը (1931): 1937-39-ին՝ («Ուրալմաշի») տնօրեն, 1939-1941-ին՝ ծանր մեքենաշինության ժողկոմի տեղակալ, 1941-1946-ին՝ միջին մեքենաշինության ժողկոմ, 1946-47-ին՝ ԽՍՀՄ ավտոմոբիլային արդյունաբերության, 1947-1950-ին՝ ԽՍՀՄ ավտոմոբիլային ու տրակտորային արդյունաբերության նախարար, 1950-53-ին՝ ԽՍՀՄ գյուղատնտեսության մեքենաշինության նախարարի տեղակալ: 1953-ին ԽՍՀՄ մեքենաշինության նախարարի տեղակալ, ապա՝ նախարար, 1954-1955-ին՝ ԽՍՀՄ ավտոմոբիլային, տրակտորային և գյուղատնտեսական մեքենաշինության նախարար: Ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր (1946-1950, 1954-1958):


Ս. Ա. Հակոբյանի շիրմաքարը Մոսկվայում: (Ռուբեն Մխիթարյան)



**ԽԱՌԱՏՅԱՆ ԺԻՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ** [ծն. 09.03.1939]: Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1961): 1961-69 թթ. աշխատել է Կիրովականի դատախազությունում (ստաժոր, քննիչ): 1969-1973 թթ. եղել է Արթիկի միջշրջանային դատախազ, իսկ 1973 թ-ից մինչև 1984 թ.՝ Կիրովական քաղաքի դատախազ, ապա՝ ՀՀ դատախազության քննչական մասի պետ: 1986 թ. նշանակվել է ՀՀ տրանսպորտի դատախազ, այնուհետև՝ Անդրկովկասի տրանսպորտի դատախազի տեղակալ: 1991 -1996 թթ.՝ ՀՀ դատախազության քրեական բաժնի ավագ դատախազ: 1996 թ.՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, միաժամանակ՝ ՀՀ դատախազության քննչական վարչության պետ: 1999 թ. հունվարից աշխատում է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ: ՀՀ նախագահի 1997 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրով



խառատյանին շնորհվել է Արդարադատության 1-ին դասի պետական խորհրդականի դասային կոչում: Այսօր նա գեներալ-գնդապետ է:



**ԿԱՐԴԱՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՎԱԶԴԻ**: (ծն. 1946-ին): Ավարտել է Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումը (1965), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1971): Աշխատել է Երևանի էլեկտրասարքավորումների գործարանում (ճարտարագետ-հետազոտող, փորձարարական լաբորատորիայի վարիչ): 1978 թ. պաշտպանելով թեկնածուական թեզը՝ անցնում է դասախոսական աշխատանքի Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեսական էլեկտրատեխնիկայի ամբիոնում: 1980 թ. ստանում է է դոցենտի կոչում: 1998 թ. պաշտպանում է դոկտորական թեզը և ստանում տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1998 թ.-ից աշխատում է նույն ամբիոնում որպես պրոֆեսոր: .Կարդաշյանին առաջինն է հաջողվել ֆեռոմագնիսական նյութերը մագնիսացնել մինչև նրանց հագեցում՝ պահպանելով մագնիսացման կորերի պահանջվող ձևը և մագնիսացման սիմետրիկությունը, որը լուրջ ներդրում է նոր, ժամանակակից չափիչ սարքերի ստեղծման բնագավառում: Գ.Կարդաշյանի մի շարք գիտահետազոտական և մեթոդական մշակումները պարգևատրվել են ԽՍՀՄ և Հայաստանի ԺՏՆՑ մեդալներով ու դիպլոմներով: Գևորգ Կարդաշյանը ժամանակակից մետրոլոգիայի բնագավառում ունեցած գիտական ակնառու ներդրումների համար ընտրվել է Ռուսաստանի Դաշնության մետրոլոգիական ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս):



**ՀԱԿՈԲՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ՔԱՋԻԿԻ**: (ծն. 26.11.1937): 1954 թ. արծաթե մեդալով ավարտել է տեղի N1 միջնակարգ դպրոցը: Նույն թվին ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտը և ավարտել 1961թ.: 1968 թ. ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրան: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը և աշխատանքը շարունակել Սրտաբանության ինստիտուտում: Դասավանդել է բժշկական ուսումնարանում, ֆիզկուլտուրայի ինստիտուտում: Միաժամանակ համատեղության կարգով աշխատել է կենտրոնական շտապօգնության կայանում և Սալաթիայի սպորտդպրոցում:



**ՀԱԿՈԲՅԱՆ ՔԱՋԻԿ ԱՆԱՍՏԱՍԻ**: [ծն. 1903-1963]: 1930 թ. ընդունվել է Թբիլիսիի բանֆակը: Կրթությունը շարունակել է Թբիլիսիի Երկաթուղային ինստիտուտում: 1932-1934 թթ. եղել է Շահումյանի «Աշխատանք» արտելի վարչության նախագահը: 1934 թ. Վրաստանի կոմկուսի ուղեգրով գործուղվել է Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտ, որի լուծարումից հետո (1936) III կուրսից գիտական խորհուրդը Ք.Ա.Հակոբյանին տեղափոխում է Համամիութենական իրավաբանական ակադեմիա: 1938 թ. ստանում է իրավաբանի դիպլոմ: Մոսկվայից ուղեգրով գալիս է Հայաստան և աշխատում Արդարադատության նախարարությունում (ավագ վերահսկիչ,դատական հիմնարկների կենտրոնի ղեկավար): 1939 թ. օգոստոսի 8-ին աշխատանքի է անցնում Հայաստանի Կենտկոմում (արդարադատության կադրերի բաժնի վարիչ): 1941 թ. նշանակվում է Հայաստանի Արդարադատության ժողովրդական կոմիսար: 1943 թ. զորակոչվել է և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. փետրվարից մինչև 1948 թ.տնօրինել է Նախարարների խորհրդին կից Հրատարակչության և տպագրության բաժինը: 1949 թ-ից վարել է Երևանի քաղաքային կուսակցական կոմիտեի կադրերի բաժնի վարիչի տեղակալի պաշտոնը:



**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԳԵՎՈՐԳԻ** [ծն. 29.03.1940]: 1957/58 ուս. տարում արծաթե մեդալով ավարտել է N 1 միջնակարգ դպրոցը: 1961 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ, որն ավարտել է 1966 թ.: Մինչև 1970 թ. աշխատել է 26 կոմիսարների ՀԼԿԵՄ շրջկոմում (կազմ. բաժնի վարիչ, հրահանգիչ, հաշվառման բաժնի վարիչ), 26 կոմիսարների կուսշրջկոմում ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում հրահանգիչ, իսկ 1971 թ.՝ նույն շրջանի կուսկոմի առաջին քարտուղար (մինչև 1973): Այնուհետև եղել է Երևանի սրճարանների և ռեստորանների տրեստի կառավարիչ, «Հայձուկարդառ» միավորման պլանբաժնի պետ, Երևանի ձուկ վերամշակման կոմբինատի տնօրեն: ԽՍՀՄ ձկնային տնտեսության իրավասության ներքո 1981 թ. մայիսից նշանակվել է «Հայձուկարդառ» միավորման



կառավարիչ: Ընտրվել է 1995 թ. սեփականաշնորհված բաց բաժնետիրական ընկերության նախագահի, գործադիր տնօրեն:



**ՂԱԼԵՉՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՍԻՆԱՍԱՐԻ**: (ծն. 02.03. 1923): Նախնական կրթությունը ստացել է Ղարաքիլիսայի N 1 միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Երևանի Շահումյանի անվան դպրոցում, որն ավարտել է 1940 թ.: Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է: Մասնակցել է Հայրենական պատերազմին: 1944 թ. ծանր վիրավորվել է և զորացրվել: 1950 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ֆակուլտետը: «Հայգյուղէներգո»-ի արտադրատեխնիկական բաժնի ինժեներ, «Հայգլխէներգո»-ի պետի տեղակալ աշխատած տարիներին գործուն մասնակցություն է ունեցել հանրապետության էլեկտրիֆիկացման և միացյալ էներգահամակարգի ստեղծման գործում: 1968 թ. նշանակվել է Հայկական ատոմակայանի տնօրեն: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշ շքանշանով, Հայաստանի գերագույն խորհրդի պատվոգրով և մի շարք մեդալներով, արժանացել է Խորհրդային Միության պատվավոր էներգետիկ, Հանրապետության վաստակավոր ինժեներ կոչումներին: Արժանացել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով, Լենինգրադի պաշտպանության համար մեդալով:

**ՂԱԼԵՉՅԱՆ ՍԻՆԱՍԱՐ ԱՐԱՄԱՅԻՍԻ**: (ծն. 1887 - 1954): Սովորել է Թիֆլիսի քաղաքային դպրոցում: 1910-1917 թթ. աշխատել է Շուլավերի քաղաքային սպառկոոպի նախագահ: Հեղափոխական գործունեության համար 1918-1921 թթ. վրացական կառավարության կողմից բանտարկվել է: Վրաստանի խորհրդայնացումից հետո նշանակվել է Շուլավերի ռազմական կոմիտեի նախագահ: 1922-1924 թթ. ղեկավարել է «Աշխատանք» թերթը: Վրաստանի կենտկոմի որոշմամբ ուղարկվել է Հայաստան՝ Լոռի՝ կուսակցական աշխատանքի: 1934 թ. տեղափոխվել է Երևան և աշխատել անտառտնտեսության պետ: 1935 թ. ընտրվել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ: Պարգևատրվել է մի շարք մեդալներով:



**ՂԱՐԴԱՇՅԱՆ ԱՇՈՏ ՂԱՐԴԱՇԻ** - ծն. 1919 - 1989: 1940 թ. զորակոչվել է բանակ, սովորել Թբիլիսիի զինվորական դպրոցում, ընդունել ջոկի հրամանատարությունը, ապա ծառայել 162-րդ դիվիզիայի 227-րդ հրաձգային գնդում: 1941 թ. գերի է ընկնում: 1943 թ. փախչում է և միանում Ֆրանսիայի հարավում գործող կապիտան Բարդուղ Պետրոսյանի պարտիզանական ջոկատին: Գունդը ֆրանսիայի կառավարության կողմից պարգևատրվել է բրոնզե աստղակիր մարտական խաչով և մարտական դրոշով: Հաղթանակից հետո վերա-դարձել է Շահումյան, աշխատել առևտրի ոլորտում, ապա՝ տեղափոխվել Երևան: Սովորել է Առևտրական ինստիտուտի առևտրատնտեսական ֆակուլտետում՝ հեռակա կարգով: 1949 թ. հունիսի 14 ձերբակալվում է ՆԳԺԿ-ի Մառնեուլի շրջանային աշխատակիցների կողմից և աքսորվում Ալթայի երկրամաս: Բլագովեշչենսկի շրջանում աշխատել է որպես դարբնի օգնական: 1950 թ. հոկտեմբերի 22-ին Արևելասիբիրյան ռազմական օկրուգի զինվորական տրիբունալի որոշմամբ դատապարտվում է 25 տարի ազատազրկման: Նոր աքսորավայրում՝ Բերիայի ստեղծած Վերխոլագում (Վերխոյանսկ) մնում է մինչև իր արդարացումը՝ 1962 թ. փետրվարի 19: Աշխատել է Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում, որպես տնտեսվար: Ունի Ֆրանսիայի և ԽՍՀՄ բազմաթիվ շքանշաններ ու մեդալներ:



**ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԲԵԳԻԻ:** (Ծն. 12.04.1932): 1952 թ. ընդունվել է Կրասնոդարի մարզի Եյսկ քաղաքի Ռազմածովային ավիացիայի ուսումնարան: Ավարտելուց հետո մինչև 1958 թ. ծառայել է Կալինինգրադի մարզում, որպես սպա: 1961 թ. աշխատանքի է անցել Վրաստանի Ներքին գործերի նախարարությունում: 1968 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժինը: Մինչև 1972 թ. աշխատել է Մառնեուլի, Բոլնիսի, Թեթրի-Ծղարոյի և Դմանիսի ներքին գործերի բաժիններում (ավագ պետավտոտեսուչ), Մառնեուլում (քննիչ), 1972 թ.՝ Նալչիկի ՆԳ նախարարությունում (շտաբի ավագ տեսուչ), 1973 թ.՝ Հայաստանի ՆԳ նախարարությունում (կադրերի բաժնի ավագ տեսուչ), այնուհետև՝ Հրազդան, Աբովյան քաղաքների ու Սևանի ավազանի միջշրջանային պետավտոտեսչությունում (հաշվառման և քննչական բաժանմունքի պետ): 1993 թ-ից առ այսօր վարում է Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնը:





**ՄԵԼՔԻԿՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԳԱԳԻԿԻ:** (Ծն. 1940): Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատել է Գորի քաղաքում, որպես շինարար: 1959 թ. ուսանել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: 1964 թ-ից որպես հրահանգիչ և բաժնի վարիչ է աշխատել Լենինյան շրջկոմում: 1968-1979 թթ. ՀԼԿԵՄ Կենտկոմում աշխատել է նախ հրահանգիչ,ապա՝ բաժնի վարիչի տեղակալ, այնուհետև՝ Կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչ: 1979 թ. ընտրվել է Նաիրիի շրջկոմի քարտուղար, իսկ 1985-ին՝ Աշտարակի շրջկոմի երկրորդ քարտուղար,իսկ 1987 թ-ից՝ առաջին քարտուղար: 1990 թ. անցել է աշխատանքի ՀԿԿ Կենտկոմում (գործերի կառավարիչ): 1991-1999 թթ. աշխատել է որպես տպագրական ձեռնարկության տնօրեն: 1999 թ. մայիսի 15-ից Հայ-ռուսական պետական համալսարանի պրոռեկտորն է: Հայաստանի կառավարության կողմից պարգևատրվել է մեդալներով:



**ՄԻՐԱՔՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՂԱԲԵԿԻ:** Կոնո, Միր Կոնո, [6.11.1866 – 21.3.1942], թաղված է Երևանում: Նախնական կրթությունն ստացել է Սանահինի Ս. Աստվածածին վանքի դպրոցում, ապա՝ ծննդավայրում: 1888-ին ավարտել է Գորիի ուսուցչական սեմինարիան, 1889-ից զբաղվել է մանկավարժությամբ: 1924-ին տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Ձերժինսկու անվան բարձր տիպի դպրոցում: 1887-ին «Աղբյուր» ամսագրում տպագրվել է Միրաքյանի առաջին բանաստեղծությունը («Երեք վարդ»)՝ Կոնո ծածկանունով, այնուհետև, 1896-ից հրատարակվել են «Առվակները», «Սայլորդի երգը», «Եփրատի կույսը», «Հիվանդ մշակը», «Գեղջուկի հրաժեշտը», «Վերջին հույս» և այլ բանաստեղծություններ, որոնց մեջ տվել է ժամանակի դաժան իրականության պատկերը: **1901-ին «Մուրճ» ամսագրում լույս է տեսել «Լալվարի որսը» հայտնի պոեմը** (ռուս, հրատ. 1942 թ.), որտեղ հեղինակը գեղարվեստական ցայտուն արտահայտչամիջոցներով նկարագրել է նահապետական գյուղի կենցաղը, կյանքն ու սովորույթները: «Լալվարի որսի» տեքստով գրվել են երգեր, պիես, օպերա, ստեղծվել է կինոնկար: Պոեմը թարգմանվել է պարսկ. (թարգմանիչ՝ Աղա Մուսա Մարուֆի): Միրաքյանի խորհրդային շրջանում գրած ստեղծագործություններից «Մանուշի հարսանիքը» (1927), «Նոր գյուղի շեմքին» (1927), «Խոզարածի կինը» (1928) պիեսները նվիրված են գյուղի սոցիալիստական վերակառուցմանը և դրա հետ կապված դժվարություններին: Գրել է նաև մանկական պատմվածքներ:



**ԱՍԼԱՆՅԱՆ ՍԱՆԴՈՒԽՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ** - ծնվել է1920 թ.: 1937 թ. ավարտել է Բաքվի մանկավարժական տեխնիկումը: 1937-1938 ուս. տարում աշխատել է որպես մանկավարժ հայրենի Սերենիա գյուղում (Ախալքալաքի շրջան): 1942 թ. ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետները: 1941 թ. աշխատել է սանիտարական դրուժինայի քաղղեկ (վիրավորներ են տեղափոխել կռվի դաշտից): 1942թ. զորակոչվել է բանակ, ծառայել է օդային պաշտպանության 5-րդ օդային միավորման գնդում: Զորացրվելուց հետո 1946-49 ուս. տարիներին աշխատել է Ստեփանակերտի շրջանի Ջանախչիի միջն. դպրոցում: 1949-1950 թթ.՝ Խնձրստանի միջն. դպրոցի վարիչ: 1950-ից աշխատել է Շահումյանի դպրոցներում՝ որպես պատմության, աշխարհագրության և հոգեբանության ուսուցչուհի, երեկոյան բաներիտ դպրոցի տնօրեն, նաև Մառնեուլի ժողովուրդների բարեկամության թանգարանի տնօրեն, շրջանի թանգարանների մեթոդիստ: Շահումյանը նրան ճանաչում է որպես հայրենասեր, բարեխիղճ, նախաձեռնող անձնավորության, հասարակական միջոցառումների ակտիվ կազմակերպչի:

Պարգևատրված է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով, 15 մեդալներով, պատվոգրերով:

## ՍՐՏԻ ԽՈՍՔ՝ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՍ

*...Դու մի բուռ, մի ափ*
***Դու մի սրտի չափ...***

*Մ. Մարգարյան*

Ուրիշ կերպ չեմ կարող բնութագրել Ձեզ, սիրելի ընկ. Ասլանյան:

Ուղղակի գերխիտ զանգված, անսպառ ներուժ, անհնարինը հնարավոր դարձնող համառություն, ինքնայրման աստիճանի աշխատասիրություն և անընդհատ ճառագող դրական կենսահոսանքներ, տանող, ներող ու սիրող բարություն: Դուք մեր սերնդի այն ապահով ջերմոցը եղաք, որի շնչի տակ աճեցինք ու հասակ առանք մենք՝ խոնարհված Ձեր մեծության ու վաստակի առաջ: Դուք Ջավախքի պարգևն եք աշխարհից մոռացված Շուլավեր-Շահումյանին: Տակավին երիտասարդ աղջնակ՝ Դուք զինվորի համազգեստ հագաք, և այն Ձեզ շա՜տ ներդաշնակեց... Դուք կարողացաք արմատակալել 50-ական թվականների Շահումյանում: Եվ այսօր էլ չի



փարատվում զարմանքս, թե բազմանդամ ընտանիքից բացի ինչպես հանդգնեցիք Ձեր նիհարիկ ուսերին առնել բազում պարտականություններ...

Ընկ. Ասլանյան, մենք՝ Ձեր սաները, վաղուց պապիկ-տատիկներ ենք և Ձեր անունը տալիս ենք խորին պատկառանքով:

Երախտապարտ ենք նաև այս լավ նախաձեռնության համար:

*Գ.Հ. Մարգարյան*



**ՆԱԴԻՐՅԱՆ (Ց) ԿԱՏԱՐԻՆԵ (ԵԿԱՏԵՐԻՆԱ) ԱՄԱՏՈՒՆՈՒ:** (Ծն. ? - 15.04.1908): Կենսագրական մանրամասները կցկտուր են: Հայտնի է, որ 1890 թ. Շուլավերում օրիորդաց դպրոցի շենք կառուցելու խնդիրը գյուղացիները կապել էին նրա հետ, քանի որ նույն տեղում այդ ժամանակ արդեն գոյություն չունեցող դպրոցի նախկին շենքն էլ կառուցել էր նրա ամուսինը: Թեև գործի ընթացքն անհայտ է, բայց նույն թվականին օրիորդաց դպրոցի բացման փաստը հուշում է, որ նա արդարացրել է շուլավերցիների հույսերը: 1899 թ. Թիֆլիսում 600 սաժեն հողակտոր էր նվիրել «ժողովրդական տան» կառուցման համար (այդ տեղում ավելի ուշ կառուցվում է Ներսիսյան դպրոցի նոր շենքը): Նույն թվականին 200 ռուբլի էր նվիրել Գորու գավառի Կեխիս-Ջվարի գյուղի (վրացաբնակ) դպրոցին՝ անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: 1901 թ. Թիֆլիսի Արսենալ պողոտայի վրա Ներսիսյան հոգևոր դպրոցի նոր շենքի կառուցման նպատակով էջմիածնի վանքին էր նվիրել ևս 4 դեսյատին հողակտոր: Նույն թվականին Վանի Սալնապատի իգական որբանոցի 55 աղջիկներից 25-ը պահվում էին նրա նվիրատվության հաշվին: Կարճատև հիվանդությունից հետո բարեգործ տիկինը վախճանվում է թիֆլիսյան իր սեփական տանը (Օրբելյանովսկայա, 32): **Աճյունը փոխադրվում է Շուլավեր և հողին հանձնվում ապրիլի 21-ին Սբ. Մեսրոպ եկեղեցու բակում՝ ամուսնու գերեզմանի կողքին:**

**ՆԱԴԻՐՅԱՆ (Ց) ՌՈՄԱՆՈՍ ՊՈՂՈՍԻ:** (Ծն. 1815 - 1882): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում: Որպես բժիշկ՝ աշխատել է նախ Ռուսաստանում, ապա՝ Թիֆլիսում: Հետագայում թողել է բժշկությունն ու աշխատանքի անցել առևտրական Թամամշևի մոտ: Ամուսնացած էր Ամատունու դուստր Եկատերինայի հետ: Վորոնցովի փոխարքայության ժամանակ

հաց է մատակարարել կովկասյան զորքերին: Արքունական դպրոցի պատվավոր հոգաբարձուներից էր: Թիֆլիսի երաժշտական ընկերության հիմնադիր Սոբոլշչիկովի օգնականն էր: Նյութապես օժանդակել է Տրապիզոնի հայ դպրոցներին: Օգնություն է ցույց տվել Վանի սովյալներին: Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի անունով 500 սույլի (դրամի միավոր) է ուղարկել, որպես օգնություն: 1858 թ. Շուլավերում դպրոց է բացել և իր ծախսերով պահել մինչև 1872 թ.: Այդ դպրոցն ավարտած լավագույն աշակերտներին իր ծախսերով տեղավորել է Ներսիսյան դպրոցում: Թիֆլիսում բժշկական ընկերության հիմնադիր անդամներից էր: Մասնակցել է Թիֆլիսում Կարմիր խաչի շենքի նորոգման աշխատանքներին: 1870 թ. իր աջակցությունն է ցույց տվել Շուլավերում ջրանցք կառուցելու գործում: Պարգևատրվել է Ստանիսլավի, Աննա I և II աստիճանի, Վլադիմիր և պարսկական կառավարությունից՝ Արև և Առյուծ շքանշաններով: Շուլավերի գրադարանին է նվիրել մեծաքանակ գրականություն, «Հյուսիսափայլ» և «Արևելյան մամուլ» ամսագրերի բազմաթիվ համարներ: **Թաղվել է Սբ. Մեսրոպ եկեղեցու հարավային մուտքի առջև,** որտեղ հետագայում ամփոփվել է նաև նրա կնոջ՝ Եկատերինայի աճյունը:



**ՇԼԵՊՉՅԱՆ ՆԱՐԱ ՍՈՒՐԵՆԻ** [ծն. 1935, ծառայողի ընտանիքում]: 1957 թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտը: Ուսանողական տարիներին աշխատել է նաև Հայաստանի պետական ռադիոկոմիտեում՝ որպես հաղորդավար, ապա նաև Հայաստանի պետական հեռուստատեսությունում՝ որպես գլխավոր հաղորդավար: Ելույթները աչքի են ընկնում մասնագիտական բարձր վարպետությամբ, ընթերցանության գերազանց կուլտուրայով, որոնք էլ նրան կարգել են լավագույն հաղորդավարների շարքը: Հայաստանի Գերագույն խորհրդի Նախագահության հրամանագրով 1972 թ. նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր, իսկ 1986-ին՝ ժողովրդական դերասանուհու կոչում: Պարգևատրված է բազմաթիվ դիպլոմներով, գովասանագրերով ու մեդալներով:

**ՇԼԵՊՉՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ** [ծն. 1902 - 1988]: Սովորել է 1909-1914 թթ. ծննդավայրի ռեալական ուսումնարանում: Լինելով հեղափոխական՝ կատարել է կոմերիտական հանձնարարություններ: Ընտրվել է Բորչալուի շրջանի կոմերիտմիության քարտուղար:





Խորհրդային բանակում ծառայելուց հետո տեղափոխվել է Երևան, ընդունվել մանկավարժական ինստիտուտ և ավարտել 1931 թ.: 1937-1941 թթ. ուսանել է համալսարանի ասպիրանտուրայում (հայ ժողովրդի պատմության բաժին) և 1956 թ. ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Մասնակցել է Հայրենական պատերազմին: Ծառայել է առաջին Բելոռուսական ռազմաճակատի 16-րդ ավիացիոն զորամասում: 1946 թ. սեպտեմբերին զորացրվել է: 1957 թ-ից դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնում, որպես ավագ դասախոս: Հեղինակ է հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների: Պարգևատրվել է մեդալներով և գովասանագրերով:



**ՉԻՐՔԻՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԳԻԳՈՒԼԻ** [ծն. 1922 - 1990]: 1939-1941 թթ. ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական պատերազմին: Աշխատել է գյուղի դպրոցում՝ որպես զինղեկ: 1946 թ. ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուծական ֆակուլտետ և 1951 թ. գերազանց ավարտել այն: 1953 թ. ընդունվել է ասպիրանտուրա, պաշտպանել թեկնածուական թեզ և ստացել գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1957 թ. աշխատանքի է անցել ինստիտուտի գյուղատնտեսական կենդանիների կերակրման ամբիոնում՝ որպես դոցենտ: Տարբեր ժամանակներում վարել է ինստիտուտի ուսումնափորձնական տնտեսության տնօրենի, հեռակա ուսուցման գծով՝ պրոռեկտորի և դեկանի պաշտոնները: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով, մի շարք մեդալներով և պատվոգրերով:



**ՉՈԲԱՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՀԱՆԻ** [ծն. 1923] 1941 թ. կամավոր մասնակցել է Հայրենական պատերազմին: Մարտական սխրանքների համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի» II աստիճանի, երկու «Կարմիր աստղ» շքանշաններով և մարտական բազմաթիվ մեդալներով: 1947 թ. զորացրվելուց հետո ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստի-

տուտ և 1952 թ. ավարտել այն: 1965-1971 թթ. եղել է Նոյեմբերյանի շրջանի գյուղատնտե-սական արտադրական վարչության պետ: 1971-1977 թթ. նրա ղեկավարությամբ կառուցվել և շահագործման է հանձնվել Նաիրիի շրջանի մատղաշ անասունների աճեցման և բտման համալիրը, ինչպես նաև՝ Ձորավան բանվորական ավանը: 1977-1986 թթ. ղեկավարել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության տոհմային անասնաբուծության վարչությունը: Գյուղատնտեսության բնագավառում ակնառու ծառայությունների համար 1965 թ. ՀՀ գերագույն խորհրդի կողմից նրան շնորհվել է վաստակավոր անասնաբույժի պատվավոր կոչում:

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ՍԱՐԳՍԻ:** (Ծն.1943 թ.): Ավարտել է Շահումյանի միջնակարգ դպրոցը արծաթե մեդալով: 1961 թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ: Այն ավարտելով՝ գործուղվել «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորում: Կատարելագործել է էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրությունը: Գյուտարար-ինժեներ է:

**ՏԵՐ-ՄԵԼԻՔՍԵԴԵԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ:** Ծնվ. է 1842 թ.՝ քահանայի ընտանիքում: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Սկզբնական շրջանում աշխատել է Ղազախի շրջանի Գետաշեն գյուղում՝ որպես ուսուցիչ, իսկ 1876 թ-ից՝ Շուլավերի՝ իր ուժերով կազմակերպած ծխական դպրոցում: Ծանոթ էր ֆրանսիական փիլիսոփայությանը, ուներ թարգմանություններ ֆրանսերենից (Պրուդոն, Պեստալոցի): Հետագայում տեղափոխվում է Թիֆլիս ու հրատարակում «Աշխատանք» թերթը: Մահացել է 1882 թ.: Ունի աշխատություններ լուսավորության, մանկավարժության, լեզվի, դպրոցի և թատրոնի վերաբերյալ: Գիտական աշխատություններում դրսևորել է աթեիստական աշխարհայացք:



**ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆԻ:** [20.03.1912 - 1993]: 1929 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և ավարտել 1932 թ.: Դասավանդել է Երևանի պետական համալսարանում, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական և մանկավարժական ինստիտուտներում: Ավարտելով Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրան՝ 1940 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը՝՝ ֆունկցիաների տեսության գծով: 1940 թ. զորակոչվում է ու մասնակցում Հայրենական պատերազմին: 1942 թ. մայիսին ծանր վիրավորվում է և վերադառնում դասախոսական աշխատանքի: 1942 թ. նրան շնորհ-վում է դոցենտի, իսկ 1971-ին՝ պրոֆեսորի կոչում: 1944-49 թթ. եղել է համալսարանի մաթեմատիկական անալիզի ամբիոնի, իսկ 1949-1981 թթ.՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ: 1943-49 թթ. կատարել է ֆիզիկամաթեմատիկական, իսկ 1968-70 թթ.՝ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետների դեկանի պարտականությունները: Եղել է ՀԽՍՀ ԳԱ գիտության և տեխնիկայի պատմության խորհրդի մաթեմատիկայի ու մեխանիկայի պատմության սեկցիայի, ՀԽՍՀ լուսավորության նախարարության մաթեմատիկայի ուսումնամեթոդական խորհրդի, ՀԽՍՀ լուսավորության և բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունների առընթեր մաթեմատիկական տերմինաբանության հանձնաժողովի նախագահ, ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի հրատարակած ռուս-հայերեն և ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանների գիտական խորհրդատու՝ մաթեմատիկական տերմինների գծով, ինչպես նաև մասնակցել է «Հայկական խորհրդային հանրագիտարանի» աշխատանքներին՝ որպես հանրագիտարանի մաթեմատիկայի գիտաճյուղային խորհրդի նախագահի տեղակալ: «Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց» երկհատորանոց բուհական դասագրքի հեղինակն է: Պարգևատրվել է Կարմիր աստղ, Պատվո նշան շքանշաններով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով: 1970 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



**ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ:** [ծն. 20.9.1917] ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1977, թղթ. անդամ), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1974): ԽՄԿԿ անդամ 1943-ից: Ավարտել է Երևանի համալսարանի քիմիական ֆակուլտետը (1941): Մասնակցել է Հայրենական պատերազմին (1941-1945): Զորացրվելուց հետո աշխատել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում, 1955-ից՝ լաբորատորիայի վարիչ, 1967-ից՝ տնօրեն: 1968-ից աշխատել է Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում, 1970-ից՝ տնօրեն: Վարդանյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են ացետիլենի քիմիային, օրգանական միացությունների կառուցվածքի և կենսաբանական ակտիվության փոխադարձ կապի, նոր դեղանյութերի և օրգանիզմի վրա նրանց ներգործության ուսումնասիրման հարցերին: Մշակել է վինիլացետիլենների, երրորդային վինիլացետիլենային սպիրտների

(առանց լուծիչի) երկվինիլկենտրոնների ստացման նոր մատչելի եղանակներ: Հայտնաբերել է չհագեցած միացությունների անոմալ տեղակալման ռեակցիա, որն ընթանում է ացետիլեն-ալլենկումուլենային վերախմբավորմամբ: Սինթեզել է ազոտ, թթվածին և ծծումբ պարունակող հետերոցիկլիկային միացություններ, հայտնաբերել վեցանդամանի հետերոցիկլիկային կետոնների փոխադարձ անցման ռեակցիա: Նրա սինթեզած վեցանդամանի կետոնների հետազոտությունների շնորհիվ ստեղծվեց սիրտանոթային, հակամորֆինային և քնբերցնող հատկություններ ունեցող կոնդենսված հետերոցիկլային միացությունների՝ քառահիդրոպիրանային, թիոպիրինային և պիպերիդինային ցիկլերի հետ կոնդենսացված ինդոլի օքսազոլների, պիրազոլների, հետերոստերոիդների և նրանց նմանակների ստացման ժամանակակից ուղղությունը: Վարդանյանը սինթեզել է պիպերիդինային միացություններ, որոնք որպես դեղամիջոցներ ենթարկվում են կլինիկական հետազոտման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Կարմիր աստղ, Հայրենական պատերազմի I և II աստիճանի շքանշաններով, մեդալներով:



**ՈՒԼԻԲԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**: [1886-1938], բանվոր-հեղափոխական, Անդրկովկասում հեղափոխական շարժումների, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման ու ամրապնդման համար պայքարի մասնակից: Կոմունիստական կուսակցության անդամ 1906-ից: 1914-ին զորակոչվել է բանակ և ուղարկվել Կովկասյան ռազմաճակատ: 1917-ի Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել է Շուլավեր, ընտրվել ՌՍԴԲ(բ)Կ գավառային կոմիտեի քարտուղար: 1918-ին Թիֆլիսում հեղափոխական գործունեության համար ձերբակալվել և արտաքսվել է Վրաստանի սահմաններից: 1919-ին եկել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) և աշխատել երկաթուղային դեպոյում, շարունակել հեղափոխական աշխատանքը: Դաշնակների կողմից ձերբակալվել և չորս ամիս ներկալվել է Ալեքսանդրապոլի բանտում: Մասնակցել է Մայիսյան ապստամբությանը (1920), ընտրվել Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի կազմում: Ապստամբությունը ճնշելուց հետո մեկնել է Բաքու, որտեղ ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի արտասահմանյան բյուրոյի կազմում: Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակից հետո արհմիութենական ղեկավար աշխատանք է կատարել Երևանում և Լենինականում:





**ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ ԵՂԻՇԵԻ**

- «Ես Մարո Մարգարյանն եմ», - ասում է նա՝ հեռախոսով խոսելիս, կամ տաքսի նստելիս, ասում է պարզ ու սրտանց: Նա գիտի, որ իր անունը ուրախությամբ է արձագանքվում բոլորի մոտ: Նա 81 տարեկան է, նա կանացի է և շատ սրտառուչ, նա լեցուն է հետաքրքրությամբ և մտահոգություններով կյանքի և մարդկանց հանդեպ, նա գործունյա է, տաքսիրտ, նվիրվող:

Նրա պոեզիան համարում են դասական, բացառիկներից, բայց ձևն ու մտածելակերպը վերին աստիճանի ժամանակակից են: Նրա քաղաքացիական դիրքորոշումը գործնական բարությունն է և բյուրեղյա ազնվությունը: Երկրի դրամատիկ անցումային ժամանակներում նա առանց տատանումների ընտրեց դեմոկրատիան և անկախությունը իր ժողովրդի համար և մնաց հավատարիմ իր սկզբունքներին՝ չնայած բոլոր բարդություններին և դժվարություններին:

Նրա բանաստեղծությունները ռուսերեն են թարգմանել Աննա Ախմատովան, Դավիթ Սամոյլովը, Մարիա Պետրովիխը: Վալերին Պետրովը թարգմանել է բուլղարերեն, Դեսանկա Մաքսիմովիչը՝ սերբերեն: Նրա բանաստեղծությունները թարգմանվել են իսպաներեն և գերմաներեն, վրացերեն, լիտվերեն, ռումիներեն, ֆրանսերեն, անգլերեն:

Նրա անհատականությունը միշտ գրավել է ամենավառ, մեծահռչակ մարդկանց և ամենապարզ հոգիներին, նա ինքն էլ պարզ է ու նշանակալից միաժամանակ: Լինում են այսպիսի ժողովրդական, ժողովրդի կողմից սիրված խառնվածքներ: Մեզ համար մեծ ուրախություն է, որ նա մեր ժամանակակիցն է, մենք տեսնում ենք նրան, զրուցում ենք իր հետ, զգացված համակվում նրա շռայլ սիրով, որը նա սփռում է իր շուրջը միշտ և ամենուր:

Մեր մեծ հայրենակիցը՝ ամերիկացի գրող Վիլյամ Սարոյանը իր 70-ամյա հոբելյանին ասաց նրա մասին (Սարոյանը եկել էր իր հոբելյանը նշելու Երևանում). «Նայելով Մարոյին, ես հասկանում եմ հայ կնոջ ողջ էությունը, դասեր է ամբողջապես»: Գրական քննադատների բնորոշումով մեր հայ Ֆոլկները՝ Հրանտ Մաթևոսյանը ասել է. «Մարոն այն թրթռուն, անըմբռնելի, անհասանելի ոգին է, որը հարյուր տարին մի անգամ է հայտնվում, որ հիշեցնի մեզ, անհայտի, առեղծվածայինի մասին, որպեսզի մի վայրկյանով բացի մեր առջև ստեղծագործության գաղտնիքն ու կախարդանքը: Ինչ ածական կդնեի ես նրա անվան առջև՝ բանաստեղծ, ամեն տողով բանաստեղծ, միշտ բանաստեղծ»:

Նրա մայրը բանաստեղծություններ է գրելիս եղել, նրա հայրը արտիստիկ խառնվածքով արվեստասեր մարդ էր, ձմռան երեկոներին իր երեխաների համար կարդում էր Եսենին ու Նիցշե: Ծնողները վախճանվել են շատ վաղ: Նրա ամուսինը արվեստագետ ազնվական Սարգիս Բայանդուրն է, երկար տարիների «Արվեստ» հանդեսի խմբագիրը: Նրա տղան նկարիչ է, դուստրը` թարգմանչուհի: Նրա թոռան անունը` Հայկ Յոհան է, նա ոսկեհեր է և կապուտաչյա: Հայկը և իր քույրը` Անուշիկը նրան տեսնելիս իսկույն կանչում են` Մարո, որովհետև նա` Մարոն է բոլորի համար: Նա Մարո Մարգարյանն է:

**ԱՆԱՀԻՏ ԲԱՅԱՆԴՈՒՐ**

## Մարո Մարգարյան
## ԳՅՈՒՂ ԻՄ

Գյուղ իմ, գյուղ իմ ծաղկաշոր,
Չթե աղլուխ կապած մայր,
Քեզ իմ սերը ծխացող,
Քեզ իմ կարոտը անծայր:

Ես մեղավոր որդու պես,
Դու մոր նման միշտ ներող,
Միշտ ժպիտը շուրթերիդ,
Միշտ հոգնած ու համբերող:

Լո՜ւռ, սրտաբեկ ու կարոտ
Ճանապարհին իմ նայող,
Ուրիշների դեմ շռայլ,
Ինքդ քեզնից խնայող:

Գամ ես նորից գիրկը քո`
Խելքի եկած որդու պես.
Ինչ որ ունեմ աշխարհում,
Ողջը նվեր բերեմ քեզ:

Տամ ուժերս քո այգուն,
Քո քարքարոտ չոր հողին,
Քո արտերին արևհար,
Քո ծարաված խաղողին:

Կածաններին քո փոշոտ,
Անձրևներին քո տխուր,
Հասկերին` ծանր ու խոշոր,
Աղբյուրներին` համր ու լուռ...

Եվ մնացած կյանքս տամ
Քո լուսնաշաղ գիշերին,
Ճամփաներին քո այրված,
Քո գետնաքափ ուժերին...
Եվ կարոտած, կարոտած
Փարվեմ քո տաք փեշերին:

* * *

Քարի վրա մանկան ծիծաղ,
Հորթի, գառան տրտինգ ու խաղ,
Մամռոտ ու լուռ
Ասքերի դուռ,
Հավատարիմ,
Հավատակուռ
Ու լայնալանջ քարի վրա.
Տկլոր վազող մանուկների
Ծափ ու քրքիջ,
Ճախրանք ու ճիչ,
Հին օրհնություն,
Քրոջ գորով,
Մայրիկի կանչ քարի վրա:

## ՀԱՅՐԵՆԻ ՄԵՐ ՀՈՂ

Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ,
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր,
Հայրենի իմ հող.
Ակունք քարիքի,
Բույրի ու բերքի,
Լույս դառած իմ սեր`
Իմ հրաշք երկիր.
Իմ սրտից պոկված
Առաջին բառըս,
Մի հատիկ զավակ`
Թանկ մինուճարըս.
Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ:



**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ** - Ծնվ. է 1938 թ. : Միջնակարգն ավարտել է 1955-56 ուս. տարում: 1963 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվա գրական ֆակուլտետը և աշխատանքի է անցել Աշտարակի շրջանի Բյուրականի միջն. դպրոցում: 1978-92 թվականներին աշխատել է լուսավորության նախարարության մեթոդկաբինետում որպես հայոց լեզվի և գրականության մեթոդիստ: 1992-ից Երևանի թ 141 դպրոցի տնօրենն է: Հեղինակ է մեթոդական ձեռնարկների և հրապարակախոսական հոդվածների:

* * *

Ալիքների կարոտից
ճաքճքած կողերով նավակը
մեռնում էր շիկացած ավազի վրա:
Անկատար երազների տառապանքից
նավակը խոնավ երազներ է հյուսում
իր թախծոտ հուշերի կապույտ հպումներից:
Ափը ծգում էր կոհակներին
և նրանց ականջին շշնջում
նավակի փշրված թևերի
ջահելության առասպելը:

* * *

Մեղեդին կարոտի նման
թափանցիկ մի ջերմությամբ
ալիքվում էր դահլիճի մթնշաղում:
Այն հաղորդվել էր ուզում
գունազեղ ամբոխի էության հետ,
իսկ տենդագին ձեռքերի ապտակներից
շանթահար աստղերի նման
նրանք թպրտում էին
ամբոխի ոտքերի տակ:



* * *

Հանգստացի՛ր, քամի, որ շաչում ես այդպես
Առնական ու ըմբոստ երազների թևով,
Մի՛ վրդովվիր ամեն խենթ ու խելառ խոսքից,
Խենթ կոչվելուց առաջ համբերատար եղիր:
Եվ իմաստուն եղիր հողմացրիվ երթիդ
Անդունդներում խավար՝ հեծկլտանքիդ պահին:
Վրդովվում ես, գիտեմ, սառը հոսանքներից,
Որ գալիս են հանգիստ՝ առանց բվվոցների,
Որ սիրում են բանտել շղթաներով անտես
Թռիչքներդ անսանձ՝ ծնված կարոտներից:
Զգո՛ւյշ եղիր վազքիդ անհուն սլացքներում,
Որ չխառնես հանկարծ պարսը մեղուների,
Ծաղիկների նիրհող շնչին հանդիպելիս՝
Մեռիր մի ակնթարթ՝ հանուն մեղուների:
Եվ գուրգուրիր սիրով զեփյուռներին նազող,
Որ նեկտար են ցրում երազներիդ շեմին
Եվ անհանգիստ ըմպիր լույսը ժպիտների
Աբովյանի մայթին քո փեշերին փարված
Կարաբալա խենթի:
Բայց դու լեզու չունես, թափառական իմ խենթ,
Որ մեզ մեկնես ցավիդ ակունքները խոնավ,
Դու կակազել գիտես ու շառաչել գիտես
Քո մոլեգնող պարի հորդեհներում ծարավ:
Թռի՛ր, քամի, թռի՛ր, անսանձ մոլեգնությամբ՝
Խտացրած քո մեջ ցավը պտտահողմի,
Առ քո ափերի մեջ կնճիռները օրվա,
Խառնիր հառաչանքին անհուն օվկիանների:
Մարմինները հաճախ գիտեն ծռվել, ճկվել,
Փույթ չէ, թե որ նրանք կոշտ կամ փուխր լինեն,
Հոգիների հոգնած մարմինների հանդեպ
Դու կհառնես, անշուշտ, հովիկներով թեթև:
Քանզի նրանք շատ են շնչել օրվա փոշին
Եվ թևերն են պարզել ընդվզումիդ անափ,
Հյուսիր քո թևերին երազները նրանց
Եվ ուղեկիցը դարձրու քո հեթանոս պարի:
Թռի՛ր, քամի, թռի՛ր, քո տարածքով անկանգ
Եվ ամպերին խառնիր ժամանակի փոշին
Պտտահողմի ոտքով,
Որ քո սրտից ծնված արցունքները կապույտ
Պայթեն հողին միայն երջանկության ճիչով:



**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻՇԵԻ:** Ծնվել է 1913 թ.: Ինքը չորս տարեկան, քույրը՝ Մարո Մարգարյանը՝ երկու, մահացել է մայրը: Շուլավերի (Շահումյանի) միջնակարգ դպրոցն ավարտել է 1930 թ.՝ ուսուցիչների կողմից շնորհված «Մաթեմատիկոս» մականունով: Երկու տարի դասավանդել է շրջանում: 1933 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1939 թ. ընդունվել է Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրան: Երևան է վերադարձել 1941 թ.: Մինչև 1943 թ. ծառայել է Պարսկաստանում տեղակայված խորհրդային բանակում: 1944 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի նախաձեռնությամբ, համատեղ ջանքերով 1943 թ. հիմնադրում են հետագայում համաշխարհային հռչակի արժանացած Բյուրականի աստղադիտարանը: 1943-51 թթ. եղել է ավագ գիտաշխատող, 1953-56-ը՝ տնօրեն Վիկտոր Համբարձումյանի տեղակալ, 1957-ից՝ որպես Գալակտիկաների ուսումնասիրության բաժնի վարիչ: 1943-50 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում: 1950 թ. գիտական խոշոր հայտնագործության համար Վ. Համբարձումյանի հետ արժանացել է պետական մրցանակի: Ակնառու ծառայությունների համար 1961 թ. արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման: 1964-ից ԽՍՀՄ ԳԱ-ի աստղագիտական խորհրդի անդամ էր: 1971-ից՝ Հայաստանի ԳԱ-ի ակադեմիկոս: 1976-79 թթ.՝ Միջազգային աստղագիտական ընկերության գալակտիկաների բաժանմունքի պրեզիդենտ:

Մարգարյանը վախճանվեց 1985 թ. և թաղված է աստղադիտարանի մերձակա փոքրիկ գերեզմանոցում (1999-ին կողքին հանգրվանեց քույրը՝ Մարո Մարգարյանը):

Մարգարյանի 100-ից ավելի գիտական աշխատանքները վերաբերում են աստղային ու արտագալակտիկ աստղագիտության հիմնահարցերին: Մասնակցել է աստղերի բաշխման մեջ դիտվող ֆլուկտուացիների տեսության մշակմանը: Դիտողական տվյալների հիման վրա հաստատել է, որ աստղասփյուռները լայնանում են: Մշակել է հատուկ մեթոդ, որի հիման վրա 1965-ից հայտնաբերել է հատուկ դասի օբյեկ-տներ, որոնք կոչվում են իր անունով՝ Մարգարյանի գալակտիկաներ (քանակը՝ 2000-ից ավելի):

Մարգարյանը մոլեռանդ հավատացյալի նվիրվածությամբ էր վերաբերվում գիտությանը: Նա արժանացավ ակադեմիկոսի կոչման, թեև գիտական աստիճանով թեկնածու էր: Եվ այդ հանգամանքը բնավ չէր անհանգստացնում նրան: Ամպամած երեկոները, երբ զրկված էր լինում դիտումների հնարավորությունից, երբեմն այցի էի գնում: Ու մի անգամ էլ ինձ թույլ տվեցի հարցնել, թե ինչո՞ւ չի զբաղվում դոկտորական թեզի պաշտպանությամբ: Նա մեծահոգաբար ժպտաց և ասաց. «Գիտությունը գնահատողները գիտնականին չափում են ոչ թե նրա աստիճանով, այլ գործերով»: Ապա ավելացրեց՝ «Գալիլեյը կամ Կոպեռնիկոսն ի՞նչ աստիճաններ ունեին»: Ես լռեցի, ամեն ինչ պարզ էր...

Բ.Մարգարյանն, իրոք, գիտության մարդ էր, ցերեկը հանգստանում էր մի քանի ժամ, ապա զննում-համակարգում էր գիշերային դիտածները, իսկ երեկոյան խոհական ընթացքով քայլերն ուղղում էր դեպի տիեզերքի ... պատուհանը՝ 2,6 մետր տրամագծով աստղադիտակը: Բնակվելով երկրի վրա՝ նա ապրում էր երկնքում ու երկնքով: Լավ պատկերացնելով իր անշտկելի առողջական վիճակը՝ ժամանակն օգտագործում էր խիստ նպատակային: Նա թուլություն չուներ փառքի ու գովեստի նկատմամբ, ոչ մի լրագրողի բախտ չվիճակվեց հարցազրույց ունենալ նրա հետ, որի պատճառով էլ երբեմն ոմանք տրտնջում էին, թե հպարտ է և ինքնամփոփ:

Իրականում մարդամոտ էր ու ջերմ՝ զերծ կաբինետային ու պաշտոնական «կարգուկանոնից», անմիջական ու հումորի զգացումով: Հաճելի զրուցակից էր, եթե ... երկինքն աստղաշատ չէր: Գիտական իր գործունեությամբ Բ. Մարգարյանը վաստակեց գիտնականի համբավ՝ միջազգային չափանիշներով:

*Գևորգ Համբարձումի Մարգարյան*



Գ.Ա. Գուրզադյան, Լ.Վ. Միրզոյան, Հ.Ս. Բադալյան,
Վ.Ա. Համբարձումյան, Բ.Ե. Մարգարյան



Գործադիր կոմիտեն Բյուրականի 1 մ Շմիդտի աստղադիտակի մոտ (Բյուրական, 1962)

***Կարծիքներ Բ. Մարգարյանի մասին.***

- Այժմ տիեզերական աստղագիտության և հսկա աստղադիտարանների այս ժամանակաշրջանում գիտնականներն ավելի խորն են ուսումնասիրում անծայրածիր տիեզերքը, բայց տերմինաբանությունը և մեթոդաբանությունը մնում են - **մարգարյանական**:

Մարգարյանական ակնարկը հայտնի է ամբողջ աշխարհում ավելի, քան խորհրդային իշխանության օրոք հաստատված որևէ այլ փործարարական աշխատանք:

**Դեվիդ Սանդես - Միացյալ Նահանգների ամերիկյան Համալսարանի աստղագիտության ինստիտուտի համանախագահ, պրոֆեսոր**

- Տնօրեն Մարգարյանը եղել է արտասովոր գալակտիկայի գերակտիվ միջուկների համակարգված որոշման պիոները:

**Ռիչարդ Գրին - Կազմակերպչական կոմիտեի անդամ, Արիզոնա (ԱՄՆ)**





**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ** ծնվել է 1939թ. փետրվարի 22-ին: 1956 թ. արծաթե մեդալով ավարտել է միջնակարգը: 1957 թ. ընդունվել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, որը ավարտել է 1962 թ.: 1964 թ. ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրան: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Սկսել է դասախոսական աշխատանքները և 1986-1994 թթ. աշխատել է որպես Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ամբիոնի վարիչ: 1999 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Ներկայումս ամբիոնում դասավանդում է մի քանի մասնագիտական առարկաներ: Միաժամանակ զբաղվում է գիտական աշխատանքներով:

Գիտական ուսումնասիրությունները վերաբերում են տնտեսավարման ձևերի կատարելագործմանը, աշխատանքի կազմակերպմանը, նորմավորմանը և հարակից հարցերին:

1994, 1996 և 1999 թթ. ընդգրկվել է Հանրապետության կառավարության կողմից պատվիրված խաղող-1, խաղող-2 և խաղող-3 ծրագրերի մշակման հանձնաժողովում: 1999 թ. նոյեմբերին Մարգարյանը ընտրվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանն է:

1988 թ-ից համարվում է Հայաստանի ֆերմերների ազգային միության նախագահության անդամ և վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:

Մարգարյանը «Շուլավեր» հայրենակցական ընկերության նախագահն է: Ղեկավարում է «Շուլավեր» գրքի կազմակերպչական աշխատանքները:



**ՄԱՉՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ** (1915-1989 թ.): 1931-ին ավարտել է տեղի մանկավարժական տեխնիկումը: Մինչև 1939 թ. աշխատել է Չանախչի և Ախքյորփի գյուղերում՝ որպես հաշվապահ: 1939 թ. ընդունվել և 1943 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1943 թ. գործուղվել է Ռուսաստանի Դաշնության Ռյազանի մարզ՝ աշխատելու ռազմական հոսպիտալում: 1944 թ. վերադարձել է Հայաստան և նշանակվել աշխատանքի Ալավերդու

շրջանի բուժմիավորումում` որպես շարքային բժիշկ: Ալավերդու շրջանում աշխատել է մինչև 1970 թ.` անցնելով շարքային բժիշկից մինչև գլխավոր բժշկի աշխատանքային ճանապարհ: 1957 թ. վերապատրաստվելով Մոսկվայում` պրոֆեսոր Պրեոբրաժենսկու մոտ ստացել է օտալարինգոլոգի (քիթ-կոկորդ-ականջ) որակավորում: Իր գործունեության ընթացքում կատարել է շուրջ 4000 տարբեր տեսակի վիրահատություններ: 1965 թ. արժանացել է հանրապետության վաստակավոր բժշկի կոչման: 1970 թ-ից մինչև իր կյանքի վերջը աշխատել է Երևանի N6 պոլիկլինիկայում` որպես քիթ-կոկորդ-ականջի բժիշկ: Ունի պետական պարգևներ և պատվոգրեր:

**ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՐԱՍԻՄԻ (1904-1983):** Դպրոցն ավարտել է Շուլավերում, ապա տեղափոխվել է Երևան: 1931 և 1933 թվականներին եղել է շախմատի գծով Երևանի չեմպիոն: Հակոբյանն իրեն դրսևորել է որպես շախմատային գործի նախաձեռնող, նվիրյալ կազմակերպիչ: Տասնյոթ անգամ եղել է շախմատի Հայաստանի առաջնությունների գլխավոր մրցավար: Բազմիցս (1954, 1956, 1959թթ)եղել միութենական, միջազգային առաջնությունների մրցավարական հանձնախմբերի կազմում: Մեծ է նրա ներդրումը Հայաստանում շախմատի զարգացման գործում: Նրան մոտիկից ճանաչում և գնահատում էին ոչ միայն Հայաստանում: 1964թ. Վիսբադենում (ԳՖՀ) Անդրանիկ Հակոբյանն արժանացավ Միջազգային կարգի մրցավարի կոչման: Նրա բարի, անհանգիստ բնավորության ու կեցվածքի վերաբերյալ հյուսված հաճելի պատմություններին տեղյակ է նաև այսօրվա շախմատային սերունդը...



**ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՈՒՐԻ (1903-1996):** Սկզբում սովորեց երկամյա դպրոցում, հետո` քառամյա: 1916 թ. դարձավ Կոնո վարժապետի` Վահան Միրաքյանի սանը:

Գրիգորը ուշիմ ու խելացի էր, անչափ հետաքրքրասեր: Աշխատել է որպես մանկավարժ Ախքյորփի գյուղի դպրոցում:

1926 թ. ընդունվում է Թբիլիսիի մանկավարժական տեխնիկումը: Այն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Թբիլիսիի N87 հայկական դպրոցում: 1932-ից մինչև 1936-ը աշխատել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա Չանախչի, նաև Գյուլլուբաղ գյուղում` որպես դպրոցի տնօրեն: 1937 թ. մեկնում է Երևան, ընդունվում պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը...



վերադառնում է Շահումյան և նորից մանուկների հետ, նորից դպրոց...

Վաղ հասակից է սկսել ստեղծագործել, գրել է բազմաթիվ բանաստեղծություններ:

### Թռնիկիս

Դու հովի շունչ, վառ ծաղկեփունջ, Լուսի'կ ջան,
Մեղվի նման աղջիկ դառնաս ժրաջան,
Քո կատարած աշխատանքով մեղվաջան,
Մեղրի համ տաս, վարդի բույր տաս անթառամ:
Փայլուն Լուսիկ, փայլուն գալիք ունենաս,
Հազար շուրթից հազար գովեստ ստանաս,
Ծիածանի յոթը գույնը քեզ ընծա,
Յոթնապատիկ դու երկար կյանք ունենաս:

### Նվեր որդուս

Դու իմ սիրուց ծնված, դու իմ գրկից իջած,
Դու մի աշխարհի իմ բալիկ,
Տես, քեզ համար գնել եմ ես գեղեցիկ
Մի նոր գիրք:
Պատկերազարդ ու իմաստուն, իմ բալիկ,
Որ դու կարդաս, հարստանաս ու ձեռք բերես
Մի նոր ձիրք:
Գիրքն է մարդուն, դու իմացիր, որ թևեր է միշտ տալիս,
Գիրքն է մարդուն հույսի ափեր, լույս աշխարհներ
Միշտ տանում:

*

Այս աշխարհը խաղաղ անցեք,
Մեծի պատիվն իմացեք,
Փյունիկ դարձած մեր հայ ազգին,
Շատ զավակներ պարգևեք:

*«Հիշողության մատյաններ» Գ. Նալբանդյան*



**ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐԻ**: Ծնվել է 1939 թ. մանկավարժի ընտանիքում: Ավարտել է ավանի N1 8-ամյա դպրոցը:

1954 թ. ընդունվել է Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումի մեխանիկական բաժինը: 1958 թ. ավարտել է ու անցել աշխատանքի Երևանի N 1 հացի գործարանում՝ որպես փականագործ, նույն գործարանում 1963-1974 թթ. արտադրության պետի պաշտոնն է վարել:

1964-1970 թթ., համատեղության կարգով ավարտել է Մոսկվայի կոոպերատիվ ինստիտուտի սննդի ապրանքագիտության բաժինը:

1974 թ. Ա.Գ.Նալբանդյանը Աբովյան քաղաքի հացի գործարանում ինժեներ էր, 1975-1994թ՝. տնօրեն: Նրա պրպտող միտքը նոր բարձունքների է հասցնում գործարանի հեղինակությունը: Գործարանում աշխատում են բազմաթիվ բարձրակարգ մասնագետներ, որոնց դաստիարակման պատիվը Նալբանդյանին է պատկանում:Դրոժի գործարանը, որ միակն էր Հայաստանում, հիմնադրվել է նրա ջանքերով: Այսօր էլ նա աշխատում է որպես Արշալույս 1-ին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախագահ:

**ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ ՍՐԲՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԻ**: Շահումյանցիների ծոցից է դուրս եկել Ս.Գ.Շահսուվարյանը: Նա ծնվել է 1913 թ. գյուղացու ընտանիքում: Միջնակարգն ավարտել է տեղում: Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը և երեկոյան մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը: Նա չորս տասնյակ տարիներ իր մտավոր կարողությունները նվիրել է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության դժվարին և պատվաբեր գործին. երկար տարիներ աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում սաների հոգում սերմանել է լավն ու մնայունը: Նրա աշակերտներից շատերն այժմ աշխատում են ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներում: Ոմանք էլ (Գոհար Բարսեղյանը, Ամալյա Գևորգյանը, Օֆելյա Մկրտչյանը և այլոք) աշխատում են իրենց սիրելի ուսուցչուհու մասնագիտությամբ՝ դասավանդում են հայոց լեզու և գրականություն:



Շահսուվարյանը 1959 թ. մինչև 1975 թ. աշխատել է հանրապետության լուսավորության նախարարության դպրոցական տեսչի պաշտոնում: Տասնհինգ տարուց ավելի նա ղեկավարել է Թբիլիսիի Ա.Ս.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի ուսանողների պրակտիկան, երիտասարդ մասնագետներին տվել իր մանկավարժական հարուստ գիտելիքներն ու փորձը:

Սրբուհին Վրաստանի հանրապետության վաստակավոր մանկավարժ է:

Կառավարությունը բարձր է գնահատել Սրբուհի Շահսուվարյանի քրտնաջան աշխատանքը: Նա պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով, Ժողովրդական կրթության գերազանցիկ կրծքանշանով, մեդալներով, գովասանագրերով:

Մահացել է 1980 թ. Պրահայում:



**ՔԱՄԱԼՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶՈՅԻ**: Ծնվել է 1934 թ. Շուլավերում: Միջնակարգը չավարտած (1949 թ.) ծնողների և քրոջ հետ աքսորվել է Ալթայի երկրամաս, որտեղից վերադարձել է 1952 թ.: 1957 թ. ավարտել է Շահումյանի (Շուլավերի) միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոշինարարական ֆակուլտետը, սակայն ընդամենը մեկ ամիս սովորելուց հետո քաղաքային միլիցիայի վարչության պետի հրամանով արտաքսվել է Երևանից և հեռացվել պոլիտեխնիկական ինստիտուտից՝ որպես քաղաքական այլախոհի (հոդված 58): (Նրանք իրավունք չունեին բնակվել հանրապետական մայրաքաղաքներում, երկրամասային և մարզային կենտրոններում): 1955 թ. ԽՍՀՄ ՊԱԿ-ի որոշմամբ նրան թույլատրվել է ուսումը շարունակել մայրաքաղաքում: Ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1960 թ. աշխատանքի է նշանակվել որպես կրտսեր գիտաշխատող Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտում: 1962 թ-ից անցել է աշխատանքի պոլիտեխնիկական (զուգահեռաբար՝ բժշկական) ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնում: 1968-1971 թթ. սովորել է Մոսկվայի Կրուպսկայայի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում և նույն ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդում պաշտպանել թեկնածուական թեզը (1971 թ.) և ստացել ֆիզմաթ. գիտությունների թեկնածուի գիտաստիճան: 1973 թ. եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, տարբեր տարիներ այդ նույն ամբիոնի վարիչի տեղակալ, ամբիոնի վարիչ: 1984 թ. Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտը կազմակերպելու կապակցությամբ տեղափոխվել է այնտեղ՝ որպես ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ:

Ռ.Քամալյանը շուրջ 35 գիտական հոդվածների հեղինակ է, որոնք նվիրված են պոլիմերի մոլեկուլային ֆիզիկային, մասնակցել է միութենական բազմաթիվ գիտաժողովների: Նրա ակտիվ մասնակցությամբ 1989 թ. ստեղծվել է հանրապետական «Հուշամատյան» ընկե-

րությունը, երկար տարիներ եղել է այդ ընկերության վարչության անդամ: Նա կազմակերպել է հեռուստատեսային մի քանի հաղորդումներ, որոնցում ներկայացրել է 1949 թ. զանգվածային աքսորի պատմությունը: Նա առաջիններից մեկն էր, որը մամուլում («Ավանգարդ», «Գրական թերթ», «Երեկոյան Երևան», «Հայոց աշխարհ», «Հայաստանի Հանրապետություն») կոնկրետ փաստերով նկարագրեց 1949 թ. Ստալին-Բերիայի կատարած ոճրագործությունները հայ ժողովրդի նկատմամբ:

Ներկայումս Ռ.Քամալյանը աշխատում է որպես դոցենտ՝ պաշտպանության նախարարության Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում և դասավանդում է ֆիզիկա:



**ԱՐԱԶԻ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՈՎՍԵՍ ՄԵԼԻՔԻ)**: Ծնվել է 1878 թ. ապրիլի 1-ին, Շուլավերում, գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում, ապա 1892-1898 թթ. սովորել է Թիֆլիսի ռեալական դպրոցում: 1899-1905 թթ. սովորել է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում: Ավարտելով ինժեներ-տեխնոլոգի կոչումով՝ վերադառնում է հայրենիք: 1908-1909 թթ. աշխատում է որպես մաթեմատիկայի ուսուցիչ Շուշիի հայկական սեմինարիայում: Արազին խորհրդահայ գրականության հիմնադիրներից է: Հեղափոխական վերելքի շրջանում հանդես է եկել պատմվածքներով («Մենավոր լապտեր», «Արևը», 1913 թ., «Արյունոտ ծաղիկներ», 1916 թ. և այլն): «Այրվող հորիզոնը» (1940 թ.) պատմահեղափոխական վեպը նվիրված է դարասկզբի ուսանողական և բանվորական շարժումներին: Հայրենական մեծ պատերազմի տարիներին լույս են տեսել նրա «Հայրենիքի կանչը» (1942 թ.) և «Անհաղթները» (1944 թ.) պատմվածքների ժողովածուները, ետպատերազմյան շրջանում՝ «Իսրայել Օրի» պատմավեպը (1955-1957):

Արազին սերտ կապերի մեջ է եղել իր գյուղի հետ, աշխատավոր ժողովրդի հետ: 1919-1921 թթ. եղել է սովյալներին օգնող բյուրոյի վարիչ, 1927-1928թթ՝. «Մարտակոչ» թերթի խմբագրության աշխատակից՝ Թբիլիսիում: 1928-1929թթ.աշխատել է «Պրոլետար» թերթի խմբագրությունում: Արազին հասարակական մեծ աշխատանք է կատարել՝ լինելով Գերագույն Խորհրդի պատգամավոր՝ 1938թ., 1947 թ., 1951 թ. և 1955 թ.:

Կառավարությունը բարձր է գնահատել նրա աշխատանքը. պարգևատրվել է Փառքի, Աշխատանքային կարմիր դրոշի, Լենինի շքանշաններով:

Արազին սովորել և աշխատել է բանվոր Շանթի և Ստեփան Շահումյանի հետ: Ծանր հիվանդությունից հետո վախճանվել է 1964 թ. դեկտեմբերի 23-ին, Երևանում և թաղված է Գրողների պանթեոնում:





**ՊԱՐՈՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ**: Ծնվ. է 1933-ին: 1939-ին դպրոց է ընդունվել: 1943-ին մահացել է մայրը, և տնտեսական պայմաններից դրդված՝ թողել է դպրոցը և կոշկակարությամբ ու անտառից ցախ կրելով՝ մի կերպ օրվա հաց է վաստակել: 1951-ին տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ զբաղվել է կոշկարությամբ՝ ուսումը շարունակելով երեկոյան դպրոցում: 1953-ին ամուսնացել է: Ուսումնառության հարցում ինչ-որ վիճակված չէր իրեն, իրականություն է դարձնում իր երեխաների համար. երեք զավակներն էլ բարձրագույն կրթություն են ստանում Երևանում: 1990-ին ընտանքիով տեղափոխվում է Լոս Անջելես, որտեղ զբաղվում է գործարարությամբ: Լևոն Պարոնյանը, վերապրելով իր չարքաշ մանկուէթյունը և նկատի ունենալով անցումային շրջանում իր ծննդավայրի, մասնավորապես դպրոցի անմխիթար պայմանները՝ հանդես է գալիս որպես բարերար-հովանավոր՝ ամեն տարի պատկառելի դրամական օգնություն ուղարկելով դպրոցին: Ի պատասխան Պարոյանի ազգանվեր գործելակերպի՝ մանկավարժական և ծնողական կոլեկտիվների համատեղ որոշմամբ դպրոցը «կնքվում» է բարերար հայրենակցի՝ Լևոն Պարոնյանի անունով:

**ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ**: Ծնվ. է 1921-ին Շուլավերում: 1936-ին ընտանիքով տեղափոխվել են Երևան: 1939 թ-ին ավարտել է Ձերժինսկու անվան (հայկական) դպրոցը: Նույն թվականին զորակոչվել է: Ծառայության մեջ էր Լվովում, երբ սկսվեց Հայրենական պատերազմը: Մասնակցել է Կիևի պաշտպանության համար մղված մարտերին՝ հասնելով Տամբով, որտեղից էլ ստացվել է վերջին նամակը: Նրա ճակատագրի վերաբերյալ հարազատներին որևէ ռեալ տեղեկություն չի հասել:





**ՄՈՎՍԵՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ**: Ծնվ. է 1948-ին: 1968-ին ավարտել է տեղի ռուսական միջնակարգը: 1970-ին մեկնել է զինծառայության: 1971-ից աշխատանքի է անցել Հայաստանի ն/գ-ի համակարգում: 1976-ին ավարտել Երևանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը, 1990-ին՝ ԽՍՀՄ ն/գ-ի նախարարության ակադեմիայի բարձրագույն դասընթացները (Մոսկվա): Մովսեսյանը ներկայումս գնդապետի աստի-

ճանով զբաղեցնում է ՀՀ-ի Տավուշի մարզի վարչության պետի պաշտոնը: Բարեխիղճ ծառայության համար պարգևատրվել է մեդալներով և անձնական զենքով:



**ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐՇԱԿԻ (ՎԱԴԻՆԱԿԻ):** Ծնվ. է 1947 թ.: 1965 թ. ոսկե մեդալով ավարտել է միջնակարգը և նույն տարում ընդունվել է Երևանի պետհամալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1970 թ.: Աշխատանքի է անցել պոլիտեխնիկականի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում՝ որպես ասիստենտ, իսկ 1986 թ-ից՝ որպես ավագ դասախոս: 1983-1987 թթ. սովորել է նույն բուհի ասպիրանտուրայում և աշխատել է որպես ամբիոնի վարիչի տեղակալ, իսկ 1993-95 թթ.՝ որպես մաթեմատիկայի դեպարտամենտի լաբորատորիայի վարիչ: Համատեղությամբ բարձրագույն մաթեմատիկա է դասավանդել Երևանի մի շարք բուհերում:

Գիտական աշխատանքները (երկու տասնյակից ավելի) վերաբերում են ջրահագեցած գրունտներում (բնահողերում) արտաքին ուժերի ազդեցության հետևանքով տեղի ունեցող ֆիլտրացիայի խնդիրներին:



**ՔԱՄԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՇԱՎԱՐՇԻ:** Ծնվել է 1917 թ., Շուլավերում: 1934 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումը և աշխատանքի է անցել Վրաստանի Ծալկայի շրջանի Ողնի գյուղում: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը: Մեծ հայրենականի հենց առաջին օրերին՝ վաղաժամկետ հանձնել է պետական քննությունները և մեկնել բանակ: 1941-1942 թթ. սովորել է Մոսկվայի՝ Ֆ.Ձերժինսկու անվան հրետանային ակադեմիայում, ստացել ավագ-տեխնիկ լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Վ.Քամալյանը մասնակցել է Լեհաստանի ազատագրմանը, պարգևատրվել է կառավարական մի քանի շքանշաններով:

Բանակից զորացրվելուց հետո (1947 թ.) անցել է դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում: Պատերազմի տարիներին (1942 թ.) Ալիխանյան եղբայրները հանձնարարություն են ստանում խորհրդային կառավարությունից՝ ստեղծելու տիեզերական ճառագայթների հետազոտման լաբորատորիա (երկիրը պատրաստվում էր նոր զենք արտադրել, իսկ դրա համար հույժ կարևոր էին փորձարարական ֆիզիկայի տվյալները): Այդ լաբորատորիան կազմակերպվեց Արագածի վրա, ուր աշխատանքի հրավիրվեց համալսարանի դասախոս Վ.Քամալյանը: Հետագայում գիտության այդ ասպարեզում ձեռք բերած զգալի արդյունքերի շնորհիվ լաբորատորիան վերաճեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի (տնօրեն՝ ակադեմիկոս Արտյոմ Ալիխանյան, փոխտնօրեն՝ Վահրամ Քամալյան): Վ.Քամալյանը բնատուր տաղանդ էր գիտության ասպարեզում: Նրա գիտական մտքի արգասիքն եղավ ֆիզիկան զարգացնելու հետ զբաղվել նաև կենսաֆիզիկայի հարցերով, որի շնորհիվ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ստեղծվում է սերնդի և սեռի կարգավորման առաջին գիտահետազոտական լաբորատորիան (տնօրեն՝ Վ.Քամալյան) ԽՍՀՄ-ում: «Ֆիզիկոսը կենսաբանության ասպարեզում նոր էջ է բացում» (ակադեմիկոս Արտյոմ Ալիխանյան), իսկ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակած գրքում կարդում ենք. «Խիստ հետաքրքրական է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Վահրամ Քամալյանի հետևությունը լեռնային վայրերում ապրողների սերնդի վերաբերյալ... Անշուշտ այստեղ ինչ-որ օրինաչափություն կա, որը մեզ հայտնի չէ»: Վաղուց հնացած կարծիքները ուղղակի հեղաշրջում է Վահրամ Քամալյանը: Ֆիզիկոս Վ.Քամալյանի արածը կենսաբանության ասպարեզում լայն արձագանք ստացավ նաև միջազգային գիտական հասարակության շրջանում: Իրենց նամակ-խնդրանքներով Վահրամին գրում էին Բրազիլիայից (դոկտոր Էլսիմեր Կուտինո) , ԱՄՆ-ից (դոկտոր Ռոլֆ Բրինստեր). Չեխոսլովակիայից (դոկտոր Ստիկլունովսկի) և շատերը: Բոլորն էլ Վահրամից խնդրում էին սերնդի և սեռի կարգավորման մասին կատարած հետազոտությունների նոր արդյունքները, նրա հրատարակած աշխատանքները: Բայց, ավաղ, 1969 թ. ողբերգական մահը կտրեց նրա կյանքի թելը:

*Քամալյան Ռուբեն Միրզայի*

**ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ (ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ) ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՄԻԼԻ [(10(23).1905, Շուլավեր-1964 Մոսկվա)]**

Հայ խորհրդային դիրիժոր, ԽՍՀՄ ժող. արտիստ (1951 թ.): Սկզբնական երաժշտական կրթությունն ստացել է տանը, աշակերտելով պրոֆ. Հարտմանին (տեսություն) և Շվեցգերին (դաշնամուր): 1921-ին ընդունվել է Թիֆլիսի օպերային թատրոն (ընդհատումներով աշխատել է մինչև 1931-ը) որպես կոնցերտմեյստեր, ապա՝ դիրիժոր 1923-ին հանդես գալով Դոլիձեի «Լեյլա» օպերայի կատարմամբ: 1924-ին Լենինականի օպերա-օպերետային խմբում վարել է հայերենով ներկայացումներ (Գունոյի «Ֆաուստ», Բիզեի «Կարմեն», Չայկովսկու «Եվգենի Օնեգին»): 1929-ին և 1932-ին սիմֆոնիկ համերգներով հանդես է եկել Երևանում: 1928-30-ին ուսանել է Լենինգրադի կոնսերվատորիայում՝ Ն.Մալկոյի, այնուհետև՝ Ա. Գաուկի դիրիժորական դասարաններում, տեսությունը՝ Ք.Քուշնարյանի և Վ.Շչերբանովի մոտ: 1931-ից ԽՍՀՄ Մեծ թատրոնի դիրիժոր էր, 1953-62-ին՝ գլխավոր դիրիժորը: Մելիք-Փաշայանի երկացանկն են կազմել 50-ից ավելի օպերաներ:

Նրան առանձնապես հաջողվել են մոնումենտալ, բազմապլանային, դրամատիզմով և սիմֆոնիկ լայն շնչով հագեցած ներկայացումներ: Անգերազանցելի են համարվում Մեծ թատրոնում նրա ղեկավարած՝ Վերդիի «Աիդա», «Օթելլո», «Ֆակստաֆ», Բիզեի «Կարմեն», Բեթհովենի «Ֆիդելիո», Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն» օպերաները: Ստեղծագործական նվաճումներից են Գլինկայի «Իվան Սուսանին», Բորոդինի «Իշխան Իգոր», Չայկովսկու «Պիկովայա դամա» և «Չերևիչկի» (ԽՍՀՄ պետ մրցանակ, 1942), Մուսորգսկու «Բորիս Գոդունով», Ռոսինիի «Վիլհելմ Տել» (ԽՍՀՄ պետ մրացանակ, 1943), Փալիաշվիլու «Աբեսալոմ և էթերի», Պուչինիի «Չիո-չիո-սան» օպերային ներկայացումները:

Մելիք-Փաշաևի արվեստին բնորոշ են հարազատությունը հեղինակի մտահղացմանը, ոճի նուրբ զգացողությունը: Որպես դիրիժոր-դրամատուրգ, Մ-Փ. զգում էր ինչպես ներդաշնակ ամբողջությունը, այնպես էլ ամեն մի մանրամասնի գեղարվեստական արտահայտչականությունը: Նրա ներկայացումներում դիրիժորական կատարյալ տեխնիկան, երաժշտական բարձր կուլտուրան զուգորդվել են կատարվող ստեղծագործությունների վառ զգացմունքային մեկնաբանման հետ:

1939-ին նշանակվել է Մոսկվայում կայացած հայկական արվեստի առաջին տասնօրյակի երաժշտական ղեկավար, 1956-ին՝ երկրորդ տանսօրյակի խորհրդատու: 1958-ին Մեծ թատրոնի խմբի հետ հյուրախաղերով հանդես է եկել Երևանում (Գլինկայի «Իվան Սուսա-



նին», Բորոդինի «Իշխան Իգոր» օպերաները, Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիան»): Ներկայացումներ է վարել նաև արտասահմանյան մի շարք թատրոններում՝ Պրահա, Օստրավա, Լոնդոն, Բուդապեշտ: Արժանացել է «Գրան պրի»՝ «Պպատերազմ և խաղաղություն» (1962), Ամերիկյան արվեստների ակադեմիայի մրցանակի (1964)՝ Մուսորգսկու «Բորիս Գոդունով» օպերաների ձայնագրության համար:

Ա.Շ.Մելիք-Փաշաևը հայտնի է նաև որպես մի շարք ստեղծագործությունների հեղինակ. «Տասներկուերորդ գիշեր» օպերա (ըստ Շեքսպիրի), սիմֆոնիա, ռոմանսներ՝ Ա.Պուշկինի և Ի.էրենբուրգի խոսքերով: Պարգևատրվել է 3 (Լենինի) շքանշաններով: А.Ш.Мелик-Пашаев, Воспоминания, статьи, Материалы. М., 1976, ՀՍՀ h-7 Ե. 1981, Գ.Գյոդակյան):



Ա. Շ. Մելիք-Փաշաև, 1933 թ.



Մելիք-Փաշաևի ընտանիքը - 1910 թ.



«Աիդա» թատրոնից հետո: Ձախից աջ; Ա. Մելիք-Փաշաև, Պ. Լիսիցիան, Ժ. Հեմմոնդ, Դ. Ուզունով, Ե. Իվանով, Կ. Շեկլոխ, Բ. Պոկրովսկի





Մելիք-Փաշաևը դիրիժորում է «Տրավիատա» Ժ. Վերդի Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում - 1961 թ.

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԼ ՑՈԼԱԿԻ:** Ծնվել է 1937 թ., գյուղատնտեսի ընտանիքում: Միջնակարգն ավարտել է տեղում: Ավարտել է Մոսկվայի երկաթուղային ինստիտուտը՝ ինժեների որակավորմամբ: Աշխատում է Մոսկվայի միջմոլորակային կապի գործարանում: Որդին՝ Արթուրը, ավարտել է Դրեզդենի (Գերմանիա) համալսարանի կիբեռնետիկայի ֆակուլտետը և աշխատում է Մոսկվայի համակարգչային ծրագրերի կենտրոնում: Կ.Ց.Հարությունյանը հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների:



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱԼՏԵՐ ՑՈԼԱԿԻ:** Ծնվել է 1935 թ. փետրվարի 16-ին, գյուղատնտեսի ընտանիքում: Հայրը կոլտնտեսության գլխավոր գյուղատնտեսն էր, մայրը՝ տնտեսուհի: 1953 թ. արծաթե մեդալով ավարտել է դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1954 թ. տեղափոխվել է Մոսկվա, ընդունվել երկաթուղային ինստիտուտ և ավարտել ինժեների որակավորմամբ: Աշխատել է Բելգորոդում, Կիրովականում, ապա Սևերոդոնեցկում (մետաղագործական գործարանի գլխավոր տնօերն):

Այժմ աշխատում է Ստարի Ղրիմում՝ որպես կոմունալ տնտեսության տնօրեն: Վերանորոգել է իր ուժերով Ղրիմի հայկական եկեղեցին՝ նախօրոք ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի համաձայնությունը:



**ՍԻՐՈՒՆԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ:** Ծնվել է 1908 թ.: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում: 18 տարեկանից զորակոչվել է բանակ, սովորել է Թբիլիսիի հետևակային ուսումնարանում, որն ավարտել է 1927 թ.: Գործուղվել է Անդրկովկասյան ռազմական օկրուգ՝ պարետի պաշտոնով...

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Անդրկովկասի զինվորական օկրուգի հանձնարարությամբ Սիրունյանը կազմակերպում է նոր զորամիավորում և 89-րդ հայկական դիվիզիայի կազմում մասնակցում Մալգոբեկի, Մոզդոկի և այլ բնակավայրերի ազատագրմանը: 1943 թ. հարձակման ժամանակ ծանր մարտերում վիրավորվում է, երկար ժամանակ բուժվում, ապաքինվելուց հետո ուղարկվում է թիկունք: Դիլիջանում գլխավորում է գունդը...

1944 թ. Շահումյան ավանի զինվորական զորամասի հրամանատարն էր, պատերազմի ավարտից հետո՝ 1947-1953 թթ. բժշկական ինստիտուտի զին.ամբիոնի ղեկավարը, իսկ 1953-1963 թթ. Հայաստանի ԴՕՍԱԱՖ-ի նախագահի տեղակալը:

Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

1963 թ. դադարեց բաբախելուց Մ.Ա.Սիրունանյանի սիրտը:



**ՍԻՐՈՒՆՅԱՆՑ (Սիրունանյան) ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՔԱՅԵԼԻ:** Ծնվել է 1932 թ., զինվորականի ընտանիքում: Սովորել է Շահումյանի ռուսական դպրոցում մինչև 5-րդ դասարանը, տեղափոխվել է Երևան և 1959 թ. ավարտել է բժշկական ինստիտուտը: 1959-1963 թթ. աշխատել է Թբիլիսիի և Երևանի զինվորական հոսպիտալներում: 1963-1967 թթ. աշխատել է Երևանի N8 հիվանդանոցում՝ բժիշկ-թերապևտ: 1967 թ. գործուղվել է Ալժիր և մինչև 1971 թ. աշխատել նրա կենտրոնական հոսպիտալում՝ որպես սրտաբանության բաժնի վարիչ: 1972-74 թթ. աշխատել է Երևանի N1 շտապօգնության հիվանդանոցի սրտաբանության բաժնի վարիչ: 1974 թ. գործուղվում է Գվինեա և ստանձնում այդ հանրապետության նախագահ Սեկուտուրայի անձնական բժշկի պատասխանատու պաշտոնը, որի փայլուն կատարման շնորհիվ (խորհրդային բժիշկներից միակը) ստացել է Գվինեայի հանրապետության հերոսի պատվավոր կոչումը:

1980-1985 թթ. աշխատել է Թունիսում՝ որպես հանրապետության կենտրոնական հիվանդանոցի սրտաբանության բաժնի վարիչ: 1986 թ-ից մինչև 1997 թ. աշխատել է Երևանի N3 կլինիկական հիվանդանոցի տնօրեն, ապա նույն հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալ:



Ա.Մ.Սիրունյանին շնորհվել է բարձր կարգի սրտաբանի և առողջապահության կազմակերպչի կոչում:



**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ ԳՐԻԳՈՐԻ:** Պրոֆեսոր, բժշկական գիտությունների թեկնածու, ծնվել է 1937 թ.: Ավարտելով միջնակարգը ոսկե մեդալով՝ ընդունվում է բժշկական ինստիտուտ, ավարտելուց հետո գործուղվում է Լենինական, երկու տարի աշխատելուց հետո վերադառնում է Երևան և 1964 թ. ընդունվում ասպիրանտուրա: 1967 թ.պաշտպանել է թեկնածուական թեզը և մինչև օրս աշխատում է որպես ամբիոնի վարիչ: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1976-88թթ եղել է ֆակուլտետի դեկան: 1988-92՝ ռեկտոր, 1992-94թթ՝ ինստիտուտի տնօրինության խորհրդի անդամ: Հայտնի գիտնական-բժիշկ է, ունի մոտ 140 հրատարակված աշխատություններ, հինգ գյուտերի հեղինակ է, ունի մեկ արտոնագիր և 8 նորարարական առաջարկություններ: Բազմաթիվ միջազգային կոնգրեսների մասնակից է: Բժիշկների համար 5 ձեռնարկների հեղինակ է, որոնք հրատարակվել են Մոսկվայի կենտրոնական բժիշկների կատարելագործման ինստիտուտում:

Գաստրոէնտերոլոգիայի միջազգային ասոցիացիայի անդամ է, Հայաստանի բժիշկների միավորման փոխպրեզիդենտ: Միևնույն ժամանակ «Շտապօգնության» գիտական բժշկական կենտրոնի գլխավոր բժշկի օգնական: Երկար տարիներ աշխատել է IV գլխավոր վարչությունում՝ որպես կոնսուլտանտ: Հունգարիայի «Գեդեոն Ռիխտեր» դեղագործական ֆիրմայի կոնսուլտանտն է:

Անուրանալի է նրա ներդրումը հանրապետության առողջապահական ոլորտը հմուտ մասնագետներով համալրելու գործում: Բավական է նշել, որ նրա հոգատար վերաբերմունքի շնորհիվ բժշկագիտության ասպարեզը համալրվել է պատկառելի թվով գիտնականներով (3 պրոֆեսոր, 6 դոցենտ, չորս հոգի էլ զբաղված են թեկնածուական թեզի մշակմամբ):



**ՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿ ՍՄԲԱՏԻ:** Ծնվել է 1912 թ., գյուղացու ընտանիքում: Ավարտելով Շուլավերի դպրոցը՝ ընդունվում է Երևանի Սպենդիարյանի անվան կոնսերվատորիան: Այն ավարտելուց հետո ընդունվում է Մոսկվայի զինվորական ակադեմիան, որը և ավարտում է ու գործուղվում Անդրկովկասյան ռազմական օկրուգի շտաբ, որպես գործիքային նվագախմբի ղեկավար...

Շուտով հրավիրվում է Մոսկվա և նշանակվում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Կարմրադրոշ նվագախմբի գլխավոր դիրիժոր: Այդ ժամանակ ղեկավարում է նաև Մոսկվայի սպայական-դիրիժորական ուսումնարանը:

Մասնակցել է Հայրենական պատերազմին՝ նրա առաջին օրից մինչև հաղթական ավարտը: Ունի գեներալ-մայորի զինվորական կոչում, պարգևատրված է շքանշաններով և բազմաթիվ մեդալներով...

Առայսօր աշխատում է Մոսկվայում...



**ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ:** Բժշկագիտության պրոֆեսոր, դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ: Ա.Ա.Մելիք-Ադամյանը ծնվել է 1885 թ. Շուլավերում, գյուղացու ընտանիքում:

1911 թ. ավարտել է Խարկովի բժշկական ինստիտուտը, ապա այդ ինստիտուտում՝ որպես օրդինատոր՝ Խարկովի հայտնի պրոֆեսոր Օլեննիկովի կլինիկայում:

Այնուհետ 14 տարի շարունակ գլխավորում էր Ուկրաինայի առողջապահական տարբեր ծառայություններ...

1925 թ. Ա.Ա.Մելիք-Ադամյանը հրավիրվում է Երևան՝ պետական համալսարանի բժշկագիտության ֆակուլտետ, որտեղ առաջին անգամ կազմակերպում է ֆակուլտետային թերապիայի ամբիոն, որը և ղեկավարում է մինչև կյանքի վերջը:

Եղել է Երևանի բժշկական ինստիտուտի հիմնադիրներից մեկը և նրա ռեկտորը: Նրա նախաձեռնությամբ Հայաստանում առաջին անգամ բացվում է էնդոկրինոլոգիայի բաժին: Պրոֆեսորն իր աշխատակիցների հետ ուշադրության կենտրոնում էր պահում արյան շրջանառության օրգանների հիվանդությունների, ինչպես նաև մալարիայի, ռևմատիկ հիվանդությունների բուժման հարցերը...

Ա.Ա, Մելիք-Ադամյանը մեծ ծառայություն ունի Հայաստանի հանգստյան վայրերի ուսումնասիրության և նրանց օգտագործման խնդրում (Ջերմուկ, Սևան, Ստեփանավան, Գյուլագարակ...): Ունի հրապարակած բժշկության տարբեր բնագավառներին վերաբերող մոտ 80 գիտական աշխատանքներ:

Պատրաստել է շատ նշանավոր գիտնականներ ու բժիշկներ: Նա փայլուն հրապարակախոս էր, գերում էր լսարանը...

Հանրապետական, միութենական և արտասահմանյան բազմաթիվ ընկերությունների անդամ կամ նախագահ էր:

Ա.Ա.Մելիք-Ադամյանը ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի մի քանի գումարումների պատգամավոր:



Նրա անունով է կոչվում Երևանի կենտրոնական փողոցներից մեկը և N1 քաղաքային հիվանդանոցը:

Բժշկական ինստիտուտում սահմանվել է նրա անվան թոշակ: Ա.Ա.Մելիք-Ադամյանը մահացել է 1949 թ., թաղվել է Երևանի պանթեոնում:



**ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՏԱՇԵՍԻ** բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մելիք-Ադամյանը ծնվել է 1928 թ. Շահումյանում: Ալեքսանդրը ակադեմիկոս Ա.Ա.Մելիք-Ադամյանի որդին է:

Ա.Ա.Մելիք-Ադամյանը միջնակարգն ավարտել է ոսկե մեդալով, իսկ 1954 թ.՝ առաջին կարգի դիպլոմով Երևանի բժշկական ինստիտուտը, 1957 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը: Այնուհետև անցել է մանկավարժական աշխատանքի հոսպիտալային թերապիայի ամբիոնում: 1971 թ. նրան հրավիրում են Երևանի՝ Բժիշկների վերապատրաստման ինստիտուտ՝ թերապիայի բաժնի վարիչի պաշտոնով, որտեղ և աշխատում է մինչև իր կյանքի վերջը: 1973 թ. մեծ հաջողությամբ պաշտպանել է դոկտորական թեզը:

Ա.Ա.Մելիք-Ադամյանը մեծ ներդրում ունի դիագնոստիկայի, կլինիկայի և բուժման թոքասրտային անբավարարության հարցերում: Նա մոտ 150 գիտական աշխատությունների հեղինակ է, IV գլխավոր վարչության կոնսուլտանտ: Միութենական գիտական ընկերությունների անդամ էր:

Պրոֆեսոր Ա.Ա.Մելիք-Ադամյանը եղել է փայլուն գիտնական, մանկավարժ և բժիշկ...

Մահացել է 47 տարեկան հասակում, 1975 թ.:



**ՂԱՐԴԱՇՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ:** Ծնվել է 1947 թ.: Մինչև 7-րդ դասարանը սովորել է Շահումյանի միջնակարգ դպրոցում, 60-65 թվականներին սովորել է Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումում, 65-70 թթ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Գերազանցությամբ ավարտելուց հետո, մնում է նույն ինստիտուտի տեսական էլեկտրատեխնիկայի ամբիոնում՝ որպես դասախոս, որտեղից 1975 թ. նշանակվում է Չարենցավանի Հաստոցագործիքային տեխնիկումի տնօրեն, որտեղ և իր կյանքի ավելի քան 16 տարին նվիրում է այդ պաշտոնում նոր մասնագիտությունների արմատավորման, երիտասարդ տեխնիկական կադրերի պատրաստման շնորհակալ գործին: Ղարդաշյանի մեծ ե-

ռանդի շնոհիվ տեխնիկումը սկսեց պատրաստել ամենատարբեր մասնագիտությամբ երիտասարդ կադրեր՝ ցերեկային, երեկոյան և հեռակա ուսուցման ձևերով: 1985 թ. տեխնիկումը վերածեց Չարենցավանի պոլիտեխնիկումի: 1994 թ. ՀՀ արդյունաբերության նախարարության կողմից նշանակվում է ԱՐՏԻՆ գործարանի տնօրեն և 1996 թ. հանրապետությունում տիրող ճգնաժամի հետևանքով, բազմաթիվ խնդրանքներից հետո ազատվում է գործարանի տնօրենի պարտականությունից: Այնուհետև աշխատում է Երևանի էլեկտրացանցերից մեկի գլխավոր ճարտարագետ:



**ԾԱՏՈՒՐՅԱՆ ՌԱՖԻԿ ՌՈՒԲԵՆԻ:** Ծնվել է 1926 թ.: Միջնակարգն ավարտել է տեղում՝ 1943թ և կամավոր մեկնել ռազմաճակատ: Անվեհեր գործողությունների համար պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Պատերազմից հետո գյուղում զբաղվել է ծխախոտագործությամբ: 1914 թ. ընդունվում է Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ և գերազանցության դիպլոմով ավարտելով բուհը՝ աշխատանքի է անցնում Ն/Գ-ի համակարգում որպես քննիչ: 1960 թ-ից եղել է Երևանի Ն/Գ-ի վարչության քննչական բաժնի պետի տեղակալ, 1970 թ-ից՝ Երևանի Օրջոնիկիձեի շրջանի Ն/Գ-ի բաժնի պետ: 1970-ին ԽՍՀՄ Ն/Գ-ի նախարարության կողմից արժանացել է Ն/Գ-ի վաստակավոր աշխատողի կոչման: 1982 թ-ից անցել է վաստակած հանգստի:



**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՏԵՄԻ:** Ծնվել է 1909 թ., ծառայողի ընտանիքում: 1933 թ., ավարտելով Տոմսկի սննդի արդյունաբերության տեխնիկայի ինստիտուտը՝ ավելի քան չորս տասնամյակ աշխատել է Հայաստանի սննդի արդյունաբերության բնագավառում: Ղեկավարել է մի շարք ձեռնարկություններ՝ Երևանի ալրաղաց և մակարոնիհրուշակեղենի կոմբինատները, վարել է հացաբուլկեղենի և հրուշակեղենի գլխավոր վարչության պետի, հանրապետության սննդի արդյունաբերության նախարարի տեղակալի պաշտոնները: Կյանքի վերջին տարիներին, լինելով արդեն անհատական թոշակառու, աշխատում էր որպես Հայկոոպի սննդի արդյունաբերության գլխավոր վարչության պետի տեղակալ ու գլխավոր ինժեներ:

Սննդի արդյունաբերության բնագավառում ղեկավար աշխատանք կատարելուն զուգընթաց՝ Բաղդասարյանը շուրջ երկու տասնամյակ դասախոսել է գյուղատնտեսական ինստիտուտում՝ իր ա-



վանդը ներդնելով մասնագիտական կադրերի պատրաստման գործում: Նրա գրչին են պատկանում գիտական բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված արդյունաբերության էկոնոմիկայի հարցերին: Գ.Ա.Բաղդասարյանը առաջատար, ճանաչված մասնագետ էր, ազնիվ, համեստ ու համակրելի մարդ: Նա պարգևատրվել է Կարմիր աստղ շքանշանով, մեդալներով:



**ՂԱՋԱՋՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՀԱՆԻ:** Ծնվել է 1918 թ. մարտի 18-ին, արհեստավորի ընտանիքում: Ավարտել է տեղի հայկական միջնակարգ դպրոցը և 1939 թ. ընդունվել Երևանի բժշկական ինստիտուտ, սակայն նյութական անբարենպաստ պայմանները հնարավորություն չտալով շարունակելու ուսումը՝ աշխատանքի է ընդունվում ծննդավայրի միջնակարգ դպրոցում՝ ուսուցչի պաշտոնով, իսկ 1940 թ. հոկտեմբերին զորակոչվում է բանակ: 1941-1944 թթ. մասնակցում է Հայրենական պատերազմին, ծանր վիրավորվում և վերադառնում է հաշմանդամ:

1945-46 թթ. աշխատանքի է ընդունվում Շահումյանի հայկական միջնակարգ դպրոցում, իսկ 1946 թ. ուսումը շարունակում է Երևանի բժշկական ինստիտուտում: Ավարտելով ուսումնառությունը՝ ընդունվում է ինստիտուտի ասպիրանտուրան՝ միաժամանակ աշխատելով ինստիտուտի սուր վարակիչ հիվանդությունների ամբիոնում:

1957 թ. ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան, 1970 թ.՝ դոկտորի աստիճան, 1972 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1968-1978 թթ. ընտրվել է ԽՍՀՄ ինֆեկցիոնիստների գիտական ընկերության նախագահության անդամ: Հայաստանի նույնանուն ընկերության հիմնադիր նախագահ եղել է 1973-1978 թվականներին:

1973 թ. մինչև 1991 թ. ղեկավարել է բժշկական ինստիտուտի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնը, իսկ 1985 թ-ից՝ նաև համաճարակաբանության ամբիոնը: Մինչև 1998 թ. աշխատել է որպես ամբիոնի պրոֆեսոր: 1998 թ. (մինչև այժմ) համարվում է ինֆեկցիոն հիվանդությունների հանրապետության գլխավոր խորհրդատուն (կոնսուլտանտը):

Ավելի քան յոթանասունյոթ գիտական աշխատությունների հեղինակ է (դիֆտերիայի, աղիքային տիֆերի, սալմոնալեզոզի, փայտացման, բոտուլիզմի, բրուցելյոզի, կատաղության, գրիպի, սիբիրյան խոցի, վիրուսային հեպատիտների, դիզենտերիայի, ամեոբիազի, էպիդեմիկ մենենգիտի, ժանտախտի մասին): Նրա կողմից խոր ուսումնասիրության են արժանացել խառը ձևերի հիվանդությունների ախտորոշումը, կլինիկական տարաձևությունները ու ախտորոշումը և դրանց բուժման առանձնահատկությունները: Որոշ գիտական աշխա-

տանքներ ուշադրության են արժանացել ամերիկյան և եվրոպական երկրների մասնագետների կողմից:

Պարգևատրվել է Գերագույն խորհրդի պատվոգրով, արժանացել է տասնվեց մարտական, աշխատանքային ու կառավարական պարգևների:

**ՂԱԼԵՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ:** Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր: Ծնվել է 1934 թ. հունվարի 21-ին: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտ և 1959 թ-ին սկսում է աշխատել տեղի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում:

1977-1986 թթ. ԵՊՀ կոնդենսացված միջավայրի ֆիզիկայի ինստիտուտի բաժանմունքի վարիչ էր: 1986 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի բաժանմունքի վարիչ: Զբաղվել է տորոիդային մագնիսական թակարդներում պլազման պահելու հետազոտություններով:

Ուսումնասիրել է ցածր ջերմաստիճանային պլազմայի հատկությունները գազային լազերների ստեղծման նպատակով: Ղեկավարել է լազերային ինտերֆերաչափի, գազային լազերների ստեղծման աշխատանքները, հետազոտել է լազերային պլազմայի տարածման դինամիկան, էլեկտրաբացասական գազերի պլազմայի հատկությունները, ինչպես նաև գազի հոսքում գազային պարպման երևույթը:

Թեկնածուական դիսերտացիան պաշտպանել է 1974 թ., դոկտորականը՝ 1984 թ.՝ ատոմային էներգիայի ինստիտուտում՝ Ի.Վ.Կուրչատովի անվան ԽՍՀՄ ԳԱ ֆիզիկայի և քիմիայի պլազմայի բաժնում: Նրա բազմաթիվ աշխատանքները նվիրված են գազային լազերների ստեղծման դինամիկային. «Քվանտային էլեկտրոնիկա», «Պլազմայի քիմիա»...

Զեկուցումներով հանդես է եկել միութենական և միջազգային սիմպոզիումներում: Նրա նախաձեռնությամբ Երևանում և Մեղրիում կազմակերպվել են միութենական սեմինարներ՝ աշխարհի նշանավոր գիտնականների մասնակցությամբ: Ուսումնասիրության նյութը պլազմային վերաբերող հարցերն են...

Գ.Ա.Ղալեչյանի մի շարք աշխատություններ օգտագործվել են ռազմական ղեկավարության կողմից: Նրա բազմաթիվ աշխատությունները ու հոդվածները հրատարակվել են ԽՍՀՄ և Հայաստանի Գիտությունների ակադեմիաների, ինչպես նաև արտասահմանյան ամսագրերի կողմից:

**ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱԿՈԲԻ:** Ծնվել է 1914 թ.: Միջնակարգ կրթությունը հայրենի գյուղում ստանալուց հետո մեկ տարի զբաղվել է ուսուցչությամբ: 1932-35 թթ. ուսանում է Լենինգրադի պատմության, փիլիսոփայության, գրականության և լեզվաբանության ինստիտուտի





Կովկասյան լեզուների բաժնում: Այստեղ է, որ նա լսում է անվանի լեզվաբաններ Ն.Մառին, Ի. Մեշչանինովին: Տեղափոխվելով Երևան՝ 1937-ին ավարտում է պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1938-1941 թթ. սովորում է ԽՍՀՄ ԳԱ Լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: Երևանում աշակերտում է անվանի լեզվաբաններ Հ.Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Հ,Կուսիկյանին, Գ.Սևակին և ուրիշների:

Մ.Պողոսյանն առաջին հայ կինն է, որ հայագիտության գծով գիտական թեզ պաշտպանեց և ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Նա մանկավարժական ասպարեզը միշտ զուգակցել է գիտական գործունեության հետ, տպագրել է մի շարք աշխատանքներ՝ հայոց լեզվի վերաբերյալ: 1945 թ. Մ. Պողոսյանին շնորհվում է դոցենտի կոչում:

1941 թ-ից Մարգարիտ Պողոսյանը աշխատել է Վ.Յա. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում՝ որպես լեզվաբանության դասախոս:

1947 թ-ից սկսած, գրեթե անընդմեջ, մինչև 1972 թ. ինստիտուտում ղեկավարել է լեզվաբանության, ապա հայոց լեզվի և գրականության ամբիոնը, որտեղ և դրսևորվեցին Մ.Պողոսյանի մարդկային բարձր հատկանիշները՝ հոգատարություն, սրտացավ վերաբերմունք դեպի ընկերները և ուսանողները:

Մ.Պողոսյանը հասարակական կյանքի եռանդուն մասնակից է ոչ միայն ինստիտուտում: Նա երեք անգամ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր և լիովին արդարացրել ընտրողների վստահությունը:

Միշտ սրտացավ վերաբերմունքով, չխնայելով իր ժամանակն ու հանգիստը՝ նա ձգտել է ամեն կերպ բավարարել ընտրողների կարիքներն ու ցանկությունները:

Ունի կառավարական մի շարք պարգևներ:

Մ. Պողոսյանի մասին տես՝ «Երեկոյան Երևան», 12.VII, 1974:



**ԱԴԱՄՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ:** Ծնվել է 1965 թ.՝ մանկավարժների ընտանիքում:

1982 թ. ավարտել է ծննդավայրի N2 ռուսական միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Մոսկվայի ֆիզիկա-ինժեներական ինստիտուտը, որն ավարտել է 1988 թ.:

1994 թ. ք.Դուբնայի միջուկային ֆիզիկայի միացյալ ինստիտուտի տեսական ֆիզիկայի լաբորատորիայում պաշտպանել է գիտական թեզ և

ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան:

Հեղինակ է միջուկային ֆիզիկայի ռեակցիաներին վերաբերող մի քանի տասնյակ հոդվածների, որոնք տպագրվել են հայրենական և արտասահմանյան ամսագրերում:

Այսօր նա Ալեքսանդր ֆոն Հումբոլդի (Գերմանիա) անվան ֆոնդի թոշակառու է... Նա շարունակում է աշխատել գիտության այդ ճյուղի զարգացման վրա, համոզված, որ կհասնի նոր բարձունքների...

**ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԺԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ**: Ծնվել է 1935 թ.: Ավարտել է Շահումյանի N1 միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում: Ասպիրանտուրան ավարտել է Մոսկվայում: Դոցենտ է, աշխատում է Վանաձորի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես ամբիոնի վարիչ: Հեղինակ է մի շարք աշխատությունների ու գյուտերի:



**ՀԱԿՈԲՅԱՆ (ԿՈՍՄԱՐՍԿԱՅԱ) ԻՍԿՐԱ ՎԱՂԻՆԱԿԻ**: Ծնվել է Շահումյանում 1958 թ.՝ ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Վաղինակը գյուղատնտես է, մայրը՝ Լիդան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1975 թ. ավարտել է Շահումյանի N2 միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով: Նույն ուսումնական տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ և ավարտել 1980 թ.: Ապա ընդունվել ասպիրանտուրա, որն ավարտել է ու Մոսկվայում պաշտպանել թեկնածուական թեզը:

Հեղինակ է մի շարք աշխատությունների:

Դասախոսում է Մոսկվայի պետհամալսարանի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնում:

**ՆԱԴԻՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ**: Ծնվել է 1939 թ., վաստակավոր ուսուցիչների ընտանիքում:



1957 թ. ոսկե մեդալով ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ նույն թվականին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետ:

1963 թ. ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հայկական ԽՍՀ-ի Թալինի շրջանի Դալարիկ ավանում, որպես տեղամասային բժիշկ:

1966 թ. հանձնելով թեկնածուական մինիմումի քննությունները՝ մեկնել է Մոսկվա՝ տարիքային ֆիզիոլոգիայի ինստիտուտ, որտեղ էլ 1969 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1969-2000 թթ, աշխատել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում, սկզբում որպես դասախոս, հետագայում՝ ավագ դասախոս և դոցենտ:Այժմ պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր է:

Մ.Վ.Նադիրյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են բժշկագիտության կարևոր ուղղություններից՝ արյան մակարդելիության համակարգի կենտրոնական կարգավորման մեխանիզմների պարզաբանմանը, որը հնարավորություն է տալիս կանխարգելելու արյունահոսությունների և թրոմբոզների առաջացումը:

Նշված թեմայով տպագրված են նրա՝ գիտական մոտ 60 աշխատանքներ:

1993 թ. Մ.Վ.Նադիրյանը զուգահեռաբար հրավիրվել է աշխատանքի Ավանդական բժշկության ինստիտուտ, որպես բժշկագիտական տեսական առարկաների ամբիոնի վարիչ, որտեղ և ստացել է պրոֆեսորի կոչում:



**ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԲԱԼՈՒԻ**: Ծնվել է 1874 թ. Շուլավերում՝ գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում, սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, զբաղվել է մանկավարժությամբ: Ռոստովում ունեցել է տպարան, որտեղ լույս է ընծայել իր գրվածքները՝ «Որբիկների արցունքները», «Սասունցի Դավիթ», «Աստվածային Միեր», «Մտքի սերմնացան»: Ունի բազմաթիվ նամակներ՝ գրված Ալ. Ծատուրյանին, Հակոբ Հակոբյանին, Հովհ. Թումանյանին, Ղ.Աղայանին և ուրիշների...

Գ.Բալասանյանը «Մտքի սերմնացան» բանաստեղծությունը նվիրել է Ղ.Աղայանի գործունեության 40-ամյակին, սակայն միակ աղջկա մահվան կապակցությամբ չի կարողացել հանդիսությանը ներկա լինել. այն ուղարկել է Հովհ. Թումանյանին և խնդրել հոբելյանի օրը կարդալ ու հանձնել Աղայանին:

Գ.Բ.Բալասանյանը նաև կինոռեժիսոր էր, հեղինակ է կինոյին վերաբերող բազմաթիվ հոդվածների:

Գ.Բալասանյանը 1933 թ. բռնադատվել է և մահացել Տաշքենդում 1937 թ.: Միայն 1954 թ. արդարացվել է ետմահու:



**ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԲԳԱՐ ԻՍԱՀԱԿԻ:** (10.6.1885-14.2.77), խորհրդահայ մանրէաբան, մանկավարժ, պրոֆեսոր (1929 թ.), գիտության վաստակավոր գործիչ (1940 թ.): Ավարտել է Թիֆլիսի II գիմնազիան (1905 թ.): Ավարտել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1911 թ. և աշխատել է նույն համալսարանում, ապա՝ Վոզնեսենսկում: 1914-ին վերադարձել է Հայաստան: Էջմիածնում աշխատանքներ է ձեռնարկել մալարիայի և որովայնային տիֆի դեմ պայքարելու ուղղությամբ, մեծ օգնություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանից գաղթած հայ բնակչությանը, մասնակցել որբերի խնամքի ու բուժման գործին: 1915-20-ին աշխատել է Պարսկաստանի Խոյ քաղաքում: 1920-ին վերադարձել է Հայաստան, ձեռնամուխ է եղել քիմիաբակտերիոլոգիական ինստիտուտի կազմակերպմանը, ուր 1921-ին պատրաստվել է ծաղկի առաջին վակցինան: 1920-ին Հ.Հովհաննիսյանի և Ա.Իսահակյանի խմբագրությամբ լույս է տեսել «Մալարիա» գիտահասարակական հանդեսը: Եղել է Երևանի բժշկական, անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտների ամբիոնների, համաճարակագիտության ու հիգիենայի ինստիտուտի մանրէաբանության բաժանմունքի վարիչ: Գիտական աշխատությունները նվիրված են մալարիայի, որովայնային տիֆի, խոլերայի, ծաղկի, բրուցելոզի ախտորոշման, բուժման և կանխարգելման հարցերին: 1923թ. Հայաստանի կառավարական հանձնաժողովի առաջարկությամբ համալսարանին կից կազմակերպվել է բժշկական ֆակուլտետ: 1924 թ. փետրվարից Իսահակյանը գլխավորել է բժշկական ֆակուլտետի ղեկավարությունը:

1925 թ. մասնակցել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի 200-ամյակի հանդիսություններին՝ որպես Հայաստանի պատգամավոր: Նա 47 գիտական աշխատությունների, բազմաթիվ հոդվածների հեղինակ է:



**ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏԻՔԻ:** Ծնվ. է. Շուլավերում 1860 թ.: Հայ բանահավաք, գրող, թարգմանիչ, մանկավարժ: 1880-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1898-1903-ին սովորել է Դորպատի, Բեռլինի, Ենայի համալսարաններում: Շուրջ 50 տարի զբաղվել է մանկավարժությամբ՝ (1904-07-ին՝ Ներսիսայն դպրոցում, տարբեր տարիներին Կողբ գյուղում (այժմ՝ Նոյեմբերյանի շրջանում), Գանձակում, Թիֆլիսի Հովնանյան (Մարիամյան-Հովնանյան) օրիորդաց դպրոցում): 1896-ին, հայկական դպրոցների փակման կապակցությամբ, Քամալյանը ֆելիետոն է տպագրել «Արձագանք»-ում և ցարական իշխանությունների հետապնդումից խուսափելու համար անցել է Գերմանիա:

Քամալյանի բանահավաքչական ու գրական գործունեության մեջ մեծ տեղ ունեն հեքիաթների, առակների մշակումները («Հեքիաթներ», 1892, «Ծովինար», 1893, «Շեն թագավորի աղջիկը», 1894, «Հողածին և անմեռ աշխարք», 1897, Ազգային առակներ», 1907, ժողովածուներ ու առանձին գրքույկներ), նշանավոր գրական երկերի համառոտ վերապատումները («Սասունցի Հովնան», 1900, «Սիրելի Հերոս», 1905): Քամալյանը գրել է նաև պատմվածքներ ու զրույցներ, որոնցում օգտագործել է հայոց պատմությունից առնված նյութեր («Խուլ Խաչիկ», 1894, «Գալո Ափո», 1895, «Աստված չճանաչող», 1895, «Վարդանանց և Ղևոնդանց մասին», 1910): Կատարել է թարգմանություններ-փոխադրություններ:

Մահացել է 1934 թ.:

Քամալյանը թողել է բանահյուսական, ազգագրական ու բանասիրական հարուստ ժառանգություն (անտիպ), որը պահպանվում է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում:



***Ձախից աջ՝ ներքևում***
*Նալբանդյան Թյունի (Կուզիկանց), Քամալյան Ավետիք (Սարգսի հայրը), Աբյան Ավետիք (գյուղի դատավոր)*
***Ձախից աջ՝ վերևում***
*Սարիբեկյան Գրիգոր, Քամալյան Սարգիս, Օհանյանց Խեչո (Միլանց պետի)*
*1905 թ.*



**ՄԻՐԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԵԼԻՔՍԵԹԻ:** (1883-1913թթ), պրոֆեսիոնալ հեղափոխական, հրապարակախոս, ՌՍԴԲԿ անդամ 1903-ից: Եղել է Ս.Շահումյանի և Կամոյի զինակիցներից: Հեղափոխական շարժումների մեջ ընդգրկվել է 1900-ից: Մասնակցել է ՌՍԴԲԿ Կովկասյան միության ստեղծմանը: 1904-ի վերջերին ուղարկվել է Հայաստան՝ տեղում ամրապնդելու սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքը և կազմակերպելու նորերը: 1905-ի մայիսին ընտրվել է ՌՍԴԲԿ Երևանի նորաստեղծ կազմակերպության կոմիտեի անդամ: Նույն թվականի նոյեմբերին ԴՍԴԲԿ Կովկասյան միության IV կոնֆերանսում ընտրվել է զինված ապստամբությունը նախապատրաստող ռազմատեխնիկական հանձնաժողովի կազմում: 1906-07-ին աշխատակցել է «Բանվորի ձայն», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Ֆակտի» (ռուս.) բոլշևիկյան թերթերին: Հեղափոխական ակտիվ գործունեության համար քանիցս բանտարկվել է: Փախել է Ալեքսանդրապոլի (Լենինական) և Բաքվի՝ Բայիլովի բանտերից: 1911-ին ձերբակալվել է Հյուսիսային Կովկասում: Մահացել է Դոնի Ռոստովի բանտում:



**ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ:** Ծնվել է. 25.6.1904. Շուլավերում: Հայ հոգեբույժ: Բժշկ . գիտ. դոկտոր (1941), պրոֆեսոր (1942), ԽՍՀՄ ԲԳԱ թղթակից անդամ (1961): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): ԽՄԿԿ անդամ 1930-ից: 1929-ին ավարտել է Դոնի Ռոստովի Հյուսիսկովկասյան համալսարանի բժշկ. ֆակուլտետը: 1933-41-ին եղել է տեղի բժշկ. ինստիտուտի ասիստենտ, ապա `դոցենտ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (1941-1944): 1944-ից Երևանի բժշկ ինստիտուտի հոգեբուժության ամբիոնի վարիչն էր: 1946-48-ին եղել է ինստիտուտի տնօրենի տեղակալ՝ գիտական գծով: Գիտական աշխատանքները նվիրված են վարակային (հատկապես մալարիային) պսիխոզների, շիզոֆրենիայի, էպիլեպսիայի, գլխուղեղի վնասվածքների, ալկոհոլամոլության, նարկոմանիաների կլինիկական ընթացքի, հոգեախտաբանության դասակարգման և բուժման հարցերին: Ա.Հ.Մեհրաբյանը լուսաբանել է գիտակցության և անձի (բնականոն և ախտաբանական վիճակներում),



հոգեկան օտարացման, զգայախաբությունների, զառանցական մտքերի և ապաանհատականացման խնդիրները: 1944-ից Մեհրաբյանը ՀԽՍՀ նյարդավիրաբույժների ընկերության նախագահն էր: Երկ. О природе индивидуального сознания, Е., 1959; Деперсонализациа, Е., 1962; Личность и сознание, М., 1978 (ՀՍՀ. h.7. Ե., 1981, էջ 414):



**ՉՈԲԱՆՅԱՆ ԺԻՐԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ:** (1940-2001): 1957 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1962 թ. ավարտել է Երևանի Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը:

1962-1967 թթ աշխատել է Ալավերդու և Նոյեմբերյանի գյուղատնտեսության արտադրական վարչությունում, 1967-1969 թթ. աշխատել է Թումանյանի շրջանում որպես սովխոզի տնօրեն:

1971-1975-ին՝ Թումանյանի գյուղվարչության անասնաբույժ: 1975-90 թթ. աշխատել է Ալավերդու լեռնաէկոլոգիական կոմբինատում, որպես փոխտնօրեն:

1990-1991-ին՝ որպես Խաչի գյուղի սովխոզի տնօրեն, այնուհետև՝ Գյուղվարչության պետի տեղակալ:



**ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ:** Ծնվել է 1938 թ., արհեստավորի ընտանիքում: 1954 թ. ավարտել է միջնակարգը և ընդունվել Երևանի բժշկական ուսումնարանի դեղագործական բաժինը: 1958 թ. զորակոչվել է: 1961 թ. զինծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի առաջին պետական բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետը, որն ավարտել է 1966-ին: 1961-1963 թ. աշխատել է որպես Երևանի զինվորական հոսպիտալի դեղատան պետ: 1963-1965 թվականներին եղել է Երևանի օպտիկայի խանութի տնօրեն, 1965-1967 թթ-ին՝ Հայբուժտեխնիկայի բուժապարատների բազային կառավարիչ:

1967 թ-ից Երևանի թ.9 դեղատան վարիչն է:



**ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄՀԵՐ ԱՇՈՏԻ:** Ծնվել է 1939 թ., մանկավարժների ընտանիքում: 1958 թ. ավարտել է միջնակարգը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Աշխատել է որպես

խանութի վարիչ՝ ծննդավայրում, 1979 թ-ից՝ Երևանում: Եղել է ակտիվ հասարակական աշխատող (թ.6 սննդառի աշխատավորական կոլեկտիվի նախագահ): 1999 թ-ից Երևանի թ. 1 շուկայի փոխտնօրենն է:



**ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԿԼԵՆ ԱՂԱԲԵԿԻ:** (1930-1990) Ծնվել է Շահումյան ավանում 1930 թ., հայրը հողագործ էր, մայրը՝ տնտեսուհի:

Աշխատանքային գործունեությունը սկսել է ավանի մշակույթի տանը, 1953 թ. հոկտեմբրից մինչև 1961 թ.՝ տնօրեն:

1976 թ. ընտրվել է ավանային խորհրդի պատգամավոր, ապա մինչ իր մահը՝ ավանային խորհրդի գործկոմի նախագահ: Նշանակալից է նրա դերը ավանի ղեկավարման գործում:

1968 թ. հունվարին նրան շնորհվել է Վրաստանի մշակույթի վաստակավոր գործչի կոչում:



**ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՍԻՆԱՍԱՐԻ:** Ծնվ. է 1940 թ. մտավորական զինծառայողի ընտանիքում: Միջնակարգն ավարտելով արծաթե մեդալով ընդունվել է Մոսկվայի օդաչուական բարձրագույն ուսումնարանը: Աշխատանքի անցնելով ավիացիայում՝ նա իրեն դրսևորեց որպես հրաշալի մասնագետ՝ գրագետ, հմուտ, շրջահայաց, բարդ հանգամանքներում լավագույնս կողմնորոշվելու բացառիկ ընդունակություն՝ արժանիքներ, որոնց շնորհիվ էլ օդանավի անձնակազմի հրամանատար Մաթևոսյանի ուղևորները միշտ էլ իրենց ապահով են զգացել ցանկացած չվերթի ընթացքում: Նրա վարած ՏՈՒ-երն ու ԻԼ-երը միշտ «ժպիտով են ընդունել» սլացիկ կեցվածքով ու կենսախինդ հայացքով իրենց մոտեցող ասպետին՝ Վալերի Մաթևոսյանին...





**ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՄԼԻԿ ՍԱՐԻԲԵԿԻ:** Ծնվ. է 1924-ին, 1941-ին տեղում ավարտել է միջնակարգը: 1942-ի գարնանը զորակոչվելով՝ սովորել է Մանգլիսի (Թբիլիսիի մոտ) հետևակային ուսումնարանի արագացված դասընթացներում: Վաղաժամկետ հանձնելով քննությունները՝ 18-ամյա կրտսեր լեյտենանտը ուղարկվել է Հյուսիսկովկասյան ռազմաճակատ (257-րդ հրաձգային դիվիզիա):

1943-ին՝ համընդհանուր հակահարձակման օրերին լեյտենանտ Հակոբյանին հանձնարարվում է գրավել Կուբանի հակառակ ափի ֆաշիստական պլացդարմը: Հակոբյանի ստորաբաժանումը հաջող գետանցումից հետո դիրքավորվում է, և լուսաբացին սկսվում է կատաղի մարտը՝ ցամաքից և օդից: Կատարվում է առաջադրանքը՝ ամբողջ գումարտակի կյանքի գնով... Հոսպիտալում մահանում է նաև 19-ը չլրացած լեյտենանտ Համլիկ Հակոբյանը՝ 1.08.1943-ին:

Թաղված է Կրասնոդարի երկրամասի Ղրիմյան շրջանի Ղրիմյան խուտորի եղբայրական գերեզմանոցում:



**ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՎԱՂԻՆԱԿԻ:** Ծնվ. է 1918-ին: Միջնակարգն ավարտել է տեղում, 1935-ին՝ Թբիլիսիի մանկավարժական տեխնիկումը, 1938-ին ընդունվել է Երևանի պետհամալսարանի ֆիզմաթ ֆակուլտետ: Երրորդ կուրսից մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է (Թամանյան դիվիզիայի կազմում) Կերչի ազատագրման համար մղված մարտերին, որոնցից մեկի ժամանակ էլ ծանր վիրավորվում է: Ապաքինվելուց հետո զորացրվում է (1943 թ.): Շարունակում է թերի թողած ուսումը, որն ավարտում է 1947-ին: Հետագայում պաշտպանում է թեկնածուական թեզ: Հեղինակ է գիտական և մեթոդական ձեռնարկների, ՀՀ-ի վաստակավոր մանկավարժ է:

Մահացել է 1992 թվականին:

## ՇՈՒԼԱՎԵՐԸ 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 16-ԻՆ

Շուլավերը Բորչալու գավառի կենտրոնն էր, որը հնարավորություն էր տալիս շփվելու հեղափոխականորեն տրամադրված այն մարդկանց հետ, ովքեր որպես բանվորներ աշխատել և աշխատում էին արդյունաբերական խոշոր քաղաքներում: Բաթումից եկած շուլավերցի նավթագործներ Հարություն Թառանյանը, Ռուբեն Մարությանը, Բագրատ (Բանգո) Գաբրիելյանը և շատերն իրենց տպավորություններն էին պատմում 1905-1907 թթ. Ռուսական հեղափոխության մասին: Այստեղ էին այցելում պրոֆեսիոնալ հեղափոխականներ Ս.Շահումյանը, Ս.Խանոյանը, Ս.Կասյանը, Ա.Կախոյանը և ուրիշներ: Բնիկ շուլավերցի էր Մարտիրոս Մելիքսեթի Միրաքյանը (Շանթը), որն էլ (անլեգալ) հայրենի ավանում 1905 թ. հիմնադրել էր կոմունիստական կազմակերպություն:

1917թ. օգոստոսի վերջերին հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն Ասատուր Կախոյանի ղեկավարությամբ` խորհուրդները բոլշևիկացնելու հարցով` Սուրեն Շլեպչյանի բնակարանում: Սանասար Ղալեչյանին ընտրում են Շուլավերի քաղխորհրդի նախագահ: Ընտրվում է գավառային կուսակցական կոմիտե Արամ Երիցյանի նախագահությամբ և Լևոն Ուլիբեգյանի քարտուղարությամբ:[215]

Արամ Երիցյանն իր հուշերում գրում է, որ գավառային կոմիտեն պաշտոնապես ձևակերպվել է 1918 թ. փետրվարին, որի կազմում ընդգրկված էին` Ստեփան Հարությունյանը, Պանահետ Ջավախովը (Օփրեթ գյուղից), Մեխակ Հախյանը, Վահան Տեր-Հակոբյանը, Գրիգոր Չիրքինյանը, Գևորգ Պետրոսյանը, Սեդրակ Սարգսյանը, Սանասար Ղալեչյանը (գավկոմի նախագահ), Արամ Երիցյանը, Լևոն Ուլիբեգյանը, Ռոստոմ Շարիֆովը, Տեֆո Մագդալասովը:

Ժողովրդի ծանր վիճակը նպաստում էր հեղափոխական շարժումների ուժեղացմանը: Գյուղացիների վիճակը շատ ծանր էր. չէին կարողանում հաղթահարել սովը: «Պահակ» թերթը գրում էր` «... Կառավարության ագենտները խլում էին գյուղացիներից նրանց աշխատանքի արդյունքը` մի քանի ամսվա պաշարը:[216]

«Շուլավերը և շրջակայքը տնտեսական և պարենավորման սուր ճգնաժամի մեջ է, քանի գնում ավելի սուր կերպարանք է ընդունում ... Շուլավերն իր շրջակայքով այժմ անօգնական դրության մեջ է ...: Սովը արդեն մանգաղը ծեռքին կանգնած է Բորչալուի հայկական գյուղերի գլխին...»:[217] 1920 թ. գաղթականների նոր խումբ է գալիս Շուլավեր`

215. ՀԿԿԿ կուս. արխիվ, Ֆ-Ս, գործ-13, Թ-51:
216. «Պահակ» թ., 1.01.20թ.:



իր հետ բերելով խոլերա, մի շարք հիվանդություններ: Թուրքերի հեռանալուց հետո էլ գավառում լարված են մնում ազգամիջյան հարաբերությունները: 1918 թ. ամռանը Շուլավերում ստեղծվում է ինքնապաշտպանության զինված ջոկատ: Հանկարծակի հարձակման դեպքերը կանխելու նպատակով ավանում և շրջակայքում կապի միջոցներ էին տեղադրվում: Կազմակերպում են պարտիզանական ջոկատներ` ընդհանուր թվով մոտ 600 հոգի: Նրանց հետ անտառներում գաղտնի զինավարժություններ էին անցկացնում` Ռուբեն Պետրոսյանը, Սանասար Ղալեչյանը, Ստեփան Հարությունյանը, Վահան Հարությունյանը, ռազմական հրահանգիչ` Պետրոսյանը:

Գաղտնի կերպով նախապատրաստվում էին զինված ապստամբության: Այն նախապատրաստելու համար Շուլավեր էին գալիս` Ս.Կասյանը, Ա.Մռավյանը, Ա.Կախոյանը և ուրիշներ:[218]

Երկու անգամ այն ձախողվել էր: Շուլավերի ապստամբությունը պետք է սկսվեր Լոռու ապստամբության հետ: Մորզեի ապարատով հաղորդել էին օրը և ժամը, որի մասին գիտեին նաև Բորչալուի բոլոր գյուղերը, սակայն Շուլավերի փոստի կառավարիչը չէր հաղորդել, բացի այդ էլ ձերբակալվել էին Ս.Ղալեչյանը և կոմիտեի շատ ղեկավարներ:

1921 թ. փետրվարի 15-ին Ասատուր Առուստամյանի զորախումբը, Սադախլո գյուղը գրավելուց հետո շարժվում է` Խոժոռնի գյուղով դեպի Շուլավեր: Իր զորախմբով Շուլավեր է շարժվում Ն' եքսան Բարսեղյանը:

Փետրվարի 15-ին վաղ առավոտյան` ժամի 5-ից, սկսում են ռմբակոծել քաղաքը: Շուլավերից կապավորը տեղեկացնում է իրադրության մասին, դադարեցվում է ռմբակոծությունը, երկու բանակները պատրաստվում են մտնել Շուլավեր: Շուլավերին օգնության են գալիս պարտիզանական խմբերը Շնողից` Սերգո Փարսադանյանի, Հաղպատից` Հակոբ Ալիխանյանի, Սանահինից` Դանիել Հարությունյանի և Կողբից` Դուրմիշ Աթայանի հրամանատարությամբ (գրում է Սուրեն Շլեպչյանը` անցուդարձի մասնակիցը):

Վրացիները, օգտվելով մառախուղից, դուրս են գալիս Շուլավերից և նահանջում են դեպի Թիֆլիս` իրենից հետ տանելով նաև փոստի գումարը: Ժողովուրդը իրենց օգնող պարտիզանների հետ հասնում է գումարը հափշտակած վրացիների ջոկատին` Շեկեկ կոչված վայրում, խլում թալանածը, իրենց էլ գերեվարում: 1921 թ. փետրվարի 16-ին Սիոնից դեպի Շուլավեր են շարժվում Յանց կոչված

217. «Պահակ» թերթ, 8/1, 1920 թ.:
218. ՀԿԿ արխիվ, Ֆ-4-նո, Գ.նո 23, թվ.39:

հանդամասով Ա. Առուստամյանի խումբը, Ղուլի Գյադուկ տեղամասից՝ Ս. Սարգիս մատուռի կողմից ու Կիկոլի պակեր (բակեր) տարածքից՝ Ալ, Բարսեղյանի հեծյալ բանակը:

Հռիփսիկ Աբրահամյանը (կոմերիտական կազմակերպիչ) իր հուշերում գրում է, որ փետրվարի 16-ի (1921 թ.) վաղ առավոտյան լեռներից իջնող կարմիր պարտիզաններին նկատել էր թիթեղագործ Երվանդը: Նա մի կարմիր կտոր փայտին էր կապել, վազում էր քաղաքի կենտրոնական փողոցով ու գոռում էր՝ «եկան, եկան տավարիչները, գդրաստի...»: Ամբողջ քաղաքի բնակչությունը դուրս է հորդում աղ ու հացով և գթառատ ընդունելություն ցույց տալիս: Սկսվում է միտինգը՝ Ալեքսանդր Բարսեղյանի ելույթով:

1921 թ. փետրվարի 16-ին՝ կեսօրին, Շուլավեր է մտնում XI բանակի ստորաբաժանումներից մեկը՝ բարձրաստիճան զինվորականներ Հովսեփ Լազյանի, Միխայիլ Վելիկանովի և մի քանի այլ բոլշևիկների գլխավորությամբ: Մ. Օրախելաշվիլին հայտարարում է հեղկոմի կազմը՝ Ֆ.Ի. Մախարաձեի նախագահությամբ:

Մ.Օրախելաշվիլին Վրաստանի բանվորների, գյուղացիների, զինվորների, բոլոր աշխատավորների անունից հայտարարում է, որ ապստամբությունը գլխավորելու համար, կատարելով ապստամբների կամքը, քաղաք Շուլավերում 1921 թ. փետրվարի 16-ին կազմվեց Վրաստանի հեղափոխական կոմիտեն, որն իր ձեռքը վերցնելով ամբողջ պետական իշխանությունը՝ հայտարարում է, որ Ն.Ժորդանիայի գլխավորած մենշևիկների կառավարությունը տապալված է, Վրաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն է:


Հարությունյան Գևորգ Մովսեսի Շուլավերի «Կոմսոմոլ» կազմակերպության ակտիվ մասնակիցներից մեկը

Միտինգում ընթերցվեց դիմում՝ ուղղված խորհրդային Ռուսաստանի իշխանություններին և անձամբ Վ.Ի.Լենինին:[219]

Վրաստանի հեղափոխական կոմիտեն իր կազմով փետրվարի 16-ից մինչև 25-ը գտնվում էր Շուլավերում (տեղադրված էր Քալանթարյանների և Մելիք-Փաշաևի տներում, որտեղ այժմ քաղաքային և մանկական գրադարաններն են և Ա.Շ.Մելիք-Փաշաևի տուն-թանգարանը):

Վրաստանի մայրաքաղաքի ազատագրմանը վրաց ազատագրական բանակի հետ մասնակցում են 11-րդ բանակի

219. Վ.Ի.Լենինի, երկեր, h-32, էջ 175-176:



ստորաբաժանումներ, Հայաստանի պարտիզաններ և 200-ից ավելի շուլավերցիներ: 1921 թ. փետրվարի 25-ին Թիֆլիսի վրա ծածանվում է խորհուրդների դրոշը, որի կապակցությամբ Ս.Կ.Օրջոնիկիձեն հեռագրում է Վ.Ի.Լենինին: Այդ նույն օրը Վրաստանի Հեղկոմի կազմը տեղափոխվում է Շուլավերից Թիֆլիս: XI բանակի հատուկ ուղեգրերով բանտերից վերադառնում են Շուլավեր Արամ Երիցյանը, Գեորգի Հակոբյանը, Զարմո Զարգարյանը, Ռուբեն Մարությանը, Սինասար Ղալեչյանը, Ռուբեն Պետրոսյանը: Հեղափոխության հաղթանակից հետո Շուլավերում քաղաքի պաշտպանության համար ստեղծվում են պարետային վաշտ, պարենավորման կոմիտե, կոմունալ բաժին, լուսավորության բաժին, արտելներ, արհեստանոցներ՝ ժողովրդին աշխատանքով ապահովելու համար ...:

Շուլավերի խորհրդի գործկոմը որոշում է բռնագրավել՝ Միրաքանց անտառները («Կարմիր քար»), գավառի կոմիսարիատի շենքը (1899 թ. կառուցված), գավառի դատարանի շենքը, Գայանյան դպրոցի շենքը, Քալանթարյանների, Խուդադյան Մուշեղի, Պառավյան Սիմոնի տները: Գործկոմի իրավասության տակ դրվեցին բոլոր վաճառատները (Մեհրաբյանների, Կարախանյանների, Քամալյանների, Վերմիշյանների խանութները): 1921 թ. մարտի 2-ի ժողովի որոշմամբ պետականացվեցին ավանում գտնվող բոլոր ջրաղացները:

Եռյակը (Հարություն Թառանյան, Օրբել Զախարյան և Սուրեն Շլեպչյան) իրականացնում էր բոլոր բռնագրավումները և պետականացնում:[220] Կարևոր աշխատանք էր կատարում սանիտարական հանձնաժողովը, որը հետևում էր քաղաքի, ջրուղիների, գետափերի, փողոցների ... մաքրությանը: Բնակչության բուժօգնության կազմակերպողներն էին բժիշկներ Ղորղանյանը և Թեյմուրազովը. նրանց ջանքերով բացվեցին փոքրիկ պոլիկլինիկա և դեղատուն:


Վարդանյան Աղունիկ Գրիգորի Շրջանի և քաղաքի «Կոմսոմոլ» կազմակերպության քարտուղար

1921 թ. մայիսի 15-ին հրավիրվում է կանանց ընդհանուր ժողով՝ կանանց խնդիրների լուծման օրակարգով (զեկուցող՝ Անահիտ Քուրանյան, իսկ Անահիտ Բաբայանը տեղեկացնում է Թիֆլիսում և Մոսկվայում կանանց գալիք համագումարների մասին:) Այդտեղ էլ ընտրվում են Թիֆլիսի համագումարի համար պատգամավորներ

220. Շուլավերի գործկոմի արխիվ, ֆոնդ 36, գ.2, опись 1, лист 6:

(Փաշո Շահինյան, Կապատ Նազարյան, Մանո Միրաքյան, Սոֆո Կարախանյան, Հայկանուշ Հակոբյան):[221]

Այդ ժամանակ քաղաքի հեղափոխական կոմիտեի գործերի կառավարիչն էր Զարմո Զարգարյանը, տեխնիկական քարտուղարը՝ Մովսես Հարությունյանը, քաղկոմի ներքին գործերի բաժնի վարիչ՝ Սանասար Ղալեչյանը, պարետը՝ Վաղինակ Օդաբաշյանը:[222]

Այդ օրերին կազմակերպվում է «Կարմիր ջուլհականոց» արտելը, ստեղծվում է «механическая токарная мастерская», որը տեղավորված էր շրջանի դատարանի նկուղային հարկում, արտադրում էր գյուղատնտեսական գործիքներ, որտեղ աշխատում էին թիթեղագործներ, դարբիններ՝ մոտ 16 հոգի: Կային դերձականոց, վարսավիրանոցներ, «Պրոգրես» արտել, թխվածքի արտադրամաս ...: Արևմտյան Հայաստանից նոր էին գաղթել Աղաբեկ և Համազասպ Քեսոյան եղբայրները, որոնք Ղարսում ունեցել էին կաշվի մշակման գործարան: Այդ փորձի հիման վրա Շուլավերում ստեղծում են կաշվի վերամշակման արտադրամաս, որտեղ աշխատում են մոտ 10 մարդ: Այս մասին պատմում են Աղաբեկի որդի Աշոտ Քեսոյանը և 90-ամյա Վարդան Սարգսյանը (վերջինս աշխատել է այդ արտադրամասում): Արտադրանքը հանձնվում էր «Պրոգրես» արտելի նախագահ Գևորգ Միսակի Թեյմուրազյանին, այն բաժանվում էր կոշկակարների միջև, հանձնվում էր խանութներին՝ վաճառքի համար: Այդ կաշվից տրվում էր նաև կույրերի արտելին: Հետագայում կառավարության կարգադրությամբ արտադրամասը փակվեց:

Շուլավերի հեղկոմին կից 1921 թ-ին ստեղծվում է ն/գ բաժին, որի խնդիրը կարգուկանոնի վերականգնումն էր ավանում և ամբողջ գավառում, պայքարը ավազակության, գողության և հակահասարակական երևույթների դեմ: Բաժնի պետ է նշանակվում Ս.Ղալեչյանը, նրա օգնականներ՝ Գեղամ Շլեպչյանը, Եփրեմ Թառանյանը, Աշոտ Սուլթանյանը, Ճավճավաձեն, Աշոտ Աբրահամյանը: Կազմակերպվում է հատուկ նշանակության ջոկատ Վրաստանի Հեղկոմի՝ 1921 թ. ապրիլի 20-ի N 26 դեկրետի համաձայն՝ ն/գ բաժնին օգնելու, օժանդակելու նպատակով: Ջոկատում ղեկավար դեր էին կատարում Վիրաբ Հովհաննիսյանը, Նիկիտա Վարդանյանը, Ամաս Ամիրբեգյանը և լենինգրադցի նավաստի Իվանչիկովը: Ավանի արխիվում պահվում է ջոկատի 51 մարտիկների ցուցակը:[223]

Հատուկ նշանակության ջոկատը մնաց մինչև 1924 թ. դեկտեմբերը, երբ արդեն իր վրա դրված խնդիրը կատարել էր:

221. Շուլավերի գործկոմի արխիվ, ֆոնդ 36, փ-41, опись 1, թ-25:
222.ՀԿԿԿ, արխիվ Ֆ-4, գր. 23:
223. Պրոկոֆիա Խվիչիա, «Վրաստանի միլիցիայի պատմությունը 1921-1937 թթ.», էջ 91, Թիֆլիս, 1977 թ.:



Շուլավերում, ապա նաև Մառնեուլում, որպես ն/գ աշխատակիցներ՝ աչքի էին ընկնում Երվանդ և Ռուբեն Մարությանները: Երվանդը պարգևատրվել էր 3 զենքով՝ հրացան, նագան, ատրճանակ: Քանի-քանի գողեր ու ավազակներ էր վնասազերծել Երվանդը: Այդ ամենով հանդերձ 1938 թ. փետրվարի 11-ին նրան մեղադրում ու բանտարկում են: 1956 թ. արդարացվում է ետմահու:

## ՇՈՒԼԱՎԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Տարբեր ժամանակներ մեր ավանն են այցելել շատ նշանավոր մարդիկ՝ գիտնականներ, գրողներ, դերասաններ... Մի քանի անգամ Շուլավեր է այցելել Խաչատուր Աբովյանը և գովեստով արտահայտվել նրանց մասին, հիացել նրանց քաջագործությամբ (Սոսի աղա, Մելիք Օհանջան «Վերք Հայաստանի»):[224]

Վախթանգ Մեհրաբյանի տանուտեր եղած ժամանակ Շուլավեր է այցելել Ն.Մառը, որը գնացել է Սպիտակ շեն, տեսել Բինիծորի Մեծ և Փոքր վանքերը...:

Մեր այցելուներն են եղել գրողներ Վրթանես Փափազյանը, Ղազարոս Աղայանը: Ալեքսանդր Շիրվանզադեն, Հովհաննես Թումանյանը, դերասան Արտեմ Լուսինյանը:

Շուլավերցի երկարակյաց (102 տ.) Սամսոն Ղազազյանը պատմել է, որ 1829 թ. Թիֆլիսից Էրզրում ճամփորդելիս Շուլավերով է անցել և 2 օր հյուրընկալվել ռուս մեծ բանաստեղծ Ա.Ս.Պուշկինը:

Ալեքսանդր Շիրվանզադեի նկարագրությամբ Շուլավերը մեծ գյուղաքաղաք է, բաղկացած 1000 տնից, բնակիչները բացառապես հայեր են, ունեն երկու եկեղեցի, արական և իգական ուսումնարան:

«Երկու պատվական երիտասարդներ՝ Արշակ և Վախթանգ Մեհրաբյանները, հյուրասիրեցին իրենց հայրական այգում, (այդ երկուսը լրագրողներ էին՝ «Աղբյուրի» և «Մշակի» թղթակիցներ:)»[225]

1812 թ. գերմանացի դիվանագետ Ֆրեյգանը Թիֆլիսից Երևան գնալիս անցել է Շուլավերով. «...Այս գեղեցիկ շրջանից մեզ առաջնորդեցին Շուլավեր, մի փոքրիկ ամրոց, ուր բնակում են կոզակներ...» (խոսքը ամրոցի մասին է): (Ուղեգրություններ, հ.Ձ, էջ 397): 1837 թ. Թիֆլիսից Արևմտյան Հայաստան է ուղևորվել գերմանացի կենսաբան Կարլ Կոխը, որը ճանապարհին այցելել է նաև Շուլավեր:

224. **Ս. Շլեպչյան,** Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հետ կապված մի ճշգրտում, N1, 1956 թ., էջ 1-2:
225. Տես հուշերը՝ Ալ. Շիրվանզանդե, երկերի ժողովածու, հ.9, 1961, էջ 73-75:



Ձախից աջ՝ Պառավյան Սիմոն, Հովհաննես Թումանյան, Մարտիրոս Նաիբ, Միրզոյան Շաքար, Պողոսյան Վարդան

Խորհրդային շրջանում Շուլավեր են այցելել հայ մշակույթի գործիչներ՝ բանաստեղծ Գրիկը, Արշիկ Ադիլխանյանը, գրող-արձակագիր Բենիկ Սեյրանյանը, Հրաչիկ Թանյանը (Վարդանյանը), Գևորգ Օլքինյանը, Մկրտիչ Ասլանյանը, Հովհաննես Կարայանը, Սերո Խանզադյանը, Նորիկ Երքեցյանը, Թիֆլիսի հայկական թատրոնի դերասանները, Արուս Ոսկանյանը, Հովհաննես Աբելյանը, Լուսինյանը, Շեկոյանը: 1960 թ. մարտի 2-ին Շահումյանի բեմում հանդես է եկել (Օթելլոյի դերում) Վահրամ Փափազյանը. մեծ տոն էր բնակիչների համար:

Ամենանշանավոր այցելուն Հ.Թումանյանն էր: Նա ոչ միայն այցելել է Շուլավեր, այլև սերտ կապեր է ունեցել նրա բնակչության հետ. **եղել է շուլավերցի քահանա տեր Հովհաննես Մաճկալյանի փեսան:** Տեր Հովհաննեսը քահանայություն էր անում նաև Թիֆլիսում, Թումանյանը նրա մոտ աշխատում էր որպես գործերի կառավարիչ և ամուսնացել էր նրա դստեր հետ: **Թումանյանը շուլավերցիներից առանձնապես մոտ էր Թանունց և Միրզոյան (Բշանց) ընտանիքների հետ:**

Հ. Թումանյանը հաճախ էր այցելում Շուլավեր: 1889 թ. նա ծանոթ էր Վահան Միրաքյանի հետ, երբ Վահանը աշխատում էր որպես ուսուցիչ Ստեփանավանում (Ջալալօղլի):

1898 թ. արդեն պատրաստ էր Վ.Միրաքյանի «Լալվարի որսի» առաջին տարբերակը: Թումանյանը, լսելով տեղի ուսուցիչ Ա. Չոբանյանից այդ մասին, գալիս է Վ.Միրաքյանի մոտ: Առաջաբանի ընթերցումից հետո Հ.Թումանյանը մակարգում է. «Եթե կաքսայի խուփը այսքան գեղեցիկ է, ապա միջի կերակուրը ինչքան համեղ կլինի»: Ամբողջն ընթերցումից հետո տետրի վրա մակարգում է. «Սիրեցի, Կոնո, քո անուշ երգը, թող Աստված օրհնի Գուգարքի բերքը» - գրում է իր հուշերում Վարվառա Միրաքյանը (Կոնո վարժապետի կինը:)[226]

Վահանն ու Հովհաննեսը հաճախ էին միասին գնում որսի ու ձկնորսության, հետները տանում էին հայտնի որսորդներ Մարութանց Եփրեմին և դուդրեցի Սողոմոնին...: Այդ շրջանում էլ Վահանը պատմել է քաջ Խուդիից, որի մասին գրել է Գրիգոր Բալասանյանը:

Դեռ 1894 թ. բանաստեղծը ուղևորություն է կատարել Լոռվա և Բորչալուի գավառներում, գրի առել իր տպավորությունները, նկարագրել նրանց կենցաղն ու սովորությունները:

1905-1907 թթ. հեղափոխության տարիներին Բորչալուի գավառում տեղի ունեցան հայ-թուրքական ընդհարումներ: Բանաստեղծը մեծ աշխատանք կատարեց հաշտեցնելու հարևան ժողովուրդներին, վերջ տալու արյունահեղությանը:

Թումանյանի հետ համագործակցում էին գավառի կոմիսար Աբդու Ռահիմ բեկ Հախվերդովը, նրա օգնական Նիկոլայ Պոպանդապուլոն, Շուլավերի կոմիսար Սանասար Ղալեչյանը, հասարակական գործիչներ Արամ Երիցյանը, Ռուստամ Շարիֆովը, Պանահատ Ջավախովը, Օմար Ֆայիկը, Ալեքսանդր Ֆարինևը (Ուռուտի սղոցարանների բանվոր) և ուրիշներ:

Հ. Թումանյանի ջանքերով հաջողվել է հեռացնել կռիվների վտանգը Շուլավերից և ամբողջ Բորչալուի գավառից: Երբ նորից սրվել էին ազգամիջյան հարաբերությունները Կովկասում (1918 թ.), Վրաստանի կառավարությունը Թումանյանին լիազորում է շրջելու Ղազախի և Բորչալուի գավառներում և հաշտության կոչ անելու բնակչությանը: Բանաստեղծը նորից մեծ աշխատանք կատարեց ժողովրդին խաղաղեցնելու համար, մեծապես օգնեց շուլավերցիներին: Հ. Թումանյանը գրում է. «Հենց որ սկսվեցին հայ-թուրքական կոտորածները, ես թողի իմ գրական սկզբունքը, վերցրի իմ ընտանիքը և գնացի Հայրենիք, այստեղ», - շարունակում է բանաստեղծը, - «հաշտեցնում էի՝ զանազանություն չդնելով հայերի և թուրքերի միջև, օգնում էի իշխանություններին՝ պահպանել խաղաղությունն ու օրինական կարգերը մեր գավառում»: Մի այլ առիթով գրում է, որ «սպանությունների մեջ, հրդեհի մեջ, թալանի ու թալանչիների մեջ զբաղվում էի խաղաղության և հաշտության գործով ... և սպիտակ դրոշը, որ անկարգությունների ողջ ժամանակամիջոցում պահում էի իմ ձեռքում,

226. **Միրաքյան Վ.** , «Հիշողություն Վահան Միրաքյանի մասին»,1952 թ., Երևան (գտնվում է Վ.Մ. ֆոնդում-387):




*Ա.Ս.Պուշկինի ճանփորդությունը Թիֆլիսից էրզրում 1829 թ.*



երբեք ձեռքիցս վար չդրեցի, ոչ Ղարախաչի հրդեհից առաջ, ոչ էլ այն ժամանակ, երբ հարձակվում էին, անգամ այն սարսափելի գիշերը, երբ թաքարները շրջապատել էին Շուլավերը, որտեղ գտնվում էին իմ կինը և իմ երեխաները, և ցանկանում էին սրի քաշել նրանց»:[227]

Հ. Թումանյանը մինչև կյանքի վերջը սերտ կապեր է ունեցել Շուլավերի հետ: **Նրա ավագ որդին՝ Մուշեղը, երկար տարիներ ապրել է Շուլավերում, ուներ սեփական բնակարան,** որն այժմ տրված է N1 մանկապարտեզին: Խորհրդային շրջանում **եղել է N1 միջնակարգ դպրոցի ուսմունական մասի վարիչը: Մուշեղը 1937 թ. դարձավ անհատի պաշտամունքի զոհ:** Սարգիս Քամալյանը հուշերում գրում է, որ Հիվանդ Թումանյանին երեք անգամ այցելել է: Թումանյանը ասել է, որ ուզում է ևս 10 տարի ապրի, որովհետև շատ գործեր ունի կատարելու, խոսք է տվել կարդալու Սարգիս Քամալյանի գրած «Սասունցի Դավթի» տարբերակը, **մտադիր է եղել «Հազարան Բլբուլ» պոեմի նյութը ավարտել ...:** Ասել է, որ մտադիր է եղել գնալու Մոսկվա, եթե ապաքինված վերադառնա, կգա Շուլավեր ապրելու: «Կհավաքենք գրողներին, տպարան կբացենք Գուգարքում ... դու էլ կգաս»:[228]

Ափսոս, որ Լոռվա երգչի երազանքն անկատար մնաց: Անցնում է այդ հանդիպումից մի քանի (15-20) օր, և մահանում է Թումանյանը:

## ՇՈՒԼԱՎԵՐՑԻ ԱՇՈՒՂՆԵՐԸ

Շուլավերում են ծնվել շատ հայտնի աշուղներ՝ Հազիրը, Ինջային, Շուլավերցի Գևորգը – Պետի տղա Չոբանյան Գևորգը, նրա նուրբ դայլայլուն ձայնը զմայլեցնում էր բոլորին:[229] Հիանալի էր կատարում. «Զայն տուր, ով ծովակ», «Կռունկ», «Հորովել» երգերը Ասատուր Նալբանդյանը: Նշանավոր երգիչ էր Եգորյան Գևորգը, որին կոչում էին սազանդար Գևորգ՝ Եգորյան Ալեքսանդրի պապը: Ինչպես չհիշել Զավդինին (Քեշիշ օղլի), Զարգար Վանեսին, Եաղուբին (Յաղուբ) և ուրիշներին:

**Հազիր-Աբրահամ Դավիթի Աբրահամյան (Աբրո)** (1845-1922): Ծնվել է Շուլավերում, Ղարամուրադ թաղի տիրացու Դանիկոյի փոքր եղբայրն էր: Տեղափոխվում է Թիֆլիս, սովորում է գրել, կարդալ հայերեն, վրացերեն, թուրքերեն, սովորեցրել է իր աշակերտներին նվագել, գրել, կարդալ... Ուներ շատ դուրեկան ձայն, մասնակցում էր աշուղների մրցումներին և միշտ հաղթող էր դուրս գալիս:

227. «Գրական թերթ», N36, (1499), 5/IX 69 թ.:
228. **Թումանյան Հ.**, Ֆ-5, Գ.45, թ. 1:
229. Աշուղների մասին մեծածավալ գործ ունի գրած գրող, բանահավաք Սարգիս Քամալյանը՝ «Աշուղների կյանքից և խաղերից», 1933 թ., Թիֆլիս, Մատենադարանում, Սինեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթապանակ N7 թ, Բ-տետր:

Մի անգամ մրցումների ժամանակ Պարսկաստանից եկած աշուղին հաղթեց, սազը տվեց Հազիրին, բայց նա չվերցրեց: Աշուղն ասաց. «Սան հազիր սան» (Դու պատրաստ ես): Այստեղից Աբրոի անունը դարձավ Հազիր, գրում է Ստեփան Մխարգրձելին, ըստ Հազիրի թոռի՝ Սերգեյ Նոնուավայի պատմածի: Թոռը պատմել է, որ Հազիրը մահամերձ էր, երբ խնդրեց դահիրա, նվագեց ու անմիջապես ավանդեց հոգին – 14/I 22 թ.: Հուշեր ունի Սայաթ-Նովայի մասին, կատարել է նրա երգերը:



Ամենայն ազգ իրանն առավ,
Հերթն իսկի մեզ չդառավ:
Հազիրն սպասելով մեռավ՝
Մինչև երբ խեղճ մնանք, հայեր:

Հույս տվողին հավատացինք,
Ուրիշին հասնել չկարացինք,
Համբերելով ետ մնացինք,
Մինչև ե՞րբ խեղճ մնանք, հայեր:[230]

«Իմ այսքան ցավերու պատճառը այս է,
Որ սրտիս բորբոքիալ անթիվը հուր է.
Ինչ անէ խըղճալը անսիրտ անճարը,
Տըգետաց ժամանակ ազնիվը կույր է:

Աշուղ Ջավդի (Քեշիշ օղլի) – Շուլավերցի Սարգիսն էր, ծնվել էր կույր: Հաճախում էր եկեղեցի, երգում էր իր հայրենակիցների համար եկեղեցու բակում, Աստվածաշունչը գիտեր անգիր: Նրա ժամանակակիցն էր Նախիջևան քաղաքում ապրող աշուղ Թանջին:[231] Լսել էր, որ հաղթել է 39 աշուղների և որոշել է 40 լրացնել ու հրապարակայնորեն 40-ին էլ «գլխատել»:[232] Աշուղ Քեշիշ օղլին (Սարգիսը) որոշում է գնալ Թանջիի հետ մրցման: Հասնում է Նախիջևան և հայտնում է Թանջիին, որ ուզում է մրցել: Պայմանավորվում է ցերեկով սկսել մրցումը՝ հրապարակում: Սարգիսը ողջ գիշերը չի քնում: Սկսվում է մրցումը, որը

230. Ն.տ. 197-198:
231. **Քամալյան Ս.**, IV-7-10, Չարենցի գրական թանգարան:
232. **Քամալյան Ս.**, IV-7-10, Չարենցի գրակական թանգարան:



տևում է մոտ 2-2,5 ժամ: Հաղթում է Սարգիսը, պահանջում է նվերի փոխարեն ազատել 39 աշուղներին:[233] Թանջին չի համաձայնվում: Ստիպված Սարգիսը գանգատվում է Նախիջևանի խանին, որը որոշում է, որպես հախվերմագի (պարտքը չտվողի) գլխատել Թանջիին: Այսպիսով 39 աշուղներին ազատում է մահից:

Աշուղ Ինջայի - Գրիգոր Սափարյանց, ծնվել է Շուլավերում 1840 թ.: Դեռ մանուկ հասակում ծաղկով հիվանդանում է ու կուրանում: Զագամի եկեղեցում լսում էր ժամասացություն, անգիր գիտեր Աստվածաշունչը, մրցում էր տեղի աշուղների հետ, ունի շատ երգեր, որոնք գրի էր առել Ս.Քամալյանը:[234]

**Զարգար Վանես (Հովհաննես)** - գաղթել էր Ղարաբաղից՝ XIX դ. կեսերին, ապրում էր Քամանդար թաղում, մեծ գերդաստանի անդամ էր, շատ էին եղբայրները:Գրում էր հայերեն ու թուրքերեն երգեր»: Վանեսը չէր շրջում գյուղերում, բոլոր տեղերից հրավիրում էր աշուղներին, մրցումներ կազմակերպում, հրավիրվածներին հյուրասիրում, նոր ճանապարհում: Զբաղվում էր նաև ոսկերչությամբ: Զագամի թաղում կառուցել էր աղբյուր, ժողովուրդը կոչում էր «Զարգար Հանեսի աղբյուր»: Հետագայում նրա ամբողջ տոհմը կոչվեց Զարգարյաններ...(Զըրգյարանց):[235]

Եաղուբ (Յաղուբ) ապրել է 1880-ական թվականներին, Շուլավերում: Նրա տունը Ղալա կոչված բլրի հարավային լանջին էր: Ունի շատ երգեր՝ հորինված թուրքերենով:[236]

233. Ն.տ. էջ 134-137:
234. **Քամալյան Ս.**, Ն.տ., Բ-տետր, 175-177:
235. **Քամալյան Ս.**, Ն.տ., IV-1, 203-206:
236. **Քամալյան Ս.**, Ն.տ., IV-10:

## ՇՈՒԼԱՎԵՐԻ ԿՏՐԻՃՆԵՐԸ


Հակոբ Հակոբյան - Կոլա Գլդանելի

Շուլավերցիները քաջ, ըմբոստ ժողովուրդ են: Նրանց քաջագործության մասին մեծ գովեստով է գրել Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում: Գրում է Սոսի աղի և Մելիք-Օհանջանի մասին, որոնք պաշտպանում էին ոչ միայն Շուլավերը լեզգիներից և քոչվոր ցեղերից, այլև Բոլնիսը (Լյուքսեմբուրգը), Դաղեթը և Թիֆլիս տանող ճանապարհները, այդ շրջանների բոլոր հայերին, բոլոր ազգերին...: Երբ լուր է հասնում Լյուքսեմբուրգի ավերման մասին, Սոսի աղան ու Օհանջանը (Մելիք-Սարգսյան) 40 ձիավորով հասնում են օգնության, ազատում գերիներին, սակայն լեզգիները, համալրելով իրենց ուժերը, հարձակվում են շուլավերցիների վրա: Լեզգիները ճանաչում էին Սոսի աղին ու Օհանջանին և ձայն էին տալիս նրանց. «Սոսի աղա, քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կբռնի, թե քեզ վրա թուր բարձրացնենք... Խոստանում ենք ազատել...», բայց Սոսի աղան, կասկածելով նրանց խոսքերին, ընկերներով հարձակվում է լեզգիների վրա, շատ ավազակներ սպանում, և իրենք էլ զոհվում են:

Նրանք քարերի տակից իրար ձայն են տալիս. «Նամարդությունն ու թուլությունն տղամարդի համար ամոթ ա: Քաջությամբ մեռնինք, որ մեր որդիքն էլ իմանան, թե մենք էլ ենք սիրտ ունեցել և մեր երկրի թասիբը քաշել, մեր աշխարհի սիրով մեռել»: «Հանգիստ Ձեր սուրբ ոսկրացը՝ ով քաջ նահատակք» Խ.Աբովյան:[237]

Ծանոթություն կազմող Հր.Մուրադյանը գրել է, որ Սարգիս Քամալյանի գրի առած Գ.Աքիմյանի հուշերից իմանում ենք, որ քուրդ Օքյուզ աղայի ու շուլավերցի Սոսի մասին Աբովյանը տեղեկություններ է հավաքել նաև Շուլավեր գյուղի ծերերից, 1841 թ.:[238]

Շուլավերն ունեցել է նաև քաջ ըմբիշներ: Դրանցից մեկի մասին պատմում է շուլավերցի Հայկ Հակոբյանը: Դա «Ուկուփանց» (Հակոբյանց) Հակոբն էր (Ակոփը): Թիֆլիսում կար հայտնի հայ բռնցքամարտիկ՝ Կոլա Գլդանելի (Գլդան գյուղից): Նրա իսկական ազգանունն էր՝ **Խրիմյան**: Կոլան անպարտելի էր: Լսելով շուլավերցիների քաջագործությունների մասին՝ Կոլան մի օր գալիս է Շուլավեր և հրապարակում խիստ ձայնով դիմում է շուլավերցիներին՝ «Ով կա ձեր մեջ հզոր, որ կռվի կբռնվի ինձ հետ»: Երկրորդ անգամ դիմելուց հետո ամբոխի միջից դուրս է գալիս տեղի դյուցազն Ուկուփանց Ակոփը. նա ողջ գավառում հայտնի էր որպես ուժեղ պայտար: Նրանք ձեռք-ձեռքի տվին, Աթունց զուռնաչին(Համբարձում Ծատուրյանը) փչում է «կոխի» եղանակ, ըմբիշները մարտի են բռնվում, բայց ոչ մեկը չի կարողանում հաղթել մյուսին, երկուսն էլ կորել էին քրտինքի մեջ... վերջը՝ երկուսն էլ դադարեցնում են մարտը: Կոլան համբուրում է Հակոբին և ասում , որ դեռ չէր հանդիպել մեկը, որ իր հետ այդպես կռվի ու թուլացնի: Գյուղը շատ հպարտ էր Հակոբի համար:[239]


Շլեպչյան Սուրենը, Մարտիրոսյան Սնարը Սոսի աղի շիրմաքարի մոտ:

237. Խ.Ա. Երկերի լրակատար ժողովածու, հ-III, 1948 թ.:
238. «Ժամանակակիցները Աբովյանի մասին» էջ 117:



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ

1977 թ. աշնանը Շահումյանի ավանային խորհրդի գործկոմի նախագահ՝ Մարկլեն Սիմոնյանը հրավիրեց ակտիվի ժողով, որտեղ քննարկվեց ավանում շահումյանցիների հայրենակից, խոշոր երաժշտագետ, հայտնի դիրիժոր Ալեքսանդր Շամիլի Մելիք-Փաշաևի տուն-թանգարան բացելու հարցը: Նիստին ներկա էին նաև դիրիժորի կինը՝ Մինա Սողոմոնովնան և որդին՝ Ալեքսանդրը: Նրանք խոստացան օժանդակել թանգարանի համալրմանը, առաջարկվեց թանգարանը հիմնել Մելիք-Փաշաևների նախկին տանը, որտեղ ծնվել էր դիրիժորը:

Թանգարան հիմնելու առաջարկը գոհունակությամբ ընդունվեց, նրա կազմակերպման գործը հանձնարարվեց բաներիտ դպրոցի տնօրեն Սանդուխտ Ասլանյանին:

Նախ գնվեց Փաշաևների շենքը, որն այդ ժամանակ պատկանում էր Քալանթարյան Գաբոյին: Նա մատչելի գնով վաճառեց ավանային խորհրդին, ապա հանգանակվեց գումար՝ շենքի նորոգման համար: Բացի ավանի բնակիչներից դրամական օգնություն ցույց տվեցին Կիրովականում բնակվող շահումյանցիները (նրանց թվում Սամվել և Ալ-

239. **Մամուլով Ս.Ս.**, էջ 205, Армяне в Грузии և Հ.Հակոբյանի հուշերը (Ս.Ասլանյանի արխիվ):



Ալեքսանդր Մելիք-Փաշաևի տուն-թանգարանը Շահումյանում

բերտ Աբրահամյան եղբայրները, Սեյրան Միրաքյանը, Մարտին Սիմոնյանը, Սոսո Սարգսյանը, Ռիմա Պետրոսյանը, Արշիկ Վարդանյանը և շատերը): Այսպես 600 (վեց հարյուր) ռուբլի գումար հասցվեց ցուցակների հետ Շահումյան և դրվեց գործկոմի իրավասության տակ: Արդեն սկսել էին վերանորոգման աշխատանքները, երբ Թբիլիսիի ժողովուրդների բարեկամության թանգարանից բերվեց Մելիք-Փաշաևի ֆոնդը:

1980 թ. դեկտեմբերի 10-ին բացվեց Մառնեուլի «ժողովուրդների բարեկամության թանգարանը», որի աշխատանքներին զուգընթաց տարվում էին նաև Ալեքսանդր Շամիլովիչի տուն-թանգարանի աշխատանքները:

Այն ավարտվում էր, երբ (1988 թ., մարտ) Շահումյան այցելեց Վրաստանի ԿԿԿԿ առաջին քարտուղար **Ջումբեր Իլյիչ Պատիաշվիլին**: Նա դժգոհ մնաց թանգարանի վերանորոգման տեմպերից և հանձնարարեց Վրաստանի մշակույթի նախարար՝ Վալերի Ասաթիանուն՝ մինչև 1988 թ. ապրիլի վերջն ավարտել վերանորոգումը: Թանգարանի նկարիչն ու ձևավորողը Վրաստանի մշակույթի նախարարության գլխավոր նկարիչ Տարիել Չիգոգիձեն էր: Աշխատանքներն արագացվեցին, **թանգարանը կահավորվեց և բացվեց1988 թ. մայիսի 6-ին**, որին մասնակցում էին հյուրեր Հայաստանից (մշակույթի նախարար Յու.Մելիք-Օհանջանյանը, տեղակալ Ս. Միկինյանը), Մոսկվայից (դիրիժորի մտերիմ ընկեր, Մեծ թատրոնի երգիչ Զուրաբ Անջափարիձեն):



Ներկա էին Վրաստանի մշակույթի նախարար Վ.Ասաթիանին, ժող. դերասաններ Դավիթ Լոմբաձեն, Նոդար Գաբունիան, Վրաստանի ԿԿԿԿ մշակույթի բաժնի վարիչ Լ.Լորթքիփանիձեն, շրջանի ողջ ղեկավարությունը, թղթակիցներ թերթերից, ռադիոյից, հեռուստատեսությունից...: Ելույթ ունեցան Շահումյանի N1 միջ. դպրոցի տնօրեն՝ Ռուբեն Հովակիմյանը, Սարաջաշվիլու անվան կոնսերվատորիայի ռեկտոր Ն.Գաբունիան, դպրոցական Լիանա Ղուշչյանը, աշխատանքի վետերան Աշոտ Շահսուվարյանը, ապա դիտեցին թանգարանի ցուցանմուշները:[240]

Շահումյանի խաղողագործական սովտնտեսության վարչությունը որոշեց նվիրել 500 ռուբլի, որով գնվեցին վարագույրներ, տեխնիկական միջոցներ (տնօրեն՝ Ժ.Հակոբյան):

Ավանի սպառկոոպի վարչությունը թանգարանի հատակով մեկ մեծ գորգ նվիրեց (նախագահ՝ Ի. Ղազարյան):

Թանգարանը հարստացնելու համար Մոսկվա գործուղվեցին (Վրաստանի մշակույթի նախարարության ուղեգրով՝ հունիսի 6-ին 1990 թ.) **Ս.Ասլանյանը, տուն-թանգարանի աշխատողներ Ս.Գաբրիելյանը և Ռ.Ղարամյանը: Այցելեցին մեծ դիրիժորի կնոջն ու որդուն,** Մեծ թատրոնի տնօրենին ու վերադարձան մոտ 100 ցուցանմուշներով: Կինը խոստացավ Շահումյանի թանգարան ուղարկել նաև Շամիլովիչի անձնական դաշնամուրը, այն վերանորոգելուց հետո:[241] 1990 թ. հուլիսի 11-ին «Վրաստան» թերթում լույս տեսավ «Թանգարանը համալրվում է» հոդվածը:

Մեծ թատրոնի տնօրենը թանգարանին նվիրեց 13 լիբրետտո և 27 կինոներից նկարներ՝ նվիրված Ալեքսանդր Մելիք-Փաշաևին:

## ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ (ՆԱՒԱՍԱՐԴ)

Սարգիս Քամալյանը Նաւասարդ ազգային տոնի ընթացքի մասին ունի ինքնագիր նկարագրություն: Ըստ ավանդաբար պահպանված զրույցների՝ Նաւասարդի տոնը սկիզբ է առել Հայկ Նահապետից:[242]

Այս տոնի մասին օրացույցներում ոչինչ հիշատակություն չկա, նոյեմբեր ամիսը Հիսնակի պասն է, որին ժողովուրդը Նախրաթողի կամ Նաւասարդի պաս է ասում.

23. Քալանթարյան Գաբո Մացակի – ներք. գործ.
24. Սելապանյան Գևորգ Նիկոլայի – պետանվտանգութ.
25. Ղարդաշյան Ժորա Գևորգի – զինված ուժեր
26. Ղարդաշյան Ալեքսեյ Գևորգի - զինված ուժեր
27. Չոբանյան Ջեմալ Գևորգի – ավիացիայի
28. Միրաքյան Ավետիք Գարեգինի - զինված ուժեր
29. Միրաքյան Օնիկ Գարեգինի- զինված ուժեր
30. Հակոբյան Վազգեն Քաջիկի - ատոմակ. անվտանգ. պետ
31. Քանթարյան Աքանես - հրետանու, 22.07.1800 թ.
32. Բաղդասարյան Էդուարդ Գիրգորի - զինված ուժեր

ՇՈՒԼԱՎԵՐ-ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԵՐԸ, ԳՅՈՒՂ-ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

1. Քալանթարյան Մխիթար - գյուղապետ – Շուլավերի հիմնադիր
2. Քալանթարյան Մացակ (աղա)
3. Մեհրաբյան Վախտանգ Համբարձումի- տանուտեր
4. Պառավյան Սիմոն Հովհաննեսի - տանուտեր
5. Դալլաքյան Արամ Սոլոմոնի - տանուտեր
6. Ղալեչյան Սինասար Արամայիսի- տանուտեր
7. Թառանյան Հարություն Թովմասի - ավան. խորհր. նախ.
8. Ռեստևանայն Մեխակ Խաչատուրի - ավան. խորհր.նախ.
9. Պետրոսյան Հովհաննես - ավան. խորհր. նախ.
10. Մանուչարյան Երեմ Հովհաննեսի - ավան. խորհր. նախ.
11. Մարգարյան Սեդրակ Բաբիկի - ավան. խորհր. նախ.
12. Հովակիմյան Նվարդ Վարդանի - ավան. խորհր. նախ.
13. Պառավյան Սամսոն - ավան. խորհր. նախ.
14. Պողոսյան Նազար Պողոսի - ավան. խորհր. նախ.
15. Սարգսյան Սարգիս Սերգեյի - ավան. խորհր. նախ.
16. Մաթևոսյան Արտաշ Աբգարի - ավան. խորհր. նախ.
17. Ղարդաշյան Գևորգ Լևոնի - ավան. խորհր. նախ.
18. Ռեստևանյան Սեյրան Աշոտի - ավան. խորհր. նախ.
19. Սիմոնյան Մարկլեն Աղաբեկի - ավան. խորհր. նախ.
20. Բաղյան Միշա Վոլոդյայի – ժողովի նախագահ
21. Դուլյան Վլադիմիր Արտաշի - ժողովի նախագահ
22. Ղալեչյան Բորիկ Ռոբերտի - ժողովի նախագահ
23. Գրիգորյան Յուրա Արամայիսի - ժողովի նախագահ



ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՎ ՍՈՑ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԸ

1. Աբրահամյան Կամսո
2. Ուրումյան Համո Մեխակի
3. Պառավյան Սամսոն
4. Դուլյան Գրիգոր
5. Մարգարյան Սեդրակ Բաբիկի
6. Բաղդադյան Ալեքսանդր Մակիչի
7. Չոբանյան Անդրանիկ Լևոնի
8. Մովսեսյան Աշոտ Գերասիմի – սոց. տնտ. տնօրեն
9. Հակոբյան Ժորա Լևոնի - սոց. տնտ. տնօրեն
10. Միքայելյան Լևոն Մարուքի - սոց. տնտ. տնօրեն
11. Սահակյան Վալերի Եղիշի - սոց. տնտ. տնօրեն
12. Սիրունյան Սերժիկ Լևոնի - սոց. տնտ. տնօրեն
13. Չոբանյան Մեխակ Շաքրոյի – Աղքյորփի գյուղի խ/տ, տնօրեն

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

1. ավան Շահումյան (քաղաքային տիպի)
2. գյուղ Սիոնի
3. գյուղ Աղուլա
4. գյուղ Ծերաք
5. գյուղ Ղուդրո
6. գյուղ Ջանխոշ
7. գյուղ Խոխմել
8. գյուղ Դամիա
9. Վերջերս միացել են տեղահանված լեռնաբնակ աջարները - գյուղ Խիխանի

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐԸ
N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ

| N | Ազգանուն | անուն | հայրանուն | Մեդալ | Ուս. տարի |
|---|---|---|---|---|---|
| 1. | Նադիրյան | Ջեմմա | Վաղինակի | արծաթ | 1948-49 |
| 2. | Հակոբյան | Էմմա | Հովհաննեսի | արծաթ | 1948-49 |
| 3. | Նադիրյան | Ջուլիետա | Վաղինակի | արծաթ | 1950-51 |
| 4. | Դավթյան | Սուսաննա | Լևոնի | արծաթ | 1951-52 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Մովսիսյան | Լարիսա | Աշոտի | արծաթ | 1951-52 |
| 6. | Չոբանյան | Նազելի | Սարգսի | ոսկի | 1952-53 |
| 7. | Պետրոսյան | Ռիմա | Բաբալի | արծաթ | 1953-54 |
| 8. | Քամալյան | Ռուբեն | Միրզոյի | արծաթ | 1953-54 |
| 9. | Ղասաբյան | Վիոլետա | Տիգրանի | արծաթ | 1953-54 |
| 10. | Հակոբյան | Սվետլանա | Քաջիկի | արծաթ | 1954-55 |
| 11. | Մելքիկյան | Լաուրա | Գագիկի | արծաթ | 1954-55 |
| 12. | Գրիգորյան | Յուրիկ | Իվանի | արծաթ | 1957-58 |
| 13. | Դանիելյան | Լիանա | Գրիգորի | արծաթ | 1957-58 |
| 14. | Միրաքյան | Լիանա | Միքայելի | ոսկի | 1957-58 |
| 15. | Հովհաննիսյան | Ժուդոլֆ | Գևորգի | արծաթ | 1957-58 |
| 16. | Չիլինգարյան | Ալինա | Արշալույսի | արծաթ | 1957-58 |
| 17. | Ավալյան | Վարյա | Գուրգենի | արծաթ | 1958-59 |
| 18. | Սարգսյան | Բյուրետա | Անուշավանի | արծաթ | 1958-59 |
| 19. | Ղուկասյան | Դիանա | Մեխակի | ոսկի | 1959-60 |
| 20. | Մարգարյան | Սուսաննա | Արամայիսի | ոսկի | 1959-60 |
| 21. | Գրիգորյան | Վեներա | Իվանի | արծաթ | 1960-61 |
| 22. | Միրզոյան | Աշխեն | Գևորգի | արծաթ | 1960-61 |
| 23. | Պետրոսյան | Ռուդոլֆ | Սարգսի | արծաթ | 1960-61 |
| 24. | Չիրքինյան | Ժաննա | Աշոտի | արծաթ | 1960-61 |
| 25. | Աբյան | Ագրաֆինա | Գերմանի | արծաթ | 1963-64 |
| 26. | Մանուչարյան | Լիզա | Գարեգինի | արծաթ | 1963-64 |
| 27. | Ղուլյան | Ժաննա | Սուրենի | արծաթ | 1963-64 |
| 28. | Աղբալյան | Գրիգելդա | Արամի | արծաթ | 1963-64 |
| 29. | Ռեստևանյան | Յուրետա | Մեխակի | արծաթ | 1963-64 |
| 30. | Վերմիշյան | Զուբեյդա | Միխայիլի | ոսկի | 1963-64 |
| 31. | Թեյմուրազյան | Ելիզավետա | Արամի | ոսկի | 1964-65 |
| 32. | Ղազարյան | Մարիետա | Իշխանի | արծաթ | 1964-65 |
| 33. | Շահսուվարյան | Ռուզան | Աշոտի | ոսկի | 1964-65 |
| 34. | Ոսկանյան | Նարինե | Նիկոլայի | արծաթ | 1964-65 |
| 35. | Սաղաթելյան | Վարդան | Արշակի | ոսկի | 1964-65 |
| 36. | Ղազարյան | Սիրուշ | Վազգենի | արծաթ | 1967-68 |
| 37. | Ալագյոզյան | Ժաննա | Լևոնի | ոսկի | 1969-70 |
| 38. | Սելապանյան | Դազմիրա | Գևորգի | ոսկի | 1956-57 |
| 39. | Նադիրյան | Միքայել | Վաղինակի | ոսկի | 1956-57 |
| 40. | Վերմիշյան | Էմմա | Վաչագանի | արծաթ | 1956-57 |
| 41. | Բուդաղյան | Աելիտա | Ալեքսանդրի | ոսկի | 1956-57 |
| 42. | Թեյմուրազյան | Բորիս | Արամի | արծաթ | 1956-57 |
| 43. | Մաթևոսյան | Վալերի | Սինասարի | արծաթ | 1956-57 |
| 44. | Սիմոնյան | Ռիմա | Աղաբեկի | արծաթ | 1955-56 |
| 45. | Ռեստևանյան | Ժորժետա | Ժորայի | արծաթ | 1955-56 |
| 46. | Պլանուկյան | Հերիքնազ | Հովհաննեսի | արծաթ | 1955-56 |
| 47. | Կիկոլյան | Աելիտա | Սուրենի | արծաթ | 1955-56 |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 48. | Ալավերդյան | Լարիսա | Աշոտի | արծաթ | 1955-56 |
| 49. | Մարգարյան | Լևոն | Արամայիսի | արծաթ | 1955-56 |
| 50. | Պառավյան | Լեյլի | Հակոբի | ոսկի | 1948-49 |
| 51. | Պառավյան | Ասյա | Հարությունի | ոսկի | 1948-49 |

N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ (ՌՈՒՍԱԿԱՆ)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հակոբյան | Իսկրա | Վաղինակի | ոսկի | 1974-75 |
| 2. | Ադամյան | Արմինե | Գավրիկի | արծաթ | 1971-72 |

ԵՐԵԿՈՅԱՆ ԲԱՆԵՐԻՏ. ՄԻՋ. ԴՊՐՈՑ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հարությունյան | Վալտեր | Ցոլակի | արծաթ | 1952-53 |
| 2. | Գորբաչև | Սերգեյ | Իլյիչի | արծաթ | 1952-53 |
| 3. | Կորոտկով | Վասիլի | Սեմյոնի | ոսկի | 1952-53 |
| 4. | Լուկին | Միխայիլ | Պյոտրի | ոսկի | 1952-53 |
| 5. | Լաչինսկի | Լեոնիդ | Իվանի | արծաթ | 1952-53 |
| 6. | Սաունին | Ալեքսանդր | Մատվեյի | ոսկի | 1952-53 |
| 7. | Ուրումյան | Ռոդիոն | Սինասարի | արծաթ | 1952-53 |
| 8. | Շեխովցով | Միխայիլ | Պավելի | արծաթ | 1952-53 |
| 9. | Կոտով | Նիկոլայ | Գրիգորի | արծաթ | 1955-56 |
| 10. | Կռիլով | Վլադիմիր | Ֆեոդորի | արծաթ | 1955-56 |
| 11. | Պաշչենկո | Իվան | Իոսիֆի | արծաթ | 1955-56 |
| 12. | Կովալևսկի | Կազիմիր | Նորբերտի | արծաթ | 1955-56 |

Եղել են տարիներ, երբ գերազանցիկները մեդալներ չեն ստացել (շուրջ 30 հոգի):

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

1. Մարգարյան Գևորգ Համբարձումի – N141 դպրոցի տնօրեն, ք. Երևան
2. Դալլաքյան Զարիկ Արամի – N10 դպրոցի տնօրեն ք. Թբիլիսի
3. Գասպարյան Պետրոս Կարապետի – N89 դպրոցի տնօրեն, ք, Թբիլիսիի

ՓՈՍՏԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ

1. Զարգարյան Արմենակ Գևորգի
2. Չոբանյան Անդրանիկ Լևոնի
3. Խանազարյան Վովա Գևորգի
4. Գրիգորյան Գևորգ Ադիբեկի
5. Ոսկանյան Նարա Նիկոլայի

ԿԱՊԻ ՎԱՐԻՉՆԵՐԸ

1. Հովսեփյան Հակոբ Կոնոյի
2. Սարգսյան Սլավիկ Արամայիսի
3. Սարգսյան Յուրա Արամայիսի

## ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԸ
(Սարգիս Քամալյանի անտիպ նյութերից)

Առողջապահություն N4, 1991 թ., 60-61 էջ:
Առողջապահություն N1-2, 1992 թ., 62-64 էջ:

19 - 20-րդ դդ. մտավորական հայ գործիչներից է ազգագրագետ-բանահավաք Սարգիս Քամալյանը: Նրա ազգագրական, գրական և հրապարակախոսական վաստակն առայսօր, դժբախտաբար, չի ստացել իր արժանի գնահատականը: Պատճառներից մեկն այն է, թերևս, որ նրա հոգևոր ժառանգության մի ստվար մասը տակավին հրատարակված չէ:
Ս. Քամալյանի գրչին պատկանող ազգագրական-բանահյուսական անտիպ (ավարտուն) երեք գործերից ամենածավալունն ու ամենաարժեքավորը «Շուլավեր-Շահումավան» աշխատությունն է (ձեռագիրը մինչև օրս պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում): Այն եզակի աղբյուր է հայ ազգագրական ուշագրավ գոտիներից մեկի՝ Շուլավերի ուսումնասիրության, օժանդակ աղբյուր՝ Միափոր (Շամշադին, այժմ՝ Տավուշ) գավառի համար, որի ութ գյուղերից գաղթել են շուլավերցիների նախնիները 18-րդ դարի կեսերին:
Շուլավերը Բորչալու գավառի հայաբնակ ավան է: Հնում Շուլավերը կոչվել է Ծոր կամ Ծորափոր:
Հիշյալ աշխատության համար հիմք են հանդիսացել հեղինակի ժողոված (1880-ական թթ. սկսած) ազգագրական նյութերը, որոնց շարադրանքն ավարտել և սրբագրել է հիսուն տարի անց՝ 1933 թ., Թբիլիսիում:
Հաստատվելով Շուլավերի հողի վրա՝ միափորցիներն իրենց հետ բերել են հեռավոր նախնիներից ժառանգած սովորույթները, ծեսերը և տոները:
Ս. Քամալյանի «Շուլավեր-Շահումավան» աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրված կերակուրներին: Շուլավերում գործածվող հիմնական սննդամթերքները եղել են ձավարը, բրինձը, միսը: Դրանց



թվում չի հիշատակված կաթնեղենը, թեև այն, անշուշտ, եղել է ժողովրդի սննդի կազմում: Դա հաստատում են հեղինակի հետևյալ տողերը. «Միափորցիներն այնտեղ սովոր լինելով կաթի ու մածնի, տեղափոխվելով Սոմխեթ-Շուլավեր, երևի սկսել էին հաճախ միս, գինի, օղի գործածել և երկարակեցությանը վնասել»:
Ս. Քամալյանի վկայությամբ՝ Միափորից գաղթած շուլավերցիները բազմատեսակ կերակուրներ պատրաստելու սեր և հմտություն են ունեցել: Նա գրի է առել մոտ 21 կերակրատեսակի պատրաստման եղանակները, որոնք էլ ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը՝ կից տալով որոշ ծանոթագրություններ:
**1. Սպաս** - ապուրի նման կերակուր է՝ ձավարից շինած, մեջը արդար եղ են գցում մի երկու գդալ:
**2. Հարովի (հրովի-խմբ.)** - եփում են ձավարից, նման է հարիսին, շերեփով շարունակ հարում են, միայն մեջը մսի փոխարեն արդար եղ է գցած:
**3. Խաշիլ** - եփում են ձավարից, որին Թիֆլիսում փափա են ասում: Կոթավորի (կթավեր) կամ բարակ պղնձի մեջ ջուր ենածում, դնում կրակին, մեջը փոխինձ շաղ տալիս, շերեփով հարում: Թանձրանալու համար կերակրի աչքերը կալում են ալյուրով (հատիկ, կորկոտ, փոխինձ, ձավար - ամենն էլ ցորենից պատրաստած նյութեր են): Հենց որ սկսում է եփի ձայն հանել, վերցնում են կասկարանքից, բաժիններ ածում (ափսեներ լցնում), մեջտեղը փոս անում, այդտեղ եղ լցնում, բաժնի ափերին փռում են հարած չորաթան, հետը՝ ծեծած սխտոր:
Ս. Սարգսի պասի շաբաթ առավոտը ամեն օջախում եփում են, դրա հետի այդ պասը ժողովրդի բերանում կոչվում է Խաշլի պաս:
**4. Խավիծ** – սա ցամաք կերակուր է ծննդկանի համար, շինում են ալյուրից, եղից, մեղրից:
**5. «Քաշկա»** - ձավարից կամ կորկոտից շինած կերակուրների մեջ ամենագլխավորը սա է: Շուլավերցիք այս կերակուրը եփում են Հիսնակի պասի վերջին՝ Նավասարդին, որին ժողովուրդը անվանում է Նախրաթող:
Նախրաթողի պասի ուրբաթ օրը Շուլավերի մեջ մոտ 100 գլուխ տավար են մորթում, չաղ ու գեր մսացուներ: Ամեն մի տուն մսից գնում է, առանց գնելու ոչ ոք չի մնում: Արտալա ևս առնում են: Խոնչա-սինին վեր են դնում, մսերը շարում, շնորքով կտորում ու դարսում, խորովածացուն ջոկ, եփելուն՝ ջոկ: Մթնում է թե չէ, տան գլխավորը բերել է տալիս ունկավոր չարխի ղազանը, նախ մեջը դարսում է մի շերտ չաղ միս, հետո չաղ կողամասերը, դրա վրա շաղ տալիս մի շերտ ձավար-կորկոտ ու աղ ցանում: Դարձյալ միս է դարսում կամ արտալի

յուղ, կրկին վերևից ածում մի շերտ ձավար, հետն էլ աղ շաղ տալիս։ Մսով, կորկոտով կիսով չափ չարխի ղազանը զգույշ կախելով դնում թոնրի մեջտեղը, ուր կրակը մարմանդ է, ապա նախ մի չափ ջուր են ածում մսի վրա, հետո ավելացնում ջուրը մինչև լցվելը։ Կրակաքաղով շեղջը հավաքում են ղազանի բոլորքը, մինչև պռունկները թողնում են կրակի մեջ։ Թոնրի բերանին խուփ են դնում, որ բան չընկնի մեջը ու թողնում ողջ գիշեր։

**6. Բուղլամա** - Սա իբրև մարսեցնող կերակուր ուտվում է քաշկից ետ։ Բուղլամա շինելու համար չաղ միսը մանր կտրտած ածում են պղնձի մեջ և ջրով դնում կրակին, եփում է, եղը դուրս գցում, աղ գցելուց ետ մեծ հալղաներով բավական սոխ են կոտորում, ածում մեջը, հոնի թթու կամ շլորի լավաշ էլ հարում են, նոսրացնում մեջը, խառնում, կոտորած սերկևիլ նի ածում, նոր ջուր ավելացնում, խփին բերանին դնում և պռունկները խմորով կալնում, որ բուղը-շոգին դուրս չգա։ Այնքան թողնում են կրակի վրա, մինչև մեջն ածած նյութերը իրար հետ մերվում են, իրար մեջ հալվում, հալիմ դառնում։ Բաժին ածելիս նրա գրգռիչ հոտից մարդի կապ ախորժակը բացվում է, համը պրմաղան է, մարդ ուտելուց չի կշտանում։

**7. Փլավ** - բրնձից շինած կերակուրների մեջ նշանավորը սա է։ Բրինձը մաքրելուց ետ իստակ լվանում են և ածում ջրով լիք կլեկած պղնձի մեջ, դնում կասկարանքի վրա, որի տակ կրակ կա։ Բրինձը լավ եփում է թե չէ, պղինձը վերցնում են և ջրի հետ բրինձը միանգամից թափում լայնաբերան մաքուր փլավքամու վրա, որի տակը ծակծակոտ է ու դրած ուրիշ դատարկ պղնձի բերանին, ջուրը քամվում է պղնձի մեջ, բրինձը մնում է փլավքամու մեջ։ Դատարկված պղինձը նորից դնում են կասւ՛արանքի վրա, մեջը եղածու (ձվածեղ) շինում ու դրա վրա ածում քամած բրինձը։ Թեժ կրակը տակից հեռացնում են, թողնում մարմանդ կրակի վրա, մինչև որ դամը քաշի, այսինքն՝ մինչև բրնձի մեջի ավելորդ ջուրը ցամաքի ու դառնա փուչփուչ։ Կոթավորի մեջ նորից եղ են տաքացնում, ածում բրնձի գլխին և քափկիրով ամեն կողմ շաղ տալիս։ Փլավն արդեն պատրաստ է։ Աղի մասին դիտմամբ չհիշեցի, հասկանալի է, որ ջրի մեջ սկզբից աղ են գցում։ Եփածի համն իմանալու համար քափկիրով փլավ են ածում եղոտ կոթավորի մեջ, որը կոչվում է ջռոթան, այսինքն՝ վերջին կտոր։ Փլավի երեսին երբեմն դնում են քաղցր ծիրան կամ գառան տապակած միս։ Երբեմն ծիրանի հետ քիշմիշ էլ են խառնում։

**8. Քաշովի** - բրնձից են շինուիմ, նույն փլավն է առանց քամելու։ Գլխին ծիրան, քիշմիշ կամ այլ բան չեն դնում, հասարակ են եփում։

**9. Չափովի** – շինում են բրնձից, սա նման է քաշովի տեսակին, եղ կա



մեջը, բայց սոխ էլ է գցած։

**10. Կաթնով** – կաթը պղնձի մեջ մի քիչ ջրախառն են անում և կրակի վրա եփում։ Երբ կաթը բլդբլդալով եփում է, ածում են նրա մեջ մաքուր լվացած բրինձ և թողնում, որ հանգիստ եփի։ Որպեսզի չխշլի, աղ են գցում։ Բրինձը եփելուց ետ եղ են ածում մեջը։
Կաթնով կերակուրը եփում են մեծ մասով նավակատիկ օրերին։ Եթե մեկի տանը ծաղկով կամ կարմրուկով երեխեքը հիվանդ են լինում և անվնաս պրծնում են, տանտերը ծաղկամորը գոհություն տալու համար կաթնով է եփում, եղաբլիթներ թխում, բաժանում։

**11. Շլաճաշ** – չաղ միսն ու ջուրը ածում են մեծ պղնձի մեջ, դնում կրակին։ Յենց որ բլդում է ու եփն ընկնում, ածում են մեջը մաքուր բրինձ ու կրակն ուժեղացնում, աղ և փղփիղ գցում, և արդեն քիչ ժամանակից ետ պատրաստ է։
Շլաճաշը թանձր է լինում, այլ տեղերում այն կոչվում է շիլափլավ։

**12. Կեճախաշ(կճախաշ-խմբ.)** – ցորենը եփում են, մեջը քիշմիշ խառնում։ Պատրաստում են այն Մեծ պասի կեսին ու բաժանում հարևաններին իբրև մատաղ, որպեսզի արտը մկներից անվնաս մնա։ Յաճախ լոբի նույնպես խառնում են հետը։

**13. Լոբու սպաս** – պատրաստում են լոբուց, աղի հետ գցում են նույնպես փղփիղ և համեմ, երբեմն՝ ձեթ, եղ կամ ջարդած ընկույզ։

**14. Կարտոփի սպաս** – շինում են կարտոփը եփելով, մանրելով, աղի հետ նույնպես՝ փղփիղ։

**15. Թանը սպաս** – չորաթանը հարում են, ածում պղնձի մեջ, դնում կրակին։ Եփելուց ետ մեջը եղ են գցում, կանաչեղենից գցում են գինձ կամ համեմ։ Բաժին ածելուց ետ հաց են բրդում մեջը։
Այս կերակուրը կոչվում է նույնպես քլենգոշ։

**16. Քլենգոշ** - այս կերակուրը շինում են թանըսպասի մեջ հացի կտորտանք ածելով։

**17. Կոնչու** – կոթավորի կամ փոքր պղնձի մեջ կոտորած սոխը եղի մեջ եռ են տալիս, դաղում, հետո վրեն ջուր են ածում։ Յենց որ եփն սկսվում է, հացի չոր կտորտանքը թափում են մեջը, փափկում են։ Կրակի վրից վերցնում են, մի քանի ձու զանգում, գցում մեջը, արդեն պատրաստ է։
Այս կոնչուը կոչվում է նույնպես ջրախաշու (ճըրըխաշու-խմբ.)։

**18. Բոզարթմա** - դմակը մանր կտրատում են, ածում պղնձի մեջ, դնում կրակին, վրեն ածում կտրտած սոխ, թողնում են, որ լավ եռ գա, հետո մեջն ածում են ոչխարի միս՝ կտրտած, թողնում են, որ կարգին դաղ լինի եղի մեջ, հետո ածում են մի քանի աման ջուր, նայած թե քանի հոգու համար է, աղ են գցում, կանաչի-համեմ ցանում մեջը։ Ջուրը եփ

առնելուց ետ վերցնում են կրակի վրից, արդեն պատրաստ է, բաժին են ածում:

**19. Քյուֆտա** - մսի փափուկ տեղերը սատուրի (տափակ քար) վրա թակով ջարդում են, լավ մանրացնում, մեջը աղ, տաքդեղ-պղպեղ գցում, հիլ, սոխ խառնում և կլոլակներ-գնդիկներ շինում: Պղնձի մեջ ծավար են գցում, դնում կրակին, հենց որ եփն սկսում է, կլոլակները ածում են մեջը, որոնք եփվելով խոշորանում են, փուչփուչանում, ախորժելի հոտ բռնում:

**20. Դոլմա** - չաղ միսը թակում են, հետո բրինձ խառնում, աղ. տաքդեղ ցանում վրեն և գնդիկներ շինում, կաղամբի թևի կամ վազան քնքուշ-մատղաշ տերևի մեջ փաթաթում, մեկ-մեկ ածում պղնձի եփ եկող ջրի մեջ: Դրանք եփվում են և ջուրը համեղ, ախորժելի դարձնում: Բաժիններ ածած միջոցին նռան մզուցք են ածում վրեն և ուտում:

**21. Չխրթմա** - այս սիրելի կերակուրը գլխավորապես շինում են հավի, ոչխարի մսից: Դրանց չեղած միջոցին տավարի միս էլ են օգտագործում: Միսը ջրի հետ ածում են պղինձը և դնում կրակին: Լավ եփելուց ետ վերցնում են կասկարանքի վրից, ջուրը քամում, միսն էլ հանում առանձին ամանում դնում: Պղնձի մեջ աղ ածելով դնում են կրակի վրա, մեջը կտրտած սոխ ածում ու դաղ անում, հետո եփած միսը դրա վրա ածում ու լավ տապակում: Ապա վրեն թափում են քամած մսաջրից ինչքան որ ցանկանում են: Քիչ եփելուց ետ մեջը խառնում են քացախ ու ալյուր իրար հետ հարած, որ կերակրի աչքերը բռնի, փաքաքի: Կրակի վրից վերցնում են թե չէ, իսկույն զանգած մի կամ երկու ձու են գցում մեջը, խառնում: Համով, անուշ բուրմունքով չխրթման արդեն պատրաստ է:

**ԹԹՈՒՆԵՐ** – տարվա եղանակների համեմատ, բղուղների մեջ զանազան բույսեր են թթու դնում – քալամ (կաղամբ), վարունգ, սիբոխ, ղանձիլ, պեքի (բոխ), շուշան, խնձոր, զկեռ:

Գրետա Գրիգորյան
Մատենադարանի գիտաշխատող





## ՀԱՐՑ ԳՀԱՐՍ ՔՈ ԵՒ ՊԱՏՄԵՍՑԵՆ ՔԵԶ, ՑԵԵՐՍ ՔՈ ԵՒ ԱՍԱՍՑԵՆ ՔԵԶ

Երկր. Օր. գլ. ԼԲ, հմր. 7

Ա
Մեր հայրենի Շուլավեր
Ի հնումն էր գավառ,
Շամշադինու գյուղերից
Ուք էր թիվը և համար:
Կորխ, Քամանդար, Մրեջուր
Ղարամուրադ, Աղբուլաղ,
Մելիք-գաղա, Մըմրքլու,
Շմեղ անուն անխարդախ:
Կալվածք էր սա երբեմն,
Փոքր աշխարհին աղվանից,
Գերի եղած ի վերջո,
Տառապում էր չար լծից:
Պարսկական էր այս լուծ,
Որ նեղում էր չարաչար,
Խլել կրոն ու լեզու,
Հող, ստացվածք քրտնահար:
Այս չէր միայն քաղց ծարավ,
Անագորույն վիշապի.
Ավետարան, հայություն,
Զոհել դենին դուրանի:
Նա աստղկան կրակին
Տալիս էր հագ կերակուր,
Պատիվ և սուրբ կուսություն,
Կոխան առնել միհամուռ:
Որպես և մի գեղավայլ
Կուսին անփործ գյուլազար,
Որ դեմք ուներ հրեշտակի,
Համբույրն աժեր բյուր հազար:
Սա էր դուստր պատվական
Քալանթարանց զորեղ տան,
Նույն Մխիթար իշխողին,
Որ սիրում էր անպայման:
Սորան կամեր Ջավադ-խան
Զոհել անարգ ցանկության,
Անել իշխող հարեմին

Անթիվ կանանց բազմության:
Եվ մինչ որպես կերպերոս,
Բերանաբաց անամոթ,
Լափեր, կլաներ սիրտ ուրախ
Արենագին փրկչի հոտ:
Տերն երկնից ընդունեց
Արտասվաթոր աղոթքը,
Կարոտելից շնորհից
Ամենազոր յուր ձեռքը:
Նա հոգովն Մովսեիի
Աիարոնի Հեսուտ,
Վառեց երկու մելիքներ
Իշխող որդոց Արամա:
Որք ի հրաման սիրալիր
Գումարեցին, կազմեցին,
Յուրանց հանձնած հովվության,
Ութ հարյուր տուն հայ ազգին:
Եվ ազգային պինդ կապով
Ի սեր կրոնի միաբան,
Որպես գլուխ և մարմին,
Կուռ շղթայով միացան:
Ուխտ և դաշինք կապեցին
Հետ մելիքա անվանի,
Գնալ նոցա ետևից,
Ուր ոտք քաջացն տանի:
Կրոն, լեզու, ազգություն,
Օրենք սուրբ ամուսնություն,
Միայն տեսնել ազատված
Ի խաչապաշտ տերություն:
Այսպես թողին, ձգեցին,
Ամենայն ինչ սիրելի,
Տուն անդաստան պտղաբեր
Եվ բուրաստան բարելի:
Հարգ տաճարաց վերացան
Դարձան փարախք անբանից,
Երգ սաղմոսանց լռեցին
Եվ չարականք սուրբ տոնից:
Երեմիայի ի՞նչ կարեր
Մխիթարել արտասուք,
Այրիացյալ տաճարներ
Եվ գերեզմանց մեծաշուք:
Մեծ ամբոխի աչքերը



Արտասուքով լվացին,
Տաճարները աստուծո
Եվ շիրիմներ շատ թացին:
Հետ վերջնական անըմբեր
Եվ ցավալի ողջունաց,
Ժողովեցան, խմբեցան
Դրոշակի տակ ավագա:
Ժամանակն գարնան էր
Բնությունն ուրախ խայտում էր,
Եվ լուսատուն ցերեկի
Մեր աշխարհեն թաքչում էր:
Վրաստանի սուրբ գահին
Ապավեն մեծ ունելով,
Որպես գառինք արոտին
Փութային հույժ կարոտով:
Ուղի ընկան անսովոր
Առաջնորդք են մելիքներ,
Աh պաշարեց նոցա սիրտ,
Մութ և խավար էր գիշեր:
Դարաներին հառաչա
Ավազակաց ոհմակներ,
Եվ հետևից շողային
Պարսկական սուր սրեր:
Որպես երբեմն Իսրայել,
Փարավոնից փոխառյա,
Առաջն ուներ ծով Կարմիր,
Հետուստ սուրն պողպատյա:
Մինչ գիշերն ամբողջ և
Օրն հետևյալ մթանայր,
Հազիվ երբն ձանձրալի
Կես ճանապարհն ընթանայր:
Բոթն հասավ ականջին
Այս փրկարար փախստյան,
Չար իշխանին Գանձակա
Անուն որ էր Ջավադ խան:
Զորք ուղարկեց բազմաթիվ
Փախուցելոց ետևից,
Դարձուցանել հետս՝ կամ
Տալ կերակուր երկաթից:
Բայց չէր ծածուկ նպատակ
Այս մահաշունչ իշխանի,
Եվ մերայնոց քաջազնյա

Քաջ մելիքաց պատվելի
Շտապեցին հապճեպով
Խնդրել պաշտպան մեծ պետեն,
Որո պալատն էր Տփխիս
Վրաստանի արքայեն:
Անակնկալ մութ պահուն
Քաջքն քաջոց դիպեցան,
Պարսկական զինվորներ
Վրաց սրով փռվեցան:
Օրիքան, երբ խոտահար
Սուր գերանդին առնու գործ,
Առհասարակ խոտ ծաղկունք
Փռվին գետին կան անգործ:
Սքանչելի այս խնամք
Մեր նախնիքը տեսնելով,
Առ բարձյալն աստված
Աղոթեցին գնծալով:
Որպես երբեմն Իսրայել
Անցանելով Կարմիր ծով,
Փարավոնյանք տեսաներ,
Ջրահեղձ եղած աստուծով:
Հետ այսպիսի փրկության
Շարունակեն ճանապարհ,
Դժվարությունք թե կրեն
Ուրախ են միշտ սիրահար:
Ձի մեծ հույս կա առաջի
Քանց Իսրայել ի Սաղեմ,
Ոչ կաթ և մեղր և գինի
Այլ անմահն է եդեմ:
Գան հասնեն մինչ Տփխիս
Փափակելին ի կետրոն,
Վրան կանգնին դադարին
Որպես Աբրահամ ի Քեբրոն:

Բ

Եվ ետ քանի մի օրից
Նրանց մելիք-Քալանթար,
Ներկայացան սուրբ գահին
Մեծ իշխանի վեհափառք:
Նա բազմած էր քան հսկա
Մարգարտահեր աթոռին,
Ձեռին ուներ գայիսոն



Ականակուռ մեծագին:
Եվ ի գլխին թագն սուրբ
Խաչն ի վերա ադամանդ,
Ծիրանին լայն փառավոր
Ծածկեր նորա շրջապատ:
Անուն տային Հերակլես
Արքայական սերունդ էր,
Թագավորաց հինօրյա
Ծագումն առած մինչ ինքն էր:
Խոնարհ դիմոք ծնկաչոք
Երկրպագեն զույգ իշխանք,
Եվ արկանեն առ աջի,
Ձիր մին յուրանց հեզ մաղթանք:
Ասեն «ընկալ արքա քաջ
Մեր հեզ հպատակություն,
Մենք ցանկանամք ազգովին
Քո հզոր պաշտպանություն»:
Թագավորն սրտաբաց
Լսեց նոցա խնդրուած,
Տալով տեղի Տփխիսում
Իբրև մի հայր ողորմած:
Բնակեցրեց Հավլաբար
Առողջարար լայն մասում,
Փարթամանալ, բազմանալ
Առնել շնորհք և ուսում:
Քիչ ժամանակ երբ անցավ
Ժողովուրդն գյուղասեր,
Աղմկալի խիստ կյանքից
Տրտունջ արավ անհամբեր:
Ապերախտ քան լրտեսներ
Քանանայի սուրբ երկրին
Դառնալ կրկին Եգիպտոս
Ուտել սխտոր ցանկային:
Մի ծեր գտավ հինավուրց
Որպես հարցուկն բյուրյան,
Խորհուրդ երեա մելիքաց
Լսել ձայնին բազմության:
Ասեր նոցա իմ քաջ տեարք,
Լսեցեք իմ գուշակման,
Երկար չեն անցնիլ օրեր
Կգա ժամն քայքայման:
Ժամը կգա քայքայման

Ձեր հայրենի իշխանության,
Թե շուտով չհեռանաք
Տեղ գտնել ամայության:
Ձայն լսելով քարոզչի
Կրկին արքային դիմեցին,
Որպես հայտնի գյուղականք
Գյուղատեղ իրանց խնդրեն:
Հենց ստացան հաճություն
Միապետին հրամանով,
Գնացին գետին Շուլավեր
Գյուղատեղի անտառով:
Ժողովելով միաբան
Շտապեցին չուեցին,
Դեպի հարավ ջերաջերմ
Տասն ժամում տեղ հասին:
Այսպես մեղունք շատ անգամ,
Յուրյանց սեփական տնակ,
Թողում թռչում են անտառ
Այնտեղ գտնել ազատ կյանք:
Հարմար տեսան իրանց տեղ
Եվ չափեցին իմացան,
Կանգուն դատն երկհազար
Գյուղատեղին լայնության:
Երկարություն նորա էր
Հյուսիսիցը դեպ հարավ,
Կանգուն չափով վեց հազար
Սակավաջուր և ծարավ:
Գյուղի ներքև հարևմուտք
Բարձրակատար ի բլրան,
Հնուց կանգնած մի ամրոց
Ճգնաժամուն ապաստան:
Այնտեղ ընտրեց Քալանթար,
Անուն որ էր Մխիթար,
Բնակության յուր տեղի
Եվ յուրայնոց միշտ և հար:
Եվ որ հեռու նորանից
Միջակետին շինության,
Կանգնած վաղուց սրբարան
Շրջապատն էր գերեզման:
Արևմուտքից արևելք
Գյուղի ծայրին բարձր ի վեր,
Ուխտատեղի սրբության



Կրոնավորաց կայան էր :
Այսպես նոքա ողջ գետին
Բաժանեցին ութ մասին,
Որպես մինչ ցայժմ են անվանք
Գյուղորեից առաջին:
Բայց և անուն Շուլավեր
Ամբողջ գյուղն միշտ կոչի,
Եվ հառաջ էր այս անուն
Իբրև անքող է հայտնի:
Այսքանս քեզ բավական
Հայրենիքի քաջ զավակ,
Նախնիքներիս դեպքերը
Որ բերեց ձեռն ստահակ:
Քիչ էլ երգե թող քնար
Քեզ ցույց տալով նկարներ,
Քաղաքական, կրոնական
Տեսակ-տեսակ հակումներ:

Գ

Մեր հայրենի ուրվականներ
Մի խնայեք մի րոպեն,
Դուք վեր կացեք ձեր խոր քնից
տարփողեցեք պարզորեն:
Թե ինչ հոգի աստվածեղեն
Առաջնորդ էր ձեզ ուղիղ,
դեպի անձուկ նեղ ճանապարհ
Տանող երկինք դեպ ուղիղ:
Այս իմ խնդիր աղերսալի
Անուշահոտ բուրմունքով,
Թռավ երկինք հոգոց կայան
Շատ ամրագույն դռներով:
Եվ այնտեղից ի զառիվայր
Խոնարհեցավ երկնքից,
Մի վեհ էակ լուսապայծառ
Մարմին ուներ եթերից:
Սա չէր հոգի մարդկեղեն
Աշխարհական պարզ կյանքի,
Էր վանական վարդապետի
Եվ բարձրանուն վեհ ազգի:
Պատկառելի այս ծերունին
Յուր խնկելի տիպարով,
Մինչ ես կայի առանձնացած

Սովորական աղոթքով:
Ինձ մոտեցավ մեղմիկ քայլով
Ձեռին ուներ մի մեծ գիրք,
Պատմություն էր անցյալ կյանքի
Գրած ոսկեզօծ տառերով:
«Ի՞նչ քո այդ թախանձանքը,
Ով հարցասեր մերազնյառ»,
Խլեք ինձնից բարձր խոկմունք
Որ էր առտեր գերագահ:
«Մի՞թե կամիս վերադառնալ
Անցյալների հոսանքով,
Սգալ, ողբալ քեզ կորուստը
Յուր ցավալի հետքերով:
Կորուստները որ մեզ բերին
Ժամանակն էր չարաբաստ,
Եվ ձեռքերը մեր իշխանաց
Եվ օտարաց մեծաստսա:
Ոհ, խլեցին, կործանեցին
Հայաստանի դրոշակ,
Եվ ի փոշի խոր թաղեցին
Մեր հայրենի գահ պսակ:
Ոչ, դու կամիս քեզ գեղգեղել
Քո նախնիքի վեհ կյանքից,
Որ չէր հեռի աստվածային
Ավետարան սուրբ գրքից:
Լսիր, ես քեզ ահա կարդամ
Այն սուրբ գրքի քաղվածներ,
Քո հայրենի կյանքի տիպար
Որ քեզանից առաջ էր:
Մենք ունեինք քաջ առաջնորդ
Բարոյական մեր վարքի,
Ավետարան կենաքարոզ,
Որի շունչն է սուրբ հոգի:
Հավատ, հույս, սեր նորա քարոզ
Անխախտ հիմունք պատվականք,
Յուրաքանչյուր քրիստոնեի
Անհրաժեշտ փրկարանք:
Եռաճղի այս կենաց ծառ
Քո նախնիքը ունեին,
Քաղցր պտուղ անխափ հույսով
Համենայն ժամ քաղեին:
Սեր, խնդություն, խաղաղություն



հանդարտություն, քաղցրություն,
Երկայնամտություն, ժուժկալություն,
Սուրբ հեզություն, բարույթուն:
Մի սուրբ սիրտ էր ամենի մեջ
Եվ մի հոգվով եռային,
Չգիտեին ոչ մի նախանձ,
Անքակտ սիրով խնդային:
Թե վշտանար մի անդամն,
Ամենքն էին ցավակից,
Կամ թե բախտի քարյաց տիպեր
Նույնպես էին մասնակից:
Չուներ տեղի նոցա միջին
Ատելություն, քեն, նախանձ,
Թշնամություն, վրեժխնդություն
Օտար էին և ի բաց:
Թե դրացի պակսավորաց,
Թե աղքատաց մշտատանջ,
Տալիս էին հաց ու գինի
Արծաթ, հանդերձ անպահանջ:
Թե տուն շիներ մինը մեզնից
Հարկ պահանջեր օգնություն,
Չխնայեր և ոչ մյուսը
Նյութեր կրել շինության:
Եզինք եթե չուներ մեկը
Վարել հողը շահեկան,
Բարոյական ստիպեր հարկ
Ձեռը մեկնել օգնության:
Առատ հունձն եթե կանչեր
Ձեռք մշակին ժրաջան,
Սուր մանգաղմեչ շողշողային
Օգներ խեղճին ձեռնունայն:
Նույնպես եր պարտք հասարակաց
Գործել միմյանց ի նպաստ,
Խուրձը կրել, կալսել կալը,
Հանձնել տիրոջ չարաբաստ:
Եվ փոխարեն բարձման բեռին
Ընկերին խեղճ անտերունչ,
Եվ աստուծո երկնավորին
Պաշտման սրտով անմռունչ:
Շտեմարանք առատ ցորնով,
Հնձանք գինով փրփրեին,
Կարկտից, թոզից ոչ երաշտից

Արտեր, այգիք տանջվեին:
Այս նետերով, վահաններով
Ձեր նախնիքը զինվեցան,
Հետ աշխարհի չար իշխանին
Պինդ գոտեպինդ կռվեցան:
Եվ հաղթական գտանվելով
Հաղթանակ մեծ ստացան,
Թե կենդանի, թե հետ մահվան
Մեծ հաղթողից պատվեցան:
Ձեր աշխարհում ի՞նչ եմ տեսնում
Թող խնայե իմ աստված,
Սեր ընկերին, սեր աստուծո
Վասն մեղաց ցամաքած:
Հավատ պակաս, հույսը երկմիտ,
Սեր պատվերին խարդախված,
Ամենայն ինչ արժանավոր
Ուղիղ շավղից խոտորված:
Ծառայություն երկնավորի
Սամոնային վաճառած,
Արժանավոր մշակների
Գործը չարերին հանձված:
Եվ մտավոր աղբյուրները
Սուրբ հոսմունքից պակասած,
Խավար մեղքի, խավար մտքի
Ամենայն տեղ զորացած:
Խեղճ ժողովուրդ նյութականից
Ամենևին դատարկված,
Եվ զանազան մեծ պարտքերով
Օրըստօրե մանրացած:
Բարոյական կյանքով հիվանդ
Եվ առ բարին նվազած,
Ճշմարտություն լոկ արտաքուստ
Իսկությունը մոռացած:
Չարիքներին այս ծանրակիր
Չար հովիվքն են պարտական,
Իսկ ի տեղի հովիվներին
Առաջնորդք տուն պատասխան:
Անդ առաջի դատավորին
Որ ամեն մարդ սրտատրոփ,
Մնա վարձի կամ պատժո
Անվերջ, աներք, անամփոփ:



Ե

Ջեր մելիքներ հայրախնամ
Հոգային պետք ձեր նախնյաց,
Մինչև եթե հարկ պահանջեր
Տային յուրյանց ստացուած:
Որպես արծվի թևատարած
Յուր ձագերին անվտանգ,
Քաջ պահպանե որսորդական
Չար թակարդից անփորձանք:
Բայց ի՞նչ է այս հակադրական
Ընդդեմ խղճի պատահվածք,
Որդկերանցից հող, անդաստան
Խլել իսպառ, օհ արկածք:
Հազար և ութ հարյուր թվի հետ
Հիսուն երկու գումարած,
Այս անցք հասավ յուր վախճանին
Ամբոխն մնաց շվարած:
Լացեք, սգաց խեղճ ժողովուրդ
Ոք չկարած թվել հարվածք,
Մխիթարող էլ չմնաց
Սրբող աչքից հորդ կաթուածք:
Այսպես զրկվեց իմ ժողովուրդ
Զրկվեց առատ յուր բաժնից,
Զրկվեց իսպառ բազմադիմի
Բարեպտուղ խնամքից:
Ինչպես այգի խոպանացած
Մացառախիտ փշաբեր,
Աչքից թողած պարտիզպանին
Տխուր սրտով անհամբեր:
Մի՞թե երկինք խեթիվ նայեց
Յուր ձեռագործ ամբոխին,
Կամ երկնավոր արդար օրենք
պատժեց նորան ապօրեն:
Մի՞թե որդիք քաջ մելիքաց
Մոռցան յուրենց նախնիքի,
Ավանդ թողած սեր հայրական
Առ հպատակս սուրբ ուխտի:
Ես դու ով տեր էր մոռանաս
Անտիրացած քո կալված,
Որ կենդանի քո Հիսուսի
Սուրբ արյունովն է ցողված:

Չես հիշում տեր, նախանձելի
Նորա վիճակ բախտավոր,
Որ կորցրեց իբր անարժան
Եդում անուն մեղավոր: /23/
Խնայյա, ով տեր և տուր պաշտպան
Քո սուրբ ձեռի հովանին,
Քաղցր քո աչք լինի նորան
Քաջ առաջնորդ դեպ բարին:
Յետ այս խոսքիս հոգին անմահ
Այրված սրտով ցավելով,
Յուր հետնորդաց խղճություններ
Արտասուքով ողբալով:
Երես դարձրեց խիստ զայրացած
Մնաս բարյավ ասելով,
Մի վայրկյանում անհայտացավ
Ամպերի մեջ ծածկվելով:

Զ

Յեղինակ գրչիս ես ինչպես լռեմ,
Կամ որպես երգեմ հայրենյաց մրմունջ,
Վեհ հոգույն թողածն ես ինչպե՞ս պատմեմ,
Որ անհայտ քարեր ինձ չանեն անշունչ:
Ինչպե՞ս ճառագրեմ սոսկալի տեսիլք,
Որ ազնիվ հոգույն չպատճառե վիշտ,
Որ շատ թափելու անեծքի կաթիլք
Չարամիտ մարդոց գլխի վերա միշտ:
Շուլավերը երբ լսեց վճիռը
Թե գյուղատեղին, ջաղացք, հողերը,
Եվ եդեմատիպ այգիք շահաբեր,
Պիտ տասանորդեն յուրյանց մելիքներ:
Եռաց, բորբոքվեց մի ամբողջ ուժով
Եվ կայծակ հանեց մեծ որոտմունքով,
Դիմել ուր արժան աղաղակ բառնալ
Սրբել ոտքերը լացի հոսանքով:
Ահա երկսեռի մանկունք մինչ ծերեր
Թափվում են Տփխիս հուզված սրտերով,
Տիրող իշխանի ընկնում ոտքեր,
Ճշմարտությունի մահվան բողոքով:
Գթոտ և արդար իշխան Վորոնցով
Սրբեց արտասուք յուր կարեկցության,
Եվ մխիթարեց կոտրածներ սրտով
Յագավ զենքերը ճիշտ արդարության:



Ծանր պահանջման փոխեց վճիռը
Եվ լուծը ճնշող անսովոր մարդկան,
Ջրաղացք, այգիք, տնատեղերը,
Բաշխեց ամբոխին որպես սեփական:
Իսկ դաշտավայրեր երկրագործության
Թողեց մշակել մարդկանց երկասեր,
Տալ բաժին միայն դառն աշխատության
Տասներորդը մելիքաց պարտքեր;
Մոռացա հիշել և մի այլ վճարք,
Որ տաներ դժվար կուսական թիկունք,
Յարյուր հինգ թուման արծաթ էր անարգ
Նաև հինգ մշակ տարեկան բերմունք:
Գուցե մոռացմամբ թողած էր մտքից
Արդարակշիռ իշխան Վորոնցով,
Կամ տալ մելիքաց պարգև իրանից,
Վճռել էր անվերջ պենսյա ապահով:
Յամարձակ ձգտմունք ժողովրդական,
Խլեց խոչ և խութ՝ հարթեց ճանապարհ,
Դիմել և ձայն տալ ուր անդ և արժան
Թե չի պատկանվում մենել նոր կոպար:
Ուստի քիչ հետո ունքակ միության
Դիմե ժողովուրդ խուռն բազմության,
Առ իշխանն մեծ որդի արքային
Միքայել անուն հոդի փրկության:
Եվ ահա հանկարծ հրաման ուժգին
Խորտակեց, փշրեց լուծա ծանրակիր,
Ազատեց շլինք հոգնած ամբոխն,
Տալ վճռեց միայն տասնորդ անձանձիր:
Այսպես աննման անսանձ քաջություն,
Ճնշված ամբոխին բերեց փրկություն,
Ձեռքով այս երկու մեծ իշխանների,
Որ թողին իրանց փառք պարծանքների:
Յապա վեր կացեք, անմեղ մանուկներ,
Մինչ շատ տարիներ մեռցնող ծերեր,
Օրհնեցեք կյանքը մեծ իշխանների
Որդվոց և թոռանց և բոլոր ցեղի:
Որ ապրեն առողջ երջանիկ կյանքով,
Յասնեն մեծության պաշտելի փառքով,
Որքան արեգակ լույս տա աշխարհում
Եվ անմեղ լուսին փայլե երկնքում

# ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շուլավերը գտնվում է Թիֆլիսեն դեպի հարավ 55 վերստ հեռավորության վրա, ըստ լայնության և ըստ երկայնության ութ վերստ բարեբեր հովտի մեջ, ավելի հյուսիսից, արևմտից և հարավից 500-ից ավելի այգիներով, վարելահողերով և հովաշունչ լեռներով շրջապատած՝ ինչպես երեքպարսպյա քաղաք, դիրքը թեքված դեպի արևմուտք: Ոտի տակով անցնում է փոքրիկ գետակը, որը ժողովելով Լալվարի ստորոտում գտնվող աղբյուրներից հասնում է Շուլավեր և հազիվ հազ բավականանում այգիներին և արտերին, իսկ գարնան ժամանակները, երբեմն մեծանալով գնում և թափվում է Խրամ գետը:

2. Գյուղի բնակիչները ի միասին գաղթած լինելով Շուլավեր, տեղավորված են առանձին թաղերում և կրում են նախկին գյուղերի անունները:

3. Շամշադինու գավառից գաղթած ժամանակը 800 տուն էին, բայց հետո ինչ ինչ պատճառներով պակասելով, այժմ հասած են մինչև 600-ի:

4. Շատ տեղ Քալանթար և Մելիք անունը անխտրաբար մելիք են գործածված:

5. Երից գլ. ԺԴ, հմր. 6:

6. Այնտեղ ևս գլ. ԺԵ, հմր. 1:

7. Ծննդ. գլ. ԻԼ, հմր. 28 և երից գլ. Գ, հմր. 8:

8. Ծննդ ԺԳ, գլ. հմր. 18:

9. Հերակլ վրաց թագավորը յուր հայր Թեհմուրազից հետո ստանում է Քարթլու և Կախեթի թագավորությունը վրացոց այս 1820 թվի օրացույցի ասելով 1744 թվին, իսկ 1889 թվի Թիֆլիսում տպված հայերեն օրացույցի վկայելով 1762 թ.:

10. Թուոց գլ. ԺԴ, հմր. 4:

11.Սորա համար ասում էին դարբին պապն էր որ խորհուրդ տվեց մելիքներին Թիֆլիսից հեռանալ և բնակվել գյուղ տեղ, որպեսզի նորանց իրավունքը և հեղինակությունը վայր չընկնի: սա թաղված է Շուլավերու հանգստարանում ի թվին Հայոց ՌՄԻԱ /1772/:

12. Այժմ ևս գյուղի լայնությունը և երկարությունը մոտավորապես նշանակված է:

13. Սա մեկ ամրոց էր անհայտ ժամանակից մնացած, երբ ժողովուրդը տեղափոխվեց Շուլավեր, Մխիթար Քալանթարը յուր բնակության համար տեղ է վերցնում: Այս ամրոցը ժողովրդի վտանգավորության մեջ գտնված ժամանակը ծառայում էր որպես պատսպարան, ինչպես պատահեցավ Հասան խանի արշավանքի ժամանակ 1826-27 թվերին: Սորան Գրիգոր Հախվերդի Քալանթարյանը 1857 թվին հիմքից քանդելով՝ նորա քարերով տուն շինեց նույն տեղը: Այս մասին հանգուցյալ Վարդան քահանա Տեր-Սարգսյանցը, թեև ժողովրդյան մի քանի հասկացողներին հրապուրեց արգելք լինել քանդելուն՝ որպես ամենահարկավոր ամբողջ հասարակության, բայց ժողովրդյան ստրկացած հոգին անկարող գտնվեցավ դիմադրելու:

14. Անհայտ ժամանակից մնացած մի կիսավեր եկեղեցի էր լայն հանգստարանով, որը գաղթականությունից վերանորոգված՝ ծառայում էր եկեղեցվո տեղ, որ 1844 թվին փակվելով, տեղը կոփածո ցիրով հիմնվեց մի մեծ եկեղեցի և 1887 թվին ստանալով ավարտումն անվանեցավ Ս.Մեսրոպ:

15. Գյուղի վերին ծայրին բարձր բլրի վերա հնուց կառուցված մի ուխատեղի է, որ անվանվում է Կյուրակի, բայց ժողովրդյան անհոգության պատճառով հետզհետե փակվում է և թերևս շուտով կանհետանա:

Սորանից քիչ վերև և յուր ստորոտում զառիվայր դեպ հյուսիս հասարակաց գերեզմանատունն է, մոտավորապես 240 քայլ լայն և 500 քայլ երկար, որի մեջ գտնվում են և շատ քիչ գերեզմաններ, որոնց կուբածև մի քանի քարերի վերա գրված են անուններն հայերեն տառերով: «ա/ «Սիմեոնի աղոթեցեք, թիվ ՌԱ« /**1552**/, բ/ «Աստուած ողորմեա սոցա թիվ ՌճԶ» /**1657**/, գ/ «Աստուած ողորմեսցի Սարգսին», դ/ «Ած. ողորմի Բողոսին», ե/ «Այս է տապանն Վրթանեսի որդի Թումասին թ. ՌճԼԱ» /**1682**/:

16. Այդ գյուղը կոչվում է եղել «Շուլավեր» և առաջ, այն է 1642 թվին, ինչպես երևում է «Զամբռր» գրքին, որը մեր նախնիների կարծիքով զանազան մեկնաբանություններ է կրում, ոմանք ասում են, թե Ալանաց ազգիք մի բռնավոր հարկ ժողովելիս պատահում է մի աղքատ կնոջ, որը ճախարակից հետ էր տալի յուր մանվածն, և երբ պատասխանում է, թե ոչինչ չունեմ, հարկահանը բարկանալով ասում է **«շուլավեր», այսինքն վիլեդ տուր,** ոմանք թե մի այլ բռնավոր գյուղին տիրելով, ամեն տարի նեղացնում էր գյուղացոց և հափշտակում նոցա ստացվածքը, մինչև որ գյուղը վերջին աղքատությանն է հասցնում, որպիսի հանգամանքից ժողովուրդը ստիպված նորան անվանում է Շեն-ավեր:

17. Այս վանական վարպետը, որ հետո եպիսկոպոսության է հասնում, եղբայր էր մելիք Ավալի, որից առաջացած է Մելիքանց տունը և որը կենդանի է եղել ՌճԿԳ /1694 թ./ հայոց թվին: - Ինչպես երևում է նրանց ավետարանի հիշատակարանում: Այս

թվին նայելով, թե սա, թե վարդապետը պետք է թաղված լինեն Շամշադինում, իսկ Մխիթար "Քալանթարը" Շուլավեր, որոյ գերեզմանաքարը չունի ոչինչ արձանագիր: **"Քալանթար" բառը Րաֆֆին թարգմանում է քաղաքագլուխ**, իսկ մելիք բառը՝ տիրող կամ իշխան:

18. Նետեր և փահաններ բառերը գործածված են փոխաբերաբար:

19. Քալանթարանց և Մելիքանց նախնիները համեմատելով նորա ներկա սերնդների հետ, ավելի մարդասիրաբար էին վարվում ժողովրդյան հետ, ինչպես հայր և որդիք:

20. Մինչև 1852 թիվն Շուլավերու բոլոր հողերն թագավորական էր և նույն թվից իշխանության հրամանով հանձնվում է Քալանթարանց և Մելիքանց և ժողովրդյանը հրամայվում միայն վարելահողերի համար տասանորդ տալ:

21. Ծննդոց. գլ. ԻԵ, հմր. 32:

22. Ամբողջ գյուղը պարտավորվում էր տալ Քալանթարանց և Մելիքանց տարեկան 1050 ռուբլի, նոքարի վարձ և յուրաքանչյուր տունը հինգ մշակ:

1860 թ.





**ՂԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ ՍԵԴՐԱԿԻ**

Ծնվ. է 1925 թ-ին: Դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել և ավարտել է Թբիլիսիի կոոպերատիվ տեխնիկումը: 1943-49 թվականներին ծառայել է Վրաստանի ՆԳ նախարարության համակարգում: 1949 թ. աշխատել է գյուղկոոպի համակարգում, 1951 թ-ից ղեկավարել է Շահումյան ավանի գյուղկոոպը, 1962 թ-ից՝ Շահումյանի և Շուլավերի (կայարանի) միացյալ կոոպերացիայի տնօրեն: Երկարատև անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով, բազմաթիվ մեդալներով և արժանացել է վերադաս մարմինների տարբեր բնույթի խրախուսանքների:

**ԴՈՒԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՏՈՒՇԻ**



Ծնվ. է 1933 թ.՝ արհեստավորի ընտանիքում: Ավարտելով միջնակարգը՝ 1953 թ. ընդունվել է Ստեփանավանի Քալանթարի անվ. անասնաբուժական-անասնաբուծական տեխնիկումը: Ուսումը չավարտած՝ զորակոչվում է բանակ: Ծառայել է Գյումրու սահմանամերձ զորամասում: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է բուհում՝ հեռակա բաժանմունքում: 1957 թ-ից աշխատում է որպես Շահումյան ավանի և շրջական մի քանի գյուղերի գլխավոր անասնաբույժ: 1973 թ-ից՝ ավանի անասնաբուժական կետի ղեկավար: 1995-ին ընտրվում է ավանային խորհրդի նախագահ: Ծավալել է ակտիվ կազմակերպչական գործունեություն՝ մեծ ավանդ ներդնելով ավանի բարեկարգման գործում:



**ՅԱԿՈԲՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԼԵՎՈՆԻ**

Ծնվ. է 1930 թ.՝ ծառայողի ընտանիքում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի գյուղտնտեսական ինստիտուտի մեխանիզացիայի ֆակուլտետ: 1956 թ. ավարտելով բուհը՝ աշխատանքի է անցել շրջանի մեքենատրակտորային կայանում՝ որպես ինժեներ: 1958 թ. ՄՏԿ-ների լուծարվելու կապակցությամբ գործուղվել է Շահումյանի կոլտնտեսություն՝ որպես գլխավոր ինժեներ-մեխանիկ: 1962 թ-ին ստանձնել է խորհտնտեսության տնօ-

րենի պաշտոնը, որտեղ աշխատել է մինչև 1992 թ.: Ծավալել է ակտիվ հասարակական-կազմակերպչական գործունեություն. բազմիցս ընտրվել է տեղական և շրջանային խորհուրդների պատգամավոր, եղել է Մառնեուլիի շրջկոմի բյուրոյի անդամ: Երկարատև ու տքնաջան աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով ու մեդալներով: Անուրանալի է նրա ներդրումը ավանի տնտեսական վերելքի գործում:

Վրաստանի Մարնեուլի շրջանի Կոմկուսի I-ին քարտուղար **Ռ.Վ. ՄԵՄԱՌՆԻՇՎԻԼԻՆ** և Անդրկովկասի հրթիռային զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ **ՎԻՏԱԼԻ ՎԱՍԻԼԻ ԶԱԽԱՐՈՎԸ**:



Հանդիպում Շուլավերում





**ՂԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ ՍԵԴՐԱԿԻ**

Ծնվ. է 1925 թ-ին: Դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել և ավարտել է Թբիլիսիի կոոպերատիվ տեխնիկումը: 1943-49 թվականներին ծառայել է Վրաստանի ՆԳ նախարարության համակարգում: 1949 թ. աշխատել է գյուղկոոպի համակարգում, 1951 թ-ից ղեկավարել է Շահումյան ավանի գյուղկոոպը, 1962 թ-ից՝ Շահումյանի և Շուլավերի (կայարանի) միացյալ կոոպերացիայի տնօրենը: Երկարատև անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով, բազմաթիվ մեդալներով և արժանացել է վերադաս մարմինների տարբեր բնույթի խրախուսանքների:

**ԴՈՒԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՏՈՒՇԻ**



Ծնվ. է 1933 թ.՝ արհեստավորի ընտանիքում: Ավարտելով միջնակարգը՝ 1953 թ. ընդունվել է Ստեփանավանի Քալանթարի անվ. անասնաբուժական-անասնաբուծական տեխնիկումը: Ուսումը չավարտած՝ զորակոչվում է բանակ: Ծառայել է Գյումրու սահմանամերձ զորամասում: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է բուհում՝ հեռակա բաժանմունքում: 1957 թ-ից աշխատում է որպես Շահումյան ավանի և շրջական մի քանի գյուղերի գլխավոր անասնաբույժ: 1973 թ-ից՝ ավանի անասնաբուժական կետի ղեկավար: 1995-ին ընտրվում է ավանային խորհրդի նախագահ: Ծավալել է ակտիվ կազմակերպչական գործունեություն՝ մեծ ավանդ ներդնելով ավանի բարեկարգման գործում:



**ՀԱԿՈԲՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԼԵՎՈՆԻ**

Ծնվ. է 1930 թ.՝ ծառայողի ընտանիքում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի մեխանիզացիայի ֆակուլտետ: 1956 թ. ավարտելով բուհը՝ աշխատանքի է անցել շրջանի մեքենատրակտորային կայանում՝ որպես ինժեներ: 1958 թ. ՄՏԿ-ների լուծարվելու կապակցությամբ գործուղվել է Շահումյանի կոլտնտեսություն՝ որպես գլխավոր ինժեներ-մեխանիկ: 1962 թ-ին ստանձնել է խորհտնտեսության տնօ-

րենի պաշտոնը, որտեղ աշխատել է մինչև 1992 թ.: Ծավալել է ակտիվ հասարակական-կազմակերպչական գործունեություն. բազմիցս ընտրվել է տեղական և շրջանային խորհուրդների պատգամավոր, եղել է Մառնեուլիի շրջկոմի բյուրոյի անդամ: Երկարատև ու տքնաջան աշխատանքի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով ու մեդալներով: Անուրանալի է նրա ներդրումը ավանի տնտեսական վերելքի գործում:

Վրաստանի Մարնեուլի շրջանի Կոմկուսի I-ին քարտուղար **Ռ.Վ. ՄԵՄԱՌՆԻՇՎԻԼԻՆ** և Անդրկովկասի հրթիռային զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ **ՎԻՏԱԼԻ ՎԱՍԻԼԻ ՁԱԽԱՐՈՎԸ:**



Հանդիպում Շուլավերում





**ՇՈՒԼԱՎԵՐՈՒ ՄԵԼԻՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԳԱՂԹԵԼ ԵՆ ՇԱՄՇԱԴԻՆԻՑ**




**ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌ**



# Բովանդակություն

Ծորփոր գավառի պատմական ակնարկ (Ռաֆիկ Իվանի Մաքևոսյան) . . . . . 5

Մարո Մարգարյանի խոսքը . . . . . 7

Շղվեր-Շուլավեր-Շահումյան . . . . . 9

Տեղագրությունը . . . . . 9

Բնակավայրի առաջին հիշատակությունները . . . . . 10

Հայաթափումը 1740-ականների վերջին . . . . . 11

Շուլավերի նոր վերաբնակեցումը ղարդմանահայերով 1750-ականների վերջերին . . . . . 12

Դիմադրությունը 1826 թ. պարսից արշավանքին . . . . . 14

Ռուսաց տիրապետության ներքո և 1852 թ. գյուղացիական հուզումները . . . . . 16

Շուլավերի զարգացումը XIX դարում . . . . . 16

Քաղաքի կարգավիճակ ձեռք բերելու փորձ . . . . . 18

Շուլավերին պատկանող կալվածներն ու դրանց տերերի և գյուղացիների միջև առկա հարաբերությունները XIX դարի 2-րդ կեսին . . . . . 19

Տանուտերերի (գյուղապետերի) ընտրություններ և հասարակական ձեռնարկումներ ու հաստատություններ . . . . . 20

Շուլավերը և նրա նոր տանուտերը . . . . . 21

Բնակչությունը . . . . . 24

Պատմական հուշարձաններ . . . . . 34

- Սբ. Աստվածածին եկեղեցի . . . . . 34
- Սբ. Մեսրոպ (Պողոս-Պետրոս) եկեղեցի . . . . . 39
- Սբ. Կիրակի . . . . . 42
- Մելիք-Քալանթարյանների ապարանքը . . . . . 48
- Շեկեկ . . . . . 48
- Սբ. Սարգիս . . . . . 19
- «Սպիտակշեն» գյուղատեղի . . . . . 50
- Ծակքար . . . . . 51
- Բնիծորի Փոքր վանք . . . . . 52
- «Խաչի Յալ» . . . . . 53
- Բնիծորի Միջին կամ Ներքին վանք . . . . . 53
- Բնիծորի Մեծ վանք . . . . . 56

Շուլավերը թուրքական բանակի ներխուժման ժամանակ . . . . . 65

Վրաց մենշևիկներն ու գերմանական զավթիչները Շուլավերում մինչև 1918 թ. դեկտեմբերի 13-ը . . . . . 67

Շուլավերը հայ-վրացական պատերազմի ժամանակ . . . . . 69

Հայ-վրացական պատերազմի ավարտից հետո . . . . . 71

Ստալինյան բռնությունները . . . . . 72

Շահումյանցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին . . . . . 73

Պատերազմի մասնակից բժիշկները . . . . . 84

Թիկունքում . . . . . 84

Հայրենական մեծ պատերազմում զոհված շուլավերցիների հիշատակին նվիրված հուշարձանը . . . . . 85

Տագնապալի այն գիշեր . . . . . 86

1949 թվականի աքսորը . . . . . 88

Գյուղատնտեսությունը . . . . . 89

Ջրի խնդիրը . . . . . 92

Ջրի սակավությունը շահումյանցիների մշտական ուղեկից . . . . . 94

Կրթական հաստատությունները . . . . . 96

Մշակութային կյանք . . . . . 111

Ավանի մարդիկ . . . . . 113

Շուլավերը 1921 թ. Փետրվարի 16-ին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .164

Շուլավերի նշանավոր այցելուները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .169

Շուլավերի Աշուղները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .173

Շուլավերի Կտրիճները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .176

Ալեքսանդր Մելիք-Փաշաևի տուն-թանգարանը Շահումյանում . . . . .177

Ավանդույթներ (Նավասարդ) . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .179

Արցախ - Ղարաբաղն ու Շուլավեր - Շահումյանը . . . . . . . . . . . . . . . .183

88-ի ազգային աղետը և Շահումյան - Շուլավերը . . . . . . . . . . . . . . .184

Փորձությունների տարիներ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .186

Շրջանի հայությունը շրջափակման մեջ . . . . . . . . . . . . . . . . . . . . .187

Փոքր (Ներքին) Շուլավեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .189

Պատերազմի և աշխատանքի վետերանների դիմում - բողոքը իշխանություններին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .190

Հավելված . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .196

Շահումյանի հանդամասերի անունները . . . . . . . . . . . . . . . . . . . . .197

Շահումյանի ութ թաղերը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .202

Շուլավեր - Շահումյանի հասարակության պատկերն ըստ ոլորտների . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .203

Կերակուրները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .212

Պողոս քահանա Իսահակյանի՝ Շուլավերին վերաբերող պոեմը . . . .217

Ծանոթություններ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .230

Մելիքների տոհմածառերը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .230

# ՇՈՒԼԱՎԵՐ

**Հեղինակային կազմ**
Սանդուխտ ԱՍԼԱՆՅԱՆ
Սամվել ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**Խմբագիր և սրբագրիչ**
Մարգարյան Գ. Հ.

**Համակ. շարվածքը,**
**Համակ. ձևավորումը՝**
Կարինե Չալաբյանի

Հանձնված է շարվածքի 04.04. 2001 թ.: Ստորագրված է տպագրության 16.04.2003 թ.: Չափսը 60x841/16: Տպագրության եղանակը՝ օֆսետ: Տպաքանակը՝ 500

Տպագրված է «Անտարես» հրատարակչատանը
Երևան, Մաշտոցի 50ա/1
հեռ.՝ (374 1) 58 10 59
հեռ./ֆաքս՝ (374 1) 58 76 69
antares@antares.am
www.antares.am



PER ASPERA AD ASTRA